

Նոր Տարուան Բացառիկ

ASBAREZ ARMENIAN DAILY NEWSPAPER

# Ապարիկ

Օրաթերթ

ՇԱԲԱԹ, ԳԵԿՏԵՄԲԵՐ 29, 2018, 110ԴԻ ՏԱՐԻ, ԹԻԻ 15,887

SATURDAY, DECEMBER 29, 2018, VOLUME 110, NO. 15,887

\$1



# Հայ Համայնք՝ Մենք Այստեղ ենք Ձեր Կողքին

## Շտապ Օգնության Կեդրոն՝ Վըրմանթ եւ Ֆաունթըն թաղերու խաչմերուկին



**ԲԱՑ ԵՆՔ 24/7 ՀԵՌԱՁԱՆԵՑԷՔ՝ (213) 413-3000**

### ER Express 3-Track System



Շտապ օգնության մեր համակարգը կարելիություն կ'ընծայե կատարելու արագ ախտաճանաչումներ, դարմանումը զգալիորեն արագացնելով եւ նուազեցնելով սպասման ու ապաքինման ժամանակամիջոցը:



«Սի.Էյջ.Էյ.» Հոլիվուտ Փրեսպիթերիզն Առողջապահական կեդրոնի բազմալեզու անձնակազմը հպարտորեն իր սպասարկությունները կը տրամադրե շրջանի բազմազան համայնքին: Մեր դռները բաց են օրական 24 ժամ եւ շաբաթը 7 օր: Մեզ կրնաք գտնել Լոս Անճելըսի մեջ, Վըրմանթ եւ Ֆաունթըն թաղերու խաչմերուկին: Ցաւելեալ տեղեկութեանց համար, դիմել (323) 913-4892 թիւին:



ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

# ՀՄԸՄը Գիտէ Հայրենիք Սիրել Ու Հայրենիք Շնչել՝ Իր Գործունէութեամբ

Միութեան մը յարատեւման գլխաւոր երաշխիքը իր առաքելութիւնն է եւ իրականացող նպատակները, այլապէս՝ անիկա երկար կեանք չ'ունենար: Հայրտ եմք, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ ՀՄԸՄի, հիմնադիրները այս հեռատեսիլները ունենալով՝ որդեգրեցին ՀՄԸՄի համար յստակ նպատակներ, որոնց իրրու հետեւանք անիկա գոյատեւեց ամբողջ մէկ դար:

Տնտեսական, ընկերային, քաղաքացիական պատերազմներու իրրու հետեւանք՝ հայու թափառական նակատագիրին ենթարկուած եւ հետզհետէ հեռաւոր այս փոքրուր վրայ բազմազան երիտասարդութիւնը եռագոյն դրօշին տակ համախմբելու, անոր հայեցի դաստիարակութիւն տալու եւ մարդկային նկարագիր կերտելու անվիճելի իրողութեան անհրաժեշտութիւնը զգալով՝ ՀՄԸՄը դիմագրաւեց իր նամբան խոչընդոտող բոլոր դժուարութիւնները: Եւ ահա այսօր, 100 տարիներու փորձառութեամբ եւ հարուստ պատմութեամբ՝ կը ներկայանայ հանրութեան, անդրդուելի մնալով իր առաքելութեան մէջ:

Երբ մտածենք եւ հարց տանք, թէ ինչն'ալ այս բոլոր գոհողութիւնները, ինչն'ալ ՀՄԸՄ եւ ոչ այլ կազմակերպութիւն, կ'ընկալենք այս հսկայ կազմակերպութեան՝ Առաքելութիւնը, «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» նշանաբանը, «Առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ», «Միշտ պատրաստ», «Մեր լուսագոյնը» կարգախօսները, կը հասկնանք անոր անհրաժեշտութիւնը մեր կեանքին ու իրականութեան մէջ:

ՀՄԸՄը հաստատուն ֆայլերով ծնունդ առաւ Հայոց Ցեղասպանութիւնը գործադրած պետութեան մայրաքաղաք Պոլսոյ մէջ: Մեծ եղեռնէն ետք, այս նախաձեռնութիւնը ֆաշարի ֆայլ մըն էր, որուն համար մեր հիմնադիրները միայն պատիւի արժանի էին:

ՀՄԸՄը ենթարկուեցաւ հայու նակատագիրին եւ անցաւ բազմաթիւ հանգրուաններէ, սակայն կանգուն մնաց, ծլեցաւ, ծաղկեցաւ եւ այսօր տիրական ներկայութիւն է արդէն աշխարհի տարածքին:

Երբ հպանցիկ ակնարկ մը նետենք ՀՄԸՄի պատմութեան վրայ, ապա պիտի տեսնենք, թէ անիկա պատմական գեղեցիկ զուգահիշութեամբ մը ծնունդ առաւ մեր հայրենիքի առաջին Հանրապետութեան ստեղծման տարին՝ 1918ին: Անիկա գործեց նաեւ մեր անկախ պետութեան մէջ: Սակայն հազիւ չորս տարեկան, քաղաքական ծանօթ պատմառոնքով, անիկա պարտադրաբար լուծուեցաւ Պոլսոյ մէջ, իսկ Հայաստանի խորհրդայնացումով՝ անոր գործունէութիւնը վերջ գտաւ նաեւ հայրենիքի մէջ:

Գաղթական հայութեան հետ գաղթական դարձաւ նաեւ ՀՄԸՄը: Սակայն՝ չկորսուեցաւ: Կազմաւորուած իւրաքանչիւր հայկական գաղու-

թի մէջ անիկա վերածաղկեցաւ եւ իր առաջնահերթ պարտականութիւնը դարձուց ապագայ իր դեկավարութիւնը պատրաստելը: Համախմբեց հայ պատանին եւ անոր տուաւ ազգային դիմագիծ, հայրենիքի հանդէպ սէր, պահանջատիրութեան ոգի, պատուախնդիր հայու նկարագիր, մանաւա՛նդ պատկանելիութիւն եւ մասնաւորաբար՝ արժանապատուութեան գիտակցութիւն:

Մէկ խօսքով, ՀՄԸՄը, հաւատարիմ մնալով իր առաքելութեան՝ իր արդար բաժինը բերաւ սփիւտֆահայութեան ազգային գոյատեւման ջանքերուն՝ ըլլալ Միջին Արեւելի, Եւրոպայի թէ Ամերիկայի տարածքին: Սակայն, այս բոլորին առընթեր, հայրենիքի ծարաւը կը տանջէր սփիւտֆահայութիւնը: ՀՄԸՄին ալ երազանքն էր Ազատ ու Անկախ հայրենիքի մէջ գործել, Արարատի լանջերուն բանակիլ եւ Հրազդան մարզաւանին վրայ մրցակցիլ:


1990ին, ա՛յդ երազն ալ իրականացաւ, երբ Կեդրոնական վարչութեան վստահութեամբ՝ ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը հայրենիքի մէջ ՀՄԸՄը վերակազմակերպելու պատասխանատու պարտականութիւնը ստանձնեց: Մեր խմբապետ-խմբապետուհիները, ի գին մեծ գոհողութիւններու, հայրենի ՀՄԸՄի վերստեղծման մէջ իրենց օգտակար ներդրումը ունեցան եւ մինչեւ օրս նոյն ոգիով կը շարունակեն գործել:

Եւ դեռ աւելին. ՀՄԸՄը Հայաստանի մէջ պետական նանաչում ստացաւ եւ դարձաւ Հայաստանի Ազգային Սկաւտական կազմակերպութիւն՝ ՀՄԸՄ-ՀԱՍԿ, որ արդարացուց ինքզինք: Քարֆարոտ մեր երկրին մէջ, ՀՄԸՄ-ՀԱՍԿին ցորենի հատիկները ուռնացան եւ հասկի վերածուեցան: 1997էն ի վեր, միջազգային նանաչման արժանացած է ՀՄԸՄ-ՀԱՍԿը:

Սփիւտֆահայութեան գուրգուրանքով պահպանուած եռագոյնը, այսօր ամէնուրեք կը ծածանի: Մեր սկաւտները չորս տարին անգամ մը կը բանակին իրենց իսկ սեփական բանակավայրին մէջ՝ Արագածի փէշերուն, Բիւրական: Մեր մարզական խումբերը հայրենիքի մէջ կը մասնակցին Համահայկական մարզախաղերուն՝ միշտ պատուարքեր արդիւններ արձանագրելով: Միասնական աշխատանքը կը շարունակուի եւ անվերջ պիտի շարունակուի:

ՀՄԸՄականը, հայու անփակտելի կամքով, ո՛ւր ալ ապրի՝ իր տիպար քաղաքացիութեամբ կը հմայէ իր շրջապատը, բայց ան միշտ կապուած կը մնայ իր ազգին, որովհետեւ գիտէ ազգակիցը սիրել, հայրենիքը սիրել եւ հայրենիքը շնչել՝ իր գործունէութեամբ: Թող անսպառ մնայ այդ շունչը, որպէսզի անվերջ ապրին մեր ազգն ու հայրենիքը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



## ՀՅԳ

# Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն Կը Շնորհաւորէ Համայն Հայութեան ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ Նորանոր Յաղթանակներ Մաղթելով Հայ Դատի Հետապնդման Ճանապարհին

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Պատմականը

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ ՀՄԸՄը, 100 տարիներ գոյատեւեց չնորհիւ իր առաքելութեան, որդեգրած սկզբունքներուն եւ հետապնդած նպատակներուն, որովհետեւ անոնք կը խօսին Հայ երիտասարդութեան սիրտին եւ մեր յաջորդական սերունդներուն ֆիզիքական ու մտային դաստիարակութիւն կու տան՝ մարզական եւ սկաուտական շարքերուն ընդմէջէն:

1918ին, մինչ Հայաստանի մէջ անկախութիւն կը կերտուէր, միւս

«Առողջ միտք, առողջ մարմինի մէջ» հաստատ համոզումով:

1919ին, Պոլսոյ մէջ տեղի կ'ունենայ ՀՄԸՄի Ա. Ողիմպիականը: Հոկտեմբեր 1919ին, ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ կը հրապարակուի «Հայ Սկաուտ» թերթը:

ՀՄԸՄի համբաւը կը հասնի անկախ Հայաստան, որուն օրուն կրթական նախարար Նիկոլ Աղբալեան կը հրահրէ ՀՄԸՄը մարզական եւ սկաուտական դաստիարակութեան սկսելու հայրենիքի մէջ: Յուլիս 1920ին,

յայտ կեդրոններու վերածուեցաւ: 1924ին, Միջին Արեւելքի ՀՄԸՄի առաջին մասնաճիւղը հիմնուեցաւ Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ: Մասնաճիւղը իր սկաուտական եւ մարզական թեւերը ստեղծելէ եւ լաւապէս կազմաւորելէ ետք, 1925ին, մղիչ ուժ հանդիսացաւ, որ ՀՄԸՄի մասնաճիւղը հիմնուի նաեւ Հայկապի մէջ, Սուրիայ: Լիբանանի եւ Սուրիոյ մէջ մեծ եռանդ եւ խանդավառութիւն ստեղծած այս մասնաճիւղերը իբրեւ բարի օրինակ ծառայեցին ոչ միայն զոյգ երկիրներու

երկու ժողովները նոր թափ եւ մղում կու տան ՀՄԸՄի միջինարեւելեան գործունէութեան: Այնուհետեւ, հաստատ քայլերով յառաջացող ՀՄԸՄը, հաւատարիմ մնալով իր առաքելութեան՝ կարեւոր իր ներդրումը կը բերէ նաեւ սփիւռքահայութեան ազգային գոյատեւման ջանքերուն՝ Միջին Արեւելքի, Եւրոպայի, Ամերիկայի, Աւստրալիոյ եւ այլուր:

Մեծ ոգեւորութեամբ սկիզբ առած եւ հետզհետէ բազմաթիւ հայահոծ երկիրներու մէջ իր հորիզոնները ընդարձակած ՀՄԸՄի



կողմէ, Պոլսոյ մէջ, նոյն տարուան 16 Նոյեմբերին, պատմական գեղեցիկ զուգադիպութեամբ մը հիմը կը դրուի ՀՄԸՄին: Այն կազմակերպութեան, որ հաւատարիմ, թէ առողջ սերունդներն են ազգի մը յաւերժացման գրաւականը, մէկ դրօշի տակ համախմբեց մարզասէր եւ սկաուտական շարժումին հաւատացող երիտասարդութիւնը: Այս հաւատքով, 1910ական թուականներուն, Պոլսոյ մէջ սկսան մարզական ակումբներ հիմնելու ակնյայտ մարզիկ-մարզիչ Ծաւարչ Քրիսեան եւ իր գաղափարակից ընկերները՝ Յովհաննէս Հինգիւսեան, Գրիգոր Յակոբեան եւ ուրիշներ: Գրիգորեանի «Մարմնամարզ» թերթին հրատարակութիւնը մեծապէս նպաստեց նուիրեալներ համախմբելու իր շուրջը: 1915ին, Ծաւարչ Քրիսեան նահատակուեցաւ, սակայն իր ընկերները շարունակեցին մարզական եւ սկաուտական միութիւն մը հիմնելու իր գաղափարը: Այսպէս, ծնունդ առաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ ՀՄԸՄը, որուն հիմնադիր ժողովը գումարուեցաւ 16 Նոյեմբեր 1918ին՝ Պոլսոյ մէջ, մասնակցութեամբ սկաուտապետ Գրիգոր Յակոբեանի, Տիգրան Սոյեանի, Գարլո Շահինեանի, Հայկ Ճիգմէճեանի, Լեւոն Յակոբեանի, Ժիրայր Սորաանճեանի եւ Վահրամ Փափազեանի:

ՀՄԸՄը որդեգրեց «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» կարգախօսը, որ մտայնացումն էր Պետրոս Աւրունիի:

Կարճ ժամանակամիջոցի մէջ ՀՄԸՄի բազմաթիւ մասնաճիւղեր հիմնուեցան Պոլսոյ եւ շրջակայ քաղաքներուն մէջ՝ հասնելով մինչեւ Կիլիկիա, մեծ ոգեւորութիւն ստեղծելով Հայոց Յեղափոխականութենէն ձեռնարկած Հայ ժողովուրդի բեկորներուն եւ յատկապէս անոր որբացած սերունդին մօտ: Երիտասարդութիւնը ներգրաւուեցաւ մարզական եւ սկաուտական խումբերու մէջ՝

Վահան Չերազ, Տիգրան Սոյեան եւ Օննիկ Եազմաճեան եռանդամ պատուիրակութիւնը կը մեկնի հայրենիք: Նոյն տարին (1920), Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի մէջ կը հիմնուի ՀՄԸՄի մասնաճիւղը, այնուհետեւ՝ 1921ին, Պուլկարիոյ եւ Արեւելեան Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ, իսկ 1922ին՝ Ռումանիոյ մէջ, եւ այսպէս մեծ թափ կ'առնէ ՀՄԸՄը:

Դժբախտաբար, սակայն, կազմակերպչական աշխոյժ գործունէութիւնը երկար կեանք չ'ունենար Հայաստանի մէջ. արդարեւ, 29 Նոյեմբեր 1921ին, Հայաստանի խորհրդայնացումով, ՀՄԸՄի գործունէութիւնը վերջ կը գտնէ Հայաստանի մէջ: Աւելի ուշ, Վահան Չերազ հայրենանուէր իր այս գործունէութեան համար կը գնդակահարուի Թիֆլիսի Չեկայի բանտին մէջ:

Պոլսոյ մէջ եւս նոյն ճակատագիրին կ'ենթարկուի ՀՄԸՄը: Թուրքիոյ մէջ տեղի ունեցող ներքին յեղաշրջման եւ Քեմալական շարժման յաղթանակով, Հայ ժողովուրդը կը հեռանայ երկրէն եւ 16 Սեպտեմբեր 1922ին, ՀՄԸՄի Կեդրոնական վարչութիւնը, Թուրքիոյ մէջ պաշտօնապէս լուծարուած կը յայտարարէ ՀՄԸՄը:

Գաղթական հայութեան հետ գաղթական դարձաւ նաեւ ՀՄԸՄը, սակայն չկորսուեցաւ: Իւրաքանչիւր կազմաւորուած հայկական գաղութի մէջ անիկա վերածաղկեցաւ եւ իր առաջնահերթ պարտականութիւնը դարձուց ապագայ իր ղեկավարները պատրաստել: Համախմբեց Հայ պատանին եւ անոր տուաւ ազգային դիմագիծ, հայրենիքի սէր, պահանջատիրութեան ոգի, պատուախնդիր հայու նկարագիր, պատկանելիութիւն եւ մասնաւորաբար՝ արժանապատուութեան գիտակցութիւն: Գաղթական հայութիւնը, յատկապէս Կիլիկիայէն, հիւրընկալուեցաւ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ուր լաւապէս կազմակերպուելով՝ սփիւռքեան ակն-

բազմաթիւ քաղաքներուն, այլեւ հարեան երկիրներուն, ինչպէս՝ Իրաքի, Յորդանանի, Երուսաղէմի եւ այլ բազմաթիւ երկիրներու: Մարզական եռօրեայ հանդիսութիւններուն ստեղծած խանդավառութիւնը դարձաւ վարակիչ. այս զոյգ երկիրներուն սահմաններէն

աշխոյժ գործունէութիւնը, դժբախտաբար, իր մեծագոյն հարուածը ստացաւ Համաշխարհային Բ. պատերազմի օրերուն, որ ոչ միայն ջլատեց Արեւմտեան Եւրոպայի մասնաճիւղերը, այլեւ դէպի համայնավարացած Հայաստան կազմակերպուած ներգաղ-

ղուրս ելլելով՝ նոր մասնաճիւղեր հիմնուեցան Յորդանանի, Յունաստանի, Կիպրոսի, Եգիպտոսի եւ մինչեւ իսկ Պարսկաստանի մէջ: Այս երկիրներուն մարզական խումբերը, մասնակցելով նշեալ փառատօներուն՝ յաւելեալ փայլք տուին անոնց յաջողութեան:

1929ին, Պէյրութի մէջ կը գումարուի ՀՄԸՄի Սուրիոյ եւ Լիբանանի Պատգամաւորական Ա. ժողովը, իսկ երկրորդը՝ 1931ին: Այս

թով ցնցեց նաեւ Միջին Արեւելքի ՀՄԸՄի մասնաճիւղերը: Ստեղծուած քաղաքական եւ տնտեսական ահաւոր պայմանները տկարացուցին եւ շուրջ տակ առին ՀՄԸՄի Արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի մասնաճիւղերը: Իսկ Արեւելեան Եւրոպայի եւ յատկապէս Ռումանիոյ եւ Պուլկարիոյ մէջ գործող մասնաճիւղերը, տեղւոյն համայնավար վարիչներու կողմէ հալածանքի են-



# ՀՄԸՄԻ Պատմականը

Թարկուեցան, աքսորուեցան Հայ ազգային յայտնի դէմքեր, որոնց շարքին նաեւ՝ ՀՄԸՄականներ, եւ այսպիսով փակուեցան Ռուսանիոյ եւ Պուլկարիոյ մասնաճիւղերը:

Պէտք է ընդգծել, թէ փոթորկալի ներգաղթի ծանօթ շարժումին իբրեւ հետեւանք տկարացած Սուրիոյ, Լիբանանի եւ Յունաստանի ՀՄԸՄի մասնաճիւղերը, կրցան յաղթահարել ստեղծուած դժուարութիւնները եւ արագ կազմակերպուով գտնել անցեալի իրենց աշխոյժ գործունէութիւնը: Լիբանանի եւ Սուրիոյ մասնաճիւղերու վերաշխուժացման մեծապէս նպաստեցին ՀՄԸՄական եւ տեղական մարզական, յատկապէս՝ ֆուլթպուլի մրցումները: ՀՄԸՄի կարգ մը խումբեր նոյնիսկ տիրացան իրենց երկիրներու ախոյեանութեանց:


Համաշխարհային Բ. պատերազմի արհաւիրքը թօթափած Միջին Արեւելքի մասնաճիւղերը, Ֆուլթպուլի կողքին, պետական մակարդակի մեծ յաջողութիւններ արձանագրեցին՝ պասքեթպուլի, փինկ-փոնկի եւ հեծելարշաւի մարզաճիւղերուն մէջ:

Միջին Արեւելքի մէջ ՀՄԸՄին ստեղծած խանդավառութիւնը ոգեւորեց շատ Հայկական գաղութներ, սակայն իրողութիւնը նոյնը չեղաւ Պարսկաստանի պարագային, ուր 1950ին կառավարութիւնը լուծարեց բոլոր կազմակերպութիւնները, որոնց կարգին կար նաեւ ՀՄԸՄը: Սակայն, աւելի ուշ, Պարսկաստանի մէջ կարելի եղաւ հիմնել անկախ Հայկական միութիւն մը՝ Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւն (ՀՄԱԿ) անունով, որ մինչեւ օրս մօտէն կը գործակցի ՀՄԸՄի հետ:

1958ին, Գանատայի նորակազմ Հայկական գաղութը հիմը կը դնէ իր առաջին ՀՄԸՄի մասնաճիւղին Մոնթրէալի մէջ: Լուրջ աշխատանք կը տարուի նաեւ վերակազմակերպելու Ֆրանսայի ՀՄԸՄի մասնաճիւղերը:

Իսկ արաբական աշխարհին մէջ 60ական թուականներու ծանօթ իրադարձութիւններուն իբրեւ հետեւանք, Միջին Արեւելքէն մեծ թիւով Հայեր կը գաղթեն Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Գանատա եւ Աւստրալիա, ուր ՀՄԸՄի նոր մասնաճիւղեր հիմնեցին: 1965ին, գաղթական այս Հայերուն շնորհիւ կը հիմնուի Աւստրալիոյ առաջին ՀՄԸՄի մասնաճիւղը՝ Սիտնիի մէջ, իսկ 1968ին, Լոս Անձելըսի մէջ կը հիմնուի ՀՄԸՄի Արեւմտեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու առաջին մասնաճիւղը:

Հետզհետէ բազմացող ՀՄԸՄի մասնաճիւղերով եւ յատկապէս նկատի ունենալով Աւստրալիոյ եւ Հիւսիսային Ամերիկայի մէջ նոր մասնաճիւղերու հիմնումը՝ անհրաժեշտ կը նկատուի ՀՄԸՄը Համագաղութային կազմակերպութեան մը վերածելը: Մինչ այդ, ՀՄԸՄի ղեկավարի պաշտօնը կը կատարէր Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութիւնը: Այս իմաստով, Պատգամաւորական Ա. Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1974ին, Պէյրութ, Լիբանան, որուն ՀՄԸՄի 27 մասնաճիւղերէն մասնակցեցան 23 լիազօր պատգամաւորներ, առաւել՝ Թեհրանի



«Արարատ» կազմակերպութեան ներկայացուցիչը: ՀՄԸՄի բարձրագոյն այս ժողովը հիմը դրաւ ՀՄԸՄի Համագաղութային կառոյցին, վաւերացուց ՀՄԸՄի Ընդհ. Ծրագիր-Կանոնագիրը եւ ընտրեց իր առաջին Կեդրոնական վարչութիւնը:

ՀՄԸՄի մասնաճիւղերու Համագործակցութիւնը զարգացնելու կարեւորութեան մեկնած, Կեդրոնական վարչութիւնը կազմակերպեց ՀՄԸՄի Ա. Համագաղութային բանակումը՝ Օգոստոս 1978ին, Քլամարի մէջ, Յունաստան, որուն ՀՄԸՄի 12 շրջաններէն մասնակցեցան 226 արիւարենուշներ: Առաջին այս նախաձեռնութիւնը մեծ եռանդ եւ ոգեւորութիւն ստեղծեց բանակողներուն մէջ, իսկ անոնց միջոցաւ նաեւ՝ շրջաններուն մէջ՝ իբրեւ արդիւնք Բ. Համագաղութային բանակումը կազմակերպուեցաւ Օգոստոս 1980ին, Ֆրանսա: Այնուհետեւ, այդ բանակումները կը կազմակերպուին չորս տարին անգամ մը: ՀՄԸՄի 5րդ Համագաղութային բանակումը իրականացաւ Հայաստանի մէջ, իսկ 2002էն ի վեր՝ ՀՄԸՄ-ՀԱՍԿի Բիւրականի բանակավայրին մէջ, որ ՀՄԸՄին նուիրուած է Հայաստանի պետութեան կողմէ:

Սկաուտական ղեկավարութեան մօտ մեծ ոգեւորութիւն ստեղծեց նաեւ առաջին անգամ իրականացուող ՀՄԸՄի Սկաուտական Արարատեան կարգի տուչութիւնը: Նոյնքան ոգեւորիչ եւ աշխոյժ եղան ՀՄԸՄի մարզական աշխատանքները: Արդարեւ, Շրջանային մակարդակով կազմակերպուող Լիբանանի ԼեՎԱՄի (1969էն սկսեալ) եւ Մայիսեան փառատօները (1978էն), Արեւմտեան Ամերիկայի ՔԱՀԱՄի

(1984էն) եւ Նաւասարդեան մարզախաղերը (1974էն) մեծապէս նպաստեցին Հայ աշակերտութիւնը ՀՄԸՄին կապելու եւ ՀՄԸՄի մասնաճիւղերը կենսունակ պահելու կարեւոր գործին:

ՀՄԸՄի մարզական կեանքը առաւել աշխուժացաւ 1981ին՝ Գանատայի պասքեթպուլի, վոլիպուլի եւ ֆուլթպուլի Համագաղութային մրցաշարքերով, որոնք առաւել Համախմբեցին ՀՄԸՄի մարզասէր երիտասարդութիւնը մարզական մաքուր շրջապատի մը մէջ: ՀՄԸՄի մարզական խումբերուն մօտ ոգեւորութիւնը բազում շեշտուեցաւ 2009ին եւ այնուհետեւ չորս տարին անգամ մը Հայաստանի մէջ կազմակերպուող Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն շնորհիւ:

Այս բոլորին առընթեր, Հայրենիքի ծարաւը կը տանջէր սփիւռքահայութիւնը: ՀՄԸՄի երազանքն

էր գործել ազատ ու անկախ Հայրենիքի մէջ, բանակիլ Արարատի լանջերուն եւ մրցակցիլ Հայրենի մարզադաշտերուն վրայ: 1990ին այդ երազն ալ իրականացաւ, երբ ՀՄԸՄի Կեդրոնական վարչութիւնը ՀՄԸՄը վերադարձուց իր Հարազատ օճախը՝ նորանկախ Հայրենիք:

ՀՄԸՄի Սփիւռքի բոլոր մասնաճիւղերու աշխատանքներուն գլխաւոր առաջնորդ Հանդիսացաւ ՀՄԸՄի Հայաստանի մասնաճիւղերուն օգտակար Հանդիսանալու հրամայականը, եւ անոնք յաջողեցան: Արդարեւ, 1995ին, ՀՄԸՄի Զ. Ընդհ. ժողովին որոշումով, Հայրենի ՀՄԸՄը կոչուեցաւ ՀՄԸՄի Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն (ՀՄԸՄ-ՀԱՍԿ):

1996ին, ՀՄԸՄ-ՀԱՍԿը Ֆրանսայի «Հայ Արիւնք»էն ետք ստանձնեց Համաշխարհային սկաուտութեան մօտ Հայ սկաուտութեան ներկայացուցչութեան ջաշը, իսկ 17 Ապրիլ 1997ին, անկապաշտօնապէս մաս կազմեց Համաշխարհային Սկաուտական շարժումին:

Պէտք է ընդգծել, որ Հայրենի Հողին վրայ կազմակերպուող սկաուտական բանակումներն ու մարզական մրցաշարքերը մեծապէս ոգեւորեցին եւ Հայրենի Հողին կապեցին ՀՄԸՄական երիտասարդութիւնը: Այս ձեւով, անոնք ծանօթացան իրենց երազած Հայաստանին, անոր յիշարժան վայրերուն, պատմական կոթողներուն եւ Հայոց պատմութեան փառահեղ անցեալին՝ ամրացնելով Հայրենիք-Սփիւռք անբաժանելի կապը:

Ներկայիս, ՀՄԸՄը ունի 24 շրջաններ, 108 մասնաճիւղեր ու միաւորներ:

ՀՄԸՄը 100 տարիէ ի վեր կը գոյատեւէ, որովհետեւ յստակ առաքելութեամբ ծնունդ առաւ եւ առանց ընկրկումի հետապնդեց իր նպատակները, ի սէր Հայ երիտասարդութեան Հայցից դաստիարակութեան: Գործեց եւ պիտի շարունակէ գործել «Բարձրացիր, բարձրացո՛ւր» իմաստալից իր նշանաբանով, «Առողջ միտք՝ Առողջ մարմնի մէջ», «Մի՛շտ պատրաստ» եւ «Մեր լաւագոյնը» կարգախօսերով, որոնց ազդեցութիւնը մեծապէս զգալի է մեր սերունդներու կեանքի ճշմարիտ ուղղութեան վրայ՝ Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ:

**ASBAREZ**

Address: 1203 N. Vermont Ave.,  
Los Angeles, CA 90029  
ASBAREZ (ISSN 0004-4229)  
Armenian Daily Newspaper published daily except Sundays, Mondays and the days following Federal Holidays and Armenian Holidays.

Published by: Armenian Media Network.  
1203 N. Vermont Ave., Los Angeles, CA 90029.

Periodicals postage paid at Los Angeles, CA. POSTMASTER: Send address changes to: ASBAREZ, 1203 N. Vermont Ave., Los Angeles, CA 90029.

Address Changes should be sent to the Circulation Desk five days in advance.  
**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
**PLEASE CALL (323) 284-9222**  
United States: \$150 for Daily, \$80 for Weekend Edition.  
Canada and Mexico: Air mail \$250, Weekend/English Edition \$150.  
Other countries: Air mail \$500, Weekend/English Edition \$250.

**ADVERTISING RATES:**  
**Display Ads: (323) 284-9222**  
Display: Rates will be given upon request  
**Classified Ads: (323) 284-9222**  
Classified: \$60 for 6 consecutive days

# ՀՄԸՄԻ ԼՈՍ ԱՆՃԵԼՐԱԻ ՄԱՍՆԱԴԻՂ

1960ական թուականներուն, քաղաքական եւ տնտեսական աննպաստ պայմաններու բերումով, մեծ թիւով հայեր՝ յատկապէս Միջին Արեւելքէն, Արեւմտեան Ամերիկայի Միացեալ Նահանգներ հաստատուեցան անոնց մէջ կը գտնուէին մանաւանդ Սուրիայէն եւ Լիբանանէն ժամանած ՀՄԸՄականներ: Հետզհետէ բազմացող հայութիւնը համախմբելու եւ մանաւանդ երիտասարդու-

առաջին քայլը ստացած է օրհնութիւնը ՀՄԸՄԻ հիմնադիրներէն Տիգրան քհնյ. Սոյեանի: Գեղեցիկ այս նախաձեռնութիւնը մեծ ոգեւորութիւն ստեղծած է շրջանէն ներս, ինչպէս նաեւ պատմական առիթ հանդիսացած է ՀՄԸՄԻ մասնաճիւղ մը հիմնելու: Այս նպատակը իրականութիւն դարձնելու հեռանկարով, Սարգիս Սիրունիի գլխաւորութեամբ յանձնախումբ մը կազմ-



թեան համար մաքուր շրջապատ մը ստեղծելու կարեւորութիւնը հրամայական դարձաւ: Մինչ այդ, ֆուլթայլը մեծ ժողովրդականութիւն վայելելով՝ կազմուած էին բազմաթիւ մարզական խումբեր, որոնց համախմբումն ու անոնց հայկական դիմագիծ տալը եւս անհրաժեշտ

ուած է, որպէսզի, առաջին հերթին, համախմբէ շրջանը հաստատուած ՀՄԸՄականները, ապա անոր շարքերը բազմացնէ երիտասարդութեամբ: Հպարտութեամբ պէտք է արձանագրել, թէ նշեալ յանձնախումբին հետեւողական աշխատանքներուն շնորհիւ, կարելի եղած է



կը նկատուէր: Այս հրամայականը գործնականի վերածելու հեռանկարով, խումբ մը նուիրեալ ՀՄԸՄականներ գեղեցիկ գաղափարը ունեցած էին Լոս Անճելըսի մէջ հիմնելու հայութեան սիրտին խօսող ՀՄԸՄԻ մասնաճիւղ մը: Այս իմաստով առաջին քայլը առած է ռումանահայ ազգային գործիչ

ստեղծել ՀՄԸՄԻ մասնաճիւղ մը հիմնելու անհրաժեշտ պայմանները: Եւ այսպէս, Յունուար 1968ին գումարուած է ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն ընթացքին հետեւեալ քոյր-եղբայրներէն ընտրուած է հիմնադիր վարչութեան կազմը. Եղբ. Յարութիւն Բարսեղեան՝ ատենապետ



Եղբ. Յարութիւն Սարգիսեան՝ փոխատենապետ  
Քոյր Միրէլ Սարգիսեան՝ քարտուղար  
Եղբ. Յակոբ Առաքելեան՝ գանձապահ  
Եղբ. Վարդգէս Սահակեան՝ սկաուտ խմբապետ  
Եղբ. Զարեհ Թողիկեան՝ ֆուլթայլի պատասխանատու  
Եղբ. Յարութիւն Փէլէնկեան՝ խորհրդական  
Եղբ. Էդուարդ Սարգիսեան՝ խորհրդական

Սարգիս Սարունին, որուն գլխաւորութեամբ հիմնադրուած է Ռումանահայ «Րաֆֆի» միութիւնը, որուն անդամ ֆուլթայլասէր երիտասարդներէն կազմուած ֆուլթայլի առաջին խումբը (1966) կոչուած է Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն՝ ՀՄԸՄ: Ուրախութեամբ պէտք է ընդգծել, թէ պատմական այս

Նորընտիր վարչութիւնը, նորաստեղծ մասնաճիւղին համար իբրեւ կեդրոնատեղի, Սանթա Մոնիքա պողոտային վրայ վարձած է տուն մը, որ հակառակ իր համեստ պայմաններուն՝ երկար տարիներ օգտագործուած է իբրեւ աղուներ, ուր համախմբուող



շրջանի երիտասարդութիւնը, ամէնօրեայ իր ներկայութեամբ մեղուի փեթակի մը վերածած է զայն: Վարչութեան առաջին կարեւոր աշխատանքներէն մէկը եղած է մասնաճիւղի ծրագիր-կանոնադրի պատրաստութիւնը, որուն մեծապէս օգտակար հանդիսացած են փորձառու միութենականներ: Ապա, վարչութիւնը լծուած է անդամաւար կարեւոր աշխատանքին եւ առաջին տարին իսկ կրցած է 124 նոր քոյր-եղբայրներ անդամագրել: Կազմուած են մարզական եւ սկաուտական խումբեր, որոնք բեղուն գործունէութեամբ՝ մեծ թիւով երիտասարդ-երիտասարդուհիներ ներգրաւած են մասնաճիւղին շարքերը: Մարզական թեւը գլխաւորաբար զբաղած է ֆուլթայլի, պասքեթպոլի եւ թեթեւ ատլետի մարզաճիւղերով: Արդէն իսկ աշխուժացած մասնաճիւղը վաւերացուած է Հարաւային Քալիֆորնիոյ նահանգապետութեան, ինչպէս նաեւ՝ Լիբանանի մէջ իբրեւ ՀՄԸՄԻ Գերագոյն մարմին գործող ՀՄԸՄԻ Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան կողմէ: Աւելի ուշ, 1970ին, մասնաճիւղը վաւերացուած է նաեւ Ամերիկայի Միաց-

բազմաթիւ անգամներ տիրանալով Լոս Անճելըսի «Մէյնըր լիկ»-ի Ա. դասակարգի միջազգային խումբերու տարեկան մրցաշարքերու ախոյեանութեան, ինչպէս նաեւ նոյն լիկին կազմակերպած Քալիֆորնիոյ նահանգի բաժակին, «Սինքս տը Մայո» Ա. դասակարգի ֆուլթայլի միջազգային խումբերու եւ բազմաթիւ այլ տեղական մրցաշարքերու ախոյեանութեանց: Մասնաճիւղի հիմնադրութեան առաջին օրէն իսկ, մեծ հետաքրքրութիւն ստեղծած է նաեւ անոր սկաուտական թեւը, որ մինչեւ 1980, իր շարժական աշխատանքը կատարած է Griffith Park-ին մէջ, իսկ այնուհետեւ եւ մինչեւ օրս՝ Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանի շրջափակին: Մասնաճիւղի Սկաուտական խորհուրդները մեծ օգտակարութիւն ունեցած են սկաուտական բաժանմունքի աշխատանքներու յաջողութեան մէջ: Մասնաճիւղի արի-արեւունչները մասնակցած են Յունաստանի, Ֆրանսայի, Անգլիոյ եւ Հայաստանի մէջ կազմակերպուած Համազգայութեան եւ Համա-ՀՄԸՄական Ընդհանուր բանակումներուն: 1981ին, մասնաճիւղը ունեցած է նաեւ իր քոնկֆու-քարաթէի



եալ Նահանգներու կառավարութեան՝ Internal Revenue Service-ին կողմէ՝ իբրեւ ոչ-շահութաբեր կազմակերպութիւն (non-profit organization): 1971ին, մասնաճիւղի պասքեթպոլի խումբը առաջին անգամ ըլլալով մասնակցած է Հարաւային Քալիֆորնիոյ Պասքեթպոլի լիկի մրցաշարքին եւ նուաճած երկրորդ դիրքը: Այնուհետեւ, պասքեթպոլի խումբը բազմաթիւ անգամներ տիրացած է նոյն լիկին կազմակերպած մրցաշարքերու ախոյեանութեանց: Նոյնքան ոգեւորութեամբ պատուաբեր արդիւնքներ արձանագրած է նաեւ մասնաճիւղի ֆուլթայլի խումբը՝

«Վահագնի» Սեւ զօտիներու միաւորը, որ իր շուրջ համախմբած է բազմաթիւ պարման-պարմանուհիներ, որոնք մասնակցելով տեղական մրցումներու՝ պատուաբեր արդիւնքներ արձանագրած են: Մարզական եւ սկաուտական թեւերուն առընթեր, պէտք է ընդգծել նաեւ, որ Ընկերային յանձնախումբը, իր շուրջ համախմբելով մեծաթիւ երիտասարդութիւն՝ կարեւոր դեր ունեցած է մասնաճիւղի աշխուժացման մէջ: Մասնաճիւղի վերելքին մեծապէս նպաստած են նաեւ մասնաճիւղի Ծնողական եւ



ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**ՊԸՐՊԵՆՔ**

**ՀՅԴ «ԱՂԲԱԼԵԱՆ»**

**ԿՈՄԻՏԷՈՒԹԻՒՆ**

**ՀՕՄ-Ի «ԱՐԱԶ» ՄԱՍՆԱՃԻՒՂ**

**ՀՄԸՄ-Ի «ՍԻՓԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒՂ**

**ՀԵԴ «ՎԱՐԱԳ» ՈՒԽՏ**

**«ԿԱՅԾԱԿ» ՊԱՏԱՆԵԿԱՆ**

**ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔ**

**Շնորհաւոր Նոր Տարի**

**ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ**

**Թող Բոլորիս Չանքերով**

**Վերականգնի**

**Միացեալ Հայաստանը**

ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի Մասնաճյուղ

**Օժանդակ յանձնախումբերը:**  
 Շրջանի երիտասարդությունը հրապուրած ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճյուղը, 1982ին ունեցած է իր նուազագույնը: Որոշ տարիներ մասնաճյուղը նաև հրատարակած է իր «Լրատու» պարբերաթերթը՝ գաղութին ներկայացնելով ՀՄԸՄԻ բեղուն գործունեությունը:

Մասնաճյուղի մարզական խումբերը մասնակցած են շրջանէն ներս կազմակերպուած միջմաս-

նաեւ, մասնաճյուղը միշտ համագործակցած է շրջանի քոյր մասնաճյուղերուն հետ՝ մասնակցելով անոնց կազմակերպած միջմասնաճյուղային մարզական մրցումներուն եւ սկաուտական բանակումներուն: Մեծ ոգեւորութեամբ, անիկա մասնակցած է նաև Շրջանային վարչութեան կազմակերպած ՀՄԸՄԻ Նաւասարդեան մարզախաղերու մրցումներուն եւ քաջալերական արդիւնքներ արձանագրած է պասքեթպոլի, վոլիպոլի եւ յատկապէս ֆութպոլի մարզաճյուղերուն մէջ:



նաճյուղային եւ Նաւասարդեան մարզախաղերուն ու պատուաբեր արդիւնքներ արձանագրած են:

Նոյեմբեր 1990ին, մասնաճյուղի անդամներէն Մարօ Քէշիչեան գործուղուած է Հայաստան, Հայրենիքի մէջ ՀՄԸՄԻ վերընձիւղման աշխատանքներուն իր գործօն մասնակցութիւնը բերելու համար: Քոյրը առաջին այցելութեամբ երեք ամիսներ մնալով Հայաստան եւ այնուհետեւ տարեկան այցելութիւններով զանազան մակարդակի բանակումներ, դաստիարակչական սեմինարներ եւ գործնական սկաուտական աշխատանքներ կազմակերպելով՝ մեծ ներդրում ունեցած է Հայրենիքի մէջ ՀՄԸՄՐ վերակազմակերպելու եւ նոր մասնաճյուղեր հիմնելու գործին մէջ: 1991ի ամբողջը, նոյն նպատակով Հայաստան գործուղուած է նաև Յարութ Մատէսեան: Մասնաճյուղի անդամներէն Գօգօ Պալեան, ՀՄԸՄԻ Շրջանային եւ Կեդրոնական վարչական իր պարտականութիւններէն անկախ, մեծ ներդրում ունեցած է յատկապէս ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Բերականի եւ Երեւանի Հայկ Յովսէփեան բանակավայրերու բարեկարգման աշխատանքներուն մէջ՝ անհրաժեշտ նիւթական աղբիւրները ապահովելով:

Հպարտութեամբ պէտք է արձանագրել, թէ ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճյուղի վարչութիւնները մեծապէս քաջալերած եւ նախաձեռնողը եղած են Քալիֆորնիոյ մէջ յաջորդաբար հիմնելու ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսքոյի, Ֆրեզնոյի «Մասուն», եւ Մոնթեպելլոյի մասնաճյուղերը:

Մասնաճյուղէն մեծ թիւով հաւատաւոր անդամներ սիրաշօթար ընդունած են ՀՄԸՄԻ Նաւասարդեան մարզախաղերը եւ այդ առիթով՝ իրենց իշխանական նուիրատուութիւններով խրախուսած են միութեան ծրագիրներուն յաջողութիւնները: Այդ քոյրեղբայրերն են՝

Տէր եւ տիկ. Էնտի եւ Ալին Անտոնեան, 1984ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 9րդ մարզախաղեր

Տէր եւ տիկ. Ճորճ եւ Ալիս Ատամեան, 1985ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 10րդ մարզախաղեր, Տորթ. եւ տիկ. Սարգիս եւ Թամար Արեւեան, 1986ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 11րդ մարզախաղեր,

Տէր եւ տիկ. Վարդգէս եւ Ֆլորա Ալլահայտոյեան, 1991ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 16րդ մարզախաղեր,

Տիրա Քերոբ Առաքելեան, 1993ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 18րդ մարզախաղեր,

Տէր եւ տիկ. Հրաչ եւ Մարինէ Անտոնեան, 1996ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 21րդ մարզախաղեր,

Տիկ. Աշխէն Փիլանեան, 2000ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 25րդ մարզախաղեր

Տէր եւ տիկ. Շանթ եւ Վերժին Հայթայեան, 2005ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 30րդ մարզախաղեր,

Տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեան, 2008ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 33րդ մարզախաղեր:

Տէր եւ տիկ. Վարանդ եւ Հուրի Մեղրոնեան, 2015ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 40րդ մարզախաղեր

Իսկ հետեւեալ քոյր-եղբայրները, իրենց միութենական անձնուիրութեան եւ ՀՄԸՄԻ-ականի բեղուն գործունեութեանց համար, արժանացած են Շրջանային վարչութեան «Տրպար ՀՄԸՄԻ-ական»-ի տիտղոսին, որ յայտարարուած է նոյն տարուան Նաւասարդեան մարզախաղերուն ընթացքին.

Պարգեւ Շիրինեան - 1990  
 Ճամիլ Սարգիսեան - 1993  
 Յարութ Հալէպեան - 1994  
 Յարութիւն Բարսեղեան - 1995  
 Ճէք Տէր Պողոսեան - 1997  
 Յակոբ Օվայեան - 1999  
 Շանթ Հայթայեան - 2000  
 Վարդգէս Ալահայտոյեան - 2003  
 Սամուէլ Մկրտիչեան - 2006  
 Նիկոլ Արզումանեան - 2007



Զաքար Զորպանեան - 2009  
 Պերճ Ճամճեան - 2010  
 Մարօ Քէշիչեան - 2012  
 Գօգօ Պալեան - 2018

Այս տարի (2018) մասնաճյուղին 50ամեակն էր: Հինգ տասնամեակներու իր գոյութեան ընթացքին, այս մասնաճյուղը, շնորհիւ իր հաւատաւոր ու գոհաբերուող անդամ-անդամուհիներուն, մարզական եւ սկաուտական շարքերուն, պատասխանատու քոյր-եղբայրներուն եւ յատկապէս վարչութիւններու նուիրական գործունեութեան՝ կարեւոր դերակատարութիւն ունեցած է շրջանի Հայկական իրականութեան մէջ:

Մասնաճյուղէն հետեւեալ քոյր-եղբայրները, իրենց միութենական նուիրեալ եւ մասնաճյուղի յառաջդիմութեան մէջ արդիւնաբեր աշխատանք կարարած ըլլալուն համար, մասնաճյուղին առաջարկով՝ Շրջանային վարչութեան կողմէ արժանացած են շրջանի ՀՄԸՄԻ բարձրագոյն՝ «Մառայութեան» շքանշանին: Շքանշաններն ու համապատասխան հաստատագիրները յանձնուած են ամէն տարի նոյեմբեր ամսուն կազմակերպուած եւ ՀՄԸՄԻ Օրուան նուիրուած ձեռնարկին.

Քոյր Անի Հինտոյեան - 2015  
 Քոյր Սիւզի Մինոյեան - 2016  
 Եղբ. Մհեր Դաւիթեան - 2017  
 Քոյր Մարօ Քէշիչեան - 2018

Բնականաբար, քանի մը էջերու մէջ կարելի չէ ՀՄԸՄԻ Արեւմտեան Ամերիկայի շրջանին ծնունդ

տուած ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճյուղի ամբողջական պատմութիւնը ներկայացնել, սակայն հպարտութեամբ կ'արձանագրենք, թէ մասնաճյուղը իր տեղական գործունեութեան առընթեր, աշխոյժ մասնակցութիւն կը բերէ շրջանային եւ միջմասնաճյուղային աշխատանքներուն մէջ: Լուրջ աշխատանք կը տանի անիկա, որ իր անդամները առաւելագոյն թիւով մասնակցին յատկապէս Հայրենի եւ Համահայկական մարզական եւ սկաուտական նախաձեռնութիւններուն, որպէսզի անոնք միշտ համախմբուած մնան Հայկական մաքրամաքուր ՀՄԸՄԻ-ական շրջապատէն ներս:

2017-2018 տարեշրջանի մասնաճյուղի վարչութեան կազմը կը բաղկանար հետեւեալ քոյր-եղբայրներէն.

Օննիկ Պէրպէրեան - ատենապետ  
 Անդրէաս Հինտոյեան  
 Նաթալիա Հինտոյեան  
 Ռազմիկ Լիպարեան  
 Սարին Փափազեան  
 Սիւզի Մինոյեան  
 Արի Պոյաճեան  
 Վիքի Անսուրեան  
 Ռոսէ Աւանդեսեան

Այսօր, մասնաճյուղը ունի 348 անդամ-անդամուհիներ, որոնց 195ը մարզիկ-մարզկուհիներ են, 106ը՝ գայլիկ-արծուիկներ եւ արի-արեւնուշներ, իսկ 18 տարեկանէն վեր՝ 258 անդամներ, որոնք մասնաճյուղի զանազան յանձնախումբերու մէջ կը գործեն:



ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՀՄԸՄԻ հարիւրամեայ  
վաստակին առջեւ խոնարհելով,  
աւելի պանծալի  
նոր հարիւրամեակ մը  
կը մաղթենք անոր:

Անկարելին կարելի դարձնելու  
վճռականութիւն կը մաղթենք  
ՀՄԸՄԻ պատասխանատուներուն,  
որպէսզի ոչ մէկ հայ երեխայ,  
պատանի ու երիտասարդ չզրկուի  
այս մեծ կազմակերպութեան  
շնորհած բարիքներէն:

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ՍԱՐԳԻՍ ԵՒ ՍԻՒԶԱՆ**  
**ԿԻՏՅԻՆԵԱՆՆԵՐ**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



# ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսկոյի Մասնաճյուղ

ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու երկրորդ մասնաճյուղը Սան Ֆրանսիսկոյի մասնաճյուղն է, որուն հիմնադրման գաղափարը յղացած են Միջին Արեւելքէն շրջանը հաստատուած ՀՄԸՄականներ Կարպիս Պէզճեան եւ Ռոստոմ Այնթապլեան: Մասնաճյուղը հիմնելու գաղափարը Հայապահպանման Հրամայականէն կը բխէր եւ կը միտէր շրջանը հաստատուած Հայութիւնը եւ յատկապէս երիտասարդութիւնը համախմբելու ազգային մէկ դրօշի տակ:

Մասնաճյուղը հիմնելու գաղափարին հաւատացող Բիւզանդ Բալմանուկեան, զօրակցելով մասնաճյուղի հիմնադրութեան գաղափարին՝ 13 Նոյեմբեր 1970ին, նամակ մը կը յղէ ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճյուղի վարչութեան, Սան Ֆրանսիսկոյի մէջ ՀՄԸՄԻ մասնաճյուղ մը հիմնելու պատրաստակամութիւնը յայտնելով: Պատմական այս դիմումը ոգեւորութեամբ կ'ընկալուի ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի հիմնադիր մասնաճյուղի վարչութեան կողմէ, որ իր 26 Մայիս 1971ի ժողովին կը վաւերացնէ զայն եւ կը խրախուսէ շրջանը՝ Սան Ֆրանսիսկոյի մէջ հիմնելու ՀՄԸՄԻ մասնաճյուղ մը, որուն նախապատրաստական աշխատանքներուն համար կը նշանակուի յանձնախումբ մը՝ հետեւ-

վարչութեան անդամ ընտրուած են հետեւեալ եղբայրները.

Տիգրան Սարգիսեան՝ ատենապետ

Ժան Ա. Թոմասեան  
Նուպար Տէմիրճեան  
Արչի Մելքոնեան  
Սեպուհ Վարդանեան

Գ. Մարտիրոսեան  
Անցնող 47 տարիներուն ընթացքին, մասնաճյուղը մեծ յառաջդիմութիւններ արձանագրած է եւ փորձած է մօտէն գործակցիլ շրջանի ՀՄԸՄԻ մասնաճյուղերուն եւ Շրջանային վարչութեանց հետ, այսպէս.

18-19 Մարտ 1972ին, նորաստեղծ մասնաճյուղը մասնակցած է ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճյուղին կազմակերպած շրջանի ՀՄԸՄԻ առաջին պասքեթպոլի մրցումներուն:

Մայիս 1974ին, տեղի ունեցած է մասնաճյուղի առաջին սկաուտական երգման արարողութիւնը, որուն ներկայ գտնուած է Շրջանային վարչութեան ներկայացուցիչը:

1974ին, մասնակցած է ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Նաւասարդեան մարզախաղերուն:

1979ին, մասնակցած է ՀՄԸՄԻ Շրջանային Սկաուտական խորհուրդին կազմակերպած առաջին Դպրոց-բանակումին, որ տեղի



1982ին մասնաճյուղը օժտուած է իր անձնական ակումբով, որ կոչուած է նուիրատու Աշոտ Մամիկոնեանի անունով, որ կը գտնուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ առաքելական եկեղեցւոյ Հողատարածքին վրայ, 51 Commonwealth Avenue, San Francisco.

1988ին, մասնաճյուղը գնած է կալուած մը Պրըլինկէյմի Սուանիթա պողոտային վրայ, որուն կանխավճարը տրամադրած են բարերարներ՝ Աշոտ Մամիկոն-

ցութեան չմատնելու հեռանկարով, վաստակաչատ ՀՄԸՄականներ տէր եւ տիկ. Ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեաններ ատենին տրամադրեցին այդ գումարը, որ յետագային այլ միջոցներով մաս առ մաս վերադարձուած է:

1980-90 տարիներուն, մասնաճյուղը շաբաթական երկու անգամ ունեցած է Bingo-ի երեկոներ: Տասը տարիներ, շնորհիւ մասնաճյուղի կամուրջ աշխատողներուն, կարելի եղած է վճարել Սուանիթի պողոտային վրայ գտնուող մասնաճյուղի կալուածի պարտքը: Ներկայիս, կալուածի վարձակալէն ստացուած նիւթականը, կ'օգտագործուի մասնաճյուղի աշխատանքային ծախսերուն: Այս կարեւոր նախաձեռնութեան համար, մասնաճյուղը երախտապարտ է հետեւեալ քոյր-եղբայրներուն՝ Ռուբիկ Նազարեանին, Սեդրակ Սողոմոնեանին, Շահէն Նազարեանին, Ժիրայր Սարգիսեանին, Ռուբիկ Պուտաղեանին, Արմանտ Գիլէճեանին, Կարօ Յանունին, Մուշեղ Անտոնեանին, Արաքսի Սողոմոնեանին եւ Ռոպերթ Պէպէքեանին:

1991ին, մասնաճյուղի անդամներէն Շահէն Աղապապեան, Վահէ Պարոնեան եւ Ժանօ Սաչեան մեծ ներդրում ունեցած են Սանթա Գլարայի մէջ հիմնելու ՀՄԸՄԻ Անի մասնաճյուղը:

2000ին, մասնաճյուղը եւ իր նուիրեալ անդամներէն Արմինէ Մենզիկեան հիմը դրած են ՀՄԸՄԻ Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճյուղին:

ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսկոյի մասնաճյուղը միշտ ներկայութիւն է գաղութին մէջ: Մասնաճյուղի արի-արեւունները ամէն տարի դրօշակի արարողութիւնը կը կատարեն Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկին: Անոնք ամէն տարի նաեւ, նոյն պարտականութիւնը կը կատարեն Քալիֆորնիոյ Նահանգային խորհրդարանին մէջ (Սաքրամենթօ) կազմակերպուած Հայոց Յեղասպանութեան ճանաչման ձեռնարկին:

Այս տարի՝ 9 Օգոստոս 2018ին, ՀՄԸՄԻ 100ամեակին առիթով, մասնաճյուղի սկաուտական բաժանմունքը Հոչակազիր մը ստացաւ Քալիֆորնիոյ Նահանգային ծերակոյտին եւ խորհրդարանին կողմէ:

Մասնաճյուղը վարձած է իր կեդրոնատեղին եւ մարզադաշտերը, →



եալ եղբայրներէն. Կարպիս Պէզճեան՝ ատենապետ Սեպուհ Վարդանեան Ռոստոմ Այնթապլեան Ժան Ա. Թոմասեան Պետրոս Սուրբուրեան Վահագ Թոփճեան Ժան Թոմասեան

Հիմնադիր յանձնախումբի ժրջան աշխատանքին շնորհիւ կարելի կ'ըլլայ 95 անդամներ արձանագրել, որոնց 25ը՝ սկաուտներ: 22 Նոյեմբեր 1972ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ գումարուած է մասնաճյուղի առաջի պաշտօնական արձանագրութիւն ունեցող ժողովը, որուն ընթացքին մասնաճյուղի առաջին

ունեցած է Firestone Scout Reservation բանակավայրին մէջ:

1980ին, մասնաճյուղի սկաուտական բաժանմունքը մասնակցած է ՀՄԸՄԻ Համագաղութային Բ. բանակումին Քլամարի մէջ, Ֆրանսա:

1981ին, մասնաճյուղի վարչութիւնը կազմակերպած է ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսկոյի Միջմասնաճյուղային մարզախաղերը, որոնք կը շարունակուին մինչեւ օրս, Ամերիկայի Բանուորներու տօնին զուգարկիպող շաբաթավերջը: Մրցաշարքին մասնակցած են ՀՄԸՄԻ «Արարատ», «Սասուն» եւ «Մասիս» մասնաճյուղերու մարզիկները:

եան 110,000 տոլար եւ Սարգիս Սողանլեան 50,000 տոլար: Նաեւ, մասնաճյուղի վարչութեան նուիրեալ անդամներէն Կարպիս Էօլմէսէքեանի ջանքերով՝ Սէուտական Արաբիոյ շէյխէ մը ապահովուած է այլ նուիրատուութիւն մը, որ գեղեցիկ անակնկալով մը յայտարարուած է մասնաճյուղի տարեկան ճաշկերոյթի ձեռնարկին:

Մասնաճյուղը մէկ վարձակալման գրասենեակ ունեցող կալուած մը գնած էր ուղղակի սեփականատիրոջմէն, պայմանաւ որ երկու տարի ետք գումարը միանուագ վճարուի իրեն, որ շուրջ 320,000 տոլար էր: Մասնաճյուղը նեղ կա-

ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ


ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

*Յարապետութիւն կը մաղթենք  
 ՀՄԸՄի յաղթական արշաւին:  
 Հայ երիտասարդութիւնը  
 ազգին ու հայրենիքի  
 ծառայութեան ոգին Վ  
 րոգորելու իր առաքելութիւնը  
 ՀՄԸՄը ահա մէկ դարէ ի վեր  
 պատրուով կը կատարէ: Բոլորս  
 աջակցի՛նք այս մեծ  
 կազմակերպութեան, որ ան  
 շարունակէ եւ ընդարձակէ իր  
 գործունէութիւնը:*

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.  
 ՎԱՐՈՒԺ  
 ՊԵՏԻԿԵԱՆՆԵՐ**

ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



# ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսկոյի Մասնաճյուղ

ուր կը կատարէ միութենական բոլոր աշխատանքները, ներառեալ մարզական փորձերն ու սկաուտական հաւաքները:

Մարզական խումբերը կը մասնակցին տեղական OYAA Greek League-ի եւ Սան Ֆրանսիսկոյի պապեթիստի եւ ֆութպոլի լիգերու կազմակերպած մրցաշարքերուն:

Մասնաճիւղի մարզական խումբերը կը մասնակցին նաեւ ՀՄԸՄԻ միջմասնաճիւղային եւ շրջանային նախաձեռնութիւններուն, թէ՛ մարզական եւ թէ՛ սկաուտական բաժանմունքներուն մէջ: Անոնք ամէն տարի կը մասնակցին ՀՄԸՄԻ Նաւասարդեան մարզախաղերուն եւ ակնյայտ յաջողութիւններ կ'արձանագրեն. ճրինակ՝ մասնաճիւղի ֆութպոլի Ա. խումբը իր դասակարգին մէջ ախոյեան հանդիսացած է 1989, 1990, 1991, 1994 եւ 1996 տարիներուն: Մանչերու խումբը նաեւ քանի մը անգամներ տիրացած է վոլիպոլի ախոյեանութեան: Մասնաճիւղէն բազմաթիւ մարզիկներ մասնակցած են ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան չորս տարին անգամ մը կազմակերպած Համագաղութային եւ Համա-ՀՄԸՄԻ կան մարզախաղերուն եւ սկաուտական ընդհանուր բանակումներուն:

Մասնաճիւղի վաստակաշատ անդամներէն տէր եւ տիկ. Ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեան 1992ին, սիրայօժար ստանձնած են ՀՄԸՄԻ Նաւասարդեան 17րդ մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը:

ՀՄԸՄԻ Ծրջանային վարչութեանց կողմէ «Տիպար ՀՄԸՄԻ-կան» տիտղոսին արժանացած են մասնաճիւղի հետեւեալ վաստակաշատ քոյր-եղբայրները, որոնք պաշտօնապէս յայտարարուած են Նաւասարդեան մարզախաղերուն.

Չոհրայ Անտոնեան, 1992ին (Նաւասարդեան 17րդ մարզախաղերուն)

Տէր եւ տիկ. Գարրիէլ եւ Աստղիկ Փանոսեան, 2004ին, (Նաւասարդեան 29րդ մարզախաղեր)

Ջարեհ Էքմէքճեան, 2013ին, (Նաւասարդեան 38րդ մարզախաղեր)

Ժիրայր Սարգիսեան, 2015ին, (Նաւասարդեան 40րդ մարզախաղեր):

Յայտնենք, թէ Ժիրայր Սարգիսեանի վաստակը մեծ է ՀՄԸՄԻ կեանքին մէջ: Ան Ընդհանուր

խմբապետ նշանակուած է 1990ին, Յունաստանի մէջ կազմակերպուած Համագաղութային 4րդ սկաուտական ընդհանուր բանակումին: Եղբայրը 1999ին ըտրուած է Կեդրոնական վարչութեան անդամ եւ ձեռնհասօրէն վարած է փոխատենապետի պաշտօնը:

Ծրջանային մակարդակի վրայ, մասնաճիւղէն հետեւեալ եղբայրները ընտրուած են Ծրջանային վարչութեան անդամ.

Ջարեհ Էքմէքճեան  
Ջարայր Սարգիսեան  
Տիգրան Սարգիսեան  
Ջօհրայ Անտոնեան  
Ժիրայր Սարգիսեան  
Բաֆֆի Սաչատուրեան  
Արմանտ Գիլէճեան  
Շահէն Աղապապեան

Մասնաճիւղէն հետեւեալ եղբայրները, իրենց նուիրեալ միութենական գործունէութեան համար արժանացած են շրջանի ՀՄԸՄԻ բարձրագոյն «Մառայութեան Ծքանշան»ին.

Վահան Տէրունեան, 2015ին  
Շահէն Աղապապեան, 2016ին  
Վաչիկ Սարգիսեան, 2018ին  
Հետեւեալ արի-արենուշ խմբապետները եւ սկաուտ ղեկավարները մեծապէս նպաստած են մասնաճիւղի սկաուտական թեւի յառաջդիմութեան.

Ջարեհ Էքմէքճեան, որ եղած է առաջին Ծրջանային խմբապետը Ռոստոմ Այնթապլեան՝ Մասնաճիւղի առաջին սկաուտ խմբապետը

Աստղիկ Փանոսեան  
Մարալ Պուրսալեան  
Ռուպերթ Սարգիս

Մարալ Էօլմէսէքեան-Լիոն  
Նայիրի Էօլմէսէքեան-Սարգիս  
Կորին Հայրապետեան  
Ժագ Օսկանեան

Վաչիկ Սարգիսեան  
Սիրան Թիթէլեան-Նահապետեան

Ալին Էքմէքճեան-Աղապապեան  
Արմինէ Մենգիկեան-Ժամկոչեան

Վարուժ Ծիթիլեան  
Մեղեղի Նազարեան  
Մարտիկ Չանչանեան

Պարթեւ Վարդանեան  
Նորայր Գասապեան  
Յովիկ Ազատխանեան

Նարեկ Ղազարեան  
Յովիկ Արիստակէսեան

Մասնաճիւղը թէեւ նիւթականի կամ կեդրոն ունենալու դժուարութիւններ չունի, սակայն սկաուտ եւ մասնաճիւղային մա-



կարգակի ղեկավարներու խիստ կարիքը ունի:

Վարչութիւնը մասնաճիւղին մէջ հետաքրքրութիւն եւ խանդավառութիւն ստեղծելու հեռանկարով ամէն տարի, Ամերիկայի աշխատուորներու տօնի շաբաթավերջը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային պապեթիստի մրցումներ եւ պարբերաբար կը նուիրէ զանոնք կեանքին հրաժեշտ տուած մասնաճիւղի անդամ ՀՄԸՄԻ կաններու յիշատակին: Յարգ այս մարզախաղերը տարբեր տարիներու նուիրուած են Սօսէ Քոչարեանի, Վիգէն Տէմիրճեանի, Ջարեհ Էքմէքճեանի եւ Առաքել Տէրունեանի յիշատակներուն:

Գաստիարակչական գետնի վրայ, մասնաճիւղը կազմակերպած եւ հիւրընկալած է Հայոց Յեղասպանութեան նուիրուած ղեկավարման սեմինարներ, իր ան-

դամներուն եւ գաղութին համար: Կազմակերպած է բռնցկամարտի, յատուկ մարզանքներու, հայկական պարերու դասընթացներ եւ բանակումներ, դանազան ընկերային ձեռնարկներ, դաշտապատույտներ եւ այլ՝ հետաքրքրական աշխատանքներ: 2015էն ի վեր մասնաճիւղը դպրոցական կրթանպաստ կը տրամադրէ երկրորդական վարժարան կամ քոլեճ յաճախող երկու յառաջագէմ ՀՄԸՄԻ կան ուսանողներու, որոնք դրական անդրադարձ կը ձգեն մասնաճիւղէն ներս:

Այս բոլորէն անկախ, մասնաճիւղը իր օգտակար ներդրումը կ'ունենայ ծրագրելու եւ գործադրելու Հիւսիսային Քալիֆորնիոյ ՀՄԸՄԻ երեք եւ Ֆրեզնոյի մասնաճիւղերու սկաուտական միացեալ աշխատանքներուն մէջ: Վարչութիւնը նաեւ օգտակար կը հանդիսանայ իր շրջանի երեք մասնաճիւղերու միացեալ ձեռնարկներուն եւ դաշտահանդէսներու կազմակերպման, որ առաւել կը մտերմացնէ մասնակիցները: Այս նպատակով ալ արդէն իսկ երեք մասնաճիւղերու համար ստեղծուած է «Ֆէյսպուք»ի էջ մը, որպէսզի օգտակար հանդիսանան տեղական մասնաճիւղերուն:

Ներկայիս վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէն.

Թամար Գիլիճեան՝ ատենապետ  
Նելլի Ծիրիքեան  
Յարութ Մոմճեան  
Կարինէ Գրիգորեան  
Քաթիա Նազարեան

Մասնաճիւղը ունի 200 անդամներ, որոնցմէ 150ը մարզական բաժանմունքին կը պատկանին, 25ը՝ սկաուտական, իսկ մնացեալ 25ը գործօն անդամներ են:




**Հպարտ եմք ՀՄԸՄով,**

**Հպարտ եմք ՀՄԸՄի  
իրագործումներով,**

**Հպարտ եմք ՀՄԸՄին զօրակցելով**

**Հպարտ եմք մեր  
երիտասարդութիւնը համախմբող,  
զայն ազգին ու հայրենիքին  
ծառայելու ոգիով դաստիարակող  
հարիւրամեայ, քայց միշտ  
անրոգունող մեծ  
կազմակերպութեամբ՝ ՀՄԸՄով**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.  
ԱԼ ՊԵՐԹ ԵՒ ՍՈՆԱ  
ՇԱՀԻՆԵԱՆՆԵՐ**



# ՀՄԸՄԻ Ֆրեզնոյի Սասուն Մասնաճիւղ

ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի Մասնաճիւղի Հիմնադրութեան խանդավառուած, Ֆրեզնոյի մէջ բնակող կարգ մը վեթերան ՀՄԸՄականներ եւ երիտասարդ մարզիկ-մարզիկուհիներ ոտքի կ'ելլեն Հիմնելու ՀՄԸՄի մասնաճիւղ մը: Նախաձեռնութիւնը մեծ ոգելորութեամբ կ'ընկալուի շրջանի հայութեան կողմէ, որոնք գործնականի անցնելով, Սեպտեմբեր 1973ին կը գումարեն մասնաճիւղի Հիմնադիր ժողովը:

Պատմական այս ժողովին ներկայ կը գտնուին ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղի Հիմնադիրներէն Յարութիւն Բարսեղեան, Յուլիա Յովսէփեան եւ Ժագ Տէր Պողոսեան, որոնք կը նշանակեն առժամայ վարչութիւն մը, որպէսզի մասնաճիւղը կազմակերպուած ձեւով եւ մեծաթիւ անդամներով աշխատանքի սկսի:

Նոյն տարուան Նոյեմբերին կը կազմակերպուի մասնաճիւղի ծանօթացման առաջին ձեռնարկը, որ ոչ միայն կը յուսադրէ ներկաները, այլ նաեւ Հիմը կը դնէ մասնաճիւղի սկաուտական միաւորին: 25 Փետրուար 1974ին, կը գումարուի նորակազմ մասնաճիւղի առաջին անդամական ժողովը, որուն ընթացքին կ'ընտրուի մասնաճիւղի առաջին վարչութեան կազմը հետեւեալ քոյր-եղբայրներէ.

- Վարուժան Պուլուիթեան՝ Ատենապետ
- Սոսի Մարրիւան
- Վիքի Տէր Պողոսեան
- Կարպիս Քաթարոյեան
- Հիւկո Գէորգեան
- Ալպերթ Աբրահամեան
- Արաքսի Գալընեան (ի պաշտօնէ իբրեւ սկաուտական միաւորի խմբապետուհի):
- Մեծ ոգելորութեամբ աշխատանքի

սկսած վարչութիւնը Ս. Զատուան շնորհաւորական բացիկներով, ՀՄԸՄԻ Օրուան տօնակատարութիւն կազմակերպելով եւ մասնաճիւղի Գալիֆորնիոյ ֆութպոլի միջ-մասնաճիւղային մրցաշարքին մասնակցելով, մեծ խանդավառութիւն կը ստեղծէ շրջանէն ներս, մեծապէս նպաստելով անդամարչաւի իր կարեւոր աշխատանքին:

Մասնաճիւղի 1985ի տարեկան ընդհանուր ժողովը որոշում կ'առնէ մասնաճիւղը անուանել առ ի յիշատակ արժուերոյն Սասունին, ինչպէս նաեւ շրջանէն ներս ղեկավարած Սասունցի Գալիֆի յուշարձանին: Այսպիսով մասնաճիւղը կը կոչուի ՀՄԸՄԻ Ֆրեզնոյի «Սասուն» Մասնաճիւղ:

Օր ըստ օրէ բազմանդամ դարձող մասնաճիւղը, իր անդամներէն Բաֆֆի Սանդիկեանի նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ, 1986ին կ'ունենայ իր նուազախումբը, որ ատենին ոչ միայն փայլք կու տայ մասնաճիւղին եւ իր գաղութի ձեռնարկներուն, այլ նաեւ ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարզախաղերու փակման հանդիսութեանց:

Մասնաճիւղի վարչութեան առընթեր կը գործեն Սկաուտական, մարզական ընկերային եւ մշակութային յանձնախումբեր, որոնց կազմակերպած աշխատանքներուն համար կ'օգտագործուի շրջանի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի սրահները:

Ծնորհիւ իր հրապուրիչ եւ շինիչ ձեռնարկներուն, ՀՄԸՄը տիրական ներկայութիւն կը դառնայ Ֆրեզնոյի ազգային կեանքէն ներս:

Մասնաճիւղը կը մասնակցի ՀՄԸՄԻ Համա-գաղութային եւ Համա-ՀՄԸՄական մարզախաղերու եւ



սկաուտական բանակումներու, որոնք նոր ուժ եւ կորով տալով մասնակիցներուն, կ'աշխուժացնէ նաեւ մասնաճիւղի գործունէութիւնը: Յատկապէս Հայաստանի անկախացումէն ետք, մասնաճիւղը միշտ ներկայութիւն կ'ըլլայ Հայրենիքի մէջ կազմակերպուած

ղերու եւ Շրջանային սկաուտական խորհուրդներու կազմակերպած բանակումները: Մասնաճիւղի գլխաւոր նուիրատուներէն ազգային բարերարներ տէր եւ տիկ. Վահան եւ Անոյշ Շամլեանները ստանձնած են ՀՄԸՄԻ Տրոյ Մարզախաղերու պա-



մարզական եւ սկաուտական գործունէութեանց: Նաեւ միշտ ներկայ եղած է ՀՄԸՄԻ միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն եւ Նաւասարդեան մարզախաղերուն, որոնց ընթացքին մեծ յաջողութիւններ արձանագրած է, յատկապէս պասքեթպոլի եւ փինկփոնկի մարզաճիւղերէն ներս:

տուոյ նախագահութիւնը, իսկ 26րդ Նաւասարդեան Մարզախաղերունը՝ տէր եւ տիկ. Վաչէ եւ Ճէյն Սողոմոնեանները: Պէտք է ընդգծել նաեւ, թէ Վաչէ Սողոմոնեան, բազմիցս Նաւասարդեան ջահը խումբ մը մարզիկներու հետ հեծելարշաւով Ֆրեզնոյէն Նաւասարդեան Մարզախաղերու փակման հանդիսութեան վայրը հասցուցած է:

Մասնաճիւղը ամէն տարի ինք եւս կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային պասքեթպոլի մրցումներ, որոնք մեծ աշխուժութիւն կը ստեղծեն Համայնքէն ներս:

Մասնաճիւղի վարչութիւնը տարեկան իր եկամուտը գլխաւորաբար կ'ապահովէ տարեկան իր կազմակերպած ճաշկերոյթ-պարահանդէսներէն: Մասնաճիւղի Հիմնադրութեան 45ամեակի տօնախմբութիւնը մեծ շուքով նշուեցաւ Շաբաթ, 3 Նոյեմբեր 2018ին, որուն Շրջանային վարչութեան ներկայ գտնուեցան ատենապետ Մանուէլ Մարսէլեան եւ Փիեռ Մանուկեան: Այս ձեռնարկի ընթացքին, մասնաճիւղի վարչութիւնը յատուկ գնահատագիրներով շնորհակալութիւն յայտնած է մասնաճիւղի Հիմնադիր վարչութեան անդամներուն, ազգային բարերար Վահան եւ Անոյշ Շամլեանին ու Վաչէ եւ Ճէյմն Սողոմոնեանին: Իր հեր-



# ՀՄԸՄԻ Ֆրեզնոյի Սասուն Մասնաճիւղ

Թին, Շրջանային վարչութիւնը յատուկ յուշատախտակով շնորհատրած է մասնաճիւղի 45ամեակը, ինչպէս նաեւ գնահատագիր մը յանձնած է Շամլեան զոյգին, առ ի երախտագիտութիւն իր ցուցաբերած նիւթական եւ բարոյական զօրակցութեան՝ ՀՄԸՄԻ Շրջանային վարչութեան եւ յատկապէս ազգային մեր կեանքէն ներս:

Վերջին տարիներուն գեղեցիկ սովորութիւն մը որդեգրելով, վարչութիւնը կը պարգեւատրէ իր անդամներէն տիպար ՀՄԸՄական մը: Այսպէս.

Արա Ճիկէրեան պարգեւատրուած է 2015ին  
Նշան Տէր Գալուստեան՝ 2016ին  
Ժանօ Քէրքէզեան՝ 2017ին:

Մասնաճիւղի գործօն անդամներէն Պերճ Աբգարեան, 2014էն ի վեր, Ֆրեզնոյի մէջ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ Հիւպատոսն է եւ ամենայն պատասխանատուութեամբ կը կատարէ իրեն վստահուած պարտականութիւնները:

Մասնաճիւղը խիստ կարիք ունի մարզադաշտի մը, որպէսզի ամէնօրեայ դրութեամբ կարենայ



Համախմբել մարզասէր երիտասարդութիւնը:  
Ներկայ վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէ.  
Արա Ճիկէրեան՝ Ատենապետ  
Վաչէ Վասիլեան  
Շրջանիկ Օհանեան  
Վահէ Նշանեան

Մինաս Արիսեան  
Ժանօ Քէրքէզեան  
Թամարա Սալէմ  
Ներկայիս մասնաճիւղը ունի 216 անդամներ, որոնց 70ը սկսուողական բաժանմունքին անդամ են, 183ը՝ մարզական, իսկ 27ը՝ գանազան յանձնախումբերու մէջ գործօն անդամներ:



**Հայ Օգնութեան Միութեան Ամերիկայի Արեւմտեան Շրջանի Շրջանային Վարչութիւնը**

**Կը շնորհաւորէ համայն հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը մաղթելով մեր Հայրենիքին Հզօրութիւն, Արցախին միջազգային ճանաչում, իսկ Չաւախքի եւ Սուրիոյ մեր հայրենակիցներուն համբերութիւն եւ յարատեւելու կամբ:**

**Ամանորեայ զոյգ տօներուն առիթով, մեր անսահման շնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը կը յայտնենք ՀՕՄԻ բարերարներուն, հովանաւորներուն, նուիրատուներուն, ՀՕՄԻ հայրենի եւ տեղական ծրագիրներու զօրակցողներուն եւ մեր 27 մասնաճիւղերու անդամներուն, Ընկերային Ծառայութեան եւ Հոգեբանական զոյգ կեդրոններու տնօրէնութեանց եւ պաշտօնէութեանց**

**Թող նոր տարին բարեբեր եւ նոր նուաճումներու տարի հանդիսանայ բոլորիս:**

**The ARS of Western USA, Regional Executive**  
 extends its greetings  
 for a Happy New Year and Merry Christmas with wishes of strengthening our homeland, gaining international recognition for Artsakh, and further willpower to sustain Armenians in Javakhk and Syria.  
 We extend our sincere thanks and appreciation to ARS sponsors and donors, supporters of local and international ARS programs, the members of our region's 27 chapters, as well as the administration and staff of our Social Services and Child, Youth, and Guidance Center.

*May the New Year be filled with great prosperity for all.*

# ՀՄԸՄԻ Մոնթեպելլոյի Մասնաճիւղ

1952ին Մոնթեպելլոյի գաղութէն ներս Հայկական ակումբի Հիմնումով սկիզբ առաւ Հայ մարզական կեանքը: Հայկական այս ակումբը մեծ ժողովրդականութիւն չաճեցաւ եւ մեծ թիւով երիտասարդութիւն համախմբեց իր շուրջ՝ գլխաւորաբար կազմելով ֆութպոլի զանազան դասակարգի խումբեր: 1968ին, 15ամեայ այս Հայկական ակումբի ֆութպոլի խումբը կը տիրանայ Քալիֆորնիոյ Ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան:

Նոյն տարին, երբ կը հիմնուի ՀՄԸՄԻ Լոս Անձելըսի մասնաճիւղը, Հայկական ակումբը կը միանայ ՀՄԸՄին, եւ անոնք միասնա-

վարէ: Սակայն, այնուհետեւ, որոշ դժուարութիւններու դէմ յանդիման գալով՝ 1979ին կը կազմալուծուի: Այս իրողութիւնը ցաւ կը պատճառէ մեծ թիւով ՀՄԸՄականներու, որոնք 25 Սեպտեմբեր 1980 թուակիր նամակով մը կը դիմեն ՀՄԸՄի Ծրջանային վարչութեան՝ վերակազմելու համար մասնաճիւղը: Գրական պատասխան ստանալէ ետք, նշանակուած ժամանակաւոր վարչութիւնը աշխատանք կը տանի աշխուժացնելու մասնաճիւղը եւ՝ կը յաջողի: Արդարեւ, 1981ին, մասնաճիւղը արդէն իսկ 75 երկսեռ մարզիկներ եւ 20 անղամ-աղամուհիներ կ'ունենայ: Իսկ 1981ին, անիկա



թեան նոր կազմ մը, որ անմիջապէս կ'անցնի անդամարշաւի, սկաուտական միաւոր ստեղծելու, ինչպէս նաեւ ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերը վերակազմելու աշխատանքին:

Բեմն ալ՝ քաղաքապետարանի մարզադաշտերուն վրայ:

Կարելի է նշել, որ անցեալին, ՀՄԸՄի Մոնթեպելլոյի մասնաճիւղը եղած է նախանձելի մասնաճիւղ մը, որուն մարզական խումբերը մասնակցած են ՀՄԸՄի Գանատայի Ծրջանային վարչութեան կազմակերպած միջըջանային մարզախաղերուն՝ տիրանալով ֆութպոլի ախոյեանութեան:

1985ին, մասնաճիւղի վարչութեան եւ տնօրէն Վիգէն Յովսէփեանի քաջալերանքով՝ Մեսրոպեան Ազգային վարժարանէն ներս աշակերտական սկաուտական միաւոր մը ստեղծելու գործունէութիւն կը տարուի, ղեկավարութեամբ ուսուցչուհի եւ Ծրջանային խմբապետուհի Մարօ Քէշիշեանի, որ դրական արձագանգ կ'ունենայ: Այս նախաձեռնութեամբ, մասնաճիւղը կ'ունենայ 50 հոգինոց սկաուտական բաժանմունք մը: Կ'աշխուժանան նաեւ մարզական խումբերը,

1986ին, ներկայացնելով ՀՄԸՄի Ամերիկայի Արեւմտեան շրջանը՝ այս մասնաճիւղը ՀՄԸՄի Համագաղութային մրցումներուն հանդիսացած է պասքեթպոլի ախոյեան, իսկ նոյն տարուան Լոս Անձելըսի Լիկի պասքեթպոլի մրցումներուն, 32-2 արդիւնքով պարտութեան մատնելով իրեն դէմ մրցող խումբը՝ առաջնու-



բար հրապարակային ձեռնարկով մը կը տօնախմբեն ՀՄԸՄի 50ամեակը: 1969ին, ՀՄԸՄի Մոնթեպելլոյի ֆութպոլի խումբը կը նուաճէ Քալիֆորնիոյ եւ Միջին Ամերիկայի ախոյեանութիւնը, իսկ 1972ին, կը միանայ ՀՄԸՄի Լոս Անձելըսի ֆութպոլի խումբին, եւ միասնաբար ախոյեանութեան փայլուն յաղթանակներ կ'արձանագրեն:

Կ'ունենայ ֆութպոլի, պասքեթպոլի, վոլեյպոլի, թեթեւ ատլետիկ եւ թենիսի երկսեռ խումբեր, եւ նոյնիսկ կը մասնակցի ՀՄԸՄի նրդ Ողիմպիական մարզախաղերուն:

1982ին, մասնաճիւղի գործօն անդամներէն՝ միջազգային իրաւարար Թորոս Բարսեղեան, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի ֆութպոլի մրցումներ ղեկավարող 120 իրաւարարներու մէջէն լաւագոյնը՝ թիւ 1 իրաւարարը կ'ընտրուի, ինչ որ մեծ պատի կը համարուի ՀՄԸՄին եւ յատկապէս մասնաճիւղին: 1983ին, վարչութիւնը մասնաճիւղի տարեկան ձեռնարկը կը նուիրէ ՀՄԸՄի 65ամեակին՝ դրական արձագանգ ձգելով: Սակայն, հակառակ այս բոլորին, մասնաճիւղը դարձեալ ընկրկում կ'ապրի:



Քանի մը տարիներու անմխիթար վիճակէն ետք, Ծրջանային վարչութիւնը դարձեալ ընդառաջելով Մոնթեպելլոյի Հայ գաղութէն ներս ՀՄԸՄի մասնաճիւղը վերաշխուժացնելու դիմումին՝ Սեպտեմբեր 1985ին կը նշանակէ վարչու-



1974ին, նկատի ունենալով, որ Մոնթեպելլոյի մէջ Հայութեան թիւը աճած էր եւ քաղաքէն ներս արդէն իսկ ՀՄԸՄի մասնաճիւղեր կը գործէին՝ որոշում կը կայացուի հիմնել ՀՄԸՄի Մոնթեպելլոյի մասնաճիւղը, որուն հիմնադիր վարչութեան մաս կը կազմեն եղբայրներ՝

- Օննիկ Աբրահամեան
- Քերոբ Առաքելեան
- Պորիս Կիրակոսեան
- Մինաս Մարգարեան
- Նշան Սարաֆեան

Մասնաճիւղը, իր հիմնադրութեան առաջին երեք տարիներուն, մարզական եւ ընկերային աշխոյժ եւ ուշագրաւ գործունէութիւն կը

որոնք յատկապէս ՀՄԸՄի 11րդ մարզախաղերուն կը մասնակցին մարզական եւ սկաուտական մեծ պատուիրակութեամբ մը եւ փայլուն յաղթանակներ կ'արձանագրեն:

թեան տիրացած է:

1996ին, մասնաճիւղի վաստակաշատ անդամներէն՝ Վարդգէս Արապեանը «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսին արժանացած է օրուան Ծրջանային վարչութեան կողմէ: Իսկ Սարգիս Նուրեան, 2013ին ստանձնած է ՀՄԸՄի նա-





# ՀՄԸՄԻ Մոնթեպելլոյի Մասնաճիւղ

ւասարդեան 13րդ մարզախաղերու պատուոյ նախագահի պաշտօնը: Նաեւ, մասնաճիւղէն եղբայրներ Ռաֆֆի Պետրոսեան, Մանուկ Զէյթունեան եւ Արա Եսայեան արժանացած են շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն «Ծառայութեան չքանչան»ին:

Իր Հիմնադրութեան յաջորդող առաջին երկու տասնամեակներուն, այս մասնաճիւղը մեծ յաջողութիւններ արձանագրած է յատկապէս մարզական կեանքէն ներս: Անիկա մասնակցած է ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերուն եւ բազմաթիւ անգամներ տիրացած է Վոլիպոլի, պասքեթպոլի եւ ֆութպոլի ախոյեանութեանց:

Քանի մը անգամներ, որոշ ցնցումներ ապրելով Հանդերձ, շնորհիւ կարգ մը Հաւատաւոր ՀՄԸՄականներու՝ մասնաճիւղը յաջողած է ոտքի կանգնիլ: Անոր մարզական խումբերը, վերջին չորս տարիներուն, անընդմէջ մասնակցած են ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերուն: Սակայն, հետզհետէ շրջանի հայութեան եւ յատկապէս երիտասարդութեան՝ Մոնթեպելլոյի շրջանէն հեռանալը մեծապէս ազդած է մասնաճիւղի միութենական կեանքին:

Ներկայիս, մասնաճիւղը սկաւտական բաժանմունք չունի: Սակայն անոր մարզական կեանքը բաւական յուսադրիչ է: Մասնաճիւղի մարզական կեանքէն ներս



ակնյայտ է Գեւ Պաղոյեանի ներդրումը՝ իբրեւ ֆութպոլի աստղ: Մասնաճիւղի մարզիկները կը մասնակցին Համա-ՀՄԸՄական Հայաստանի, ինչպէս նաեւ այլ երկիրներու մէջ ՀՄԸՄի կեդրոնական վարչութեան կազմակերպած մարզախաղերուն: Հայաստանի մէջ կազմակերպուած վերջին Համա-ՀՄԸՄական մարզախաղերու թեթեւ աթլետի մրցումներուն մասնակցած սոյն մասնաճիւղի անդամներէն Անայի Մալազեանը, արժանացած է վեց արծաթէ եւ երկու պրոնզէ մետալներու, իսկ մանչերու

խումբը 400 մեթր դրօշաբարձի մրցումներուն երկրորդ հանդիսանալով՝ արժանացած է արծաթէ բաժակին:

Մասնաճիւղի վարչութիւնը կը գործակցի իր շրջանի Մեսրոպեան Ազգային վարժարանին հետ եւ ջանք կը թափէ վարժարանի աշակերտութիւնը ներգրաւելու իր մարզական շարքերը: Վարչութիւնը նաեւ կը հովանաւորէ հինգ տարեկան եւ վեր փոքրերու մարզական մարզումի ծրագիրներ, ուր յատկապէս կ'ուսուցանուին մարզանքի եւ մրցակցութեան իմաստն ու կարեւորու-

թիւնը: Միւս կողմէ, մասնաճիւղի ընկերային յանձնախումբը գաղութէն ներս կը կազմակերպէ Հաճելի ընկերային հաւաքներ՝ համայնքին եւ ՀՄԸՄին կապը ամուր հիմքերու վրայ դնելու հեռանկարով:

Մասնաճիւղի ներկայ վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ եղբայրներէն.

- Գեւ Պաղոյեան
  - Արա Մալազեան
  - Արթ Գումասեան
- Մասնաճիւղը ներկայիս ունի 74 մարզիկ եւ 9 գործօն անդամ:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**ՓԱՍՏԻՆՍ**

**ՀՅԳ «Լեռնավայր» Կոմիտէութիւն**  
**Փասատինայի Ս. Սարգիս Հայց. Առաք. Եկեղեցի**  
**ՀԵԳ «Նիկոլ Դուման» Ուխտ**  
**ՀՅԳ Պատանեկան Միութիւն**  
**ՀՕՄԻ «Սօւէ» Մասնաճիւղ**  
**ՀՄԸՄԻ «Ազատամարտ» Մասնաճիւղ**  
**Համազգայինի «Շահան Շահնուր» Մասնաճիւղ**  
**«Լեւոն Եւ Յասմիկ Թալեան» Ազգ. Մանկամտօր**  
**Տարեցներու Միութեան Փասատինայի Մասնաճիւղ**

**ՅԱՐԱՏԵՒ ՊԱՅՔԱՐ՝**  
**ՄԻՆՉԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ**

**Կը Շնորհաւորենք կեդրոնի բարերարներուն, ուղղեկից**  
**միութիւններուն, Շրջանի Եւ Համայն Հայութեան**  
**Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Փաստինայի «Ազատամարտ» Մասնաճյուղ

ՀՄԸՄԻ Ծրջանային վարչութիւնը, նկատելով հետզհետէ բազմացող Փաստինայի հայկական գաղութը եւ մասնաճյուղը ընդառաջելով 28 հոգինոց խումբ մը ՀՄԸՄականներու դիմումին, Փաստինայի մէջ ՀՄԸՄի մասնաճյուղ մը հիմնելու, դրական կը պատասխանէ անոր:

Մասնաճյուղի հիմնադիր ժողովը գումարուած է 20 Մարտ, 1977ին, 85 անդամներու մասնակցու-

համար կը հրատարակէ իր «Մենք» պարբերաթերթը:

Նկատի ունենալով, որ մասնաճյուղի հիմնադիր եւ այնուհետեւ անդամակցած անդամներու մեծամասնութիւնը եկած են էջրէֆիէի (Լիբանան) «Ազատամարտ» ակումբէն, որ նաեւ շրջանի ՀՄԸՄի կեդրոնն էր, 1992ի գումարուած մասնաճյուղի Ընդհանուր ժողովին, միաձայնութեամբ որոշում կ'առնուի մաս-



թեամբ եւ հետեւեալ հիմնադիր վարչութեան կազմը ընտրուած է. Իշխան Զարոյեան  
Հրաչ Ասատուրեան  
Նդիա Գոճայեան  
Արա Շիրտըմեան  
Մանուէլ Իւթիւճեան  
Ժագ Թիւթիւճեան  
Յովհաննէս Թաչճեան

Մասնաճյուղը իր հիմնադրութեան տարին իսկ, ֆուլթայլի եւ

նաճիւղը կոչել ՀՄԸՄի Փաստինայի «Ազատամարտ» մասնաճյուղ:

Անցնող տարիներու ընթացքին մասնաճյուղը իր աշխոյժ գործունէութեամբ կարողացած է հրապուրել իր շրջանի պատանիներն ու երիտասարդները, որոնք ընդգրկուած են մասնաճյուղի սկաուտական եւ մարզական խումբերուն մէջ:



պասքեթպոլի երկսեռ խումբերով մասնակցած է շրջանի ՀՄԸՄի համա-գաղութային երկրորդ Ողիմպիական մարզախաղերուն: 1978ին, մասնաճյուղը ունեցած է իր փոքրիկ ակումբը եւ նոյն տարին հրապարակային հանդիսութեամբ մը տօնախմբած է իր հիմնադրութեան առաջին տարեդարձը, մեծ ոգեւորութիւն ստեղծելով իր շրջապատին մէջ:

Մասնաճյուղը արագընթաց յաջողութիւն արձանագրելով, կարողացած է բազմացնել իր անդամներու թիւը: Հազիւ երկու տարեկան դարձած արդէն իսկ մասնաճյուղը կը հաշուէր 195 անդամ, որոնց 45ը սկաուտներ էին, 50ը՝ մարզիկներ, 100ը՝ գործօն անդամներ:

Յուսադրող այս յաջողութիւններուն մասին շրջանի հայութիւնը տեղեակ պահելու միտումով, 1983ին, մասնաճյուղի վարչութիւնը կարճ ժամանակուան մը

Թէեւ մասնաճյուղը կը գործէ իր շրջանի ձիվալաքեան Հայ կեդրոնէն ներս, ուր իրեն տրամադրուած է ժողովասրահ եւ գրասենեակ, ինչպէս նաեւ իր փոքր մարզիկներու համար կ'օգտագործէ կեդրոնի փոքր մարզադաշտը, սակայն մարզական շատ մը խումբերու փորձերու համար այլ մարզադաշտեր կը վարձուին, հսկայական ծախսերու տակ դնելով մասնաճյուղն ու անդամները: Այլապէս, մասնաճյուղի թուական պատկերը շատ աւելի մեծ կրնայ ըլլալ:

Մասնաճյուղը իր աշխոյժ գործունէութեամբ տիրական ներկայութիւն է իր շրջանէն ներս: Ան սերտօրէն կը գործակցի շրջանի ՀՅԳ «Լեռնավայր» կոմիտէութեան, Համագայիի, ՀՕՄԻ Սօսէ մասնաճյուղին, ՀԵԳ Պատանեկան եւ երիտասարդական միութեանց եւ Ս. Սարգիս եկեղեցւոյ հովիւ ու հոգաբարձութեան հետ:



Միշտ ներկայութիւն է գաղութի բոլոր հրապարակային եւ ներքին ձեռնարկներուն:

Յաջորդական վարչութիւնները, գեղեցիկ սովորութեան վերածած են, հինգ տարին անգամ մը տօնախմբելու մասնաճյուղի հիմնադրութեան տարեդարձը: 2017ին, մասնաճյուղը մեծ շուքով նշեց իր հիմնադրութեան 40ամեակը Լան-

վարչութեան կազմակերպած միջմասնաճյուղային, զանազան մրցումներուն եւ Նաւասարդեան մարզախաղերուն: Իսկ 2016ի տարեշրջանէն ի վեր, ամէն տարի, Օգոստոս ամսուն կը կազմակերպէ պասքեթպոլի միջմասնաճյուղային մրցումներ:

Հպարտութեամբ պէտք է ընդգծել, թէ մասնաճյուղի ֆուլթայլի



կըմ պանդոկի սրահին մէջ եւ անոր ընթացքին առ ի երախտագիտութիւն պարգեւատրեց մասնաճյուղին սատարած գործունեայ իր անդամները:

Մասնաճյուղը, իր ձեռնարկներուն եւ միութենական գործունէութեան եւ սկաուտական շաբաթական հաւաքներու համար գլխաւորաբար կ'օգտագործէ շրջանի ձիվալաքեան հայ կեդրոնը:

Միշտ ներկայութիւն է ՀՄԸՄի մասնաճյուղերու եւ Ծրջանային

մարզիկներէն Եուրա Մովսիսեան, այսօր ֆուլթայլի աշխարհէն ներս միջազգային ճանաչում ստացած մարզիկ մըն է, որ երբեք չուրանար ՀՄԸՄի «Ազատամարտ» մասնաճյուղին անդամակցութիւնը:

Մասնաճյուղէն հետեւեալ քոյր-եղբայրները իրենց արդիւնաբեր ու անխոնջ աշխատանքին համար, մասնաճյուղի առաջարկով եւ Ծրջանային վարչութեան կողմէ, արժանացած են շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն՝ Մառայութեան



# ՀՄԸՄԻ Փաստիճայի «Ազատամարտ» Մասնաճիւղ

չքանչանին: Երանչաններն ու համապատասխան հաստատագիրները յանձնուած են ամէն տարի Նոյեմբեր ամսուն կազմակերպուած ՀՄԸՄԻ Օրուան նուիրուած ձեռնարկին.-

Եղբ. Յակոբ Ղազարեան - 2015ին Քոյր Սօսի Սեմերճեան - 2016ին Քոյր Սիմա Կարապետեան - 2017ին

Եղբ. Սարգիս Թաթիկեան - 2018ին  
Երջանային մակարդակի վրայ, մասնաճիւղի երեք վաստակաշատ անդամ զոյգեր ստանձնած են

ճիւղերու բազմաթիւ խումբերով մասնակցած է Նաւասարդեան Մարզախաղերուն եւ ընդհանուր դասաւորման մէջ ախոյեանութեան արժանացած է պասքեթպօլի, ֆութպօլի եւ վոլիպօլի մարզաճիւղերուն մէջ: Մասնաճիւղի սկաուտական բաժանմունքը, իր արձանագրած յառաջդիմութիւններուն համար, տիրացած է նահատակ Վարդան Բախչեանի յիշատակին ստեղծուած «Երջուն Երջանաճաղիկ» բաժակին:

Մասնաճիւղի մարզական եւ սկաուտական խումբերը միշտ



Նաւասարդեան Մարզախաղերու Պատուոյ նախագահութիւնը.-  
Տէր եւ տիկ. Կարպիս եւ Թերեզ Քէմանճեան՝ 1997ի ՀՄԸՄԻ 22րդ Նաւասարդեան Մարզախաղերուն,  
Տէր եւ տիկ. Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեան՝ 2006ի ՀՄԸՄԻ Նաւասարդեան 31րդ Մարզախաղերուն,  
Տէր եւ տիկ. Պետիկ եւ Մարո Ֆերմանեան՝ 2014ի ՀՄԸՄԻ Նաւասարդեան 37րդ Մարզախաղերուն:

մասնակցած են ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան չորս տարին անգամ մը կազմակերպած Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն եւ բանակումներուն: Տակաւին բոլորովին վերջերը, մասնաճիւղէն խումբ մը արի-արեւուշներ միանալով չրջանի ՀՄԸՄԻ սկաուտական պատուիրակութեան, մասնակցած են ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած բանակումին՝ Բիւրականի մէջ, Հայաստան:

Մասնակցելով հանդերձ Երջանային վարչութեան կազմակերպչական եւ դաստիարակչական սե-

մինարներուն եւ աշխատանիստերուն, մասնաճիւղը ինք եւս առանձին դաստիարակչական դասախօսութիւններ եւ գործնական աշխատանքներ կը կազմակերպէ սկաուտական եւ մարզական իր խումբերուն համար:

Մասնաճիւղի երազանքն է, ունենալ ընդարձակ եւ բազմաթիւ մարզադաշտերով մարզահամալիր մը, որպէսզի կարենայ իր հոգածութեան յանձնուած յաջորդական սերունդները աւելի կատարեալ ձեւով դաստիարակել:

Մասնաճիւղի ներկայ վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէ.  
Անիթա Տէրտէրան, ատենապետ  
Նայիրի Գասպարեան  
Անահիտ Մանուկեան

Սիլվի Պաղտատեան  
Կարին Գէլոյեան  
Ժիրօ Թաթիկեան  
Շահէ Գարրիէլեան  
Պետիկ Գալայճեան  
Շանթ Տէր Ղազարեան  
Մասնաճիւղը կը հաշուէ 571 անդամ, որոնց 375ը մարզիկներ են, 85ը՝ սկաուտներ, իսկ 110ը՝ դանդան յանձնախումբերու մէջ գործող անդամներ:



ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏ**

**ՀՅԳ «Սիմոն Չաւարեան» Կոմիտէութիւն**  
**ՀՕՄԻ «Թալին» Մասնաճիւղ**  
**ՀՄԸՄԻ «Շանթ» Մասնաճիւղ**  
**Համազգայինի Քրեսենթա Հովիտի Մասնաճիւղ**  
**ՀՅԳ «Գարեգին Նժդեհ» Պատանեկան Միութիւն**  
**ՀԵԳ «Չարթօնք» Ուխտ**  
**Հայ-Ամերիկեան Տարեցներու Միութեան**  
**Քրեսենթա Հովիտի Մասնաճիւղ**

**Կը Շնորհաւորենք**  
**Շրջանի Ընկեր-Ընկերուհիները եւ Համայն Հայութիւնը**  
**Մաղթելով Նորանոր Նուաճումներ 2019ին**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՀՄԸՄԻ Կլենտէյլի «Արարատ» Մասնաճիւղ

Կլենտէյլի ՀՅԴ «Ահարոնեան» կոմիտէն, նկատելով, որ Կլենտէյլը հետզհետեւ հայահոտ դադուլթի կը վերածուի՝ անհրաժեշտ կը գտնէ ՀՄԸՄԻ մասնաճիւղ մը հիմնել այնտեղ եւ այս իմաստով կը դիմէ ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Ծրջանային վարչութեան:

Ընդառնալով կոմիտէի դիմումին՝ Ծրջանային վարչութիւնը 15 Գեկտեմբեր 1978ին, «Ահարոնեան» կոմիտէութեան Հայ կեդրոնի սրահին մէջ կը կազմակերպէ մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն կը հրաւիրէ նաեւ Ծրջանային վարչութիւնը, Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներ եւ մասնաճիւղի հիմնադիր 31 երկսեռ անդամներ:

Յայտնենք, որ հիմնադիր ժողովէն ամիսներ առաջ, շրջանը բնակող թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան (ՀՄԱԿ) անցեալի սկաուտներու խումբ մը, արդէն իսկ ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղին հետ սկաուտական աշխատանքներ եւ բանակումներ կ'իրականացնէր:



անոնք նաեւ ֆութպոլի խումբ մը կազմած էին:

Նոյն ժողովին կ'որոշուի նորատեղծ մասնաճիւղը կոչել Թեհրանի ՀՄԱԿին անունով՝ «Արարատ», իսկ մասնաճիւղի անդամակալ վարչութեան անդամ կ'ընտրուին հետեւեալ քոյր-եղբայրները.

- Ռուբիկ Գիւրջեան՝ ատենապետ
- Հրայր Մեսրոպեան (մահացած)
- Հիլդա Յովհաննիսեան
- Վարուժ Միրզայեան
- Վարուժ Ծիրտմեան

Սկզբնական տարիներուն, մասնաճիւղը կ'ունենայ երկու սենեակնոց կեդրոն մը, ուր աշխոյժ գործունէութիւն կը տանի: Այսօր, 40 տարիներ ետք, մասնաճիւղը նոյն թափով կը շարունակէ իր աշխատանքները, եւ շնորհիւ իր անցեալի ու ներկայի վարչական կազմերուն եւ անդամներու աննահանջ ու նուիրեալ գործունէութեան, ինչպէս նաեւ առատաձեռն նուիրատուներուն, կտակարարներուն եւ դրամաշնորհներուն՝ մասնաճիւղը տէր դարձած է երկու հսկայական կեդրոններու, ուր մեղուափեթակներու նման բեղուն գործունէութիւն կը կատարուի:

Անցած 40 տարիներուն ընթացքին, բնականաբար, մասնաճիւղը իր արձանագրած յաջողութիւններուն առընթեր՝ դիմագրուած է նաեւ մեծ դժուարութիւններ, որոնք, սակայն, նուիրեալ ու ՀՄԸՄԱ

Մականի բարձր ոգիով դաստիարակուած անդամներուն կողմէ հարթուած են ու պիտի շարունակուին հարթուիլ:

«Արարատ»ի շարքերէն անցած ու անոր գործունէութեանց մասնակցած են առաւել քան 6000 անդամներ: Մասնաճիւղի յարկին տակ հասակ առած փոքրիկները այսօր համայնքին մէջ կարկառուն դէմքեր դարձած են՝ բժշկական, ազգային, հասարակական, իրաւագիտական եւ բազմաթիւ այլ բնագաւառներու մէջ:

Աւելին, վերջին քսան տարիներու դրական գործունէութեան պատճառով, մասնաճիւղը աւելի քան մէկ միլիոն տուար կազմող նպաստներ ստացած է, իսկ օր ըստ օրէ ընդարձակուող իր ծրագիրներուն եւ գործունէութեանց շնորհիւ՝ անիկա իր համայնքին վատհուսութիւնը, սէրն ու յարգանքը կը վայելէ:

Մասնաճիւղը մեծաթիւ խումբերով մասնակցած է Ծրջանային վարչութեան կազմակերպած տարեկան Նաւասարդեան մարզախաղերուն եւ տարբեր մարզաձեւերու


մէջ ախոյեան հանդիսացած: Ցատկանշական է, որ այս տարի, ՀՄԸՄԻ 43րդ Նաւասարդեան մարզախաղերուն, Կլենտէյլի մասնաճիւղի մարզական բաժանմունքը ախոյեան հանդիսացաւ ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկփոնկի ճիւղերուն մէջ:

Նաեւ, 2018ին, ՀՄԸՄԻ Նաւասարդեան 43րդ մարզախաղերու Պատուոյ նախագահութիւնը ստանձնեցին սոյն մասնաճիւղի վաստակաշատ անդամներէն՝ տէր եւ տիկ. Համլէթ եւ Կրեթա Չրախչեանները: Իսկ Ծրջանային վարչութիւնը, մասնաճիւղին հետեւեալ նուիրեալ անդամներուն շնորհած՝ «Տիպար ՀՄԸՄական»ի տիտղոսը.

- Սեւակ Սագինեան (մահացած)՝ 1991ին
- Ժասիկ Զառահեան՝ 2001ին
- Լիլիթ Բաղդասարեան՝ 2005ին
- Ռուբէն Գիւրջեան՝ 2013ին
- Համլէթ Չրախչեան՝ 2014ին
- Գրիգոր Մկրեան՝ 2016ին

Կլենտէյլի մասնաճիւղի մարզական եւ սկաուտական աշխատանքները կը կատարուին մասնաճիւղի զոյգ կեդրոններուն մէջ, իսկ հարկ եղած պարագային՝ նաեւ վարձու այլ մարզադաշտերու վրայ:

Մարզական թեւի թուային աճին իբրեւ հետեւանք, 2004էն ի վեր անիկա բաժնուած է երկու բաժանմունքներու՝ պասքեթպոլի եւ ընդ-



հանուր մարզական: Զոյգ բաժանմունքներն ալ, աօրեայ իրենց փորձերէն անկախ, կը մասնակցին նաեւ շրջանային, միջմասնաճիւղային եւ այլ մարզախաղերու: Մարզական բաժանմունքը ցարդ կազմակերպած է եւ կը շարունակէ կազմակերպել թէ՛ միջմասնաճիւղային եւ թէ՛ առանձին մարզախաղեր, որոնցմէ կ'արժէ նշել հետեւեալները.


- Կլենտէյլի Բարեկամական մարզախաղեր (Glendale Friendship Games)
- Պասքեթպոլի HABC մարզախաղեր
- Վոլիպոլի մրցաշարք
- Ֆութպոլի HASC մրցաշարք
- Փինկփոնկի Sanctioned Tournament՝ վաւերացուած USA TT-ի կողմէ:

Մասնաճիւղը մեծաթիւ մասնակցութիւն բերած է նաեւ արտասահմանի թէ՛ Հայրենիքի մէջ ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան

կողմէ կազմակերպուած Համագաղութային եւ Համա-ՀՄԸՄական բոլոր մարզախաղերուն եւ բանակումներուն:

2003ին, առաջին անգամն ըլլալով, այս մասնաճիւղի Մարզական բաժանմունքը Կլենտէյլ քաղաքին անունով մասնակցեցաւ Հայաստանի պետութեան կողմէ Հայրենիքի մէջ կազմակերպուած Համահայկական խաղերուն եւ փայլուն յաղթանակներ արձանագրեց: Նոյն մրցումներուն, տղոց պասքեթպոլի խումբը ախոյեան հանդիսացաւ, իսկ աղջիկներունը գրաւեց երկրորդ դիրքը:

Հայրենասիրութենէ մղուած, մասնաճիւղը իր Հայրենիք այցելութիւններուն ընթացքին մարզական բազմաթիւ նուէրներ եւ պիտոյքներ նուիրած է տեղական դպրոցներու, ինչպէս նաեւ Հոգացած է երեւանի թիւ 106 եւ 86 դպրոցներու մարզադաշտերուն նորոգման եւ բարեկարգման ծախսերը:



# ՀՄԸՄԻ Կլենտէյլի «Արարատ» Մասնաճիւղ

Մասնաճիւղի Մարզական բաժանմունքէն կարգ մը մարզիկ-մարզկուհիներ, իրենց լաւ խաղարկութեան համար ընդգրկուած են Հայրենի պասքեթպոլի հաւաքական խումբին մէջ եւ կարելոր դեր խաղացած են խումբին արձանագրած յաջողութեանակներուն մէջ:

2010ին, աղջկանց Ա. դասակարգի պասքեթպոլի մարզկուհիներէն՝ Քրիսթին Քէփենէքեան եւ Արփինէ Ամիրխանեան ընդգրկուեցան Հայաստանի աղջկանց ազգային հաւաքական խումբին մէջ, որ մասնակցեցաւ եւ խաղացան հանդիսացաւ եւրոպական ութ փոքր երկիրներու միջեւ կազմակերպուած մրցաշարքին: Մրցաշարքի լաւագոյն մարզիկը ճանչցուեցաւ Քրիսթին Քէփենէքեան:

2010ին, մասնաճիւղի պասքեթպոլի Ա. դասակարգի մանչերու խումբէն մարզիկներ Զարեհ Զարգարեան եւ Անտրէ Սփիլթ-Մկրտչեան հրաւիրուեցան Հայաստանի մանչերու ազգային հաւաքական խումբը, որ նաեւ մասնակցեցաւ եւրոպական ութ փոքր երկիրներու միջեւ կազմակերպուած մրցաշարքին՝ խաղացան հանդիսանալով: Խումբին խմբապետ նշանակուեցաւ Զարեհ Զարգարեանը, իսկ նշեալ մրցաշարքի լաւագոյն մարզիկը յայտարարուած է Անտրէ Սփիլթ-Մկրտչեան:

Համա-ՀՄԸՄական բանակումներուն մասնակցած Կլենտէյլի մասնաճիւղի արի-արեւունչները եւս օժանդակած են Արցախին եւ Հայաստանին:

Անոնք օգտակար հանդիսացած են Գիւմրիի մէջ դպրոցի մը վերանորոգման աշխատանքներուն եւ տարբեր այլ ծրագիրներու: Մասնաճիւղի 40ամեակին առիթով, նշեալ անդամները «Հայաստան ծառատունկ» ծրագիրին հետ գործակցաբար 40 ծառ տնկած են Հայրենիքի մէջ:

Տեղական իմաստով, հպարտութեամբ պէտք է արձանագրել, որ այս մասնաճիւղին սկաուտները, Նորընծայի, Երկրորդ եւ Առաջին սկաուտական կարգերէն անկախ՝ յաջողութեամբ արժանացած են նաեւ ՀՄԸՄի Վկայեալ կարգին եւ Ամերիկեան Սկաուտութեան (Boy Scouts of America - BSA) Wood Badge-ին, ինչպէս նաեւ՝ Արարատեան կարգին: Սկաուտական բաժանմունքին մէջ, մասնաճիւղը առաջինն է, որ սկսած է հետեւելու BSA-ի Eagle Scout կարգին, որ BSA-ի բարձրագոյն կարգն է եւ որուն ցարդ արժանացած են 21 սկաուտներ:

Դաստիարակչականի մարզին մէջ, մասնաճիւղը՝

- Ամէն տարի կը կազմակերպէ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման ծրագիրներ.
- 6 Հոկտեմբեր 2005ին նշեց Հայոց զիբերու գիւտի 1600ամեակը.
- Ամէն տարի կը կազմակերպէ մշակութային ձեռնարկներ.
- Woodbury Համալսարանին հետ գործակցաբար կազմակերպած է Elevate Talks նախաձեռնութիւնը.
- Զեռնարկած է Ընտանեկան եւ



Առողջ ուտեստեղէնի մասին սեմինարներ.

- Կրթաթոշակներ տրամադրած է իր յոռաջողէմ ուսանող անդամներուն.

- Sportsmanship award-ներ շնորհած է:

Մասնաճիւղի յատկանշական ծրագիրներէն մեծագոյնը պէտք է նկատել 2005ին կազմակերպուած եւ Հայոց զիբերու գիւտի 1600ամեակին նուիրուած՝ բարձր մակարդակի նկարչութեան ցուցահանդէսը, որ հովանաւորուեցաւ Արեւմտեան թեմի Ազգային առաջնորդարանին եւ Լոս Անճելըսի Հայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան կողմէ: Ցուցահանդէսին բացումը կատարեց

րեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս, որ այդ օրերուն Հայրապետական այցելութեամբ շրջանա կը գտնուէր: Պատմական այս նախաձեռնութեան մասնակցեցան մեծ թիւով արուեստասէրներ:

Մասնաճիւղը նաեւ բախտաւորութիւնը ունեցած է ընդունելու Forest Lawn ASF Endowment-ը եւ Վահէ Արծրունիի իշխանական նուիրատուութիւնը, որոնք մեծապէս նպաստած են մասնաճիւղի վերելքին:

Երկու կեդրոններուն մէջ կը կատարուին մարզական, սկաուտական եւ մշակութային աշխատանքներ: Մասնաճիւղի կեդրոններուն



ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## Կը Շնորհաւորենք Շրջանի Եւ Համայն Հայութեան Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը ՅԱՐԱՏԵՒ ՊԱՅՔԱՐ ՄԻՆՉԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ

ՀՅԴ «Սողոմոն Թեկիբեան» Կոմիտէութիւն  
Ֆրեզնոյի ՀՅԴ-ՀԵԴ «Գէորգ Չաւուշ» Ուխտ  
ՀՅԴ «Քրիստափոր» Պատանեկան Միութիւն  
Ֆրեզնոյի Հայ Դատի Յանձնախումբ - ANC Fresno  
ՀՕՄԻ Ֆրեզնոյի «Մայր» Մասնաճիւղ  
ՀՕՄԻ Ֆրեզնոյի «Սոփիա» Մասնաճիւղ  
Համազգայինի  
Ֆրեզնոյի «Դանիէլ Վարուժան» Մասնաճիւղ  
ՀՄԸՄԻ Ֆրեզնոյի «Սասուն» Մասնաճիւղ

**ՖԲԵՉՆՕ**

ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՆՈՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ ԿԼԵՆՏԵՅԼԻ «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՈՂ

մէջ հիւրընկալուած են Մեծի Տանն Կիլիկիոյ երկու կաթողիկոսներ՝ Գարեգին Ա. եւ Արամ Ա., ինչպէս նաեւ պետական բարձրաստիճան բազմաթիւ պաշտօնեաներ եւ մասնաճիւղի բարերարներ: Մասնաճիւղին անունը կրող երգ-

ղի վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէն.

- Սերժիկ Գրակասեան՝ ատենապետ
  - Ռուբինա Արշակեան
  - Էմիլ Տէր Գէորգեան
  - Լինդա Մուսայեան
  - Վազրիկ Խոսրովեան
  - Մելինէ Իւնանեան
  - Կարէն Մեարոպեան
  - Մոսիկ Քիզիրեան
  - Զարեհ Մովսիսեան
  - Հենրիկ Սարգարբէգեան
  - Թալին Խեչումեան
- Այս տարեշրջանին, ՀՄԸՄԻ «Արարատ» մասնաճիւղը կը հաշուէ 1731 անդամներ,



չախումբը, շաբաթական փորձեր կատարելով՝ կը պատրաստուի տարեկան իր համերգին, ինչպէս նաեւ մասնակցութիւն կը բերէ համայնքի հայ եւ տեղական ծրագիրներու:

որոնք կը գործեն հետեւեալ բաժանմունքներուն մէջ.

- Սկաուտական բաժանմունքը ունի 400 անդամ.
- Մարզական բաժանմունքին մէջ ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելողը պատրաստուող մարզաձեւն է, որուն անդամ են 939 մարզիկ-մարզկուհիներ.
- Մնացեալ մարզաձեւերուն անդամ են 518 մարզիկ-մարզկուհիներ.
- Երէցական բաժանմունքին անդամ է 223 հոգի.
- Մշակութային բաժանմունքին՝ 37 հոգի.
- Ծրագիրներու բաժանմունքին՝ 75 հոգի:

Մասնաճիւղի կեդրոնին մէջ յաջողութեամբ կը շարունակուին նաեւ փոքրերու ամառնային ամէնօրեայ ծրագիրը:

Սոյն մասնաճիւղը ունի 300 կամուրներ, որոնք իրենց օգտակար ներդրումը կը բերեն մասնաճիւղի նիւթական բաժնի հզօրացման: Ըստ պահանջի՝ անոնք նաեւ հաստիքաբեր բազմազան ձեռնարկներ կը կազմակերպեն:

Ներկայիս, Կլենտէյլի մասնաճիւ-




**Արեւելեան Հովիտ**

ՀՅԴ «Բարգէն Սիւնի» Կոմիտէ  
Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ  
Հոգաբարձութիւն  
Եւ Երեսփոխանական կազմ,  
Տիկնանց Միութիւն, Դպրաց Դաս, Կիրակնօրեայ Դպրոց  
ՀՕՄԻ «Մեղրի» Մասնաճիւղ  
ՀՄԸՄԻ «Չաւախք» Մասնաճիւղ

**Կու Գան Շնորհաւորելու Համայն Հայութեան  
Ամանորը Եւ Ս. Ծնունդը,  
Հայցելով Խաղաղութիւն Եւ Երջանկութիւն**

# Merry Christmas and Happy New Year



The holiday season is a good time to reflect on how all of us can take part in bringing joy to the world. Sharing kindnesses great and small is a simple way to celebrate our humanity.

From everyone at Dignity Health to friends and family near and far, we hope you are blessed with good health and happiness that lasts throughout the year.

**Hello humankindness®**



**Dignity Health.**  
Glendale Memorial Hospital  
and Health Center



# SIDON Travel

*On behalf of the staff at Sidon Travel,  
we wish our clients & friends a very  
Merry Christmas!  
Thank you for your continued support  
& loyalty for the past 50 years. We truly  
appreciate each and every one of you  
and wish you a healthy 2019!  
- Sidon Travel & Avakian Family  
In loving memory of Garo & Alice Avakian*

**Հնրհաւոր Նոր Տարի և Սուրբ Ծնունդ**

*Merry Christmas & Happy New Year*

JUNE 19 - 29, 2019



**2019 ARS**  
INTERNATIONAL TOUR

MARBELLA SEVILLE LISBON PORTO BARCELONA

PREFERRED PARTNER OF  
**DELTA**  
VACATIONS



*Let's Vacation*

*2019 Armenia Tours*  
Designed by **SIDON Travel**



*Armenia & Karabagh: Offered June, July, September of 2019*  
*Armenia & Russia: Offered September of 2019*

**428 S. Central Ave.  
Glendale, CA 91204  
Toll-Free: 800-826-7960  
818-553-0777  
info@sidontravel.com**



MERRY  
*Christmas*  
& HAPPY NEW YEAR

FROM

*The*

*Sulahian*

*Family*



G I O V A N N A W H E E L S . C O M



**Շնորհալուր Նոր Տարի  
եւ Ա. Ծնունդ**

**Merry Christmas  
and Happy New Year**

*With the Compliments of*  
***Kolanjian Brothers***  
***SARKIS PASTRY***

Three Locations to serve you

1111 S. Glendale Ave.  
Glendale, CA  
818-956-6636

1776 E. Washington Blvd.  
Pasadena, CA  
626-398-3999

2424 Ball Road, Anaheim, CA  
714-995-6663

# ՀՄԸՄԻ Օրենն Քաունթիի «Սարդարապատ» Մասնաճիւղ

ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութեան կազմակերպած 1978ի Միջ-մասնաճիւղային Գ. Ողիմպիական խաղերու փակման Հանդիսութեան, Օրենն Քաունթիէն խումբ մը երիտասարդներ, ՀՄԸՄական Արտաշ Բէօլլեանի նախաձեռնութեամբ կը տողանցեն, Օրենն Քաունթիի մէջ ՀՄԸՄի մասնաճիւղ մը բանալու ակնկալութեամբ:

Ի տես այս գեղեցիկ երեւոյթին, Օրենն Քաունթիի ՀՅԳ «Արմէն Գարօ» կոմիտէն, իր շրջանին մէջ եւս ՀՄԸՄի մասնաճիւղ մը հիմնելու դիմում կը կատարէ Շրջանային վարչութեան եւ դրական

Մեծ ոգեւորութեամբ հիմնուած մասնաճիւղի գործունէութիւնը կը հրապարակէ իր շրջապատի երիտասարդութիւնը, որուն շնորհիւ մասնաճիւղի յատկապէս մարզական թելը մեծ ուստում կ'արձանագրէ, կազմելով զանազան խումբեր:

Հազիւ մէկ տարուան կեանք ունեցող մասնաճիւղի ֆութպոլի խումբը կը մասնակցի Օրենն Քաունթիի տեղական ֆութպոլի մրցաշարքին եւ խոյեանութեան կը տիրանայ:

Նոյն տարին, մասնաճիւղը կը կազմակերպէ ՀՄԸՄի միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցումներ: Յունուար 1983ին, մասնաճիւղի



պատասխան կը ստանայ: Շրջանային վարչութեան հրաւերով, մասնաճիւղի հիմնադիր ժողովը տեղի կ'ունենայ 12 Յունուար, 1979ին, Բաֆֆի Ակուբեանի Ֆաունթըն վալիի նպարատուն-ճաշարանի սրահին մէջ: Ժողովին կը մասնակցին 48 հիմնադիր անդամներ: Շրջանային վարչութեանէն ժողովին կը մաս-

թեթեւ աթլետի մարզիկները կը մասնակցին Օրենն Քաունթիի վազքի մրցումներուն եւ կը նուաճեն մրցաշարքի խոյեանութիւնը: Փոքրաթիւ հայկական այս գաղութին մէջ հիմնուած ՀՄԸՄի այս մասնաճիւղը մարզական եռուն կեանք մը կ'ապրի: Նախասարգեան յաջորդական մարզախաղերուն կ'արձանագրէ



նակցին ատենապետ Քերր Առաքելեան, Յակոբ Օվայեան, տորթ. Սարգիս Արեւեան, Մինաս Մարգարեան եւ Պարգեի Շիրինեան: Նորակազմ մասնաճիւղի վարչութեան անդամ կ'ընտրուին Հետեւեալ քոյր-եղբայրները. Տորթ. Կարօ Գերձակեան Բաֆֆի Ակուբեան Սիւզի Յարութիւնեան Կարպիս Գարամարտեան Ժիրայր Ներսէսեան Գէորգ Այվազեան Գրիգոր Ներսէսեան

բազմաթիւ յաղթանակներ: Օրենն Քաունթիի Ս. Քառասնից մանկանց եկեղեցւոյ, Ղուկասեան սրահին եւ Արի Կիրակոս Մինասեան ազգային վարժարանի համալիրի կառուցումէն ետք, մասնաճիւղը Հնարաւորութիւն կ'ունենայ նաեւ կազմելու իր սկաուտական բաժանմունքը: Այնուհետեւ, ազգային պատկանելիութեան գիտակցութիւնն ու յաղթանակի ոգին իր անդամներուն մէջ դրօշմելու միտումով, յատկապէս իմտի ունենալով Սարգա-



րապատի յաղթական ճակատամարտը, մասնաճիւղը կը կոչուի ՀՄԸՄի Օրենն Քաունթիի «Սարդարապատ» մասնաճիւղ: Մասնաճիւղը մարզական, սկաուտական եւ ընկերային իր գործունէութեան առընթեր կը մասնակցի նաեւ գաղութի հրապարակային ձեռնարկներուն եւ ազգային տօնակատարութիւններուն: Սակայն հետզհետէ մասնաճիւղի տարեց անդամներու նոսրացումը, հայ ընտանիքներու կեդրոնէն հեռու ապրելու իրողութիւնը, կազմակերպուող մարզական մրցումներու վայրերու հեռաւորութիւնը, մեծ ազդեցութիւն ու-

նեցան մասնաճիւղի թուական պատկերի նուազման վրայ: Սկաուտ խմբապետներու պակասը նաեւ իր ժխտական անդրադարձը ունեցաւ մասնաճիւղի սկաուտական բաժանմունքի տկարացման վրայ եւ նոյնիսկ որոշ ժամանակաշրջան մը մասնաճիւղը սկաուտական բաժանմունք չունեցաւ: Սակայն մասնաճիւղի կարգ մը անդամներու նուիրումին եւ ՀՄԸՄի հանդէպ ունեցած հաւատքին շնորհիւ, վերջին տարիներուն մասնաճիւղը դարձեալ ծաղկում կ'ապրի:

## JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES

Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու Դենի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:

### Քաղաքացիութեան Կեդրոն

1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201  
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

-Բոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ -Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...



**Jenny Abrahamian**  
-Թարգմանութիւններ  
-Լիւազօրագրեր/ Appostille  
**Նոտար/Notary**

Ծառայութիւններ  
-Հէշտ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան թոշակ SSI-SSA  
-Medi-Cal  
-CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի



**Շուտով երկրորդ գրասենեակի բացում Orange County-ի մէջ (մանրամասնութիւնները յետագային)**

**Կը շնորհաւորենք համայն հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը**

# ՀՄԸՄԻ Օրենն Քաունթիի «Սարդարապատ» Մասնաճիւղ

Մասնաճիւղը կը սկսի ամսական դրուժեամբ Օրենն Քաունթիի հայ կեդրոնէն ներս ընկերային երեկոներ կազմակերպել, որ նիւթականին առընթեր նաեւ զարկ կուտայ մասնաճիւղի ընկերային կեանքի զարգացման:

Մասնաճիւղը նոր եռանդով կը շարունակէ կազմակերպել փոքր դասակարգի միջմասնաճիւղային պասքեթպոլի մարզախաղերը, ինչպէս նաեւ իր մարզական խումբերով կը մասնակցի ՀՄԸՄի քոյր մասնաճիւղերու կազմակերպած միջմասնաճիւղային եւ ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերուն:

«Սարդարապատ»ի մարզիկները ոգեւորուեցան կը մասնակցին նաեւ Համա-ՀՄԸՄական Մարզախաղերուն: 2017ի Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն, մասնա-

ճիւղէն 4 մարզիկներ մաս կազմած են շրջանի պասքեթպոլի ներկայացուցչական խումբին, ինչպէս նաեւ թեթեւ ակթիւթի մարզիկներու խմբակ մը, ընկերակցուեցան մասնաճիւղի վարչութեանէն երկու անդամներու: Այս մարզախաղերուն մասնակցութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծեց մասնաճիւղէն ներս:

Հպարտութեամբ պէտք է ընդգծել, թէ մասնաճիւղէն երկու վաստակաշատ ՀՄԸՄական գոյգեր, Պատուոյ նախագահութիւնը ստանձնեցին ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերուն.

Տէր եւ տիկ. Պետիկ եւ Մարօ Ֆերմանեան՝ 2014ի Նաւասարդեան 39րդ մարզախաղերուն, Տէր եւ տիկ. Վիգէն եւ Նօնօ Աբէլեան՝ 2017ի Նաւասարդեան



42րդ մարզախաղերուն:

Նաեւ, մասնաճիւղի վարչութեան խնդրանքով, հետեւեալ քոյր եղբայրները արժանացած են շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն Մառայութեան շքանշանին:

Եղբ. Վիգէն Աբէլեան, 2015ին.

Քոյր Զարուհի Տէր Դաւիթեան, 2016ին.

Եղբ. Վիգէն Տաքէսեան, 2017ին.

Եղբ. Պաղտիկ Օհանեան, 2018ին.

Մասնաճիւղը մօտէն կը գործակցի ՀՄԸՄի Շրջանային վարչութեան հետ եւ մաս կը կազմէ անոր բոլոր ձեռնարկներուն, յատկապէս՝ դաստիարակչական սեմինարներուն:

Մասնաճիւղի 2017-2018 տարեշրջանի կազմը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէ.

Նազարէթ Տիչոյեան՝ Ատենապետ

Հրաչ Ապտուլեան

Շանթ Աբէլեան

Դաւար Աբէլեան

Նարօ Սապունճեան

Թանիա Եուսիֆէրրօ

Ալիսա Փանոսեան

Մասնաճիւղին մարզական բաժանմունքը աշխոյժ է պասքեթպոլի, ֆութպոլի, թեթեւ ակթիւթի, լողի, թենիսի եւ ճատրակի մարզաճիւղերուն մէջ: Ներկայիս իր անդամներուն թիւը 169ի հասած է, որուն 148ը մարզիկներ են, 13ը՝ սկաուտներ, իսկ մնացեալը գործօն անդամներ:



ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## Միքայէլ Հացպանեան

Կը Շնորհաւորէ  
Իր Ազգականներուն,  
Բարեկամներուն  
եւ Ընկերներուն

Նոր Տարին եւ Ս. Ծնունդը  
Թող Այս Նոր Տարին  
Բերէ Շատ Բարիք՝  
Համայն Աշխարհի  
Մարդոց Անխրիք

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## Չաւէն Եւ Հալինա Պէրպէրեաններ Եւ Ընտանիք

Չերմօրէն  
Կը շնորհաւորենք  
ձեր Նոր Տարին  
Եւ Սուրբ Ծնունդը,  
Մաղթելով Որ  
Իրականանան  
Ձեր Բոլոր Իղձերը

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Սան Ֆերնանտո Հովիտի «Մասիս» Մասնաճիւղ

1979ին, շրջանը հաստատուած խումբ մը հաւատաւոր ՀՄԸՄականներ, որոնցմէ մաս մը արդէն իսկ ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղին անդամագրուած էին, գրաւոր դիմում կը կատարեն ՀՄԸՄի Շրջանային վարչութեան, Սան Ֆերնանտո Հովիտի մէջ մասնաճիւղ մը հիմնելու խնդրանքով: Շրջանային վարչութիւնը ընդառաջելով դիմումին, 16 Օգոստոս 1979ին, 15 մասնակիցներով խորհրդակցական հանդիպում մը կ'ունենայ մասնաճիւղի հիմնադրութեան հաւատացող ազգային Քրիս Աբգարեանի բնակարանը, ուր մասնաճիւղը հիմնելու որոշումը կ'առնուի:

Շրջանային վարչութեան իր վաւերացումը կը ստանայ 25 Հոկտեմբեր, 1979ին:  
Մեծ ոգևորութեամբ հիմնուած «Մասիս» մասնաճիւղը, հազիւ մէկ տարեկան (1980), կ'ունենայ իր սկաուտական խորհուրդն ու մարզական բաժինը: Նոյն տարին, մասնաճիւղի պատրաստութիւնը Ա. խումբը ՀՄԸՄի Պատրաստութիւնի կիսամյակային մրցաշարի արտօնակցական կը տիրանայ:  
1981ին, մասնաճիւղի մեծաթիւ սկաուտական բաժանմունքը կը կազմակերպէ իր սկաուտական առաջին բանակումը, որ մեծ ոգևորութիւն կը ստեղծէ բանակողներուն եւ այցելուներուն մօտ:



Մինչ այդ, Յունիս 1979ին, ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղի նախաձեռնութեամբ սկաուտական խումբեր կազմուած էին շրջանին մէջ, որոնց թիւը 60ի կը հասնէր:  
Շրջանային վարչութեան հրաւերով, 20 Սեպտեմբեր 1979ին, Սրբոց Նահատակաց Ֆերահեան Ազգային վարժարանի Տիգրանեան սրահը կը գումարուի մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն ընթացքին հետեւեալ քոյր-եղբայրները հիմնադիր վարչութեան անդամ կ'ընտրուին.  
Քրիս Աբգարեան  
Կարօ Պետրոսեան  
Ժիրայր Պոյաճեան  
Նուհիկ Կիւլէքեան  
Վարդգէս Թուլումեան  
Ալիս Թոփալեան  
Վահան Պապամեան  
Կարօ Մարգարեան  
Բաֆֆի Սարգիսեան (Սկաուտ խմբապետ)

Իսկ մարզական բաժանմունքը ունէր երեք պատրաստութիւն (1 մանչերու, 2 աղջիկներու), մանչերու վոլիպոլի խումբ մը, ինչպէս նաեւ փինկ-փոնկի երկսեռ մարզիկներ: Մարզականէ եւ սկաուտականէ անդին, կ'աւելնայ թիւը նաեւ մասնաճիւղի երիտասարդ անդամներուն: Մասնաճիւղի ընդհանուր թիւը կը հասնի 345ի:



Մասնաճիւղի վարչութեան կողքին կը գործեն Սկաուտական խորհուրդ, Մարզական եւ Ընկերային յանձնախումբեր, ինչպէս նաեւ երիտասարդական բաժանմունք:  
1983ին, Շրջանային վարչութեան թելադրանքով մասնաճիւղը կ'անուանուի Հայութեան սրտի մօտիկ եւ շատ սիրելի «Մասիս» լերան անունով:  
1985ին, մասնաճիւղը կը մասնակցի Նաւասարդեան 10րդ մարզախաղերուն եւ ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւէ երկրորդ տեղը:  
Վաստակաշատ ՀՄԸՄականներ տէր եւ տիկ. Ժիրայր եւ Սրբուկ

Մասնաճիւղը կը դիմադրուի նաեւ դժուարութիւններ: Անոր հոգածութեան յանձնուած նորահաս սերունդներուն ՀՄԸՄի իսկական իմաստն ու արժէքները հասկցնող կամաւորներու պակասը դժուար է, սակայն վարչութիւնը, զանազան միջոցներով կը փորձէ այդ բացը գոցել:  
Անցնող 36 տարիներու ընթացքին մասնաճիւղի մարզական խումբերու եւ սկաուտական բաժանմունքներու աշխատանքային վայրերու յարատեւ փոփոխութիւնները, երբեմն յուսալքութեան առաջնորդած են զանոնք:



Սարգիսեաններու իշխանական նուիրատուութեամբ, սեփական մարզադաշտ ունենալու իրողութիւնը եւս մեծապէս կը նպաստէ շրջանի մարզասէր երիտասարդութիւնը ներգրաւելու մասնաճիւղի շարքերէն ներս:  
Եօթ տարիներէ ի վեր մասնաճիւղի կազմակերպած Փութպոլի եւ այս տարուան (2018) վոլիպոլի մրցաշարերը, իրենց դրական ազդեցութիւնը ունենցած են մասնաճիւղի մարզական բաժանմունքի յառաջդիմութեան: Իսկ նորագոյն մարզական եւ ընտանեկան բանակումները, առաւել կը նպաստեն մասնաճիւղի թուական աճին:

Քնական է մասնաճիւղը կը դիմադրուի նաեւ դժուարութիւններ: Անոր հոգածութեան յանձնուած նորահաս սերունդներուն ՀՄԸՄի իսկական իմաստն ու արժէքները հասկցնող կամաւորներու պակասը դժուար է, սակայն վարչութիւնը, զանազան միջոցներով կը փորձէ այդ բացը գոցել:  
Անցնող 36 տարիներու ընթացքին մասնաճիւղի մարզական խումբերու եւ սկաուտական բաժանմունքներու աշխատանքային վայրերու յարատեւ փոփոխութիւնները, երբեմն յուսալքութեան առաջնորդած են զանոնք:

ԸՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## Հայկուշ Քեղինեան- Քոհլըր

### Ի յիշատակ իր ծնողներուն Պետրոս եւ Մանուշակ Քեղինեաններուն

ԸՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ ՍԱՆ ՖԵՐՄԱՆՈ ԱՆՎԻՍԻ «ՄԱՍԻԱ» ՄԱՍՈՒՄ

Նիւթականի չգոյութեան հետեւանքով նոր մարզագաղտի դանդաղ շինարարութեան ընթացքը եւ զայն օգտագործելու սահմանափակ ժամերը եւս դժուարութիւններու կը մատենն մարզական խումբերը:

Այսուհանդերձ, յաջորդական վարչութիւնները ամէն ջանք թափած են հետաքրքրական ծրագիրներով խանդավառութիւն ստեղծելու մասնաճիւղէն ներս: Սկաուտական շարժման հաւաքները, ըստ յարմարութեան, տեղի կ'ունենան O'Melvany գրաստանին մէջ եւ Ֆերահեան Ազգային վարժարանի շրջափակէն ներս: Մեծ ջանք կը թափուի նաեւ մարզական փորձերը կատարելու ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեան մարզագաղտին վրայ, Canoga Park, որ նաեւ կ'օգտագործուի իբրեւ կեդրոն:

Մասնաճիւղը միշտ ներկայութիւն է իր համայնքէն ներս: Սկաուտական բաժանմունքը Արեւմտեան ԱՄՆի շրջանի աշխատանքներուն մասնակցելու զուգահեռ, ներկայութիւն է նաեւ իր շրջանի հանրային ձեռնարկներուն: Յաջորդական վարչութիւնները կը կազմակերպեն հանգանակային ձեռնարկներ, դաշտապտոյտներ, երիտասարդութեան կամուրջ աշխատանքի կարելիութիւններ, ինչպէս նաեւ բարեկամական խաղեր:



կը կազմեն հանրածանօթ պասքեթպոլի խումբերուն.

Նարեկ Քոփուշեան, – Կեդրոնական Պասքեթպոլի Հիմնարկ (Central BB Association)

Մայք Գանիքեան, Գերմանիա – Պասքեթպոլի Գերմանիա Կէրի Ժիլիքեան, Այտահո Նահանգի թիւ 1 դասակարգ (Idaho State Div. 1)

Ճաք Կարապետեան, Քանսաս

ՀՄԸՄականներ ստանձնած են ՀՄԸՄի Մարզախաղերու Պատուոյ նախագահութիւնը եւ լրովին կատարած են իրենց վստահութեամբ պարտականութիւնները:

Տէր եւ տիկ. Սարգիս եւ Սիւզան Կիտցինեան, 2003ին  
Տէր եւ տիկ. Զարլի եւ Ճիլլի Կակեան, 2004ին

Մասնաճիւղէն Տիպար ՀՄԸՄականի տիտղոսին արժանացած են եղբայրներ՝  
Ժիրայր Պոյաճեան, 1989ին  
Կարո Գազանճեան, 2002ին  
Ալպեր Ունճեան, 2008ին  
Ջաքար Չորպանեան, 2009ին

Մասնաճիւղէն հետեւեալ եղբայրները արժանացած են Շրջանային վարչութեան Մատուցութեան շքանշանին.  
Եղբ. Քրիս Աբգարեան, 2015ին  
Եղբ. Օշին Յարութիւնեան, 2016ին  
Եղբ. Յովիկ Պետեան, 2017ին  
Եղբ. Ստեփան Պաղպուտարեան, 2018ին

Մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային բարեկամական, վոլիպոլի եւ ֆութպոլի մրցաշարքեր, սկաուտական բանակումներ, քայլարշաններ եւ այլ հետաքրքրական ձեռնարկներ:

Մասնաճիւղը միշտ դրական արձագանգած է ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան կազմակերպած Համահայկական մարզախաղերուն եւ սկաուտական բանակումներուն: Յատկապէս հայրենիքի մէջ իրագործուած այս աշխատանքները մեծապէս ոգեւորած են մասնակիցները եւ հայրենասիրութեամբ լեցուցած են անոնց հոգիները: Մասնաճիւղը նաեւ, պարբերաբար մասնակցած է ՀՄԸՄի Գանատայի շրջանային վարչութեան կազմակերպած միջմասնաճիւղային մարզախաղերուն եւ յաղթանակներով վերադարձած է: 2017ին, մասնաճիւղի պասքեթպոլի աղջկանց եւ ֆութպոլի վեթերաններու խումբերը մասնակցած են նոյն մարզախաղերուն:

Նոյնն է պարագան նաեւ մասնաճիւղի սկաուտական բաժանմունքին: Յաջորդական վարչութիւնները մեծապէս քաջալերած են բաժանմունքը մասնակցելու ցարդ կազմակերպուած 11 սկաուտական ընդհանուր բանակումներուն՝ հայրենիքէն դուրս կամ հայրենի հողին վրայ: Այս տարի, բաժանմունքը մեծ թիւով

մասնակցեցաւ Բիւրականի մէջ կազմակերպուած եւ ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած Համահայկական 11րդ սկաուտական ընդհ. բանակումին:

Մասնաճիւղը միշտ ներկայ գտնուած է Շրջանային վարչութեան կազմակերպած դաստիարակչական եւ գործնական սեմինարներուն: Պարբերաբար ինքեւս նախաձեռնած է դաստիարակչական կարեւոր նախաձեռնութիւններ: Իսկ յատկապէս այս տարի մասնաճիւղի մարզական բաժանմունքի մարզիչներուն համար կազմակերպուած է շտապ օգնութեան դասընթացքներ, որուն մասնակցած են բոլորը:

Մասնաճիւղի սկաուտական բաժանմունքը մօտէն կը գործակցի Ամերիկեան սկաուտութեան շրջանի խորհուրդին հետ եւ կը հետեւի անոր Eagle Scouts կարգի դասընթացքներուն: Այս պատուին արժանացած են մասնաճիւղէն երկու սկաուտ պատասխանատուներ:

Մասնաճիւղի 2018 տարեշրջանի վարչութեան կազմը հետեւեալ քոյր-եղբայրներէ կը բաղկանայ. Մարինա Ելիպոսեան – Ատենապետ

- Սոսի Պալուզեան
- Լուսիա Չորպանեան
- Այտա Տէրտէրեան
- Հէրի Չագարեան
- Սօնա Պոյամեան
- Վահէ Գարակէօզեան
- Նարեկ Գոբուշեան
- Քրիսթին Ռաֆայէլեան

Մասնաճիւղի նոր մարզագաղտը, Ամերիկեան սկաուտութեան Eagle Scout ծրագրի մասնակցութիւնը, Մարզիչներու շտապ Օգնութեան դասընթացքները, Հանրածանօթ դարձած մասնաճիւղի մարզիչները, Ամառնային պասքեթպոլի եւ ընտանեկան բանակումները, երգիծական երեկոները, ճաշկերոյթ ձեռնարկները, օրիորդաց եւ տղամարդոց արտա-ակմուբային ձեռնարկները, գծագրութեան ձեռնարկները, Հայրերու/Մայրերու Օրուան դաշտահանդէսները, Ս. Զատիկուան Հալածախաղի նախաձեռնութիւնը, Հեծելարշաւները, հանրակառքով պտոյտներն ու այլ հետաքրքրական աշխատանքները կու գան հարստացնելու մասնաճիւղի առօրեան:



Շրջանային վարչութեան հետ մասնաճիւղը մօտէն կը գործակցի որուն փորձառու անդամները աշխատանք կը տանին Շրջանային յանձնախումբերու՝ Մարզական եւ Սկաուտական խորհուրդներու, Նուագախումբի եւ Նաւասարդեան փառատօնի մէջ:

Պէտք է ընդունիլ, որ ՀՄԸՄի «Մասիա» մասնաճիւղն էր, որ իր փինկ-փոնկի հրաշալի խումբով, Նաւասարդեան մարզախաղերու մարզական ծրագիրին մէջ ընդգրկել տուաւ փինկ-փոնկի մրցումները:

Իսկ 2018ի Նաւասարդեան Փառատօնի շրջափակէն ներս, մասնաճիւղը առաջին անգամն ըլլալով հանրութեան ներկայացուց իր Robotics Program-ը, որ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց, փառատօնի շրջափակէն ներս: Նոյն ծրագրով, հայկական այս խումբը առաջին անգամն ըլլալով 2019ին՝ ՀՄԸՄը պիտի ներկայացնէ միջազգային մրցակցութեան մը:

Մասնաճիւղէն հետեւեալ եղբայրները հրաւիրուած են եւ մաս

Սթէյթ (Kansas State)  
Նիք Քան, Լոնկ Այլընտ Համալսարան (Long Island University)  
Արամ Արսլանեան, Լէյք Ֆորեսթ Գոլեճ (Lake Forest College)  
Քրիս Եանքու, արհեստավարժ պասքեթպոլի մարզիկ Թուրքոյ մէջ

2017ի Նաւասարդեան մրցումներուն, մասնաճիւղը ախոյեան հանդիսացած է պասքեթպոլի մանչերու ԱԱ, 18, 15, 14, 12 եւ 10 տարեկան եւ վեր, ինչպէս նաեւ աղջիկներու 12 տարեկան եւ վեր դասակարգերու մէջ, իսկ վոլիպոլի աղջիկներու 18 տարեկան եւ վեր դասակարգի մէջ:

Իսկ այս տարուան (2018) Նաւասարդեանի մարզախաղերուն ախոյեան հանդիսացած է մանչերու Ա1, 21, 16, 14, 13, 11 տարեկան եւ վեր դասակարգերու մէջ: 2015, 2016, 2017 եւ 2018 տարեշրջաններու Նաւասարդեան մարզախաղերուն մասնաճիւղի մարզական բաժանմունքը ընդհանուր դասաւորման մէջ ախոյեան հանդիսացած է թեթեւ աթլետի, լողի եւ ճատրակի մէջ:

Մասնաճիւղի երկու նուիրեալ

# ՀՄԸՄԻ ՍԷՆ ՏԻԷԿՈՅԻ «ՍԵԼԱՆ» ՄԱՍՆԱՐԿԻՂ

ՍԷՆ ՏԻԷԿՈՅԻ փոքրաթիւ գաղութին մէջ հասակ նետող հայ երիտասարդութիւնը համախմբելու եւ ազգային շունչով զանոնք դաստիարակելու պատրաստակամութեամբ, խումբ մը երիտասարդներ, նուիրեալ ՀՄԸՄականներ էմիլ Մաղաբեանի եւ Ման-

սկաուտական բաժանմունք ունեցած է, սակայն ժամանակի ընթացքին հայկական համայնքի թիւի նոսրացման պատճառով, տարիներով մասնաճիւղի Սկաուտական բաժանմունքը գործունէութենէ կը դադրի: Մասնաճիւղը աշխոյժ մասնակ-



ուել Մարտիկեանի մեծ ջանքերով, քով քովի գալով ՍԷՆ ՏԻԷԿՈՅԻ մէջ հիմը կը դնեն ՀՄԸՄի մասնաճիւղին:

Մասնաճիւղի հիմնադիր ժողովը կը գումարուի 14 Փետրուար, 1983ին, որու ընթացքին վարչութեան առաջին կազմի անդամ կ'ընտրուին հետեւեալ քոյր-եղբայրները. Վրէժ Տէր Սարգիսեան

ցութիւն բերած է ՀՄԸՄի Ծրճանային վարչութեան կազմակերպած ծրագիրներուն եւ յատկապէս Նաւասարդեան մարզախաղերուն եւ իր արձանագրած յաջողութիւններուն եւ յոռաջիւղմութեանց համար բազմիցս տիրացած է Նաւասարդեանի «Նուաճում» (Achievement) բաժակին: Աւելի քան 32 տարիներ է վեր, ամէն Փետրուար ամսուն, մաս-



վահէ Մանուչակեան Մարգարիտ Իսմայիլեան Արմոնտ Մեհրապեան Ծէրի Մինասեան

Մասնաճիւղը հայրենիքին կապելու եւ անոր հոգածութեան յանձնուած երիտասարդութիւնը ազգային շունչով դաստիարակելու համար, կը կոչուի Հայաստանի նշանաւոր Սելանա Լիճի անունով:

Սկզբնական տարիներուն, մասնաճիւղը մեծաթիւ եւ աշխոյժ

նաճիւղը կը կազմակերպէ պասքեթպոլի, ֆուլպոլի եւ վոլիպոլի միջ-մասնաճիւղային մարզախաղեր, որոնց ամէն տարի միջին հաշուով 85 մարզական խումբեր կը մասնակցին շրջանի ՀՄԸՄի գրեթէ բոլոր մասնաճիւղերէն: Այս մարզախաղերը մեծ խանդավառութիւն կը ստեղծեն ՍԷՆ ՏԻԷԿՈՅԻ շրջանէն ներս:

Մասնաճիւղը մօտէն կը գործակցի շրջանի այլ կազմակերպութիւններու հետ, յատկապէս ամէն տարի Ապրիլին կազմակերպելով Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկներ, Մայրերու եւ Հայրերու օրերու սօնախմբութիւններ, յաղթանակի երեկոներ, որոնց կը մասնակցին նաեւ շրջանի հայութիւնն ու կազմակերպութիւնները:

Հակառակ կեդրոն եւ յատկապէս մարզադաշտ չունենալուն, մասնաճիւղը կանոնաւորապէս եւ առանց յուսահատութեան իր հանդիպումները կը կատարէ: Մարզական իր փորձերուն համար կ'օգտագործէ Miramar College-ի մար-



զաղաչտերը:

Ուրախալի է, որ վարչութիւնը Յունիս 2018ին, վերսկսած է վերակազմակերպել իր սկաուտական բաժանմունքը, որուն շաբաթական հաւաքները կը կատարէ շրջանի Ս. Յովհաննու Կարապետ հայոց առաքելական եկեղեցւոյ մեծ սրահին մէջ, ուր նաեւ կը գումարէ իր ժողովները:

Մասնաճիւղի անդամներէն Բաֆֆի Վարժապետեան, ՀՄԸՄի Լիբանանի վեթերաններու ֆուլպոլի խումբին հետ մասնակցած է ՀՄԸՄի ծրագրի նաւասարդեան մարզախաղերուն զուգահեռ կազմակերպուած միջշրջանային ֆուլպոլի մրցումներուն:

Մասնաճիւղը յաճախ ներկայութիւն եղած է ՀՄԸՄի կեդրոնական վարչութեան կազմակերպած Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն եւ ախոյեանութեանց տիրացած է: Այսպէս.

Փիթըր Մանուչակեան, 2005ին, ՀՄԸՄի Արեւմտեան ԱՄՆի շրջանի պատուիրակութեան հետ մասնակցած է Յունաստանի մէջ կազմակերպուած Համա-գաղութային լողի մրցումներուն, իսկ 2013ին եւ 2017ին, Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն, Հայաստանի մէջ: 2013ին եղբայրը լողի մարզաճիւղի լաւագոյն մարզիկը յայտարարուած է:

Մասնաճիւղի անդամներէն ճիւլիա Մանուչակեան եւս 2009ին, 2013ին եւ 2017ին մասնակցած է Հայաստանի Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն:

2013ին, մասնաճիւղը հպարտութեամբ երիտասարդ մարզկուհիներով կազմուած իր վոլիպոլի խումբը ղրկած է մասնակցելու Հայաստանի մարզական խաղե-

րուն, հետեւեալ անդամներով.

Պրիթիթ Պալեան Ռիթա Պալեան Ճուլիա Մանուչակեան Այրին Մկրտչեան Նաթալին Շահերեան Ռիթա Շահերեան Թամար Քիլէճեան Մասնաճիւղի ներկայ վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէ. Փիթըր Մանուչակեան՝ Ատենա-



պետ Մարալ Կիւլտալեան Նշան Կասեան Թաթիանա Գարլաըն Ջաւէն Կասեան Ժանէթ Մանուչակեան Կարին Կասեան

Մասնաճիւղը իր անդամները ոգեւորելու եւ ՀՄԸՄին կառչած մնալու պահպանութեամբ, մարզական իր նախաձեռնութիւններէն անկախ ամսական դրութեամբ պաղպաղակի, Paintball-ի, Bowling-ի եւ այլ հետաքրքրական ընկերային հանդիպում-ձեռնարկներ կը կազմակերպէ:

Ներկայիս ունի 66 ցենզաւոր անդամներ, որոնց մէջ ընդգրկուած են մասնաճիւղի վարչութեան 7 հոգինոց կազմը՝ 31 մարզիկներ, 10 սկաուտներ եւ 18 ծնողք ու անդամներ:



# ՀՄԸՄԻ Ինլընտ Էմփայըրի «Արագ» Մասնաճյուղ

Ինլընտ Էմփայըրը շրջանի եւ յատկապէս Լա Վըրնի փոքրաթիւ հայութիւնը համախմբուած պահելու եւ այնտեղ գոյութիւն ունեցող հայ երիտասարդութեան հայկական մաքուր շրջապատ մը ապահովելու հեռանկարով, 1991ի ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը որոշեց մասնաճիւղ մը հիմնել այդ շրջանին մէջ:

Մասնաճիւղի հիմնադիր ժողովը գումարուեցաւ 24 Ապրիլ 1991ին, 15 անդամներու մասնակցութեամբ: Մասնաճիւղի հիմնադիր վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալ քոյր-եղբայրները.

- Արմէն Կոլնազարեան
- Արման Կարապետեան
- Ժանէթ Կարապետեան
- Ուիլմա Մկրտիչեան
- Սեւատա Մկրտիչեան
- Բաֆֆի Զինգալեան

- Վրէժ Ալավերդեան  
- Մարալ Ինճէճիքեան  
Մասնաճիւղին անունը որոշուած է պատմական մեծ նշանակութիւն ունեցող հայկական Արագ գետին անունին հիման վրայ, եւ նկատի ունենալով նաեւ, որ մասնաճիւղը աշխարհագրականօրէն կ'ընդգրկէ Ինլընտ Էմփայըրի շրջանը՝ անիկա կոչուած է ՀՄԸՄի Ինլընտ Էմփայըրի «Արագ» մասնաճիւղ:

Հակառակ փոքր մասնաճիւղ մը ըլլալու դժուարութիւններուն, ՀՄԸՄի «Արագ» մասնաճիւղի մեծագոյն նուաճումը 27 տարիներու գոյատեւումն է, որ արդիւնք է իր ղեկավարներուն եւ անդամներուն աշխոյժ գործունէութեան: Մասնաճիւղը կը մասնակցի եւ կը քաջալերէ Շրջանային Սկաուտական եւ Մարզական խորհուրդներուն մշակած ծրագիրները, ինչպէս Շրջանային սեմինարներ, ընդհանուր ժողովներ, Նաւասարդեան մարզախաղեր, եւ ամէն տարի կրպակ մը կ'ունենայ Նաւասարդեան փառատօնի շրջափակէն ներս, որուն հասոյթէն կ'ապահովէ մասնաճիւղի ամսականը:



Մասնաճիւղին յատկապէս սկաուտական բաժանմունքը մնայուն ներկայութիւն է իր գաղութի համայնքային աշխատանքներուն մէջ: Անոր անդամները ամէն տարի կ'այցելեն տեղւոյն ծերանոցը եւ իրենց նուէրներով եւ յատուկ ծրագիրով կ'ուրախացնեն մեծահասակները, իսկ տօնական ուրախ օրերուն առիթով կը կազմակերպեն խաղալիք նուիրելու արշաւներ եւ կը յանձնեն զանոնք Լա Վըրնի ոստիկանական բաժինին՝ չքաւոր երեխաներու նուիրելու համար: Իսկ քրիստոնէական կրօնքի հանդէպ

հաւատքը զօրացնելու նպատակով, սկաուտական բաժանմունքէն անդամներ, Կիրակի օրերը, պարբերաբար կ'այցելեն Մոնթպելլոյի Ս. Սաչ եկեղեցին եւ կը մասնակցին Ս. պատարագին:

Մասնաճիւղը սեփական կեդրոն չունի: Անիկա Կլենտորա շրջանին մէջ ապահոված է վարձու կեդրոն մը, ուր կը կատարուին սկաուտական հաւաքները, մասնաճիւղին առնչուող գործունէութիւնն ու ժողովները: Իսկ մարզական խումբերու փորձերուն համար կը վարձուին Լա Վըրնի Church of the Brethren-ի մարզադաշտերը:

1991ի Նաւասարդեան 16րդ եւ 1992ի Նաւասարդեան 17րդ մարզախաղերուն, այս մասնաճիւղի փութպոլի Ա. դասակարգի խումբը ախոյեան հանդիսացաւ, իսկ ութ տարիներ շարունակ, մասնաճիւղի լողի եւ թեթեւ ատլետիկ



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**Կը շնորհաւորենք  
 ձեր Նոր Տարին  
 եւ Սուրբ Ծնունդը,  
 մաղթելով, որ  
 իրականացան ձեր  
 բոլոր անչնական,  
 ընտանեկան  
 եւ ազգային իղձերը**

**Ս. Երրորդութիւն  
 Հայց.  
 Առաքելական  
 Եկեղեցի  
 Ֆրեզնօ**

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**Կը Շնորհաւորենք  
 Նոր Տարին  
 եւ  
 Սուրբ Ծնունդը,  
 Մաղթելով Ամենայն  
 Բարիք 2019ին**

**Ս. Գրիգոր  
 Լուսաւորիչ  
 Հայց. Առաք. Եկեղեցի  
 Սան Ժրանսիսքօ**

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



# ՀՄԸՄԻ Ինլընտ Էմփայըրի «Արազ» Մասնաճյուղ

մարզիկ-մարզկուհիները տիրացած են ոսկիէ, արծաթէ եւ պրոնզէ մետալներու:

Մասնաճյուղի սկաուտական բաժանմունքը աշխույժ գործունէութիւն կը վարէ: Փոքրաթիւ այս գաղութին փոքրաթիւ սկաուտական բաժանմունքը պարբերաբար միջմասնաճյուղային բանակումներ կը կազմակերպէ: Նաեւ, կը գործակցի շրջանի ՀՄԸՄի գրեթէ բոլոր մասնաճյուղերու սկաուտական բաժանմունքներուն հետ՝



ունեցան ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Բիւրակային բանակավայրը, Հայաստան:

Տարիներու ընթացքին, մասնաճյուղի վարչութիւնները կազմակերպած են դաստիարակչական սեմինարներ, որոնց ընթացքին միութենական նիւթերէ անկախ՝ մասնակիցներուն հրամցուցած են անհրաժեշտ նկատուող հետեւեալ նիւթերը.

- Ethics Development in the Armenian Youth
- SWAT analysis of the chapter
- Fund Raising and Recruitment
- Succession planning Seminars

2017-2018 տարեշրջանի «Արազ» մասնաճյուղի վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէն.

- Սիլվա Միրզայեան-Ղարիպեան՝ ատենապետ
- Վազգէն Գալայեան
- Անգինէ Քէչիչեան
- Ժանօ Օհանէս Մազմանեան

միասնաբար կազմակերպելով այցելութիւններ, կիրակնօրեայ միասնական ծրագիրներ եւ մանաւանդ՝ բանակումներ: Այս տարի, մասնաճյուղը ՀՄԸՄի «Մասիս» մասնաճյուղին հետ կազմակերպեց միացեալ ձեռնարկներ եւ բանակումներ:

«Արազ» մասնաճյուղի արի-արեւունները մասնակցեցան նաեւ Համա-ՀՄԸՄական վերջին հինգ բանակումներուն, որոնք տեղի

- Վարուժան Պաղտասարեան
- Նայիրի Պաղտասարեան
- Անտրու Սահակեան

Մասնաճյուղի անդամներուն թիւը ներկայիս հասած է 100ի. անոնցմէ 30ը մարզիկներ են, 18ը՝ սկաուտներ, իսկ մնացեալը՝ գործօն անդամներ:

Մասնաճյուղը ամէն հինգ տարին անգամ մը կը նշէ իր հիմնադրութեան տարեդարձը: Տասը տարի-



ներէ ի վեր, անընդմէջ, անհկա կը կազմակերպէ նաեւ Մայրերու օրուան ճաշկերոյթ եւ վաճառքի ձեռնարկը, որ մեծ յաջողութեամբ կ'իրագործուի եւ անհամբերութեամբ կը սպասուի շրջանի հայրութեան կողմէ:

Մասնաճյուղի աշխուժութեան եւ անդամներու միասնականութեան գլխաւոր գրաւականը Նաւասարդեան մարզախաղերն են, որոնց ընթացքին մասնաճյուղը միշտ կ'ունենայ իր ճաշի վաճառքի կրպակը, ուր անշահախնդրօրէն եւ ուրախ տրամադրութեամբ կը գործեն մասնաճյուղի անդամներ՝ միութենական գեղեցիկ ու սիրալիւր մթնոլորտի մը մէջ, որ կեանք կու տայ մասնաճյուղին:



ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Տէր Եւ Տիկ. Հրայր Եւ Սոնա Աւետեաններ**

Թող 2019ը Բերէ Խաղաղութիւն, Առողջութիւն եւ Ուրախ Կեանք

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Ալիք եւ Լոռի Պէրպէրեաններ**

Նոր Տարին Յոյսերով ու Բարիքներով Լի Տարի մը Ըլլայ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Սանթա Գլարայի «Անի» Մասնաճյուղ

Հիսուսային Քալիֆորնիոյ Սէն Հոգէ քաղաքի եւ շրջակայ տարածքներու հայութիւնը համախմբելու անհրաժեշտութենէն մեկնած, մանաւանդ նկատի ունենալով, որ շրջանէն բազմաթիւ երիտասարդներ մարզական եւ սկաուտական իրենց հետաքրքրութիւնը գոհացնելու համար մինչեւ Սան Ֆրանսիսքո կը քշէին, Սէն Հոգէի մէջ ՀՄԸՄի մասնաճյուղ մը հիմնելը խիստ անհրաժեշտ նկատուեցաւ:

Այս անհրաժեշտութիւնը իրականութիւն դարձաւ շնորհիւ եղ-

Սանան Աղապապեան Ժանօ Ուաշիկեան Վաշիկ Պետրոսեան Տիգրան Պապիկեան Յայտնենք, թէ մինչ այդ Սանթա Գլարայի շրջանէն ներս կը գործէր «Անի» հայկական ընկերային կազմակերպութիւնը, որ շրջանի հայկական գաղութը համախմբելու եւ աշխուժացնելու նպատակով տարեկան հաւաքոյթներ եւ դաշտահանդէսներ կը կազմակերպէր: Նկատի ունենալով, որ այդ կազմակերպութիւնը արդէն իսկ լուծարուած է եւ իր



բայրներ Շահիկ Աղապապեանի, Վաշիկ Սարգիսեանի եւ Հրայր Թաշճեանի ձեռնարկով: Նախաձեռնութիւնը մեծապէս քաջաբերեց օրուան Շրջանային վարչութիւնը, որուն ներկայացուցիչ Մարօ Քէշիշեան քանի մը ամիսներ շաբաթական դրութեամբ այցելեց շրջանը, գաղութին եւ ՀՄԸՄի անդամներուն ծանօթացուց ՀՄԸՄի կանոնադրը, առաքելութիւնը, նպատակներն ու կազմակերպական աշխատանքները: Մասնաճյուղի կազմութեան իր բացառիկ

հիմնադրամներէն մաս մը նորաստեղծ ՀՄԸՄի մասնաճյուղին նուիրած էր, որոշուեցաւ մասնաճյուղը կոչել ՀՄԸՄի Սանթա Գլարայի «Անի» մասնաճյուղ: Այս անունի որդեգրումը նաեւ կը յիշեցնէր հայութեան պատմական Անի քաղաքը:

Հակառակ փոքրաթիւ գաղութի միութենական անփորձութեան եւ ՀՄԸՄի կեդրոնի մը բացակայութեան, մասնաճյուղը աշխուժութեամբ կը գործէ, ինչպէս նաեւ մօտէն կը գործակցի տեղւոյն Ս. Անտրու եկեղեցւոյ հետ, որուն նաեւ սրահը կը գործածէ սկաուտական շաբաթական աշխատանքներուն համար, իսկ մարզական փորձերու համար մարզադաշտեր կը վարձէ:

Մասնաճյուղի քարոզչութիւնը կատարելու, ինչպէս նաեւ անդամները համախմբելու հեռանկարով, վարչութիւնը ամէն տարի կը կազմակերպէ.

- Մասնաճյուղի Հիմնադրութեան տարեդարձին նուիրուած հրատարակային ձեռնարկ:
- Հայոց Յեղասպանութեան նուիրուած ոգեկոչման ձեռնարկ՝ շրջանի Բուփերթիոյ Ս. Անտրու Հայոց Առաքելական եկեղեցւոյ, տեղւոյն քոյր մասնաճյուղերուն եւ կազմակերպութիւններուն հետ միասնաբար:
- Կը մասնակցի Քալիֆորնիոյ մայրաքաղաք Սաքրամենթոյի մէջ կազմակերպուած Ապրիլեան եղեռնի նուիրուած Ջատագովման միօրեայ աշխատանքներուն: Նոյն օրը, նահանգային խորհրդարանին մէջ կը կատարէ օրուան դրօշակի արարողութիւնը:
- Խթումի գիշերը Ս. Մննդեան երգերով համայնքին կ'աւետէ Ս. Մննդեան տօնը:
- Մասնաճյուղի անունով, Սէն Հոգէի գլխաւոր զբօսայգիին մէջ կը յարդարէ տօնածառ:
- Ուրախալի է, որ մասնաճյուղը 2018ին սկսած է «Երիտասարդներու Ապագայ Ծրագիր»ը, որ կը նախատեսէ ամէն տարի իրականացնել:

Արթ Սաչատուրեան, 2018ին 2017ին, Շրջանային վարչութեան կողմէ տրոջ. Շահէ ենիգոմչեանին ընծայուած է «Տիպար ՀՄԸՄական-2017» տիտղոսը:

Մասնաճյուղը իր կարելին ի գործ դրած է մասնակցելու ՀՄԸՄի կեդրոնական վարչութեան կազմակերպած Համա-ՀՄԸՄական բանակումներուն եւ մարզախաղերուն: Այսպէս, 2005ի Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն մասնակցած է 3 մարզիկներով: 2017ին՝ 10 մարզիկներով եւ իրաւարարներով: Նոյն տարին ախոյեանութեան բաժակին արժանա-



շական տարի մը եղած է 1995ը, Նաւասարդեան մարզախաղերուն մասնակցութեամբ, որուն ընթացքին ընդհանուր դասաւորման մէջ ախոյեան հանդիսացած է ֆութպոլի, լողի, թեթեւ ատլետիկի եւ թենիսի մարզաճիւղերուն մէջ, իսկ Յրդ՝ պասքեթպոլի:

1996ին, տիրացած է նահատակ վարդան Բախչեանի յիշատակին նուիրուած սկաուտական մրցանակին:

Մասնաճյուղը մօտէն կը գործակցի իրեն մօտակայ Սան Ֆրանսիսքոյի, Ուոլնթ Բրիքի «Կարս» եւ Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճյուղերուն հետ, միասնաբար միջմասնաճյուղային բանակումներ, դաշտահանդէսներ եւ տարեկան ձեռնարկներ կազմակերպելով:

Մասնաճյուղի առաջարկութեամբ, Շրջանային վարչութեան կողմէ «ՀՄԸՄի Ծառայութեան» շքանշանին արժանացած են հետեւեալ քոյր-եղբայրները.

Հրայր Թաշճեան, 2015ին  
Ռինա Չանչանեան, 2016ին  
Մարալ Փանոսեան, 2017ին

ցած է ֆութպոլի Upper 18 դասակարգին մէջ:

2014ի Համա-ՀՄԸՄական սկաուտական Ընդհանուր բանակումին սկաուտական փոքրաթիւ խմբակով մը, իսկ 2018ին՝ 10 արի-արեւունչներով:

Մասնաճյուղը յաճախ դաստիարակչական սեմինարներ կը կազմակերպէ եւ գլխաւորաբար կը կեդրոնանայ ծրագրաւորման, Հայոց պատմութեան եւ միութենական կազմակերպական նիւթերու վրայ:

Ներկայիս մասնաճյուղի վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէ.

Վահէ Պարոնեան՝ Ատենապետ  
Գրիգոր Գրիգորեան՝ Մարտիկ Տէօվլէթեան  
Մարալ Պուրսայեան՝ Թոմաս Չանչանեան  
Ռուսնա Մաթեան  
Կարէն Տէր Ուաչատուրեան

Այս տարեշրջանի մասնաճյուղի անդամները կը հաշուեն 170 հոգի, որոնց 61ը սկաուտներ են, 138ը՝ մարզիկներ եւ 43ը՝ երէցներ:



ներդրումը ունեցաւ տեղւոյն Բուփերթիոյ Ս. Անտրու եկեղեցւոյ հովիւ Վազգէն ՔՏՆյ. Մովսէսեանը, որուն արտօնութեամբ նաեւ եկեղեցւոյ սրահը տրամադրուեցաւ ՀՄԸՄի աշխատանքներուն:

Մասնաճյուղի Հիմնադիր ժողովը գումարուեցաւ 12 Մայիս 1991ին, 65 ՀՄԸՄասէրներու մասնակցութեամբ, հետեւեալ քոյր-եղբայրները հիմնադիր վարչութեան անդամ ընտրուեցան.


Հրայր Թաշճեան՝ Ատենապետ  
Սիլվա Սթանպուլեան  
Վահէ Պարոնեան

# ՀՄԸՄԻ Քրեսենթա Հովիտի «Շանթ» Մասնաճիւղ

Տարուէ տարի բազմացող Քրեսենթա Հովիտի Հայ երիտասարդութիւնը համախմբելու համար արդէն իսկ գոյութիւն ունեցող Հայ կեդրոնէն ներս, Միջին Արեւելքէն այդ շրջանը բնակչութիւն հաստատած խումբ մը ՀՄԸՄականներ, տեղւոյն ՀՅԴ «Ձաւարեան» կոմիտէութեան գործակցութեամբ եւ քաջալերանքով՝ անհրաժեշտութիւն զգացին ՀՄԸՄի մասնաճիւղ մը հիմնելու այստեղ: Գաղափարը զարգանալով՝ նախկին ՀՄԸՄականներու եւ համակիրներու մեծ խումբ մը պատրաստակամութիւն յայտնեց անդամակցելու անոր: Գործնական քայլի անցնելով՝ այս գծով դիմում կատարուեցաւ ՀՄԸՄի Ծրջանային վարչութեան, որ վաւերացուց զայն՝ Սեպտեմբեր 1992ին: Ծրջանային վարչութեան նորաստեղծ մասնաճիւղը զօրաւոր հի-

մերու վրայ դնելու հեռանկարով, Ծրջանային վարչութիւնը, իր անդամներէն՝ Մարօ Քէշիշեանին պարտականութիւն տուաւ զբաղելու մասնաճիւղի հիմնումին եւ ղեկավարութեան պատրաստութեան գործով: Քանի մը կարելոր հանդիպումներ ունենալէ ետք դիմող խումբին եւ շրջանի ղեկավարութեան հետ, մասնաճիւղը աշխատանքի սկսելով՝ առաջին իր պաշտօնական ժողովը գումարեց Մարտ 1993ին:

- Մասնաճիւղի հիմնադիր վարչութեան անդամ ընտրուեցան եղբայրներ՝
- Կարպիս Էօլմէսէքեան՝ ատենապետ
  - Թոմաս Թոքմաճեան
  - Վարդգէս Շխրտըմեան
  - Ռազմիկ Գարախանեան
  - Կայծակ Շահպաղեան
- Հիմնադիր վարչութեան փափա-



քով, մասնաճիւղը կոչուեցաւ «Շանթ», ազգային գործիչ, գրող եւ դաստիարակ Լեւոն Շանթի յիշատակին: Մասնաճիւղը ունեցաւ մարզական եւ սկստակական բաժանումներ, որոնք լաւապէս ընկալելով ՀՄԸՄի առաքելութիւնն ու հետապնդած նպատակները՝ դաստիարակուեցան ազգային դիտակցութեամբ եւ ՀՄԸՄի «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր» նշանաբանի գաղափարով: Անցած 25 տարիներու ընթացքին մասնաճիւղը մեծ նուաճումներ արձանագրեց զանազան մակարդակներու վրայ: Յաջորդա-

կան վարչութիւնները անդամներուն մէջ սերմանեցին ազգային ոգին, հոգեկան, իմացական, ֆիզիքական եւ քաղաքացիական արժանիքներ, որոնց շնորհիւ մասնաճիւղը հզօրացաւ եւ տիրական ներկայութիւն եղաւ շրջանէն ներս: Յատկապէս վերջին տարիներու վարչութիւնները իրենց աշխատանքները իրականացուցին բազմաթիւ յանձնախումբերու միջոցաւ եւ մեծ նուաճումներ արձանագրեցին ՀՄԸՄի առաքելութիւնը տարածելու եւ անոր հետապնդած նպատակները իրականացնելու



ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Glendale Mobil Service

1028 S. Brand Blvd.,  
Glendale, CA 91204  
818-244-0151

Wishing  
all our family  
and friends  
health and prosperity  
throughout the year

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Հայ Ամերիկեան Տարեցների Միութեան Կեդրոնական Վարչութեան

անունից Նոր Տարուայ եւ Յիսուս Քրիստոսի ւնեաւքեր ծննդեան տօները կը շնորհաւորենք համայն հայութեանը ու առաւել եւս միութեանս սիրելի անդամ-անդամուհիներին մաղթելով նրանց բարի յաջողութիւն՝ իրենց կեանքի ասպարէզում ու որ կարեւորագոյն է՝ քաջառողջութիւն եւ պարուրուած լինեն ընտանեկան պարագաներով այս ուրախանալի տօներին եւ ամբողջ տարին:

Շնորհաւոր Նոր Տարի Եւ Ս. Ծնունդ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Քրեսենթա Հովիտի «Շանթ» Մասնաճյուղ

մէջ: Մասնաճյուղի կարգախօսն է՝ «Մենք Շանթ ենք, Մենք ընտանիք ենք»:

Մարզական ծրագիրները ընդարձակուած են եւ մարզական խումբերուն թիւը անցած է 40ը: Անոնք մարզական ոգիով եւ հաւաքական աշխատանքի կարեւորութեան գիտակցութեամբ կը մարզուին պասքեթպոլի, ֆութպոլի, վոլիպոլի, թեթեւ ատլետիկ եւ փինկ-փոնկի մարզաձևերուն:

Մասնաճյուղը կրցած է գրաւել իր չըջապատի եւ մտակալ վարժարաններու երեսները:

Փոքրիկ գրասենեակը այսօր ընդարձակուած է եւ ունի ժողովարահ, մթերանոց ու պաշտօնէութիւն:

Սկաուտական բաժանմունքը կը հետեւի Ամերիկեան սկաուտութեան բարձրագոյն կարգի՝ Eagle Scout ծրագիրին, ինչպէս նաեւ կը մասնակցի եւ կը քաջալերէ տեղական հայկական վարժարանի ձեռնարկները:

Երկու տարիներէ ի վեր ունի իր սկաուտական երէցական բաժանմունքը, որպէսզի առաւել երիտասարդութիւն համախմբէ ՀՄԸՄի շուրջ:

Հոն կը գործադրէ ֆութպոլի քլաբ ծրագիրը՝ մանչերու եւ աղջիկներու համար:

Մասնաճյուղը զգալի ներկայութիւն է գաղութէն ներս եւ կը մասնակցի գաղութային ձեռնարկներու, ինչպէս նաեւ ինք կը կազմակերպէ ծրագիրներ՝ համայնքին համար, որոնցմէ կ'արժէ նշել Հետեւեալները.

Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման եւ այդ առիթով կազմակերպուած բոլոր նախաձեռնութիւնները՝ քայլարշաւ, Մոնթեպելլոյի յուշարձանի տարեկան հսկում-ոգեկոչում եւ այլն.

Դրօշակի արարողութիւն՝ քաղաքապետարանի, եկեղեցւոյ եւ



չըջանի մշակութային ձեռնարկներուն:

Այս մասնաճյուղը ՀՄԸՄի առաջին մասնաճյուղն էր, որ մասնակցած է Մոնթրոզի Ս. Մննդեան շքերթին՝ ծանօթացնելով ՀՄԸՄը տեղական իր շրջապատին: Այնուհետեւ, մասնաճյուղը միշտ նախաձեռնած է անոր եւ հիւրընկալած զայն:

Իր անդամներով մասնակցած է եւ ի հարկին պատրաստ է մասնակցելու բնական աղէտներու իբրեւ հետեւանք օգնութիւն հասցնելու աշխատանքներուն.

Հանգանակային աշխատանք կը տանի եւ կը մասնակցի Հայաստանի Համահայկական Հիմնադրամին կազմակերպած՝ Գոհաբանութեան Օրուան Հայաստան-Արցախի ի նպաստ թելեթոնին.

Մնայուն ձեւով կը կազմակերպէ համայնքի ձեռնարկներ, ինչպէս՝ Ս. Մննդեան առթիւ երաժշտական գործիքներու արշաւ, ինչպէս նաեւ բոլորովին նոր երաժշտական գործիքներ կը նուիրէ իր շրջապատի կարօտեալ ընտանիքներու

երեսներուն:

Դաստիարակչականի գծով, վարչութիւնը, ամուսնութեան եւ ընտանեկան հարցերու խորհրդատու նորա Շիթիլեանի գլխաւորութեամբ, կազմակերպած է աշխատանիստեր՝ շտապ օգնութեան, ղեկավարման եւ մանուկներու հոգեբանութեան առնչուող նիւթերով, իսկ մասնաճյուղի մարզիչներու փորձառութեան եւ մարզական գիտելիքներու առնչուող սեմինար մը կազմակերպած է «Եու.Սի.էլ.էյ.» համալսարանի մարզիչ ձիւմ Հարիթի գլխաւորութեամբ:

Մասնաճյուղի գլխաւոր դժուարութիւնը իր սեփական մարզադաշտի պակասն է: Այս տարի, մասնաճյուղի թուային աճին իբրեւ արդիւնք, վարչութիւնը՝ պարտաւորուած, վարձած է հաւաքատեղի մը: Մարզադաշտի չզոյլութեան իբրեւ հետեւանք, մարզական խումբերը իրենց փորձերը կը կատարեն վարձու մարզադաշտերու վրայ՝ Կլեյնտէյ, Լա Քրեսենթա եւ Թահանկա քաղաքներուն մէջ: Իսկ սկաուտական բաժանմունքը, իր կիրականօրեայ աշխատանքները կ'իրականացնէ Քրեսենթա Հովիտի զբօսայգիին (Crescenta Valley Park) մէջ, ամէն Կիրակի առաւօտեան ժամը 10էն մինչեւ կէսօրէն ետք ժամը 1:

Մասնաճյուղին խնդրանքով, ցարդ հետեւեալ չորս եղբայրները արժանացած են ՀՄԸՄի Շրջանային վարչութեան կողմէ յանձնուած «Մառաշտի շքանշան»ին.

- Պերճ Գասապեան, 2015ին
- Վարդգէս Շիրաւրմեան, 2016ին
- Ռազմիկ Սիմոնեան, 2017ին
- Թոմաս Տէօօքմէնեան, 2018ին

Յատկապէս վերջին տարիներուն, մասնաճյուղի վարչութիւնները յատուկ ջանք կը թափեն մասնաճյուղը կեդրոն/մարզադաշտով մը օժտելու, ինչ որ հրամայական դարձած է ի տես անդամներու թուի աճին: Այս նպատակով, տարուան ընթացքին կը կազմակերպուին հանգանակային եւ ընկերային ձեռնարկներ, որոնք ոչ միայն կը համախմբեն մասնաճյուղի անդամները, այլեւ՝ ՀՄԸՄի համակիրներու մեծ շրջանակը: Վարչութիւնը նաեւ սկաուտ ղեկավարներու եւ մարզիչներու համար կը կազմակերպէ բազմազան ղեկավարման, ապահովական եւ դաստիարակչական սեմինարներ, ինչպէս նաեւ՝ տեղական Clippers, Sparks, Lakers եւ Harlem Globetrotters մարզական խումբերու մրցումներուն մաս-

նակցելու առիթներ:

Մասնաճյուղի մարզիկներէն՝ Գրիգոր Քիրատոյլեան եւ Փաթրիկ Փանուսի մաս կազմած են 20 տարեկան եւ վար երիտասարդներու Հայաստանի ազգային պասքեթպոլի հաւաքականին:

Ուրախութեամբ պէտք է արձանագրել նաեւ, թէ մասնաճյուղի անդամներէն Վարուժ Պետիկեան սիրով ստանձնած էր Պատուոյ նախագահութիւնը 2007 տարեշրջանի ՀՄԸՄի 32րդ Նաւասարդեան մարզախաղերուն: Իսկ մասնաճյուղը նոյն մարզախաղերու հետեւեալ մարզաձևերու ընդհանուր դասաւորման մէջ ախոյեան Հանգիսացած է.

- Պասքեթպոլ, 2012ին
- Ֆութպոլ, 2016ին
- Պասքեթպոլ, 2017ին
- Թեթեւ ատլետ, 2018ին

Վարչութիւնը միշտ քաջալերած է իր մարզիկներն ու սկաուտական բաժանմունքը՝ մասնակցելու շրջանի միջմասնաճյուղային մարզախաղերուն եւ սկաուտական աշխատանքներուն: Արդարեւ, մասնաճյուղը մասնակցած է Շրջանային եւ Կեդրոնական մակարդակի աշխատանքներու, յատկապէս՝ Հայաստանի մէջ կազմակերպուած Համա-ՀՄԸՄական մարզախաղերուն եւ Սկաուտական ընդհանուր բանակումներուն, որոնց նորագոյնները ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած նախաձեռնութիւններն էին:

Ամէն տարի Յունուարին, մասնաճյուղը կը կազմակերպէ ֆութպոլի միջմասնաճյուղային եւ երէց մարզիկներու ֆութպոլի մրցումներ, սկաուտական բանակումներ, ընտանեկան պտոյտներ, նախաճաշի ու հանգանակային ձեռնարկներ եւ այլ միջոցառումներ: 2017-2018 աշխատանքային շրջանին համար, հետեւեալ քոյր-եղբայրները մաս կը կազմէին մասնաճյուղի վարչութեան.

- Թամար Քէյփէքեան՝ ատենապետ
- Սօնա Մենայեան
- Մարալ Թագեան
- Թամար Գալուստեան
- Սեղա Գասաճիքեան
- Նովա Քուչերեան
- Գրիգոր Գարամանուկեան
- Արփին Քերոբ
- Ռոզէթ Ռաժոյեան
- Արա Իզանեան
- Մարալ Լիոն

Մասնաճյուղը ունի 734 անդամներ, որոնցմէ 542ը՝ մարզիկներ, 130ը՝ սկաուտներ, իսկ 100ը՝ գործօն անդամներ:



# ՀՄԸՄԻ Պրրպենքի «Սիփան» Մասնաճիւղ

Պարսկաստանէն հետզհետէ Պրրպենք քաղաքը հաստատուած Թեհրանի «Սիփան» միութեան շարք մը անդամներ, նոյն քաղաքի մեծաթիւ հայ երիտասարդութիւնը առողջ միջավայրի մը մէջ համախմբելու համոզումով՝ գեղեցիկ գաղափարը յղացան Պրրպենքի մէջ հիմնելու ՀՄԸՄի մասնաճիւղ մը, որուն մեծապէս քաջալեր հանդիսացաւ ՀՅԴ «Աղբալեան» կոմիտէն:



Մասնաճիւղի հիմնադիր ժողովը գումարուեցաւ 1995ի Յուլիսին, Մակնտրիա պողոտային վրայ գտնուող փոքրիկ Հայ կեդրոնէն ներս, Շրջանային վարչութեան գիտակցութեամբ եւ 80 հայորդիներու մասնակցութեամբ: Նոյն ժողովի ընթացքին, հետեւեալ քոյր-եղբայրները ընտրուեցան նորաստեղծ մասնաճիւղի հիմնադիր վարչութեան անդամներ.

- Նորիկ Աբուլեան՝ ատենապետ
- Անահիտ Սաչիկեան
- Ժերմէն Մեհրաբի
- Սարօ Ղազարեան
- Ալֆրէդ Բանդարեան

Նոյն ժողովին, իրենց պատկանած նախկին միութեան անունը անմահացնելու միտումով, մասնակիցները՝ միաձայնութեամբ, նոր մասնաճիւղը որոշեցին կոչել ՀՄԸՄի Պրրպենքի «Սիփան» մասնաճիւղ: Երկար տարիներ, սոյն մասնաճիւղին ժողովները գումարուեցան Պրրպենքի փոքրիկ Հայ կեդրոնէն ներս, որ սակայն երիտասարդութիւնը միա-

տեղելու իմաստով բաւական նեղ վայր էր: Մասնաճիւղի մարզական փորձերը կը կատարուէին վարձուած մարզադաշտերու վրայ, իսկ սկաուտական աշխատանքները՝ Ամերիկեան Սկաուտութեան Վերտուկօ Հիլզի խորհուրդի կեդրոնին սրահը: Այսուհանդերձ, մասնաճիւղի թուային պատկերը քաջալերական եղած է:

Մասնաճիւղի աշխատանքները առաւել թափ առած են, երբ շրջանի ՀՅԴ «Աղբալեան» կոմիտէին ջանքերով եւ ազգանուէր հայորդի Թիմիկ Մարտիրոսեանի իշխանական նուիրատուութեամբ՝ Պրրպենքի շրջանը ունեցաւ իր «Պէշիկ Մարտիրոսեան» Հայ կեդրոնը, որ մեծապէս

նպաստեց մասնաճիւղի երիտասարդ անդամներու թիւի աճին: Մարզական փորձերն ու սկաուտական աշխատանքները սկսան մեծ խանդավառութեամբ իրագործուելու նոր կեդրոնէն ներս, որ նաեւ պարբերաբար կը տրամադրուէր Շրջանային Մարզական խորհուրդին կազմակերպած մրցաշարքերուն:

Մասնաճիւղին գործունէութիւնը աշխուժանալով՝ կարելի եղաւ կազմակերպել նաեւ հանրային ձեռնարկներ, որոնցմէ յատկանշական են Գարնանային տօնավաճառը, Մայրերու Օրուան տօնակատարութիւնը, սկաուտական տարեկան հանդէսները, հանգանակային եւ ընկերային ձեռնարկ-

ներ եւ այլն: ՀՄԸՄը տեղւոյն համայնքին ծանօթացնելու հեռանկարով, մասնաճիւղի Մարզական յանձնախումբը սկսաւ կազմակերպելու D Leag-ի պասքեթպոլի մրցաշարքեր: Նաեւ, մասնաճիւղը պարբերաբար կը մասնակցի Պրրպենքի քաղաքապետարանին կազմակերպած քաղաքի մաքրութեան արշաւներուն եւ հրէշներու կողմէ տեղացի տնազուրկներու ճաշի հիւրասիրութիւններուն, իսկ Նոր Տարուան առիթներով, Հայաստանի կարօտեալներուն համար կը կազմակերպէ խաղալիքներ եւ հագուստեղէն նուիրելու արշաւներ: Մասնաճիւղը նոյնիսկ սկաուտական

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Նաթալի Սավուլեան**

Վահան եւ Անուշ  
Շամլեան Ազգային  
Վարժարանի Աշակերտուհի

Կը Շնորհաւորէ  
Նոր Տարին  
Եւ Ս. Ծնունդը  
Շամլեան  
Վարժարանի  
Տնօրէնութեան,  
Ուսուցչական Կազմին  
Եւ Ընդհանուր  
Աշակերտութեան

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

Ամանորի  
Այս Օրերուն  
Մեր Մաղթանքն է,  
Որ Հայրենիքի  
Մեր Ժողովուրդը  
Ժպիտով Դիմաւորէ  
Գալիք Օրերը

**Ռիչըրտ Թիւֆէնքեան**  
**Ազգային Մանկամտուր**

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Պրրպենֆի «Սիփան» Մասնաճիւղ

տարազներ տրամադրած է Հա-  
յաստանի ՀՄԸՄ-ՀԱՍԿի «Չերագ»  
մասնաճիւղին:

Պրրպենֆի մասնաճիւղի վարչու-  
թեանց խնդրանքով, հետեւեալ  
քոյր-եղբայրները Շրջանային վար-  
չութեան կողմէ պարգեւատրուած  
են շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն  
«Մառայութեան» շքանշանով.

- Նորիկ Աբուլեան՝ 2015ին  
- Եղանտա Ղազարեան՝ 2016ին  
- Սարո Ղազարեան՝ 2018ին

Մասնաճիւղի վարչութեան կող-  
մէ, նաեւ, իբրեւ «Տիպար ՀՄԸ-  
Մական»ներ գնահատուած են  
եղբայրներ Անդրանիկ Երումեան,  
Սարո Ղազարեան եւ Ռոբերթ  
Մեհրաբի:

Մասնաճիւղի սկաուտական բա-  
ժանմունքէն Ռոնի Հայրումեան եւ  
Վաչէ Հաթամեան, յաջողապէս  
աւարտելով Ամերիկեան Սկաու-

տութեան բարձրագոյն կարգի  
տեսական եւ գործնական դասըն-  
թացքները՝ արժանացան Eagle  
Scout-ի կարգին, իսկ մասնաճիւ-  
ղի խմբապետուհի Դալար Գալստ-  
եան՝ Wood Badge-ին: Դալարը,  
2018ի ամրան, զանազան երկիր-  
ներէ ժամանած խումբ մը արի-  
արենուշներու հետ Արարատ լեռ  
մագլցեցաւ եւ անոր գագաթին  
գետեղեց Հայաստանի Եռագոյնը  
եւ ՀՄԸՄի դրօշը:

Ամէն տարի, մասնաճիւղը մեծա-  
թիւ անդամներով կը մասնակցի  
ՀՄԸՄի Նաւասարդեան մարզա-  
խաղերուն, եւ ցարդ խնայեանու-  
թեանց արժանացած է պասքեթ-  
պոլի, թենիսի, լողի, թեթեւ ակ-  
րիբի եւ ֆութպոլի մարզաձեւե-  
րուն մէջ:

Մասնաճիւղը նաեւ մօտէն կը  
գործակցի շրջանի ՀՄԸՄի այլ



ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Թեքսաս**

**ՀՅԳ «Սերոբ Աղբիւր» Կոմիտէ**  
**ՀՕՄԻ «Շողեր» Մասնաճիւղ**  
**ՀԵԳ «Դրօ» Մասնաճիւղ**

**Հայաստանին**  
**Բարգաւաւանում,**  
**Արցախին**  
**Կայունութիւն,**  
**Իսկ Սփիւռքին՝ Տուն**  
**Դառնալու**  
**Անյողդողդ**  
**Վճռակամութիւն**

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

մասնաճիւղերու հետ, որոնց հետ  
կը կազմակերպէ միջմասնաճիւ-  
ղային բանակումներ եւ մարզա-  
խաղեր: Անիկա միշտ ներկայու-  
թիւն եղած է ՀՄԸՄի Կեդրոնա-  
կան վարչութեան կազմակերպած  
Համա-ՀՄԸՄական մարզախաղե-  
րուն եւ բանակումներուն: Պրր-  
պենֆի մասնաճիւղին ֆութպոլի  
խումբը գրաւած է այս մարզա-  
ճիւղին երկրորդ մրցանակը, իսկ  
մասնաճիւղի մարզիկներէն՝ Շա-  
րիս Ղազարեանը արժանացած է  
«Տիպար Մարզիկ»ի տիտղոսին:  
Դաստիարակչական գետնի վրայ,  
մասնաճիւղը միշտ մասնակցած է  
Շրջանային վարչութեան դաստ-  
իարակչական սեմինարներուն եւ  
դասախօսական ձեռնարկներուն:  
Ներքին կարգով, Պրրպենֆի մաս-  
նաճիւղը եւս կազմակերպած է

նման ձեռնարկներ եւ զրոյց-Հան-  
դիպումներ, ինչպէս նաեւ՝ նորա-  
գիրներու Համար ՀՄԸՄի ծանօ-  
թացման Հանդիպում-դասախօ-  
սութիւններ:

Մասնաճիւղի ներկայ վարչու-  
թեան կազմը կը բաղկանայ հե-  
տեւեալ քոյր-եղբայրներէն.

- Ժան Քլոդ Վարդանեան՝ ատե-  
նապետ
- Զեփիւռ Մարգարեան
- Առուշ Շահբաղեան
- Ժերմէն Մեհրաբի
- Էրիկ Բիդիսանեան
- Արագ Քէշիշեան
- Վարանդ Աւանեսեան

Ներկայիս, մասնաճիւղը ունի 395  
անդամ, որոնց 86ը՝ սկաուտներ,  
280ը՝ մարզիկներ, 72ը՝ երէցներ,  
իսկ 20ը՝ ընկերային յանձնախում-  
բի անդամներ են:

# ՀՄԸՄԻ Լաս Վեկասի «Արցախ» Մասնաճյուղ

Ամերիկայի Միացյալ Նահանգներու զանազան շրջաններէն Լաս Վեկաս փոխադրուած հայ ընտանիքներուն ու անոնց զաւակներուն ազգային միջավայր մը ստեղծելու հետանկարով, շրջանը հաստատուած կարգ մը փորձառու ՀՄԸՄականներ քով քովի գալով որոշեցին հիմնել ՀՄԸՄի մասնաճյուղ մը: Նախաձեռնութիւնը մեծ ոգեւորութեամբ ընդունուեցաւ շրջանի հայկական գաղութին կողմէ:

Շրջանային վարչութիւնը 17 Դեկտեմբեր 1996ի իր ժողովին

լով մասնաճյուղի դժուարութիւններուն, կը հարթէ զանոնք: Դժուարութիւնները գլխաւորաբար կ'առնչուէին կեդրոնի չգոյութեան եւ փորձառու ղեկավարներու պակասին: 2000 թուականին, Շրջանային վարչութեան անդամներէն վաստակաշատ ՀՄԸՄական Մարո Քէշիշեան, պարտականութիւն կը ստանձնէ վերաշխուժացնելու մասնաճյուղը, որ գրեթէ կազմալուծ վիճակի մէջ կը գտնուէր: Շրջանային վարչութեան գիտակցութեամբ, քրոջ առաջնահերթ աշխատանքը կ'ըլ-



ընթացք տուաւ Լաս Վեկասի մէջ ՀՄԸՄի մասնաճյուղ մը հիմնելու գիծումին եւ հետեւեալ քոյր-եղբայրները նշանակեց մասնաճյուղի առաջին վարչութեան անդամ. Սարգիս Մահաբեկեան՝ Ատենապետ  
Սոնա Արտումեան  
Գրիգոր Գասապեան  
Վրէժ Թալաքեան  
Զաք Մրլեան  
Կարո Անթիկաճեան  
Մուրատ Քանունեան

լայ յառաջացնել վարչութիւն մը կազմուած աշխոյժ եւ նուիրեալ անհատներէ.  
Ճէգ Գասամանեան՝ Ատենապետ  
Նորա Արմէնեան  
Հայկ Աղամեան  
Վիգէն Սարխանեան  
Դրո Գանիշեան  
Վերաշխուժացած մասնաճյուղի վարչութիւնը կը վերակազմակերպէ իր մարզական եւ Սկաուտական բաժանմունքները, որոնք կարճ ժամանակուան ընթացքին

Յաջորդական վարչութիւնները յատուկ գուրգուրանք կը ցուցաբերեն մասնաճյուղի սկաուտական բաժանմունքին, յատկապէս գայլիկ-արծուիկներու խումբերուն, որպէսզի անոնք փոքր տարիքէն հասակ նետելով ՀՄԸՄի շարքերուն մէջ, կարենան ապագայ ղեկավարները դառնալ մասնաճյուղին եւ ինչո՞ւ չէ նաեւ գաղութին: 2007ին, մասնաճյուղը կը ստանախմբէ իր հիմնադրութեան 10ամեակը, որ յաջողութեամբ կ'իրագործուի, մեծ ոգեւորութիւն ստեղծելով Լաս Վեկասի հայկական համայնքէն ներս: Տարուէ տարի յառաջդիմութիւն արձանագրելով, մասնաճյուղը տիրական ներկայութիւն կը դառնայ մարզական խումբերը իրենց փորձերը կը կատարեն շրջանի «Թարխանեան» մարզական համալիրի մարզադաշտերուն վրայ: Մասնաճյուղը մեծ ոգեւորութեամբ կը մասնակցի նաեւ ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերուն: 2016ին, մասնաճյուղի մարզիկները Թեթե Աթլեթի մարզաճիւղի ախոյեանութեան տիրացան: Տարիներէ ի վեր մասնաճյուղը իր կրպակը կ'ունենայ Նաւասարդեան փառատօներուն, որուն եկամուտէն տարեկան իր պիւտձէն կ'ապահովէ: Գաստիարակչական իմաստով, մասնաճյուղը կը հետեւի Շրջանային վարչութեան կազմակերպած սեմինարներուն, ինչպէս նաեւ,



իր շրջանէն ներս: Մասնաճյուղի արի-արեւուչները ամէն տարի Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկներուն եւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնախմբութեանց կարգապահութեամբ եւ տպաւորիչ ձեւով կը կատարեն դրօշակի արարողութիւնները: 2007ին, մասնաճյուղի 20ամեակի տօնախմբութիւնը առաւել կը գօտեպնդէ մասնաճյուղը: Մասնաճյուղը մօտէն կը գործակցի Շրջանային Մարզական խորհուրդին հետ եւ կը մասնակցի միջ-մասնաճյուղային բանակումներուն, ինչպէս նաեւ Կեդրոնական վարչութեան չորս տարին անգամ մը կազմակերպած Համա-ՀՄԸՄական բանակումներուն: Այս տարի մասնաճյուղէն 10 արի-արեւուչներ մասնակցեցան ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած Համա-ՀՄԸՄական 11րդ Սկաուտական ընդհանուր բանակումին, որ մեծապէս նպաստեց սկաուտական թեւի առաւել աշխուժացման: Մասնաճյուղի սկաուտական շաբաթական աշխատանքները կը կատարուին շրջանի Ս. Կարապետ եկեղեցւոյ շրջափակէն ներս, իսկ

Մասնաճյուղի պաշտօնական բացման հանգիստութիւնը տեղի ունեցած է Յունուար 1997ին, որուն համար ալ, մասնաճյուղի հիմնադրութեան տարին ընդունուած է 1997ը: Արցախի Հանրապետութեան անունով մասնաճյուղը կը կոչուի «Արցախ», որ աշխոյժ գործունէութիւն կը կատարէ շրջանէն ներս, սկզբնական տարիներուն կեդրոն ունենալով շրջանի վարձու եկեղեցւոյ շրջափակը: Քանի մը տարիներու աշխոյժ գործունէութենէ ետք, մասնաճյուղը որոշ վերիվայրումներ կ'ապրի, վտանգելով իր գոյութիւնը, սակայն ատենի Շրջանային վարչութիւնը մօտէն հետեւե-

մեծ յաջողութիւններ կ'արձանագրեն: Մասնաճյուղի պասքէթպոլի մանչերու Ա. դասակարգի խումբը նոյնիսկ ախոյեանութիւնը կը շահի ՀՄԸՄի Սէն Տիէկոյի «Սեւան» մասնաճյուղի կազմակերպած միջ-մասնաճյուղային մարզախաղերուն: Պէտք է ընդգծել, թէ մարզականի գծով մասնաճյուղի մէջ մեծապէս գնահատելի աշխատանք կը տանի ՀՄԸՄի «Մասիս» մարզիկներէն Լաս Վեկաս փոխանցուած եղբ. Յակոբ Տարագճեանը, իսկ սկաուտականի գծով՝ եղբ. Ճէգ Գասամանեանը եւ մասնաճյուղի սկաուտական շարքերուն մէջ դաստիարակուած քոյր Գառնի Արմէնեանը:



# ՀՄԸՄԻ ՖԻՆԻՖԱԻ Մասնաճյուղ

Արիզոնայի գլխավորաբար Ֆինիքս քաղաքի մէջ բնակող փոքրաթիւ հայութիւնը համախմբելու եւ հայ դպրոցի բացակայութեան, շրջանի երեխաները հայկական ոգիով դաստիարակելու, ինչպէս նաեւ հայկական գաղութը առաւել կազմակերպելու հետանկարով, Լոս Անճելըսի եւ այլ շրջաններէ Ֆինիքս հաստատուած միութենականներ քով քովի գալով 1998ին հիմը դրած են շրջանի ՀՄԸՄԻ տեղւոյն մասնաճյուղին:

Մասնաճյուղի հիմնադիր վարչութեան անդամ ընտրուած են հետեւեալ քոյր-եղբայրները.

- Յարութ Պոյաճեան
- Գրիգոր Քէնէթէճեան
- Կապի Խուրի
- Յարութ Շքլանեան
- Սոճի Յոլակեան
- Արշակ Արտալեան
- Մակի Թորոսեան

Շուտով կարելի եղած է ունենալ սկաուտական եւ մարզական բաժանմունքներ, որոնք ոգեւորութեամբ աշխատանքի լծուելով, մեծ խանդավառութիւն ստեղծած են գաղութէն ներս: Սկաուտականին կողքին, մասնաճյուղը ակնյայտ դարձած է իր ֆութպոլի մարզաճիւղով, որ կարգ մը մարզասէր վարչականներու եւ անդամներու շնորհիւ բազմաթիւ հետեւորդներ ունեցած է, յատկապէս փոքրերու խումբը: Զոյգ բաժանմունքներն ալ մասնակցած են ՀՄԸՄԻ նաւասարդեան խմբային եւ անհատական մրցումներուն եւ ակնյայտ արդիւնքներ արձանագրած են:

1998ին նաւասարդեանի լողի մրցումներուն մասնակցած եւ ախոյեան հանդիսացած է մասնաճյուղի մարզկուհիներէն Օտէթ Նազարեանը, իսկ 2015ին եւ 2016ին՝ Հէնրիկ Գաբրիէլեանը՝ երկար վազքի մէջ: Վերջին քանի մը տարիներու ընթացքին, մասնաճյուղը ունեցած է վաճառքի իր կրպակը նաւասարդեանի փառատօնի շրջափակէն ներս:

Մասնաճյուղը կը գործէ շրջանի փոքրիկ հայ կեդրոնէն ներս, ուր իր ժողովներն ու սկաուտական աշխատանքները կը կատարէ, իսկ մարզական փորձերու համար կ'օգտագործէ շրջանի զբօսայգիներն ու վարձու մարզադաշտեր:

Մասնաճյուղը մօտէն կը գործակցի տեղւոյն ՀՅԴ «Գէորգ Չաւուշ» կոմիտէութեան, ՀՕՄԻ «Արարատ» մասնաճիւղին, շրջանի Հե-Դի Ուխտին եւ հայ Դատի յանձնախումբին հետ եւ իր արդար բաժինը կը բերէ շրջանի տարեկան մեծագոյն եւ միասնական ձեռնարկի կազմակերպման մէջ:

Վարչութիւնը եւ անդամները նաեւ մօտէն կը գործակցին տեղւոյն եկեղեցւոյ հետ: Մասնաճյուղի հաւատացեալ անդամները միշտ ներկայութիւն են եկեղեցւոյ նախաձեռնութիւններուն եւ անոր զարգացման աշխատանքներուն:

ՀՄԸՄԻ 100ամեակին առիթով, մասնաճյուղը երկու գլխավոր ձեռնարկներ կազմակերպած է, առա-



ջինը զաշտահանդէս մըն էր շրջանի զբօսայգիին մէջ, իսկ երկրորդը՝ ճաշկերոյթ-պարահանդէս մը:

Ակմբային կեանքի աշխուժացման գծով կազմակերպուող Ուրբաթօրեայ ընթրիք-երեկոններուն, մասնաճյուղը իր առանձին օրը ունի, որու միջոցաւ նաեւ իր նիւթականը կ'ապահովէ:

Մասնաճյուղի հետեւեալ անդամները, իրենց երկարամեայ նուիրեալ գործունէութեան համար, Շրջանային վարչութեան կողմէ արժանացած են շրջանի բարձրագոյն՝ «Մառայութեան Շքանշան»ին.

Յարութ Պոյաճեան՝ 2016ին  
Զարուկ Փալթաճեան, 2017ին  
Անահիտ Գասպարեան, 2018ին  
Վերջին քանի մը տարիներուն

մասնաճյուղը համեմատաբար աշխույժ գործունէութիւն կը տանի: Մարզականին առընթեր վերաշխուժացուցած է նաեւ սկաուտական իր բաժանմունքը:

Ներկայիս վարչութեան կազմը կը բաղկանայ հետեւեալ եղբայրներէ.

- Յովհաննէս Տէմիրճեան
- Արա Քէրէստէճեան
- Թոմաս Պոյաճեան
- Աբրահամ Սարգիսեան
- Շահին Շահինեան

Մասնաճյուղը ունի 47 անդամներ, որոնց 11ը սկաուտական բաժանմունքի անդամ են, 33ը՝ մարզական, իսկ 13ը՝ անդամներ, որոնք բաժանմունքներուն եւ մասնաճյուղի ձեռնարկներու կազմակերպմամբ կը զբաղին:

ԸՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ԸՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ԸՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

## Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Հովիւր, Հոգաբարձութիւնը, Ազգ. Երեսփոխանները, Կիրակնօրեայ Վարժարանը, Դպրաց Դասը Եւ Տիկնանց Օժանդակ Մարմինը

**Նոր Տարուան  
Եւ Ա. Ծնունդի  
Լաւագոյն Ողջոյններ  
Կը Փոխանցեն  
Հայրենաբնակ եւ Սփիւռքի  
Հայ Ժողովուրդին**

ԸՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



# ՀՄԸՄԻ Ուռլնաթ Քրիֆի «Կարս» Մասնաճիւղ

Ուռմբ մը ՀՄԸՄականներ, նկատելով Ուռլնաթ Քրիֆի մէջ հայութեան թուական անը, եւ նկատի ունենալով, որ շատեր այդ շրջանէն երկար ճամբայ կտրելով կը մասնակցին ՀՄԸՄի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի գործունէութեան, իսկ ուրիշներ հեռաւորութեան հետեւանքով կը զրկուին ՀՄԸՄական աշխատանքներէն, կ'որոշեն ՀՄԸՄի մասնաճիւղ մը հիմնել նաեւ

հետեւեալ քոյր-եղբայրները կ'ընտրուին մասնաճիւղի հիմնադիր վարչութեան անդամներ. Ալին Առպապեան Ջարեհ Էքմէքճեան Տորիս Տէմիրճեան-Մատտըն Արմինէ Ժամկոչեան Մարտո Գաբրիէլեան Ալին Քարփոյեան Սարգիս Շիրիբեան Նոյն ժողովին միաձայնութեամբ մասնաճիւղը կ'անուանուի



Ուռլնաթ Քրիֆ շրջանին մէջ: Այս գաղափարը մեծ ոգեւորութեամբ կ'ընկալուի շրջանէն ներս: Գործի անցնելով, 2 Մայիս 2000ին կը գումարուի մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն ընթացքին

«Կարս», պատմական Կարս քաղաքի անունով: Մասնաճիւղը 30 անդամներով մեծ ոգեւորութեամբ աշխատանքի կը լծուի՝ ՀՄԸՄի քարոզչութիւնը կատարելով շրջանէն



ներս: Պէտք է ընդգծել, թէ Հիւսիսային Քալիֆորնիոյ այս շրջանը բնակող հայութիւնը աշխարհագրական հեռաւորութեան պատճառով, ինչպէս նաեւ միութենական կեանքին ծանօթ չըլլալով, համախմբուելու դժուարութիւն ունի: Այսուհանդերձ, սակայն մասնաճիւղի ղեկավարութիւնը կրցած է երիտասարդութիւնը քով քովի բերել եւ ունենալ իր մարդկան եւ մանաւանդ սկստական բաժանմունքը: Հազիւ երկու ամիսներու կեանք ունեցող այս մասնաճիւղը իր առաջին յաջողութիւնը կ'արձա-

նագրէ, ՀՄԸՄի Նաւասարդեան 25րդ մարզախաղերուն մասնակցութեամբ: Համարձակ այս քայլը, ոչ միայն յուսադրած է հանդիսատեսը, այլ նաեւ մեծապէս խրախուսած է մասնաճիւղի տողանցող մարզիկ-մարզկուհիներն ու սկստական բաժանմունքը, որոնք առաւել կապուած կը զգան ՀՄԸՄին եւ հետզհետէ կ'ընդարձակեն իրենց շրջապատը: Մասնաճիւղը տեղւոյն Հայ Օգնութեան Միութեան «Էրեբունի» մասնաճիւղի հովանաւորած Ուրբաթօրեայ վարժարանին հետ մի-

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

Կը Շնորհաւորեմ  
Նոր Տարին  
Եւ Ս. Ծնունդը  
Իմ Ընկեր-  
Ընկերուիիներուն  
Լաւագոյն  
Մաղթանքներով

**ԱՐԱՔՍ  
ՍԱՐԵԱՆ**

Սան Ֆրանսիսքո

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

Կը Շնորհաւորենք  
Համայն Հայութեան  
Նոր Տարին  
Եւ Ս. Ծնունդը

Տէր եւ Տիկ.  
Խաժակ  
եւ Հիլտի  
Սարգիսեան  
Սան Ֆրանսիսքո

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Ուուլնաթ Քրիֆի «Կարս» Մասնաճյուղ

ասին, մեծ ներկայություն է Ուուլնաթ Քրիֆի մէջ եւ կարելոր ազդեցություն՝ անոր շրջակայքը բնակող փոքրաթիւ հայութեան վրայ: Զոյգ միություններն ալ Սան Ֆրանսիսկոյէն եւ Սանթա Գլարայէն հետո բնակող հայ ընտանիքներուն հնարաւորութիւն ընձեռած են ներգրաւուելու շրջանի հայկական համայնքէն ներս եւ պահպանելու հայկական մեր մշակոյթը:

Շրջանի հայ երիտասարդութեան ուղղուած գործունէութեան առընթեր, մասնաճիւղը շարք մը կարելոր ծրագիրներ կ'իրականացնէ Ուուլնաթ Քրիֆի եւ անոր շրջակայքը ապրող հայութեան համար: Այդ ծրագիրներէն կ'արժէ յիշատակել յաջողութեամբ իրականացուող «Ապագայ» ծրագիրը, որ սկիզբ առած է 2007 թուականին, մասնաճիւղի նուիրեալ հիմնադիր անդամներէն Արմինէ Ժամկոչեանի նախաձեռնութեամբ: Ծրագիրը 2-5 տարեկան երեխաներու եւ անոնց ծնողներուն համար ստեղծուած է, որպէսզի վաղ տարիքին փոքրերը եւ իրենց ընտանիքները համախմբուին, հանդիպումներ ունենան, ծանօթանան ՀՄԸՄին եւ անոր ստեղծած առողջ շրջապատին եւ օգտուին հայ երիտասարդութեան ընծայուած օգտաշատ հնարաւորութիւններէն:

Քանի մը տարիներէ ի վեր համայնքի անդամները քով քովի բերելով կը մարզուին խումբով

մասնակցելու Սան Ֆրանսիսկոյի 12 քլմ. մարաթոն-մրցավազքին: Վերջին տարիներուն մասնաճիւղը կը կազմակերպէ նաեւ «Կարսի գարմանահրաչ մրցավազքը» հաճելի ծրագիրը, մրցակցութեան հանելով գաղութը:

Իսկ բոլորովին վերջերս, մասնաճիւղի վարչութիւնը սկսած է կազմակերպել հայկական մշակութային երեկոներ, որոնց ընթացքին մասնակիցները հայերէն բանաստեղծութիւններ կը սորվին, հայկական երգեր կ'երգեն, հայկական երաժշտութիւն կ'ունկնդրեն եւ հաճելի ընկերային պահեր կ'ապրին: Միաժամանակ անոնք կը ծանօթանան ՀՄԸՄի առաքելութեան եւ նպատակներուն, ինչպէս նաեւ այդ նպատակները հետապնդող եւ իրագործող ՀՄԸՄականներուն:

Թէեւ մասնաճիւղը չունի իր սեփական կեդրոնատեղին, սակայն ի սէր իր հոգածութեան յանձնուած սերունդներուն, մարզական փորձերու համար կը վարձէ մարզադաշտեր եւ զբօսայգիներ, իսկ սկաուտականի համար՝ համայնքային եկեղեցւոյ սենեակները:

2013ին, ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը, բարձր գնահատելով մասնաճիւղի հիմնադիր անդամներէն Զարեհ Էքմէքճեանի երկար տարիներու ՀՄԸՄի նուիրումը, ՀՄԸՄի Նաւասարդեան 38րդ Մարզախաղերուն «Տիպար ՀՄԸՄական»ի տիտղոսը շնորհեց



ՀՆՈՐՅԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# NOVITA

## Հերի Նազարեաններ եւ Ընտանիք

*Տօնակաւ  
Այս Օրերուն  
Մեր Լաւագոյն  
Մաղթանքները  
Կը Փոխանցենք  
Հայ Ժողովուրդին*

ՀՆՈՐՅԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Նորթ Հոլիվուտի «Ջալախի» Մասնաճյուղ

Հոն ուր հայութիւն կայ, ՀՄԸՄը ներկայութիւն է: Վերջին տարիներուն հետզհետէ Նորթ Հոլիվուտի մէջ հայութեան անը նկատելի դարձած էր: Երջանի ՀՅԴ «Բարգէն Սիւնի» կոմիտէին առնթեր, խումբ մը ՀՄԸՄականներ եւս, շրջանի երիտասարդութիւնը մաքուր միջավայրի մը մէջ համախմբելու եւ անոնց ազգային դաստիարակութիւն տալու հեռանկարով, փափաք յայտնած

աշխատանքներուն մօտէն հետեւած եւ հարկ եղած կազմակերպչական ուղղութիւնները փոխանցած է Երջանային վարչութեան անդամ եղբ. Փիեռ Մանուկեան: Ժողովականներու որոշումով մասնաճիւղը կոչուեցաւ հայկական Ջալախքի անունով: Հիմնադիր ժողովի ընթացքին մասնաճիւղի հիմնադիր վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալ քոյր-եղբայրները.



տաքրբրութիւն ստեղծած է իր անդամներուն մօտ: Սակայն մարզադաշտերու պակասն ու նիւթական դժուարութիւնները, որոշ ազդեցութիւն ունեցած են՝ մասնաճիւղի անդամարշարը դանդաղեցնելով:

երկրորդը հանդիսացած է: Յատուկ զարկ տալով պասքէթպօլին, 2017ին, մասնաճիւղը յաջողած է երեք խումբեր կազմել, որոնք մասնակցած են Նաւասարդեան 42րդ մարզախաղերուն: Անցեալ տարի (2017) մասնաճիւղը,



Այսուհանդերձ, նորակազմ մասնաճիւղի վարչութիւնը չէ յուսահատած եւ կեդրոնացած է առաջին հերթին մարզական իր բաժանմունքը հզօրացնելու գործին վրայ. փորձերու համար ապահովուած է Սան Վալի Հայ Սքուլի մարզադաշտերը:

Երջանային վարչութեան եւ այլ զօրակիցներու քաջալերանքով, ունեցաւ իր սկաուտական բաժանմունքը, որ իր շաքաթական աշխատանքները կը կատարէ Կլենտէյլի Pacific Park-ին մէջ, պարբերաբար նաեւ կ'օգտագործէ Սթիւտիօ Սիթիի Հայ Կեդրոնը:



Մասնաճիւղին կազմակերպչականօրէն առակցելու եւ միութենական օրէնքներուն առաւել ծանօթացնելու նպատակով, Երջանային վարչութիւնը մասնաճիւղի մօտ իբրեւ ուսուցող նշանակած է ծանօթ ՀՄԸՄական եղբ. Յովիկ Պետեւեանը, որ մեծապէս օգտակար հանդիսացած է մասնաճիւղի յառաջդիմութեան:

Մասնաճիւղի պասքէթպօլի խումբերու փորձերը կը կատարուին Սէն Վալի Հայ Սքուլի մարզադաշտերուն վրայ, հարկ եղած պարագային նաեւ այլ մարզադաշտեր կը վարձուին: Մասնաճիւղը զանազան ձեռնարկներ կը կազմակերպէ, իր շրջանի Հայ Կեդրոնէն ներս:

էին, Նորթ Հոլիվուտի մէջ Հիմը դնելու ՀՄԸՄի մասնաճիւղի մը: ՀՄԸՄի Երջանային վարչութիւնը դրական արձագանգելով այդ փափաքին, Մայիս 2011ին, կազմակերպեց մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն մասնակցեցան շրջանէն 50 ՀՄԸՄասէրներ: Մասնաճիւղի հիմնադրութեան

Վաչէ Եագուպեան Համբիկ Շահինեան Յակոբ Պապողեան Մարալ Դարբինեան Քրիսթին Չալիքեան Դալար Եահայեան Յասմիկ Կակոսեան Աշխուժութեամբ աշխատանքի սկսած մասնաճիւղը, մեծ հե-

Մի քանի տարիներու պատրաստութիւններէ եւ որոշ դժուարութիւններ յաղթահարելէ ետք, մասնաճիւղի մարզական խումբերը սկսած են մասնակցիլ միջմասնաճիւղային եւ Նաւասարդեան մարզախաղերուն, ուր որոշ յաղթանակներ արձանագրած են: 2014ին, «Ջալախք» մասնաճիւղի ֆութպօլի Ա. դասակարգի խումբը, ախոյեան հանդիսացած է ՀՄԸՄի «Սեւան» մասնաճիւղի կազմակերպած միջմասնաճիւղային մրցաշարքին: Նոյն խումբը 2017ի Նաւասարդեան 42 մարզախաղերուն, իր դասակարգի մէջ

Մասնաճիւղի առաջարկութեամբ հետեւեալ եղբայրները արժանացած են շրջանի բարձրագոյն Մաուսյութեան շքանշանին. Վաչէ Եագուպեան՝ 2015ին Համբիկ Շահինեան՝ 2016ին Վանսօ Ճէնապեան՝ 2017ին: Մասնաճիւղի ամենակարելոր նուաճումներէն է երիտասարդ մարզիկ Անժելինա Թէյմուրի Թեթեւ աթլետի մարզաճիւղի մէջ արձանագրած յաջողութիւնները: Ան Նաւասարդեան մարզախաղերու ընթացքին Թեթեւ աթլետի մէջ 18 մետալներ ապահոված է



# ՀՄԸՄԻ Նորթ Հոլիվուտի «Ջալախիֆ» Մասնաճյուղ

մասնաճյուղին: Քոյրը նաև 2017ին, ընդհանուր դասատրման մէջ առաջին տեղը գրաւած է Միացեալ Նահանգներու թեթեւաթիւ փոքրերու ախտեանութեան մրցումներուն, իսկ այս տարի՝ 3րդ տեղը:

Մասնաճյուղի Ա. դասակարգի մանչերու ֆուլթայլի խումբը անցեալ տարուան (2017) Նաւասարդեան մարզախաղերուն երկրորդ տեղը գրաւելը եւս մեծ նուաճում մըն էր մասնաճյուղին համար:

Վարչութիւնը իր նիւթական միջոցները կ'ապահովէ եւ միաժամանակ իր շրջանի ՀՄԸՄասէր

հասարակութիւնը կը համախմբէ ընկերային ձեռնարկներ կազմակերպելով:


2017-2018 տարեշրջանի մասնաճյուղի վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ եղբայրներէ.

Վաչէ Եագուպեան՝ Ատենապետ Վանսօ Ճէնապեան  
Համբիկ Շահինեան  
Շանթ Կարապետեան  
Աշոտ Պարոնեան

Մասնաճյուղը ներկայիս ունի 127 անդամներ, որոնց 47ը սկաուտներ են, 58ը՝ մարզիկներ, իսկ մնացեալը՝ վարչութեան եւ մասնաճյուղի գործօն անդամներ:



ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



**The Great Carpet Company**

**Լաւագոյն  
Մաղթանքներով  
Կը Շնորհաւորենք Բոլորի  
Նոր Տարին Եւ  
Ա. Ծնունդը**

**4524 Brazil St #A  
Los Angeles, CA 90039  
818-247-2990**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Ձերմօտէն կը գնահատենք  
«Ասպարէզ»ի հարիւր եւ  
տասնամեայ երթը, յատկապէս  
հայապահպանման  
առաքելութիւնը՝ Հայոց  
Ցեղասպանութեան ճանաչման  
եւ հայկական հողերու  
պահանջատիրութեան  
ուղղութեամբ:**

**Զորք Մարգպանի  
Հայրենակցական  
Միութիւն**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Սափրամենթոյի «Լոռի» Միաւոր

Քալիֆորնիոյ նահանգի մայրաքաղաք Սաքրամենթոյի մէջ, փոքր թիւով հայկական գաղութ մը գոյութիւն ունի, որուն մաս կը կազմեն նաեւ մի քանի նախկին ՀՄԸՄականներ, որոնք աշխատանքի բերուածով հաստատուած են հոն: Այս ՀՄԸՄականները, Սաքրամենթոյի հայ երեխաներու էութեան մէջ ազգային դիմագիծ եւ հայրենասիրութիւն դրոշմելու հե-

տասխանատուներ՝ Սեւան Երկաթեանի, Արամ Սարգիսեանի եւ Յակոբ Չորուրեանի հետ ու բացատրած է անոնց ՀՄԸՄի առաքելութիւնը, հետապնդած նպատակներն ու կառույցը: Եղբայրը նաեւ ընդգծած է մօտիկ ապագային միաւորը մասնաճիւղի վերածելու կարեւորութիւնն ու կարելիութիւնները:

Միաւորը առաւել քաջալերելու եւ աշխոյժ գործունէութեան մղելու նպատակով, 15 Մայիս 2016ին, Շրջանային վարչութեան ատենապետ Մանուէլ Մարտէեան, ընկերակցութեամբ Արմանտ Գիլիճեանի, հանդիպում մը ունեցած է ՀՄԸՄի Սաքրամենթոյի միաւորի նոյն պատասխանատուներուն հետ:

Իբրեւ առաջին հրապարակային ելոյթ, միաւորը իր փոքրերու ֆուլթայլի խումբով

մասնակցած է ՀՄԸՄի Նաւասարդեան 41րդ մարզախաղերուն եւ անոր փակման շքերթին՝ ոգեւորելով ներկաները:

ՀՄԸՄի այս միաւորի ստեղծումը բխած է ՀՄԸՄի ռազմավարական ծրագրաւորումէն, ուր կը քաջալերուի միաւորներ ունենալու գաղափարը, այն շրջաններէն ներս, ուր հայկական համայնքներ գոյութիւն ունին, սակայն մասնաճիւղ հիմնելը դժուար է: Միաւորի դրութեամբ կարելիու-



թիւն կը ստեղծուի համախմբելու հայ պատանիներն ու երիտասարդները մարզական, սկաուտական կամ հայապահպանման նպատակով այլ խմբակներու հետ: Միաւորի աշխատանքներէն քաջալերուած, միաւորի եռանդամ պատասխանատու մարմինն միացած է նաեւ ՀՕՄի նախկին անդամ Աննա Կարապետեանը, որ ուսուցչական ասպարէզէն ներս լայն փորձառութիւն ունենալով, մեծապէս կը նպաստէ ֆուլթայլի միաւորի աշխատանքներուն: Միաւորը մեծապէս քաջալերուած ՀՄԸՄի Նաւասարդեան 41րդ մարզախաղերու իր մասնակցութենէն, շարունակած է մասնակցիլ նաեւ Նաւասարդեան 42րդ եւ 43րդ մարզախաղերուն:

Ներկայիս միաւորի պատասխանատու մարմինը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէն. Սեւան Երկաթեան Արամ Սարգիսեան Յակոբ Չորուրեան Աննա Կարապետեան Միաւորը կը հաշուէ 20 անդամ, որոնց 12ը ֆուլթայլի մարզիկներ են: Շրջանային վարչութեան գրասենեակէն կը յայտնեն, թէ հայկական կարգ մը գաղութներ եւս հետաքրքրութիւն ցուցաբերած են իրենց համայնքներէն ներս ՀՄԸՄի միաւորներ կամ մասնաճիւղեր կազմելու շուրջ, որպէսզի այս օտար ափերուն վրայ հասակնետող հայ պատանիները համախմբուին ՀՄԸՄի դրօշին տակ եւ հայկականութեամբ լեցուին:



ուանկարով, 2016ին, դիմելով ՀՄԸՄի Շրջանային վարչութեան, առաջարկած են ՀՄԸՄի միաւոր մը հիմնել:

Գրական պատասխան ստանալով, անոնք ՀՄԸՄի միաւորը սկսած են փոքրերու ֆուլթայլի խումբով մը, մարզիչ ունենալով Արամ Սարգիսեանը: Անդամաւոր նպատակով, Շրջանային վարչութեան անդամ Արմանտ Գիլիճեան քանի մը հանդիպումներ ունեցած է միաւորի պա-

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Լաւագոյն մաղթանքներով կը շնորհաւորենք Նոր Տարին եւ Ս. Ծնունդը մեր բոլոր հայրենակիցներուն եւ բարեկամներուն**

**Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութիւն**

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՐԱՊԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Merry Christmas and Happy New Year from all of us at JM Tobacco, Inc.**

**JM'S CIGARS**

[www.jmtobacco.com](http://www.jmtobacco.com)

# ՀՄԸՄԻ Սանթա Քլարիթայի «Կիլիկիա» Միաւոր

Շաբաթ, 20 Մայիս 2017ին, ՀՄԸՄԻ Արեւմտեան Ամերիկայի մեծ ընտանիքը օժտուեցաւ նոր միաւորով մը՝ «Կիլիկիա» անունով, Սանթա Քլարիթայի մէջ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6:30ին, ՀՄԸՄԻ Շրջանային վարչութեան Հրաւերով, աւելի քան 50 ազգայիններ ներկայ գտնուեցան նորաստեղծ միաւորի Հիմնադիր ժողովին, որ գումարուած է Լոս Անձելըսի Հիւսիսը գտնուող Սանթա Քլարիթա քաղաքի Հայոց Առաքելական Ս. Սարգիս եկեղեցւոյ սրահին մէջ: Պատմական այս ժողովին ներկայ գտնուեցան եկե-

ղեցւոյ Հովիւ Սերովբէ քհնյ. Ալանճեան, Շրջանային վարչութեան ատենապետ Մանուէլ Մարսէլեան, որ մեծ ներդրում ունեցած է միաւորի ստեղծման մէջ, ինչպէս նաեւ Շրջանային վարչութեան անդամներ Արամ Պէքարեան եւ Փիեռ Մանուկեան:

Տէր Հօր բացման աղօթքէն ետք ցուցադրուած է ՀՄԸՄԻ գործունէութիւնը արտացոլող տեսերիկ մը, ուր ներկայացուած են Արեւմտեան Ամերիկայի ՀՄԸՄԻ մասնաճիւղերը, կազմակերպուած զանազան մարզախաղերը, սկաուտական շարժումը, Նաւա-



© Nanor Zinzalian



սարդեան մարզախաղերն ու ՀՄԸՄԻն առնչուող այլ հետաքրքրական աշխատանքներ:

Ապա ելոյթ ունեցան Մանուէլ Մարսէլեան, որ բացատրելէ ետք ՀՄԸՄԻ առաքելութեան եւ հետապնդած նպատակներու կարեւորութիւնը, շեշտած է ՀՄԸՄԻ ծառայութեան ոգին, եւ պաշտօ-

տելին ՀՄԸՄԻ սկաուտական գործունէութեան:

Նիւթական ակնկալութիւններով մասնաճիւղը ՀՄԸՄԻ 43րդ Նաւասարդեան մարզախաղերու փառատօնին Fruzion fruit juice-ի Հաստատութեան հետ գործակցաբար ունեցած է իր կրպակը եւ շօշափելի յաջողութիւն արձա-



նապէս յայտարարած է միաւորի Հիմնումը, որ պիտի գործէ Սանթա Քլարիթայի տարածքէն ներս:

Այնուհետեւ, նորակազմ միաւորի վարիչ մարմին նշանակուեցան Վիքի Աշճեան (ատենապետուհի), Ալեքս Ճահիլեան եւ Ռաֆֆի Տումանեան: Ներկաներու համաձայնութեամբ միաւորը կոչուեցաւ «Կիլիկիա», որպէսզի շրջանը իմանայ Հայկական Կիլիկիոյ թագաւորութեան մասին:

Շրջանային վարչութեան ատենապետը շնորհակտրելէ եւ յաջողութիւն մաղթելէ ետք նորակազմ միաւորին, յոյս յայտնեց, որ յառաջիկայ Նաւասարդեան մարզախաղերուն միաւորը իր մասնակցութիւնը կը բերէ սկաուտներով եւ մարզիկներով:

Մասնաճիւղը կարճ ժամանակամիջոցին գործադրած իր հետաքրքրական ծրագիրներուն շնորհիւ, թուական արագ աճ արձանագրած է եւ ներկայիս ունի 40 երկսեռ անդամներ: Մասնաճիւղը կարիքը ունի սկաուտ ղեկավարի մը, որպէսզի կարենայ սկաուտական աշխոյժ գործունէութիւն ծաւալել. արդէն իսկ ինը արի-արենուշներ կը հե-

նագրած է:

Մասնաճիւղի շաբաթական հանդիպումները տեղի կ'ունենան Meadows Park-ի մէջ, Վալենսիա, իսկ ֆուլթպոլի փորձերը կը կատարուին Pacific Park-ի մէջ:

Մարզական գետնի վրայ, մասնաճիւղը զարկ կու տայ ֆուլթպոլին, որուն ԱԱ դասակարգի խումբին անդամակցած են 15 մարզիկներ:

Ներկայիս միաւորի վարիչ մարմինը կը բաղկանայ հետեւեալ բոլոր-եղբայրներէ.

Կարէն Մարտիրոսեան  
Թամար Աթմաճեան-Հասէրճեան  
Թանիա Լաբոյեան  
Աւօ Սոլթմանեան  
Արամ Սարգիսեան

Միաւորը կը հաշուէ 50 անդամ, որոնց 15ը մարզիկներ են, 10ը՝ սկաուտներ, իսկ մնացեալ 25ը գործօն անդամներ: Պէտք է ընդգծել, թէ միաւորը ունի ֆուլթպոլի վաստակաշատ մարզիկներ, որոնց լուրջ աշխատանքի շնորհիւ մասնաճիւղը Նաւասարդեան 43րդ մարզախաղերուն երկրորդ տեղը գրաւեց ֆուլթպոլի ընդհանուր դասաւորման մէջ:

## Հոլիվուս

ՀՅԳ «Գարեգին Նժդեհ» Կոմիտե  
ՀԵԳ «Մուսա Տադ» Ուխտ

ՀՅԳ «Թեղիբեան» Պատանեկան Միութիւն  
ՀՕՄԻ Լոս Անճելըսի «Մայր» Մասնաճիւղ  
ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի Մասնաճիւղ  
Հոլիվուսի Հայ Գասի Յանձնախումբ

Ս. Կարապետ Հայց. Առաք. Եկեղեցւոյ  
Հովիւ, Հոգաբարձութիւն  
Եւ Յարակից Մարմիններ


Ռոզ Եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարան  
ՀՕՄԻ «Մարի Փոստոյեան» Մանկամսուր

*Ամանորի Եւ Ս. Ծնունդի  
Տօներուն Առիթով՝  
Շնորհաւորութիւններ  
Եւ Յաջողութեան Մաղթանքներ  
Հայասրանի, Արցախի, Արտերկրի,  
Ինչպէս նաեւ Հոլիվուսի Հայութեան*



ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀԱՌԲԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



**ՀՄԸՄԻ**  
**Արևմտյան Միացեալ**  
**Նահանգներու**  
**Շրջանային Վարչութիւնը**

**Կը Շնորհաւորէ Համայն Հայութեան,**  
**Շրջանի Եւ Աշխարհի Տարածքին**  
**Գործող Բոլոր ՀՄԸՄական Քոյր-Եղբայրներուն**  
**Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը**

**Մաղթելով Բոլորին**  
**Յաջող Ու Բարեբեք Տարի Մը**

**Հաւատարմ Մնալով**  
**«Բարչրացի՛ր, Բարչրացո՛ւր» Կարգախօսին**  
**ՀՄԸՄը Պիտի Շարունակէ Սրբազան**  
**Իր Առաքելութիւնը,**  
**Պատրաստելով Վաղուան Ազգանուէր Հայր**





Ասպարեզ





**2019ի տարեմուտին, եւ մեր Տիրոջ ու Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան ու Աստուածայայտնութեան տօնին առիթով, քրիստոնէական ջերմ սիրով ու մեր ազգային զգացումներով կ'ողջունենք եւ կը շնորհաւորենք համայն հայութիւնը՝ Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի տարածքին, մաղթելով, որ մեր մայր հայրենիքին մէջ սկիզբ առած բարեփոխութիւնը շարունակուի դրական երթով, եւ նպաստէ հայրենիքին ու սփիւռքեան մեր օճախներուն միջեւ գործակցութեան սերտացման եւ մեզ աննահանջ քայլերով առաջնորդէ դէպի մեր ազգային տենչերուն իրականացումը:**

**Տօնական այս օրերուն, եւ ներշնչուելով Ս. Ծննդեան բազմախորհուրդ պատգամներէն, աղօթք բարձրացնենք առ Աստուած, որպէսզի մեր հայրենիքն ու համայն աշխարհը պահէ իր Ս. Աջին հովանիին տակ, բոլորիս պարգեւէ հաւատք, յոյս, սէր, հաճութիւն եւ խաղաղութիւն: Թող մեր հաւաքական ու սեփական յարկերը ապրին բարգաւաճում, որպէսզի հաւատարմօրէն շարունակենք մեր եկեղեցաշէն, սերնդակերտ ու հայրենանուէր ծառայութիւնները՝ նոր արգասիքներով հարստացնելով հայութեան հաւաքական կեանքը:**

**ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ**

**Մուշեղ Արք. Մարտիրոսեան,  
Առաջնորդ  
Կրօնական Ժողով  
ԵՒ**

**Ազգային Վարչութիւն**

# ՀՄԸՄԻ Ծրջանային Սկաուտական Խորհուրդ

Ծրջանի ՀՄԸՄԻ սկաուտական աշխատանքներուն հետեւելու, ազգային դաստիարակութեամբ եւ մասնագիտական աշխատանքներով անոնց մտային հորիզոնները ընդարձակելու պարտականութիւնը վստահուած է Ծրջանային սկաուտական խորհուրդներուն:

Ներկայիս Ծրջանային սկաուտական խորհուրդը կը բաղկանայ հետեւեալ քոյր-եղբայրներէն.-

Քոյր Շարլին Գոգալեան՝ Ծրջանային Ընդհանուր խմբապետուհի եղբ. Նազո Զիգաղեան՝ Ծրջանային խմբապետ

Եղբ. Յովիկ Շահինեան՝ Ծրջանային խմբապետ

Քոյր Անուշ Ղազարեան

Եղբ. Արա Գարամեան

Իւրաքանչիւր Ծրջանային սկաուտական խորհուրդ կը նշանակուի

են երկու բաժակներ: Առաջինը նուիրուած էր ՀՄԸՄԻ Հայաստանի շրջանի հիմնադիրներէն, Արցախի ազատագրական մարտերուն մասնակցած եւ 16 Դեկտեմբեր 1991ին, Հասանապատի ճակատամարտին նահատակուած եղբ. Վարդան Բախչեանի յիշատակին (1992 – 1996), իսկ երկրորդ շրջանէն վաստակաշատ ՀՄԸՄական եւ Ծրջանային վարչութեան անդամ հանգուցեալ եղբ. Ժորա Մարտիրոսեանի յիշատակին (1999–2004):

Նոյն նպատակով նաեւ սկսուած է «Սկաուտի Օր»ուան նուիրուած սկաուտական աշխատանքները, որոնք կը յատկանշուին մանաւանդ իրենց միօրեայ միջ-մասնաճիւղային խաղերով եւ գիտելիքներու մրցումներով:

Գործակցութիւն՝ Ամերիկեան



երկու տարուան համար, որուն շնորհիւ անոնք իրենց երկամեայ ծրագիրները կը մշակեն եւ առաւելագոյն ջանքերը կը թափեն իրականացնելու գանձը: Անոնք զանազան առիթներով կ'այցելեն մասնաճիւղերը եւ կը քաջալերեն անոնց սկաուտական աշխատանքները: Անհրաժեշտ պարագային ժողովներու կը հրաւիրեն մասնաճիւղերու խմբապետները եւ մօտէն կը հետաքրքրուին անոնց ղեկավարած սկաուտական գործունէութեան ընթացքով:

Ամէն տարի, մասնաճիւղերու վարչութիւններու ընտրութիւններէն ետք, կը նշանակուին կամ կը վերանշանակուին անոնց սկաուտ ղեկավար կազմերը. Մասնաճիւղի խմբապետ, Միաւորի խմբապետ: Այս պաշտօնները կը վաւերացուին Ծրջանային սկաուտական խորհուրդի կողմէ, մասնաճիւղերու վարչութեանց հետ խորհրդակցաբար:

Այս բոլորէն անկախ, Ծրջանային սկաուտական խորհուրդը մասնաճիւղերու սկաուտական բաժանմունքներու միջեւ մրցակցութեան մաքուր ոգին առաւել շեշտելու, անոնց գիտելիքները հարստացնելու, նորանոր յաջողութիւններ արձանագրելու եւ մասնաճիւղերը աշխուժացնելու հեռանկարով, ստեղծած է հինգամեայ «ՀՄԸՄԻ Ծրջուն Շուշանաճաղիկ» բաժակի դրութիւնը եւ նուիրած մահացած ականաւոր ՀՄԸՄականներու յիշատակին: Այս առումով ցարդ ստեղծուած



Սկաուտութեան հետ.- ՀՄԸՄԻ սկաուտական բաժանմունքը մաս կը կազմէ Ամերիկեան Սկաուտութեան (Boy Scouts of America - BSA) եւ մօտէն կը գործակցի անոր հետ եւ կ'օգտուի անոր գիտելիքներէն, մասնագիտական նշաններու գրքոյկներէն, բանակավայրերէն եւ այլ յարմարութիւններէն: Երկար տարիներ ՀՄԸՄԻ Սկաուտական բաժանմունքը իբրեւ առանձին խորհուրդ գործեց BSA-էն ներս: Սակայն, Դեկտեմբեր 2014էն սկսեալ, ՀՄԸՄը իբրեւ առանձին Խորհուրդ չի գործեր եւ մասնաճիւղերուն կարելիութիւն կը ստեղծուի անդամակցելու իրենց շրջաններու BSA-ի խորհուրդներուն:

Ամերիկեան սկաուտութեան հետ գործակցութեան ծիրէն ներս, ՀՄԸՄէն բազմաթիւ սկաուտ ղեկավարներ կը հետեւին անոնց տարբեր շրջաններու խորհուրդներու կազմակերպած Wood Badge ղեկավարներու մարզումի դասընթացներուն եւ յատուկ արարողութիւններով կ'արժանանան այդ կարգը յատկանշող երկու «Պիտ»երուն: Կան նոյնիսկ ՀՄԸՄական խմբապետներ, որոնք ղեկավարած են այս դասընթացները եւ արժանացած անոր առաւելագոյն 4 «Պիտ»երուն, իսկ ուրիշներ մաս կազմելով անոնց դասախօսական կազմին ստացած են համապատասխան երեք «Պիտ»երը: Պէտք է ընդգծել, թէ ՀՄԸՄը օգտակար նորութիւններ մօտցուցած է ղեկավարման կարելոր այս դասընթացներուն մէջ:

ական դաստիարակութեան: Մասնաճիւղերը տարուան ընթացքին, պարբերաբար իրենց սկաուտական շարքերը կ'առաջնորդեն եկեղեցի՝ հետեւելու Ս. Պատարագին, Ս. Հաղորդութիւն ստանալու եւ աղօթելու:

Ասոնցմէ անկախ, ՀՄԸՄը մեծերու եւ փոքրերու համար ունի կրօնական շքանշաններու ծրագիրներ, որոնք նաեւ ճանաչում ստացած են Ամերիկեան սկաուտութեան կողմէ:

Առաջինը «Ս. Մեսրոպ Մաշտոց» Կրօնական շքանշանն է, որ ստեղծուած է արի-արեւունչներուն համար եւ ունի առանձին իր գրքոյկը: Անոր նիւթերը պատրաստուած են Արեւմտեան թեմի Ազգային առաջնորդարանին հետ գործակցաբար, գլխաւորութեամբ թեմիս առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի: Շքանշանի դասընթացները կը կազմակերպուին ամէն տարի, քանի մը հանգրուաններով եւ ըստ մասնաճիւղերու պահանջին: Հրամցուած երկելու կրօնական նիւթերէն անկախ, թեկնածուները, ազգային առաջնորդարանի սահմանած եկեղեցական ծառայութիւններ կը մատուցեն: Այս դասընթացներուն հետեւած եւ յաջողած արի-արեւոյնները կը ստանան համապատասխան շքանշանը:

Գայլիկ-արծուիկներու Կրօնական շքանշաններ.-

Կրօնական դաստիարակութիւնը ՀՄԸՄԻ գայլիկ-արծուիկներուն մօտ եւս կարելորելու, ինչպէս նաեւ անոնց հայկական եկեղեցւոյ պատմութիւնն ու աւանդութիւնները ծանօթացնելու հեռանկարով, Ծրջանային սկաուտական խորհուրդն ու Արեւմտեան թեմի Ազգային առաջնորդարանը միասնաբար, մշակած են փոքրերու երկու Կրօնական շքանշաններու ծրագիրները. «Ս. Վարդան» շքանշանը, 6-7 տարեկաններու համար, «Գայլ Վահան» շքանշանը, 8-11 տարեկաններու համար:

Այս շքանշաններու առաջին դասընթացները իրականացան 2016ին, Վազգէն քհնյ. Աթմաճեանի կողմէ ՀՄԸՄԻ Սկաուտական 7րդ Ընդհանուր բանակումի ընթացքին, որուն մասնակցեցան 100 բանակող գայլիկ-արծուիկներ: Անոնք, նախապէս ներկայ գտնուած էին եկեղեցական արարողութեան մը, որ պայմաններէն



# ՀՄԸՄԻ Ծրջանային Ակաուտական Խորհուրդ

մէկն է այս գոյգ շքանշաններուն: Ծրջանայիններու յանձնումի արարողութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 5 Օգոստոս 2016ին, ակնարկուած բանակումի փակման դրօշակի արարողութեան ընթացքին:

«Դէպի Ազատութիւն» Ակաուտական Ազգային Ծրջանային-ՀՄԸՄԻ Ակաուտական բաժանմունքէն ներս յատուկ ուշադրութիւն կը տրուի նաեւ ազգային դաստիարակութեան, որ մեծ տեղ կը գրաւէ մասնաճիւղերու շարժման սկաուտական գործունէութեան եւ բոլոր կարգերու ծրագիրներուն մէջ: Աստիճանէ անկախ, Ծրջանային սկաուտական խոր-

ստեղծուած է բարձր տարիքի արի-արենուներու եւ պատասխանատուներու համար: Այս շքանշանը նպատակ ունի մասնակիցներուն սորվեցնելու եւ լայն տեղեկութիւններ տալու Հայ Դատի եւ զայն իրականացնելու միջոցներու մասին եւ իբրեւ ուղեցոյց կ'օգտագործուի շրջանի ծանօթ մտաւորական դոկտ. Ռուբինա Փիրումեանի հեղինակած Ազգային վարժարաններու 11րդ կարգի Հայ Դատի դասագիրքը, որ կ'ընդգրկէ գլխաւորաբար հետեւեալ էական նիւթերը.-

- Հայկական հարցի պատմական փուլերով
- Հայ ժողովուրդը Ա. համաշ-



հուրդի նախաձեռնութեամբ ստեղծուած է «Դէպի Ազատութիւն» Ազգային շքանշանը, որ առաւել կը յատկանշէ ազգային դաստիարակութեան կարեւորութիւնը:

Այս ծրագիրը մեծ հետաքրքրութիւն ստեղծած է ՀՄԸՄԻ բոլոր մասնաճիւղերէն ներս, որուն կը հետեւին մեծ թիւով արի-արենուներ:

 Բոյր Եղանտա Ղազարեան, ՀՄԸՄԻ Պրոպենքի «Սիփան» մասնաճիւղ  
 եղբ. Կապի Խուրի, ՀՄԸՄԻ Ֆինիքսի մասնաճիւղ  
 Բոյր Արմինէ Մենզիկեան-Ժամկոչեան, ՀՄԸՄԻ Ուոլնամթ Բրիքի «Կարս» մասնաճիւղ  
 եղբ. Համբիկ Շահինեան, ՀՄԸՄԻ Նորթ Հոլիվուտի «Ջաւախք» մասնաճիւղ

- 2017 Տարեշրջանին**  
 եղբ. Մհեր Դաւիթեան, ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղ  
 եղբ. Ժանօ Քէրքէզեան, ՀՄԸՄԻ Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ  
 Բոյր Սիմա Կարապետեան, ՀՄԸՄԻ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ  
 եղբ. Արա Մանկասարեան, ՀՄԸՄԻ Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղ  
 եղբ. Վիգէն Տաքէսեան, ՀՄԸՄԻ Օրենձ Բաունթիի «Սարգարապատ» մասնաճիւղ  
 եղբ. Յովիկ Պետեան, ՀՄԸՄԻ Սան Ֆերնանտօ Հովիտի «Մասիս» մասնաճիւղ  
 եղբ. Վահէ Մանուչակեան, ՀՄԸՄԻ Սեն Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղ  
 եղբ. Աւօ Քէչիչեան, ՀՄԸՄԻ Ինլընտ Էմփայրի «Արազ» մասնաճիւղ  
 Բոյր Մարալ Փանոսեան, ՀՄԸՄԻ Սանթա Բարիթայի «Անի» մասնաճիւղ  
 եղբ. Ռազմիկ Սիմոնեան, ՀՄԸՄԻ Բրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ  
 Բոյր Ջարուհի Փալթաճեան, ՀՄԸՄԻ Ֆինիքսի մասնաճիւղ  
 եղբ. Սագօ Շիրիքեան, ՀՄԸՄԻ Ուոլնամթ Բրիքի «Կարս» մասնաճիւղ  
 եղբ. Վանսօ Օհաննէս ձէնէպեան, ՀՄԸՄԻ Նորթ Հոլիվուտի «Ջաւախք» մասնաճիւղ

- 2018 Տարեշրջանին**  
 Բոյր Մարօ Քէչիչեան, ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղ  
 եղբ. Վաչիկ Սարգիսեան, ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ  
 եղբ. Արա Քէրքէզեան, ՀՄԸՄԻ Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ  
 եղբ. Սարգիս Թաթիկեան, ՀՄԸՄԻ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ  
 եղբ. Արմիկ Աբրահամեան, ՀՄԸՄԻ Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղ  
 եղբ. Պաղտիկ Օհանեան, ՀՄԸՄԻ Օրենձ Բաունթիի «Սարգարապատ» մասնաճիւղ  
 եղբ. Ստեփան Պաղպուտարեան, ՀՄԸՄԻ Սան Ֆերնանտօ Հովիտի «Մասիս» մասնաճիւղ  
 եղբ. Արթ Նաչատուրեան, ՀՄԸՄԻ Սանթա Բարիթայի «Անի» մասնաճիւղ  
 եղբ. Թովմաս Տէօքմէճեան, ՀՄԸՄԻ Բրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ  
 եղբ. Սարօ Ղազարեան, ՀՄԸՄԻ Պրոպենքի «Սիփան» մասնաճիւղ  
 եղբ. Ճագ Գասամանեան, ՀՄԸՄԻ Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղ  
 Բոյր Անահիտ Գասպարեան, ՀՄԸՄԻ Ֆինիքսի մասնաճիւղ  
 Բոյր Ալին Աղապապեան, ՀՄԸՄԻ Ուոլնամթ Բրիքի «Կարս» մասնաճիւղ

# ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Հայկ Յովսէփեանի Անուան Ակադեմիայի Անուան Միջնակարգ Երեւանեան Բանակավայրը

2004ին, կեանքին հրաժեշտ տուաւ հաւատաւոր ՀՄԸՄական եղբ. Հայկ Յովսէփեան, խոր վիշտ պատճառով իր հարազատներուն եւ շրջանի ՀՄԸՄի մեծ ընտանիքին: Վաղամեռիկ եղբոր յիշատակը անմահացնելու համար, Հայաստանի մայրաքաղաք Երեւանի էրբերունի համայնքի անտառային հողաչեռտին վրայ սարքուեցաւ գեղեցիկ բանակավայր մը, որ կոչուեցաւ Հայկ Յովսէփեանի անունով:

2010ին, հողաչեռտը ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ նուիրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ, ՀՄԸՄի Կեդրոնական Վարչութեան հետեւողական ջանքերուն շնորհիւ:

Բնութեան գողտրիկ այդ անկիւնը մէկ տարուան ընթացքին

ցան ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ եւ ՀՄԸՄի Ամերիկայի Միացեալ Նահանգներէն քոյր մասնաճիւղեր, ինչպէս նաեւ Իրանի մէջ գործող Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեանէն արի-արեւունջներ:

ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Հայկ Յովսէփեանի անուան բանակավայրը, երկրորդ սեփական բանակավայրը կը հանդիսանայ Հայրենիքի մէջ, Բիւրականի բանակավայրին կողքին: Ան Երեւանին մօտիկ ըլլալով, կ'օգտագործուի շրջանի Սկաուտական շաբաթական դահլիճն աշխատանքներուն համար:

2014ին, Հայաստանի կառավարութիւնը բանակավայրին կողքի 3 հեկտար հողաչեռտը եւ տրամադրեց ՀՄԸՄ-ՀԱՍԿԻն, որուն



գեղեցիկ բանակավայրի մը վերածուեցաւ, որուն շինարարական աշխատանքներու ծախսերը տրամադրուեցան Յովսէփեան ընտանիքի եւ ՀՄԸՄական եղբայրներու կողմէ:

Նորակառոյց բանակավայրի բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ 11 Յուլիս 2011ին, բանակավայրի մուտքին կարմիր ժապաւէնի հատումով եւ բանակավայրի անունը կրող յուշատախտակը ծածկած քողի բացումով:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Արարատեան Հայրապետական թեմի ներկայացուցիչ Զգօն քհնյ. Աբրահամեան, ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Յարութիւն Յարութիւնեան, ՀՅԴ Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ վարչութեան ատենապետ եղբ. Բագրատ Եսայեան, Համաշխարհային Սկաուտական շարժման Եւրասիոյ տարածաշրջանի տնօրէն Եուրի Եմիլեան եւ Սփիւռքի նախարարութեան աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարեան:

Հայրական իր օրհնութիւնը փոխանցեց Զգօն քհնյ. Աբրահամեան, իսկ շնորհաւորական ելոյթներով հանդէս եկան պաշտօնական հիւրերը, որոնք նաեւ երախտագիտութիւն յայտնեցին Յովսէփեան ընտանիքին եւ հանգուցեալի ընկերներուն, իրենց կատարած աշխատանքին եւ նիւթական օժանդակութեան համար:

Բանակավայրի բացումը յատկանշուեցաւ նաեւ իր առաջին բանակումով, որուն մասնակցե-

հետեւանքով ծաւալեցան բանակավայրը ընդարձակելու եւ բարեզարդելու աշխատանքները: Մեծածախս այս աշխատանքի իրականացման համար, Յովսէփեան ընտանիքին առնթեր, օգտակար հանդիսացան հանգուցեալի մտերիմներէն վաստակաւոր ՀՄԸՄականներ՝ Գօգօ Պալեան եւ Մանուէլ Մարսէլեան, որոնք իրենց անձնական նուիրատուութիւններէն անկախ, նաեւ նիւթական այլ միջոցներ ապահովեցին:

Ընդարձակուած եւ բարեզարդուած բանակավայրին բացումը տեղի ունեցաւ 30 Սեպտեմբեր, 2015ին, Գրօշակի յատուկ արարողութեամբ, բանակավայրի Յրգ հանգրուանի շինարարական աշխատանքներու բացումով, որով կը նախատեսուէր բանակավայրի սրահի շինարարութիւնը, որուն հիմնօրհնէքը կատարեցին ներկայ հոգեւորականները: Ոորհրդաւոր այս արարողութեան ներկայ գտնուեցան բազմաթիւ հիւրեր, հրաւիրեալներ եւ ՀՄԸՄական պատասխանատուներ: Ներկայ էին նաեւ հանգուցեալի եղբայրը՝ Վիգէն Յովսէփեան եւ ՀՄԸՄի Արեւմտեան ԱՄՆի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան:

«Այս բանակավայրը լոկ շինութիւն կամ հողաչեռտ չէ, այլ կապուած է ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ առաքելութեան հետ, որովհետեւ շուրջ 100 տարի այս կազմակերպութիւնը կը դաստիարակէ սերունդներ: Սկաուտութիւնը կեանքի ձեւ է, կարգապահութիւն է, կեանքի արժեքային համակարգ

մըն է, իսկ ՀՄԸՄի սկաուտ ըլլալը առաւել պարտաւորեցնող է: Այս բանակավայրը աշխատանքին միայն մէկ երեսն է Հայրենի հողի վրայ: Այստեղ ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ պիտի համախմբէ Հայ երիտասարդութիւնը եւ Հայրենասիրական, ազգայնական դաստիարակութիւն փոխանցելով, դէպի պայծառ ապագայ, դէպի ամբողջական Հայաստան գաղափարախօսութիւնը սերմանելով անոնց մէջ», հիմնօրհնէքէն ետք ըսաւ Վիգէն Յովսէփեան:

Ակնարկուած սրահի բացումը կատարուեցաւ Կիրակի, 3 Յունիս 2018ի յետմիջօրէին, մասնակցութեամբ ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Երեւանի հինգ մասնաճիւղերու սկաուտական շարքերուն, վարչականներուն եւ Սփիւռքէն ժամանած հանգուցեալ Հակ Յովսէփեանի հարազատներուն եւ ՀՄԸՄական քոյր-եղբայրներուն: Հանդիսութիւնը սկիզբ առաւ դրօշակի արարողութեամբ, որուն յաջորդեց մայրաքաղաքի մասնաճիւղերու մեծ թիւով արի-արեւունջներու եւ գայլիկ-արծուիկներու երգման եւ խոստման արարողութիւնը: Կնքահայրութիւնը վստահուած էր արարողութեան ներկայ ՀՄԸՄի անցեալի եւ ներկայի Կեդրոնական վարչութեան անդամներուն: Փողկապներու փոխանցումէն ետք, ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան անդամ Օշին Փիրումեան հետաքրքրական մանրամասնութիւններ փոխանցեց հիւրերուն, ապա առաջնորդեց գանոնք բանակավայրէն ներս, ուր ուրախալի երգ ու կանչերով դիմաւորուեցան արարողութեան մասնակից քոյր-եղբայրներուն կողմէ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ Հայկ Յովսէփեանի անունը կրող սրահի բացումը: Հոգեւոր հօր օրհնութեան աղօթքէն ետք, շնորհակալական ելոյթ ունեցան ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ ատենապետ Դաւիթ Յակոբեան եւ Օշին Փիրումեան: Յովսէփեան ընտանիքի կողմէ արտի խօսք փոխանցեց հանգուցեալ եղբոր քոյրը՝ Ծաղիկ Տիքիճեան: Նորակառոյց սրահի բացման ժապաւէնի հատումէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որ գեղեցիկ առիթ հանդիսացաւ մտերմիկ զրոյցներու եւ ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ ընտանիք ներկայացուցիչներու փոխ-ծանօթացման: ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Հայկ Յովսէփեան

սեփական բանակավայրի շնորհիւ Հայրենի սկաուտական կազմակերպութիւնը իր աշխատանքները հարստացնող անկիւն մը ունեցաւ, որ անկասկած օգտակար պիտի հանդիսանայ իր շարքերու զարգացման եւ բազմացման:



եղբ. Հայկ Յովսէփեան եղած է նուիրեալ եւ գործունեայ ՀՄԸՄական մը Արեւմտեան ԱՄՆի մէջ, ուր երկար տարիներ ծառայած է ՀՄԸՄի Շրջանային տնտեսական յանձնախումբի մէջ, ընտրուած է Շրջանային վարչութեան անդամ, ինչպէս նաեւ եղած է ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի պատասխանատու: Ան յատուկ սէր եւ նուիրում ունեցած է ՀՄԸՄի հանդէպ, ինչպէս նաեւ հաւատք՝ ՀՄԸՄի երիտասարդ սերունդի դաստիարակութեան գործին:

ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած Բիւրականի Համա-ՀՄԸՄական 11րդ Սկաուտական Ընդհանուր բանակումէն մէկ օր առաջ, 18 Յուլիս 2018ին, շրջանի 183 հոգինոց պատուիրակութիւնը, 40 խմբապետ-խմբապետուհիները, պատուիրակութեան ընկերակցող հիւրեր եւ Շրջանային Վարչութեան անդամները, այցելեցին ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի ջանքերով գնումը Երեւանի ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Հայկ Յովսէփեան բանակավայրը: Անոնք մանրամասնօրէն ծանօթացան բանակավայրին, քանի մը ժամ ընկերային ուրախ ժամեր անցուցին, վառ պահելով իրենց անցեալի ղեկավար եղբ. Հայկ Յովսէփեանի յիշատակը:

# ՀՄԸՄԻ ԹՔՐՈՅԱ ԲԱՆԱԿԱՎԱՅՐ

ՀՄԸՄԻ սկաուտական բաժանմունքի աշխատանքներու գլխավոր առանցքը բնութիւնն է, որուն պաշտպանը հանդիսանալու պարտաւորութիւնը ունի իւրաքանչիւր սկաուտ:

Բնութեան գեղեցկութիւնը վայելելու եւ անոր խորապէս ծանօթանալու հեռանկարով, սկաուտական կեանքին մէջ կարեւոր են արշաւ-բանակումները, մասնաճիւղային, միջ-մասնաճիւղային, համա-գաղութային եւ մանաւանդ համա-ՀՄԸՄական բանակումները, որոնց ընթացքին անոնք շրջանի եւ աշխարհատարած շրջաններէ համախմբուած քոյր-եղբայրներուն կը ծանօթանան, կը գործակցին ու գիտելիքներու փոխանակումներ կը կատարեն:

Բնական է, նման աշխատանքներու համար կարեւոր են յարմարաւէտ բանակավայրերը: Քառասուն տարիներ երկրի զանազան բանակավայրերը օգտագործելէ ետք, վերջապէս ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը 2007 թուականին ունեցաւ իր բանակավայրը Քըրն գաւառի (Kern County) Ֆրէյժըր Փարք շրջանին մէջ, 24 արտավայր (acre) տարածութեամբ:

Այս բանակավայրը իրականութիւն դարձաւ հանգուցեալ եղբ. երուանդ Սիսեանի ՀՄԸՄին ժառանգած կտակին շնորհիւ, որուն համար երախտապարտ է շրջանի ՀՄԸՄԻ մեծ ընտանիքը:

Այս գեղեցիկ ժեստը մեծապէս

գնահատելու եւ բանակողներուն յիշեցնելու համար եղբ. Սիսեանի անգնահատելի նուիրումը ՀՄԸՄին, բանակավայրի կեդրոնը գետեղուած է անոր կիսանդրին: Մեր բանակողները ամէն բանակումի իրենց յարգանքը կը մատուցեն կտակարարի յիշատակին, որ յանուն հայ երիտասարդութեան դաստիարակութեան, իր ամբողջ ունեցումաձեռք ժառանգած էր ՀՄԸՄին:

Այս նախաձեռնութիւնը մեծ ոգեւորութիւն ստեղծեց շրջանի ՀՄԸՄԻ ընտանիքէն ներս: Երկար տարիներու երազանքը վերջապէս իրականութիւն դարձաւ: ՀՄԸՄԻ սկաուտական ղեկավարները իրենց բանակումներուն համար բանակավայրեր ապահովելու հելքոտ փնտռտուքին մէջ չեն այլեւս: ՀՄԸՄԻ ԹՔՐՈՅԱ բանակավայրը գրկաբաց կ'ընդունի շրջանի բոլոր բանակողները:

Բանակավայրը նախապէս Ամբրիկեան Արեւուչներու խորհուրդին պատկանելով, բանակումներ ընդունելու յարմարաւէտ պայմանները ունի. վրաններու բաժին, խոհանոց, սրահ, տնակներ, լողաւզան, նետ ու աղեղի վայր, ձիարշաւի բաժին, դրօշակի արարողութեան տարածք եւ այլ կարեւոր յարմարութիւններ:

Անցնող տասնամեակին, բանակավայրի պահպանութեամբ զբաղեցան նշանակուած յանձնախումբեր, որոնք իբրեւ բնութեան սիրահարներ մեծ հոգատարութիւն



ցուցաբերեցին տարածքին, հարկն ու պատշաճը կատարելով: Որոշ ժամանակ մը բանակավայրը ունեցաւ մնայուն, լիաժամ գործող հոգատար, վերջին տարիներուն՝ կիսաժամ: Շրջանային վարչութիւնը ինք ստանձնեց հոգատարութիւնը, ամբողջ աշխատանքը վստահելով իր ժրջան անդամներէն եղբ. Պերճ Պետոյեանին:

Բանակավայրի գնման եւ անոր հոգատարութեան մէջ իրենց մեծ բաժինը բերին նաեւ հետեւեալ ՀՄԸՄականները.

- Փիեռ Մանուկեան
- Պերճ Պետոյեան
- Փօլ Պաշգապազեան
- Փօլ Տէրտէրեան
- Զարեհ Մովսէսեան
- Շահիկ Աղապապեան
- Լոնի Մանուկեան
- Էմիլ Տէր Գէորգեան
- Հրայր Պոյաճեան
- Սամ Մանուկեան

Պերճ Ճամճեան  
Սթիւ Արթիւնեան  
Սալբի Ճէճէեան  
Բանակումի յաղարանքին, ընդհանուր մաքրութեան եւ նորոգութիւններու համար յատուկ արշաւներ կազմակերպուեցան, որուն մասնակցեցան ներկայ անդամ արի-արեւուչներ եւ անցեալի խմբապետներ:

Շրջանի մասնաճիւղերը հաճոյքով իրենց տարեկան բանակումները կ'իրագործեն ՀՄԸՄԻ ԹՔՐՈՅԱ բանակավայրէն ներս: Չորս տարին անգամ մը կազմակերպուող շրջանի ՀՄԸՄԻ ընդհանուր բանակումները եւս կը կազմակերպուին այս բանակավայրին մէջ: Կարգ մը մասնաճիւղեր նաեւ ընտանեկան բանակումներ կը կազմակերպեն հոն:

Վերջապէս, ՀՄԸՄԻ ԹՔՐՈՅԱ բանակավայրը ՀՄԸՄԻ Սկաուտական բաժանմունքի երկրորդ տունն է:

**Տէր եւ Տիկ.**  
**Նշան եւ Ռուբիհնա**  
**Փիրումեան**  
  
**Իրենց Սրտագին**  
**Մաղթանքներով Կը Շնորհաւորեն**  
**Չեր Նոր Տարին եւ Ս. Ծնունդը**

# ՀՄԸՄԻ «Հրաշխ» Մարզական Բաժանմունք

Տարուէ տարի, ՀՄԸՄԻ Նաւասարդեան մարզախաղերը հաճելի նորութիւններով կ'ընդարձակեն իրենց աշխատանքային հորիզոնները, առաւել հարստացնելով իրենց ժողովրդականութիւնը: 2018ի ՀՄԸՄԻ 43րդ Նաւասարդեան մարզախաղերու նորութիւնը չրջանի հայ յատուկ կարիքներ ունեցող մարզիկներու ընդգրկումն էր Նաւասարդեանի մարզական մրցումներուն մէջ, որպէսզի անոնք լաւատեսութեամբ մտնեն անոնք կեանքին եւ սիրեն իրենց անձը: Այս նախաձեռնութիւնը ոչ միայն խանդավառեց եւ մեր առօրեային միացուց այս մարզիկներն ու անոնց ծնողները, այլ նաեւ հարստացուց չրջանի ՀՄԸՄԻ պատմութիւնը ընդարձակելով իր շրջապատի սէրն ու համակրանքը:

Կարելոր այս քայլը յաջողութեամբ պսակելու եւ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 43րդ մարզախաղերուն լաւապէս ներկայանալու համար, Շրջանային վարչութիւնը իր բոլոր մարզիչները, պատասխանատուներն ու պաշտօնեաները մարզեց, որպէսզի անոնք ճիշդ ձեւով եւ հարազատօրէն հոգան յատուկ կարիքաւոր այս մարզիկներու կարիքները: Այս առիթով նաեւ նշանակեց հետեւեալ քոյր-եղբայրներէ յատուկ յանձնա-



խումբ մը.-  
Արամ Պէքարեան՝ Շրջանային վարչութեան կապ Նանօր Գապագեան Ռազմիկ Սիմոնեան Ալին Հապէշեան Լոռի Սվազեան Սեւակ Կարապետեան Սերժ Գրակասեան

Յանձնախումբը մօտէն կը գործակցի նման կարիքաւոր երեխաներու հետ զբաղող Ամերիկեան մասնագիտացած Laterman Registry Center for Special Need կազմակերպութեան հետ, ամբողջական զօրակցութիւնը ունենալով այս երեխաներու ծնողներուն եւ բազմաթիւ մասնագէտներու:

Նման երեխաներու համար մասնագիտականօրէն կազմակերպուեցան պասքէթպոլի, ֆութպոլի եւ թեթեւ ակթիվ մրցումներ, որոնց մասնակցեցան 5-20 տարեկան 18 պատանի-երիտասարդներ: Անոնք մեծ ոգելորութեամբ եւ հպարտութեամբ մասնակցեցան նաեւ Նաւասարդեան 43րդ մարզախաղերու փակման շքերթին, մեծապէս յուսադրելով ներկաներն ու մանաւանդ իրենց ծնողները:

Այս երեխաները իսկական հրաշխներ են, այս պատճառով ալ իրենց բաժանմունքը կը կոչուի «Հրաշխ» մարզական բաժանմունք: Այո, անոնք ի ծնէ որոշ թերութիւններ ունին, սակայն մերն են եւ ՀՄԸՄը պատրաստ է տէր կանգնելու անոնց: Առաջին նախաքայլը՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 43րդ մարզախաղերու անոնց մասնակցութիւնն է:

Ամերիկեան մասնագիտացած Laterman Registry Center for Special Need կազմակերպութիւնը բարձր գնահատեց ՀՄԸՄԻ այս քայլը եւ իր առանձին կրպակը ունեցաւ Նաւասարդեան փառատօնի շրջափակէն ներս, որուն ներկայացուցիչները մասնագիտական խորհրդատուութիւն տուին շահագրգռուած ծնողներուն: Այս գծով «Հրաշխ» յանձնախումբը կոչ ըրաւ յատուկ թերութիւններ ունեցող երեխաներու ծնողներուն, որպէսզի իրենց զաւակները վստահին ՀՄԸՄին, որ ջանք պիտի չխնայէ զանոնք բարելաւելու եւ մեր հասարակութեան լիարժէք անդամ դարձնելու զանոնք:

Բնական է, նման նախաձեռնութիւն մը մեծ ծախսի կը կարօտի, այսուհանդերձ, ՀՄԸՄը վստահելով իր շրջապատին, նախաձեռնեց յատուկ կարիքաւորներու այս համախմբումը, այն հաստատ համոզումով, որ Քալիֆորնիոյ հա-

յութիւնը իր անվերապահ քաջալերանքն ու գուրգուրանքը պիտի ցուցաբերէ այս բաժանմունքին հանդէպ, որպէսզի անոնք իրենք զիրենք լիարժէք զգան համայնքէն ներս:

ՀՄԸՄԻ Շրջանային վարչութիւնը, մեծապէս խրախուսուած այս բաժանմունքի ստեղծման գծով գաղութի քաջալերանքէն, կը շարունակէ սրբազան այս պարտականութիւնը, ապագային



աւելի զարգացնելով եւ ընդարձակելով անոր հորիզոնները, որպէսզի ոչ մէկ յատուկ կարիքաւոր երեխայ չզրկուի մարզական բարիքներէն:

Այս խրախուսման արդիւնքն էր, որ Կիրակի, 21 Հոկտեմբերին, «Հրաշխ» անդամակցած 20 մանուկներ եւ պատանիներ, տարիքային երեք բաժանումներով մասնակցեցան ՔԱՀԱՄԻ թեթեւ ակթիվ մրցումներուն, ոգելորութեամբ վազելով 25, 50 եւ 100 մեթր վազքին:

Անոնց երթը կը շարունակուի: «Հրաշխ» յանուկներն ու պատանիները Կիրակի, 21 Հոկտեմբերին մասնակցեցան ՔԱՀԱՄԻ մարզախաղերուն, Կլենտէյլ գոլէճի մարզադաշտերուն վրայ:

«Հրաշխ» ծրագիրին միացած առաւել քան 20 մանուկներ ու պատանիներ, բաժնուած 3 տարիքային խումբերու՝ մասնակցեցան յատուկ իրենց համար կազմակերպուած 25, 50 եւ 100 մեթր վազքի, ինչպէս նաեւ ոտնազնդակի մրցումներուն: Անոնց հետեւեցան իրենց ծնողներն ու մասնագէտ խորհրդականներ: Յատուկ թերութիւններ ունեցող երեխաներու ընդգրկումը ՀՄԸՄԻ մարզական կեանքին մէջ իսկապէս համազօր է հրաշխի:

Հայ Օգնութեան Միութիւնը, Հայաշխարհի իր բոլոր՝  
 միաւորներով - Ամանորի եւ Սուրբ Ծննդեան յոյսի  
 եւ յոյսի այս օրերուն, կու գայ, իր մաղթանքներուն  
 կողքին, իր սրտագին շնորհակալութիւնն ու  
 երախտագիտութիւնը յայտնելու բոլոր ր անոնց, որոնք  
 կը շարունակեն աջակցիլ ՀՕՄ-ի Համահայկական  
 մարդասիրական ծրագիրներու իրականացման:  
 Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

❄️ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
 ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

*In the spirit of the holidays, the Armenian Relief Society,  
 along with all its global entities, expresses its deep gratitude  
 to all those, who continue to support our humanitarian  
 efforts world-wide.  
 Merry Christmas and Happy New Year!*

ARMENIAN RELIEF SOCIETY  
 CENTRAL EXECUTIVE BOARD







ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE

**PITA PIT BAKERY**  **PITA PIT BAKERY**

HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE



**PITA PIT BAKERY**

**FAMILY OWNED & OPERATED**

**TEL 1.800.447.9145**

**pitapitbakery@gmail.com**

**641 E. MONTEREY AVE. | POMONA, CA 91767 | LOS ANGELES | USA**

**Նոր Տարուան  
 Եւ Ս. Ծննդեան Տօներուն Առիթով  
 Սեպուհ Եւ Անի Քէմանճեանները  
 Կը Շնորհաւորեն Իրենց Յարգոյ  
 Յաճախորդները Եւ Հայ Գաղութը**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



*In Support of Non-Smoking Restaurants*

**CAROUSEL**  
RESTAURANT

*Celebrating 34 years  
of Excellence!*



**HOLLYWOOD**

(Est. 1984)

**GLENDALE**

(Est. 1998)

**CATERING**

[www.carouselrestaurant.com](http://www.carouselrestaurant.com)

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղեր եւ Ձեռնարկներ

Հեթանոսական դարերուն, հայերը նոր տարին կամ ամանորը տօնած են Հայոց Նաւասարդ ամսուն, որ կը զուգահիսէր Օգոստոսին: Հայաստանի բոլոր գաւառներէն, հեռուոր կամ մօտ, բազմահազար հայեր օրերով ճամբորդելով՝ կը համախմբուէին Բագրեւանդ գաւառի Բագառիչ աւանը, ուր կը գտնուէին Հայ ժողովուրդի հոգեւոր, մշակութային եւ ֆիզիքական արժէքներու արտայայտիչը հանդիսացող Արամազդի եւ Հայոց դիցուհի Անահիտի մեհանները:

Ժողովուրդին՝ Բագրեւանդ գաւառին մէջ մէկտեղուիլը միայն

կրօնական հանգամանք չունէր, այլ առիթ մըն էր՝ ցուցադրելու Հայ մշակութային արժէքները եւ ֆիզիքական ուժը:

Կը ներկայացուէին իւրաքանչիւր գաւառի յատուկ երգեր, պարեր, խաղեր, տարազներ եւ բարքեր: Եւ այսպէս, բոլոր գաւառներու ներկայացուցիչ բնակիչները իրարու հաղորդակից կը դառնային եւ մէկ յայտարարի կը վերածուէր ազգային մշակոյթի բազմաթիւ երեւոյթներու հետ ազգային քաղաքական գիտակցութիւնը:

Բագրեւանդ գաւառը հաւաքուած ժողովուրդը ոչ միայն Հայաստանի արտադրած բարիքները կը վայելէր, այլ նաեւ ներկայութիւնը Հայոց թագաւորին, թագուհիին, պալատի իշխաններուն, սպայակոյտին եւ բանակին, որոնք չուքն ու փայլը կ'աւելցնէին համազգային տարեկան այդ մեծ հաւաքոյթին:

Տեղի կ'ունենային զօրահանդէս, ձիարշաւ, սրախաղ, նետաձգութիւն, որսորդութիւն եւ այլ մարզախաղեր ու մրցումներ:

Բացի Բագառիչ աւանէն, մրցումներու խաղադաշտեր ունեցած են նաեւ միջնադարեան Հայաստանի նշանաւոր քաղաքներէն Շահապիւանը, Ջարեհաւանը, Վաղարշապատը, Գառնին, Դուինը, Վանը, Հերին, Անին եւ Երեւանը:

ՀՄԸՄԻ հիմնադրութեան առաջին տարիէն իսկ, ՀՄԸՄը կազմակեր-



**Շնորհաւոր Նոր Տարի Եւ Ա. Ծնունդ**  
**Առողջութիւն Եւ Յաջողութիւն**  
**Մեր Բոլոր Ազգականներուն, Բարեկամներուն**  
**Եւ Յաճախորդներուն**

**Տոբթ. Սարգիս եւ Տիկ. Ալիս**  
**Քեահքէճեան**  
**Մարի, Արսէն Եւ Վարդան**

**DR. SARKIS KAAKIJIAN**  
 1500 S. Central Ave., #318  
 Glendale, CA 91204  
 (818) 548-5437

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարզախաղեր եւ Ձեռնարկներ

պած եւ յաջողութեամբ իրագործած է միջմասնաճիւղային մրցումներ եւ ողիմպիական խաղեր:

1974ին, Պէյրութի մէջ գումարուած ՀՄԸՄի պատգամաւորական Ա. Ընդհանուր ժողովը հիմը դրաւ ՀՄԸՄի համագաղութային կառոյցին: Իսկ 1979ին, Կիպրոսի մէջ

կատարուած Նաւասարդեան մարզախաղերուն: Ու այսպէս, իբրեւ շարունակութիւն անոնց, հայրենիքի հետ անբակտելի կապերով, հայրենիքի գաղափարով՝ ազգային իմաստ ու բովանդակութիւն ունին ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերը:

1976ին, ՀՄԸՄի Արեւմտեան Մի-

ջԸՄի Ա. Միջմասնաճիւղային մարզախաղերը, Իսկ Լոս Անձելըս քոլեճի մարզադաշտերուն վրայ եւ նուիրեց զանոնք Հայաստանի առաջին Հանրապետութեան: Մրցումներուն մասնակցեցան ՀՄԸՄի Լոս Անձելըսի, Սան Ֆրանսիսքոյի, Ֆրեզնոյի եւ Մոնթեպելլոյի մասնաճիւղերու մարզական խումբերը, ինչպէս նաեւ հիւրաբար՝ ՀՄԸՄի Նիւ Ճըրզիի պասքեթպոլի խումբը:

27 Մայիսի երեկոյեան, Լոս Անձելըսի «Սեն Սոֆիա» յունական եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ մարզախաղերուն առիթով կազմակերպուած պարահանդէսը՝ առաւել քան 600 մասնակիցներով: Մարզախաղերու փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 28 Մայիսի երեկոյեան, նոյն քոլեճի մարզադաշտին վրայ, առաւել քան 4000 հայորդիներու ներկայութեամբ:

Հանդիսութեան ընթացքին, շրջանի ՀՄԸՄի չորս մասնաճիւղերու մարզական եւ սկաուտական խումբերուն առնթեթիւ տողանցեցին նաեւ ՀՄԸՄի Նիւ Ճըրջիի պասքեթպոլի խումբը, շրջանի ազգային, կիրակնօրեայ եւ ՅՕՄի վարժարաններու աչակերտութիւնը եւ ՀԵԴի ուխտերու անդամները: Ոգեւորիչ մթնոլորտի մը մէջ յանձնուած են յաղթանակի բաժակները:

Մարզախաղերու կարգապահ ընթացքով խանդավառ շրջանի հայութիւնը՝ այնուհետեւ թեւ ու թիկունք կանգնեցաւ ՀՄԸՄին:

1977ին, Լոս Անձելըսի քաղաքային քոլեճի մարզադաշտերուն վրայ կազմակերպուեցան ՀՄԸՄի Միջմասնաճիւղային Բ. մարզախաղերը, որոնց ՀՄԸՄի մասնաճիւղերէն անկախ՝ մասնակցեցան նաեւ Թեհրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան (ՀՄԱԿ) Ա. դասակարգի պասքեթպոլի երկսեռ խումբերը եւ ՀՄԸՄի Մեքսիքոյի ֆութպոլի խումբը: Այս Մարզախաղերուն առիթով կազմակերպուած յաղթանակի պարահանդէսին ներկայ գտնուեցաւ նաեւ շարժապատկերի հայագի նշանաւոր աստղերէն Մայք Բանըրզ (Գրիգոր Օհանեան):

Նոյն ոգեւորութեամբ շարունակուեցան միջմասնաճիւղային այս մարզախաղերը: Տարուէ տարի մարզական խումբերու յաւելումը եւ յաղթանակի պարահանդէսներու յաջողութիւնները դրական արձագանգ ձգեցին նաեւ շրջանէն դուրս: ՀՄԸՄի այլ շրջաններէ եւ տեղական՝ հայկական կազմակերպութիւններու բազմաթիւ խումբեր սկսան մասնակցելու այս մարզախաղերուն:

Հետաքրքրութիւն արթնցաւ նաեւ քաղաքական դէմքերու մօտ: 1978ի Միջմասնաճիւղային մարզախաղերուն տողանցքը գլխաւորեց Բալիֆորնիոյ նահանգապետ ձերի Պրաուն: Փակման հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Բալիֆորնիոյ ընդհանուր դատախազ ձորձ Տէօքսէճեան: Եւ այսպէս, ՀՄԸՄի Միջմասնաճիւղային մարզախաղերը մեծ ժողովրդականութիւն չահած ըլլալով՝ ամէն տարի անհամբերութեամբ կը սպասուին շրջանի հայութեան կողմէ:

1983ին, Միջմասնաճիւղային այս մարզախաղերը, ըստ ՀՄԸՄի Պատգամաւորական Բ. Ընդհա-

նուր ժողովի որոշման՝ կոչուեցան Նաւասարդեան Մարզախաղեր եւ այնուհետեւ ունեցան իրենց պատուոյ նախագահները:

Նաեւ, նկատի ունենալով, որ Լոս Անձելըսի քաղաքային քոլեճի մարզադաշտերը նեղ կու գային հետզհետէ բազմացող ՀՄԸՄի մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ մրցումներու ժամանակացոյցի դասաւորման գծով երկու օրերը շատ քիչ էին, Նաւասարդեան մարզախաղերը փոխդրուեցան կրկնուելու Հայ Սքուլի մարզադաշտեր եւ իրագործուեցան Ամերիկայի անկախութեան օրունան՝ 4 Յուլիսին զուգահիւսող երկար շաբաթավերջին եւ այդ տարին նուիրուեցան ՀՄԸՄի հիմնադրութեան 65ամեակին:

Նաւասարդեան մարզախաղերը առաւել գրաւիչ եւ հետաքրքրական դարձնելու հեռանկարով, Յաղթանակի պարահանդէսին եւ փակման շքեղ հանդիսութեան առնթեթիւ, 1984էն սկսեալ կազմակերպուեցան նաեւ Նաւասարդեան փառատօն՝ սիրայօժար մասնակցութեամբ շրջանի սիրուած արուեստագէտներու: Այս փառատօնները գեղեցիկ առիթ հանդիսացան շրջանի հայութիւնը համախմբելու ՀՄԸՄի շուրջ:

Եղան նաւասարդեան Մարզախաղեր, որոնք պատմական կամ իւրայատուկ դրուագներու զուգահիւսելով՝ առաւել փայլք տուին անոնց: Օրինակ, 1985ի ՀՄԸՄի Նաւասարդեան 10րդ Մարզախաղերու Յաղթանակի պարահանդէսին եւ Փակման հանդիսութեան պատմական ներկայութիւն բերաւ ՀՄԸՄի հիմնադիրներուն վերջին ներկայացուցիչը՝ Տիգրան Ա. քհնյ. Ոոյեան: Աւելին, այս մարզախաղերուն ընթացքին տեղի ունեցան նաեւ ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան կազմակերպած Համագաղութային Ֆութպոլի Ա. մրցումները, մասնակցութեամբ ՀՄԸՄի եօթը շրջաններու ֆութպոլի ներկայացուցչական խումբերուն:

ՀՄԸՄի Նաւասարդեան 13րդ մարզախաղերը նուիրուեցան ՀՄԸՄի հիմնադրութեան 70ամեակին եւ հովանաւորուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ Գարեգին Բ. կաթողիկոսին կողմէ: 14րդը՝ Ղարաբաղեան շարժման՝ «Ղարաբաղը մերն է» նշանաբանով: 15րդը՝ Հայ Յեղափոխական Գաշնակցութեան 100ամեակին, եւ այսպէս շարքը կարելի չարունակել:

1989ին, Շրջանային վարչութիւնը նախաձեռնեց «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսի շնորհումը եւ այնուհետեւ, անիկա տարեկան գեղեցիկ սովորութիւն դառնալով՝ յաջորդական Շրջանային վարչութիւնները ՀՄԸՄի մեծ ընտանիքէն սկսան ընտրելու անդամ մը, որ մեծ ներդրում ունեցած է միութեան վերելքին եւ իր տիպարով, բարի օրինակ դառնած է իր շրջապատին: Սկզբնական շրջանին, պաշտօնական յայտարարութիւնը տեղի կ'ունենար Նաւասարդեանի փակման հանդիսութեան ընթացքին, սակայն աւելի ուշ անիկա փոխադրուեցաւ Յաղթանակի պարահանդէսին:

1990ի Նաւասարդեան 15րդ մարզախաղերը առաւել պատմական իմաստ ստացան: 70 տարիներու երեզանքէ ետք, ՀՄԸՄը վերըն-



գումարուած ՀՄԸՄի Պատգամաւորական Բ. Ընդհանուր ժողովը, նոր արժեւորում մը եւս տալով ՀՄԸՄի գործունէութեան՝ սփիւռքահայ բոլոր գաղութներուն մէջ ՀՄԸՄի միջմասնաճիւղային ողիմպիական խաղերը կոչելով Նաւասարդեան Մարզախաղեր, ամրօրէն կապելով զանոնք Հայաստանի մէջ անցեալին

ացեալ Նահանգներու շրջանարդէն իսկ ունէր 4 մասնաճիւղեր: Հետզհետէ հայութեամբ բազմացող գաղութին մէջ աշխուժութիւն մտցնելու եւ մանաւանդ երիտասարդութիւնը ՀՄԸՄի շուրջ համախմբելու հեռանկարով, Շրջանային վարչութիւնը նոյն տարին, 27-28 Մայիսի շաբաթավերջին կազմակերպեց

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂ

Դուկա. Եւ Տիկ. Տիրան Եւ Շաքէ Արոյեաններ

Կը Շնորհաւորենք Համայն Հայութեան Նոր Տարին եւ Ա. Ծնունդը Եւ Կը Մաղթենք Բոլոր Իղձերու Իրականացում

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարզախաղեր եւ Ձեռնարկներ



Այնուհետեւ տեղի ունեցած Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութեանց, յաղթանակի բաժակներու յանձնման արարողութեանց մասնակցեցան միջազգային ճանաչում ստացած Հայ մարզիկներ, ինչպիսին են ֆութպոլի աստղեր՝ Յարութ Կարապետեան, ՀՄԸՄական Եուրի Մովսիսեան, Հենրիկ Մխիթարեան եւ ուրիշներ:

մարզախաղերուն առաւել քան Հազար մրցումներ տեղի կ'ունենան պասքեթպոլի, վոլիպոլի, ֆութպոլի, թեթեւ ատլետիկ, փինկ-փոնկի, թենիսի, լողի, ճատրակի եւ սոֆթպոլի մարզաճիւղերուն մէջ: Պէտք է ընդգծել, թէ մեծաթիւ այս մրցումներուն իւրաքանչիւր մարզաճիւղի համար ՀՄԸՄի Մարզական խորհուրդը կը նշանակէ ենթայանձնախումբ մը, որ բժախնդրութեամբ կը կազմակերպէ իրեն վստահուած մարզաճիւղի մրցումները:

Քանի մը մասնաճիւղերու մարզական խումբերով սկիզբ առած ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերուն այսօր կը մասնակցին ՀՄԸՄի 17 մասնաճիւղերու եւ երկու միաւորներու առաւել քան 5000 մարզիկ-մարզկուհիներ: Մեծ ժողովրդականութիւն չահած այս

Հետզհետէ ընդարձակուող եւ բազմահազար հանդիսատեսներ ունեցող Նաւասարդեան մարզախաղերը առաւել հարազատ եւ

ձիւղուեցաւ հայրենիքի մէջ: Այս ուրախ առիթով, Նաւասարդեան փակման հանդիսութեան տողանցելու հրաւիրուեցան ՀՄԸՄի Հայրենի նորակազմ ՀՄԸՄի ինը սկաւտ ներկայացուցիչներ, մեծ ոգեւորութենէ անկախ, առաջին հաստատուն կամուրջը նետեցին ՀՄԸՄի Հայաստան-Սփիւռք նախնական քայլերուն:

խաղրել վեն Նայսի Պրըմիէնկէն՝ Հայ սքուլի շրջափակը եւ անոնք նուիրուեցան ՀՄԸՄի հիմնադրութեան 75ամեակին: Այնուհետեւ եւ մինչեւ օրս Նաւասարդեան մարզախաղերը տեղի կ'ունենան նոյն Հայ սքուլի շրջափակին մէջ, ամէն տարի նորութիւններ հրամցելով հանրութեան:

1996ին, ՀՄԸՄի Նաւասարդեան 21րդ մարզախաղերուն ներկայ գտնուեցաւ եւ իր հայրական օրհնութիւնները փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը, իսկ 2002ին տեղի ունեցած Նաւասարդեան 27րդ մարզախաղերուն պատուոյ հիւրն էր Հայազգի հանրաժանօթ պասքեթպոլի մարզիչ Ճերի Թարխանեան:



ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

## ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ՔԵՍԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Լաւագոյն մաղթանքներով  
կը շնորհաւորենք մեր հայրենակիցներուն  
**Նոր Տարին եւ Ս. Ծնունդը**  
2019 Թուականին Հայութիւնը Թող Դառնայ  
Սիրոյ եւ Հաւատքի Տիպար՝  
Երկրագունդի Բոլոր Ազգերուն Համար

ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՅԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարզախաղեր եւ Ձեռնարկներ

Հետաքրքրական դարձնելու Հեռանկարով, ամէն տարի Նաւասարդեան մարզախաղերու եզրափակումէն առաջ, կը կազմակերպուի Յաղթանակի պարահանդէս, որ գեղեցիկ առիթ մը կը հաղիսանայ Համախմբելու ՀՄԸՄԻ նոր ու տարեց սերունդները, ՀՄԸՄԻ եւ շրջանի ղեկավարութիւնը, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչները, ՀՄԸՄԻ մասնաճիւղերը, ՀՄԸՄԻ նուիրատուներն ու հովանաւորները, Համակիրներն ու հիւրերը: Ահա, երեկոյ մը, որ հարազատ պատկերացումը կու տայ Հայոց Հին Նաւասարդին, որ կ'եզրափակուի Նաւասարդեանի Պատուոյ նախագահութեան եռագոյն եփզներու

յանձնումով: Նաւասարդեանի մարզական կիսաւարտական եւ աւարտական մրցումներուն առընթեր, Պրմինկհեմ Ջարթըր Հայ սքուլի շրջափակին մէջ կը կազմակերպուի չորսօրեայ փառատօն, որուն ընթացքին ելոյթ կ'ունենան շրջանի սիրուած արուեստագէտները, տեղի կ'ունենայ հրավառութիւն, մեծ ոգելորութիւն ստեղծելով փառատօնի շրջափակին մէջ:

Այնտեղ նաեւ կը տեղադրուին շրջանի առեւտրականներու կրպակները, իսկ անոր կողքին կը գործեն ՀՄԸՄԻ մասնաճիւղերու ղեկավարած ճաշի կրպակները, ուր մասնաճիւղերը կը պատրաստեն եւ կը վաճառեն իրենց վիճակաձգուած համադամ ճաշերը: Մասնաճիւղերու կրպակներու վաճառքէն գոյացած հասոյթը մեծապէս կը նպաստէ մասնաճիւղերու տարեկան ծախսերուն:

Բնական է, ամէն նախաձեռնութեան սկիզբ ունի նաեւ իր աւարտը: ՀՄԸՄԻ Նաւասարդեան մարզախաղերու աւարտը այնպիսի տպաւորիչ եւ Հետաքրքրական յայտագիրով մը կ'աւարտին, որ շրջանի հայութիւնը ամէն տարի անհամբերութեամբ կը սպասէ անոնց:

Փակման Հանդիսութիւնները ընդհանրապէս տեղի կ'ունենան 4 Յուլիսին կամ անոր նախորդող օրը: Նոյն ձեռնարկին, հազարաւոր հանդիսականներու առաջ, մասնաճիւղերու խմբապետներու



առաջնորդութեամբ մարզադաշտ մուտք կը գործէ Նաւասարդեան մարզախաղերը հովանաւորող Պատուոյ նախագահը, տարուան «Տիպար ՀՄԸՄական»ը, թեմիս առաջնորդը, ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչն ու Շրջանային վարչութեան ատենապետը: Հանդիսութիւնը սկիզբ

կ'եզրափակուին ընկերասիրութեամբ, ազգասիրութեամբ եւ սիրով:

Այնուհետեւ, Նաւասարդեանի խրախճանքը կը շարունակուի փառատօնի շրջափակին մէջ, նաւասարդեան իրաւ մթնոլորտի մը մէջ:

Կը ներկայացնենք ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարզախաղերու Պատուոյ նախագահներու եւ տիպար ՀՄԸՄականներու կենսագրութիւնները: Կարգ մը Պատուոյ նախագահներու կենսագրութիւնները չունենալով, մէջբերած ենք ատենին փոխանցած անոնց պատգամները:

Յայտնենք նաեւ, թէ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 20րդ (1995), 24րդ (1999) եւ 34րդ (2009) մարզախաղերը յատուկ Պատուոյ նախագահներ չեն ունեցած: Այդ Մարզախաղերու հովանաւորութիւնները ստանձնած են Նաւասարդեան մարզախաղերու անցեալի Պատուոյ նախագահները:



կ'առնէ ՀՄԸՄԻ նուագախումբի գլխաւորած ՀՄԸՄԻ դրօշակակիրներու խումբը: ՀՄԸՄԻ Շրջանային եւ Կեդրոնական վարչութեանց եւ թեմիս առաջնորդ հօր պատգամներէն ետք հպարտանքով ու ինքնավստահ կը տողանցէ շրջանի ՀՄԸՄԻ մեծ ընտանիքը, մասնաճիւղերու յաջորդականութեամբ եւ ՀՄԸՄԻ նուագախումբի ազգային երգերու քայլեղանակներու ընկերակցութեամբ: Անոք կը տողանցեն ինքնավստահ ու հայու հպարտանքով, կը բարեւեն հանդիսատեսը եւ մեծապէս կը յուսադրեն զանոնք եւ մեծ խաղավառութիւն կը ստեղծեն անոնց մօտ եւ յատկապէս իրենց ծնողներուն:

Ծնողները ոգելորութեամբ կը հետեւին իրենց զաւակներուն տողանցումին եւ երկարաշունչ ծափողջոյններով կ'արտայայտեն իրենց ուրախ տրամադրութիւնը, այն հաստատ համոզումով, որ այդ հաստատ քալուածքով տողանցող սերունդները պիտի շարունակեն թրծուիլ ՀՄԸՄԻ առողջ շրջապատին մէջ, ըլլալու համար Հայ ժողովուրդի յաւերժացման յոյսը եւ բախտը պիտի ունենան ազատօրէն այցելելու եւ նոյնիսկ հաստատուելու իրենց հարազատ հայրենիքին մէջ: Իրականութիւն մը, որուն երազանքով այս աշխարհէն Հեռացան անոնց պապերն ու մեծ պապերը:

Հրաշալի այս շքերթը կ'աւարտի Նաւասարդեանի փակման հանդիսութեան գլխաւոր առանցքը հանդիսացող յաղթանակի բաժակներու յանձնումով: Բաժակներ, որոնք արդիւնքն են ամիսներու մրցակցութեան եւ մարզական մաքրամաքուր մթնոլորտի մը, որուն յաղթանակները



ԸՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**Dr. Sahag  
&  
Mrs. Kathy  
Baghdassarian**

*Wishing You  
A Healthy  
& Prosperous  
2019*

ԸՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# Կեդրոնական Վարչութեան Կազմակերպած ՀՄԸՄԻ 100ամեակին Նուիրուած Հայրենի Ձեռնարկներ

ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը միշտ ներկայութիւն եղաւ ՀՄԸՄԻ 100ամեակի նուիրուած Կեդրոնական վարչութեան կազմակերպած մարզական եւ սկաուտական բոլոր ձեռնարկներուն, որոնք կազմակերպուած էին Հայաստանի մէջ եւ իր օգտակար ներդրումը բերաւ անոնց յաջող կազմակերպման եւ իրագործման աշխատանքներուն մէջ:



ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած նախաձեռնութիւններու գծով շրջանի ներկայացուցիչն էր Շրջանային վարչութեան անդամ եղբ. Փիեռ Մանուկեան, իսկ ՀՄԸՄԻ 100ամեակի Ընկերային յանձնախումբի անդամ նշանակ-

ուած էր ՀՄԸՄԻ «Ազատամարտ» մասնաճիւղի անդամներէն քոյր Սիմա Կարապետեան: Հայրենիքի մէջ կազմակերպուած պատմական այս նախաձեռնութիւնները, մեծապէս տպաւորե-

ցին պատուիրակութիւնները եւ անոնցմէ իւրաքանչիւրին էութիւնը հայրենասիրութեամբ լեցուցին:

պասքեթպոլի, վոլիպոլի, լողի, թեթեւ ատլետի, փինկ-փոնկի, թենիսի եւ ճատրակի մարզաճիւղերու մրցումներ:



Համա-ՀՄԸՄական 10րդ Մարզախաղեր Հայաստանի Մէջ

ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան կազմակերպած եւ ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրած Համա-ՀՄԸՄական 10րդ մարզախաղերը տեղի ունեցան 20-29 Յուլիս 2018ին, Հայաստանի մայրաքաղաք Երեւանի մէջ, մեծապէս ոգեւորելով հազարաւոր ՀՄԸՄական մասնակիցներ, համակիրներ եւ հայրենի ժողովրդային զանգուածներ: Աշխարհատարած ՀՄԸՄԻ մեծ ընտանիքի զանազան շրջաններէն պատմական այս մարզախաղերուն մասնակցեցան աւելի քան 1250 մարզիկ-մարզկուհիներ: Մարզախաղերը կ'ընդգրկէին ֆութպոլի, ֆութսալի (փակ մարզադաշտի ֆութպոլ),

Բազմամարդ մասնակիցներ ընդգրկող եղակի այս մարզախաղերու կազմակերպիչ մարմնի մէջ ընդգրկուած էին շրջանէս եղբայրներ Մանուէլ Մարսէլեան, Արմանտ Գիլիճեան եւ Սեւակ Կարապետեան: Նոյն մարզախաղերու պասքեթպոլի մարզաճիւղի ենթայանձնախումբի մէջ ընդգրկուած էր քոյր Անիթա Տէրտէրեան: Կեդրոնական վարչութեան մօտ շրջանիս ներկայացուցիչն էր եղբ. Արամ Թոմաս: ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը լաւապէս ներկայացնելու համար այս մարզախաղերուն, Շրջանային վարչութիւնը նշանակած էր յատուկ յանձնախումբ մը, որ բժախնդրութեամբ կատարեց մրցումներուն մասնակցող խումբերու զտումի →

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ

# Mousa Ler Association

## Մուսա Լեռ

### Հայրենակցական Միութիւն

Կը Շնորհաւորէ Բոլորին  
Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ

# Կեդրոնական Վարչութեան Կազմակերպած ՀՄԸՄԻ 100ամեակին Նուիրուած Հայրենի Ձեռնարկներ

Եւ կազմակերպչական աշխատանքները:

Ուրախութեամբ պէտք է ընդգծել, թէ շրջանիս մարզական պատուիրակութիւնը կը բաղկանար 198 անդամներէ, որոնք կը ներկայացնէին 14 մարզական խումբեր, անհատական մրցումներուն մասնակցող 40 մարզիկ-մարզկուհիներ, մարզիչներ, կազմակերպիչ յանձնախումբի անդամներ եւ վարչականներ: Շրջանի պատուիրակութիւնը մասնակցեցաւ մարզախաղերու խմբային եւ անհատական բոլոր մրցումներուն եւ պատուաբեր արդիւնքներ արձանագրեց:

Հպարտութեամբ կը յայտարարենք, թէ շրջանիս պատգեթպոլի եւ ֆութպոլի խումբերը, ինչպէս նաեւ լողի մրցումներուն մասնակիցները տիրացան իրենց մարզաճիւղերու ախոյեանութեան, իսկ երկրորդ տեղը գրաւեցին Վոլիպոլի եւ թենիսի մարզաճիւղերուն մէջ:



Համա-ՀՄԸՄական 11րդ Բանակում Հայաստանի Մէջ

ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած կեդրոնական վարչութեան կազմակերպած ձեռնարկներէն մեծագոյններէն էր Համա-ՀՄԸՄական 11րդ Սկաուտական Ընդհանուր բանակումը, որ տեղի ունեցաւ 19-29 Յուլիս 2018ին, Բիւրականի ՀՄԸՄ-ՀԱՍԿի բանակավայրին մէջ:

ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած եւ պատմական նշանակութիւն ունեցող այս բանակումի մասնակցութեան թիւի սահմանափակում չկար եւ 26 երկիրներու մէջ գործող ՀՄԸՄի շրջաններէն եւ Մեկուսիներէն 14 տարեկան եւ վեր տարիքը ունեցող աւելի քան 1200 արի-արեւուչներ մասնակցեցան:

ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը այս բանա-

կումին մասնակցեցաւ 183 քոյր-եղբայրներով: Շրջանս լաւապէս ներկայացնելու համար այս բանակումին լուրջ նախապատրաստական աշխատանքներ կատարուեցան, գիտելիքներու ուսուցում եւ անոնց շուրջ գրաւոր ու բերանացի քննութիւններ, բանակումի մասին մանրամասնութիւններ փոխանցող ծնողական ժողովներ եւ նախապատրաստական ընդհանուր բանակում մը:

Պատուիրակութեան պատասխանատու նշանակուած էր ՀՄԸՄԻ Շրջանային խմբապետուհի քոյր Շարլին Գոզալեան, իսկ փոխպատասխանատու՝ ՀՄԸՄԻ «Արարատ» մասնաճիւղի խմբապետուհիներէն քոյր Քրիսթինա Դաշդեմիրեան: Բանակումին, որուն հրաւիրուած էին նաեւ ՀՄԸՄԻ անցեալի խմբապետ-խմբապետուհիներ, ընդառաջեցին աւելի քան 40 հոգի: Անոնք մասնակցեցան բանակումի որոշ ծրագիրներուն եւ հրապարակային բոլոր ձեռնարկներուն:

Համա-ՀՄԸՄական 11րդ Բանակումի մասնակցող շրջանի պատուիրակութեան ընկերակցող խմբապետ-խմբապետուհիները բանակումի ամբողջ տեսողութեան աշարջութեամբ հետեւեցան շրջանի բանակողներու կարիքներուն եւ իրենց առաւելագոյն ներդրումը բերին բանակումի յաջող ընթացքին:

Անոնց անուններն են. Լոս Անձելըսի մասնաճիւղ՝ եղբ. Շահան Աթմաճեան Լոս Անձելըսի մասնաճիւղ՝ քոյր Թամար Ղարիպեան Լոս Անձելըսի մասնաճիւղ՝ քոյր Արին Ղարիպեան Լոս Անձելըսի մասնաճիւղ՝ եղբ. Նարեկ Քուչերեան Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ՝ եղբ. Օհաննէս Արիստակէսեան Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ՝ քոյր Կարինէ Գնտոյեան Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ՝ քոյր Սիլվա Լահեան Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ՝ Քոյր Ճոսլին Ապաճեան Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղ՝ քոյր Անի Օվանէսեան Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղ՝ քոյր Էմըլի Սամվելեան Կլենտէյլի «Արարատ» մասնա-

ճիւղ՝ եղբ. Տանիէլ Շահկալտեանս Կլենտէյլի «Արարատ» Մասնաճիւղ՝ քոյր Քրիսթինա Դաշդեմիրեան

Ինընտ էմփայրրի «Արազ» մասնաճիւղ՝ քոյր Նայիրի Պաղտասարեան

Ինընտ էմփայրրի «Արազ» մասնաճիւղ՝ քոյր Սեւան Գալայճեան Սանթա Գլարա Հովիտի «Անի» մասնաճիւղ՝ քոյր Մարալ Պուրսալեան Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ՝ քոյր Ռիթա Ղուկասեան

Պրոպենքի «Սիփան» մասնաճիւղ՝ քոյր Դալար Գալստեան Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղ՝ եղբ. Անտրու Տարագճեան Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղ՝ քոյր Նիրվանա Պալեան Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղ՝ քոյր Քրիսթին Գասար

Համա-ՀՄԸՄական 11րդ Ընդհ. բանակումը ունէր իր առանձին նշանակը, որուն հեղինակը շրջանէս անցեալի խմբապետ եղբ. Արի Պոյաճեանն էր, որուն ստեղծագործութիւնը ՀՄԸՄԻ մարզական եւ սկաուտական բաժանմունքները ամբողջ 2018 տարեշրջանին կրեցին իրենց տարազին վրայ:

Կեդրոնական վարչութեան կողմէ բանակումի փոխխմբապետուհի նշանակուած էր ՀՄԸՄԻ «Ազատամարտ» մասնաճիւղի անդամներէն քոյր Սեդա Պէշլեան-Սաղազարեան, իսկ խմբապետական կազմի անդամ՝ ՀՄԸՄԻ «Կարս» մասնաճիւղի անդամներէն քոյր Անի Էքմէքճեան:

Հպարտութեամբ կը տեղեկացնենք, թէ բանակումէն առաջ, զանազան ՀՄԸՄի շրջաններէն խումբ մը խմբապետ-խմբապետուհիներ միասնաբար բարձրացած էին Արարատ լեռան գագաթը եւ հոն զետեղած էին ՀՄԸՄԻ եւ եռագոյն դրօշները: Ուրախալի է տեղեկացնել, թէ այդ խումբին մաս կը կազմէին նաեւ ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն քոյր Անի Էքմէքճեան եւ ՀՄԸՄԻ Պրոպենքի «Սիփան» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Դալար Գալստեան:

Պատմական այս բանակումէն մէկ օր առաջ, 18 Յուլիս 2018ին, շրջանի 183 հոգինոց պատուիրակութիւնը, 40 անցեալի խմբա-

ՀԱՌՈՒՄԻՆՆԵՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՈՒՄԻՆՆԵՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Drs. Chris & Laurie Chalian Saro, Ari & Armen**

*Merry Christmas & Warm Wishes For a Wonderful Happy New Year*

ՀԱՌՈՒՄԻՆՆԵՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀԱՌՈՒՄԻՆՆԵՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



# Կեդրոնական Վարչութեան Կազմակերպած ՀՄԸՄԻ 100ամեակին Նուիրուած Հայրենի Ձեռնարկներ

պետ-խմբապետուհիները, պատ- ուիրակութեան ընկերակցող հի- բերն ու Նրջանային վարչութեան անդամները, այցելեցին ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգ- ներու շրջանի ջանքերով գնուած Երեւանի ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ Հայկ Յով- սէփեան բանակավայրը: Անոնք ծանօթացան բանակավայրին, քանի մը ժամ հաւաքական ընկե- րային ուրախ ժամեր անցուցին, վառ պահելով իրենց անցեալի

19 Յուլիս 2018, երեկոյեան ժամը 5ին, բանակավայրի մուտքին աշ- խարհասփիւռ ՀՄԸՄԻ 110 մասնա- ճիւղներու անունը կրող յուշաքան- դակի բացման արարողութեամբ, որուն յաջորդեց բանակումի պաշտօնական բացումը:

ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչու- թեան կազմակերպած ՀՄԸՄԻ 100ամեակի նուիրուած ձեռնարկ- ներէն յատկանշական եղաւ նա- եւ Ուրբաթ, 20 Յուլիսի յետմիջօ- րէին Միծեռնակաբերդի համալի- րէն ներս կատարուած ջահավա- ռութիւնը եւ նոյն համալիրի մէջ Հայոց Ցեղասպանութեան զոհե- րու յիշատակին կատարուող ծա- ռատնկումը, որուն հողին խառն- ուեցաւ բուռ մը հող բերուած Արարատի կատարէն, Յովհաննէս Հինգիւեանի շիրիմէն, Սփիւռքէն եւ Հայաստանէն: Տպաւորիչ այս արարողութեան յաջորդեց հոգե- հանգստեան պաշտօն: Միծեռնա- կաբերդի կրակին շուրջ մասնա- կիցները ծաղիկներ դրին մեր նա- հատակներու յիշատակին: Այնու- հետեւ, ներկաները մասնակցե- ցան Հայոց Ցեղասպանութեան թանգարանի մէջ կազմակերպ- ուած ՀՄԸՄԻ 100ամեակին նուիր- ուած ցուցահանդէսի բացման արարողութեան, ուր ներկայաց- ուած էին ՀՄԸՄԻ անցեալն ու ներկան՝ իւրայատուկ եւ պատ- մական եզակի նկարներով: Ծաբաթ, 21 Յուլիս 2018ին, կէսօ- րէ առաջ ժամը 11ին, կատարուե- ցաւ բացումը ՀՄԸՄ-ՀԱՍԿԻ կեդ-



րոնի մուտքի պատին վրայ գե- տեղուած ՀՄԸՄԻ հիմնադիրներ Ծաւարչ Քրիսեանի, Յովհաննէս Հինգիւեանի եւ Գրիգոր Յակոբեա- նի քանդակներուն: Ապա, ներկա- ները բարձրացան ՀՄԸՄԻ-ՀԱՍԿԻ երրորդ յարկ, ուր մասնակցեցան ՀՄԸՄԻ Հայաստանի շրջանէն առաջին կեդրոնական վարչու- թեան անդամ նահատակ վարդան Բախչեանի յիշատակին նուիրուած գրադարանի բացման հանդիսու- թեան: Պատմական իրողութիւն էր Ծա- բաթ, 21 Յուլիսի երեկոյեան կազ- մակերպուած չքերթը Հայաստա- նի Հանրապետութեան հրապա- րակի վրայ: 1200 բանակողներ եւ աւելի քան 200 ՀՄԸՄական անց- եալի խմբապետ-խմբապետուհի- ներ, Օփերայի հրապարակէն ճամբայ ելան, երգ ու կանչերով Երեւանի փողոցներէն հպար- տանքով քայլելով, ինքնավստա- հուիքեամբ եւ յուզումնախառն

արցունքներով տողանցեցին ՀՀ Հանրապետութեան հրապարակի վրայ եւ համայն աշխարհին աւե- տեցին, թէ ՀՄԸՄը 100 յաղթա- կան տարիներ գոյատեւեց եւ վե- րանորոգ ուխտով պիտի շարու- նակէ իր անսասան երթը: Կիրակի, 22 Յուլիս 2018, կէսօրէ առաջ ժամը 11ին, տեղի ունեցաւ այցելութիւն՝ Եռաբլուրի Պանթէ- ոն, ուր ծաղկեպսակ մը գետեղ- ուեցաւ առ ի յարգանք Արցախի ազատագրական եւ Հայաստանի պաշտպանական մարտերուն նա- հատակուած հերոսներու յիշա- տակին եւ կատարուեցաւ հոգե- հանգստեան պաշտօն: Ապա, մասնակիցները ծաղիկներ դրին Եռաբլուրի մէջ հանգչող բոլոր նահատակ հերոսներու շիրիմնե- րուն վրայ: Տպաւորիչ էր նաեւ Երկուշաբթի, 23 Յուլիսի Գիւմրիի վարդանանց Հրապարակի վրայ կատարուող



ղեկավար եղբ. Հայկ Յովսէփեա- նի յիշատակը: ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած Բիրականի Համա-ՀՄԸՄական 11րդ Սկաուտական Ընդհանուր բանակումի բացման հանդիսու- թիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի,

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՀՄԸՄԻ ընկրանիքին մաս կազմելը  
 իւրայայտուկ ջերմութեամբ ու բերկրութեամբ  
 լեցուցած է մեր հոգին: ՀՄԸՄական հայր մը  
 ունենալու բարիքը, իսկապէս օրհնութիւն  
 եղած է մեր ընկրանիքին:

Հպարտ եմք ՀՄԸՄով: Հպարտ եմք այդ մեծ  
 ընկրանիքին մաս կազմած ըլլալու համար:

**ՄԱԿԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ ՍԱՐԳՈՒՆԻ**

ՆՂՍՈՐ ԺՍՍՈՒ ԻԳ ՎՍՏՆ ՍՈՒՐ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# Կեդրոնական Վարչութեան Կազմակերպած ՀՄԸՄԻ 100ամեակին Նուիրուած Հայրենի Ձեռնարկներ

ՀՄԸՄական տողանցքն ու ՀՄԸՄի հիմնադիրներէն Վահան Չերազի արձանի բացումը, որուն ներկայ գտնուեցաւ եւ իր պատգամը փոխանցեց Չերազի դուստրը:

Չորեքշաբթի, 24 Յուլիս 2018ի երեկոյեան, Օփերայի Ա. Սաչատրեանի համերգասրահին մէջ տեղի ունեցաւ ՀՄԸՄի 100ամեակի պաշտօնական հանդիսութիւնը, նախագահութեամբ ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանի եւ հովանաւորութեամբ՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց եւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներուն:



ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան եւ ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայ գտնուեցան հանդիսութեան: Փաշինեան ելոյթ ունեցաւ եւ ՀՄԸՄի գործունէութիւնը մեծապէս գնահատեց:

Հինգշաբթի, 26 Յուլիսի առաւօտեան ժամը 10ին, ՀՀ կառավարութեան թիւ 2 շէնքէն ներս տեղի ունեցաւ ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած նամականիչի մեկնարկը, որուն յաջորդեց Գիտաժողով՝ նուիրուած ՀՄԸՄի հիմնադրութեան, կազմաւորման եւ տարածման:

Ուրբաթ, 27 Յուլիս 2018, երեկոյեան ժամը 7ին, Արամ Սաչատրեան համերգասրահին մէջ տեղի ունեցաւ ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած համերգը, սիրուած երգիչ Գառնիկ Սարգիսեանին, ընկերակցութեամբ՝ «Արազ» նուագախումբին: Իր ազգային-յեղափոխական երգերու հարուստ բովանդակութեամբ, համերգը մեծապէս ոգեւորեց ներկաները: Նոյն երեկոն նաեւ նուիրուած էր Լիզպոնի մէջ նահատակուած հինգ հերոսներուն, որոնց մասին դասախօսեց եղբ. Վիգէն Աւագեան:

Շաբաթ, 28 Յուլիս 2018ին, տեղի ունեցաւ համա-ՀՄԸՄական 11րդ բանակումի փակման դրօշակի արարողութիւնները: Առաջինը՝ կէսօրէ առաջ ժամը 11ին,



Homenetmen USA Western Region - 11 Pan-Homenetmen Jamboree - 2018

Յեղասպանութեան Ծիծեռնակաբերդի Յուշահամալիրէն ներս, ուր բանակումի առաջին օրը հանգամանօրէն բարձրացուած էին Հայաստանի, ՀՄԸՄի եւ բանակումի դրօշները: Անոնք յուզումով վար բերուեցան, յիշատակելի այն վայրէն, ուր ամբողջ պատմութիւն մը կոթողուած է:

Բիւրականի բանակավայրին մէջ, կէսօրէ ետք ժամը 5ին, տեղի ունեցաւ երկրորդ արարողութիւնը, որուն ընթացքին մրցանակներ յանձնուեցան յատուկ աշխատանքներու մէջ նուաճումներ արձանագրած խումբերուն եւ շրջաններուն: Նաեւ յանձնուեցան ՀՄԸՄի Արարատեան կարգի նշանները այն 24 քոյր-եղբայրներուն, որոնք յաջողութեամբ աւարտած էին անհրաժեշտ տեսական եւ գործնական գիտելիքները: Բանակողներու յատուկ հրաժեշտի խարուկահանդէսը յաջորդեց դրօշակի արարողութեան,

որ տպաւորիչ էր՝ յառաջացնելով հրաժեշտի յուզումնախառն զգացումներ:

Գեղեցիկ, միաժամանակ յուզիչ եղաւ Կիրակի, 29 Յուլիս 2018ին, «Փարաուն»ի ընդարձակ սրահին մէջ կազմակերպուած ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած Հայրենի ձեռնարկներու եզրափակիչ խրախուսանքը: Առաւել քան 2000է աւելի բանակողներ, անցեալի խմբապետ-խմբապետուհիներ, ՀՄԸՄի զանազան շրջաններէ ժամանած վարչականներ, վեթերաններ, համակիրներ եւ հիւրեր մասնակցեցան պատմական այս ձեռնարկին, որուն ընթացքին Հայրենի եւ սփիւռքահայ արուեստագէտներ պարի հանեցին բոլոր մասնակիցները, որոնք արդէն իսկ 10 օրերու ընթացքին մտերմացած էին: Բոլոր ներկաները զուարճալի ժամեր ապրեցան, երեւոյթ մը, որ միայն ՀՄԸՄին պարգեւուած է:

ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# Ակնաբոյժ Տոքթ. Նազարէթ Տարագճեան

Կը Շնորհաւորէ  
Համայն Հայութեան  
Նոր Տարին Եւ Սուրբ Ծնունդը

ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Ծրջանային Վարչութեան Կազմակերպած 100ամեակի Ձեռնարկներ

2018 տարեշրջանը յատկանշական եղաւ համայն հայութեան եւ յատկապէս ՀՄԸՄԻ մեծ ընտանիքին համար: Մէկ դար առաջ, պատմական գեղեցիկ զուգահիւսութեամբ մը, 28 Մայիս 1918ին, Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկախացումը հռչակուեցաւ, իսկ 16 Նոյեմբերին՝ Հիմնուեցաւ ՀՄԸՄը:

ՀՄԸՄը Հիմնուեցաւ ջարդարար թուրք պետութեան մայրաքաղաք Պոլսոյ մէջ եւ մեծ յառաջդիմութիւն արձանագրեց Հայ երիտասարդութիւնը համախմբելով մարզական եւ սկաուտական մաքուր միջնորդութի մէջ: Ան կարճ ժամանակաշրջանի համար նաեւ գործեց Հայրենիքին մէջ եւ որբացած Հայ ժողովուրդի զաւակներուն ապրելու, Հայրենիք ունենալու եւ մանաւանդ ընտանիք կազմելու հրամայականը արմատաւորեց: Անցնող 100 տարիներուն ընթացքին, ՀՄԸՄը իր առաքելութեամբ, հետապնդած նպատակներուն եւ զանոնք իրագործող սերունդներու անխոնջ աշխատանքին շնորհիւ մեծ ժողովրդականութիւն չահեցաւ, արմատաւորուեցաւ աշխարհի ամբողջ տարածքին:

Այսօր 26 երկիրներու մէջ Հիմնուած են ՀՄԸՄԻ 110 մասնաճիւղեր, որոնք աշխոյժ գործունէութիւն կը տանին, հարազատ թարգմանը հանդիսանալով ՀՄԸՄԻ առաքելութեան եւ անոր «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր»

իմաստալից կարգախօսին:

Այս հպարտալի առիթով, ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Ծրջանային վարչութիւնը 2018 տարեշրջանի իր բոլոր աշխատանքները նուիրեց ՀՄԸՄԻ 100ամեակին: ՀՄԸՄԻ այս շրջանը, նաեւ իր առաւելագոյն մասնակցութիւնը բերաւ ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան կազմակերպած ՀՄԸՄԻ 100ամեակի նուիրուած Հայրենի բոլոր ձեռնարկներուն, որոնց անդրադարձած ենք առանձին գլխի տակ:

Առաջին հերթին, ՀՄԸՄԻ 100ամեակի նուիրուած տեղական եւ Կեդրոնական վարչութեան մակարդակի կազմակերպուած ձեռնարկներու մասին ՀՄԸՄականներն ու հանրութիւնը տեղեակ պահելու համար, Ծրջանային վարչութիւնը համացանցի վրայ [www.WeAre100.info](http://www.WeAre100.info) հասցէով յատուկ կայքէջ մը ստեղծեց, ինչպէս նաեւ իր նախատեսած 100ամեակի ձեռնարկներու կազմակերպման համար նշանակեց բազմաթիւ յանձնախումբեր:

Նախատեսուած ձեռնարկներու քարոզչութիւնը մասնագիտօրէն կատարելու համար, վարձեց The Stark քարոզչական ընկերութիւնը, որ մեծապէս նպաստեց 100ամեակի աշխատանքներուն: Ազգային վարժարաններու, քոյր կազմակերպութիւններու եւ արեւմտեան թեմի եկեղեցիներու շրջափակերէն ներս հպարտանքով կարելի էր տեսնել 100ամեակի



կի ձեռնարկներու մասին ծանուցող պաստառները, որոնք մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին Հայ հասարակութեան մօտ: Մասնաճիւղային եւ ներքին ծրագիրներէն անկախ, Ծրջանային վարչութիւնը հրապարակային չորս կարեւոր ձեռնարկներ կազմակերպեց, որոնց, ստորեւ, առանձին գլուխներով կ'անդրադառնանք.-

**ՀՄԸՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ**

ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած հրապարակային առաջին գլխաւոր

ձեռնարկը Երիտասարդական եւ Հայաստան-Սփիւռք հարցերուն նուիրուած խորհրդածողովն էր, որ տեղի ունեցաւ 23 Յունիս 2018ին, Woodbury University Fletcher Jones սրահին մէջ: Հարիւրաւոր երիտասարդներու մասնակցութիւնը ապահոված կարեւոր այս նախաձեռնութիւնը հետեւեալ չորս կարեւոր նիւթերու քննարկումը կատարեց.

- Ապագան զօրաշարժի ենթարկել. դատի մը ջատագովումը՝ ժողովրդային ջանքերով:
- Ապագայի տեսլականը. երիտասարդութիւն, քաղաքականութիւն

Ընդհանուր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ  
Merry Christmas and Happy New Year!

ԱՊՐԻԼ

1978

40



2018

ԱՊՐԻԼ

ABRIL BOOKSTORE  
ԱՊՐԻԼԳՐԱՏՈՒՆ



415 E. Broadway, Suite 102, Glendale, CA 91205  
(818) 243-4112 ABRILBOOKS.COM

Where Armenian culture is preserved, fostered and promoted!

# ՀՄԸՄԻ Շրջանային Վարչութեան Կազմակերպած 100ամեակի Ձեռնարկներ

եւ ուժ:

- Ապագայի հզորացում. դերակատարութիւնը՝ աւելի՛ հզոր Հայաստան մը ստեղծելու ջանքերուն մէջ: Այս նիւթի քննարկման, «Սքայփ»ով իր մասնակցութիւնը բերաւ Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեան:

- Լրատուամիջոցներու եւ ընկերային ցանցերու դերակատարութիւնը:

Յիշեցնենք, թէ խորհրդաժողովի երրորդ նիստին, Skype-ով միացաւ նաեւ Հայաստանի Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեանը եւ պատասխանեց ներկաներուն կողմէ ներկայացուած հարցումներուն, որոնք կեդրոնացած էին Սփիւռքի դերակատարութեան վրայ՝ Հայաստանի ապագայ ծրագիրներուն մէջ: (միօրեայ այս խորհրդաժողովի մասին մանրամասնութիւնները տես ՀՄԸՄի Երիտասարդական Բաժանմունք գլուխի տակ):

«ԲԱՐՁՐԱՑԻՐ» ՀՄԸՄԻ 100ԱՄԵԱԿԻ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՑՈՒՑԱՀԱՆԳԷՍ

ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած բացառիկ գեղեցիկ նախաձեռնութիւն մըն էր նաեւ «Բարձրացիր» ընդհանուր թեմայով առաջնորդուած ՀՄԸՄի ցուցահանդէսը, որուն կազմակերպումը վստահուած էր ծանօթ արուեստագէտներ Լեւոն Փարեանին, Հէրի Որբերեանին, Վահագն



Թովմասեանին, Մհեր Դաւիթեանին, Արա եւ Անահիտ Օշականներուն:

Իւրայատուկ այս նախաձեռնութեան բացումը կոկիկ յայտագիրով մը պաշտօնապէս տեղի ունեցաւ Հինգշաբթի, 14 Սեպտեմբեր 2018ի երեկոյեան ժամը 7ին, Կլենտէյլի Հանրային գրադարանի "Reflect Space & passageway" բաժինին մէջ: Շրջանի ՀՄԸՄի պատմութեան մէջ առաջին անգամ կազմակերպուած այս ցուցահանդէսը կը ներկայացնէր կազմակերպութեան անցեալի, ներկայի եւ ապագայի ներդրումը

Հայկական իրականութեան մէջ: Բացման Հանդիսութեան ներկայ գտնուելու համար սրահ փութացած էին Արեւմտեան թեմերու զոյգ առաջնորդներ Մուշեղ արք. Մարտիրոսեանն ու Յովնան արք. Տէրտէրեանը, Հայ Աւետարանական Համայնքի ներկայացուցիչ վեր. Յովսէփ Կարապետեանը, ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան անդամ Վիգէն Դաւիթեանը, ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի անդամ Կարո Իսբէնճեանը, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամներ Վարդան Կարապետեանը,

Փօլա Տրվայնն ու Արա Նաճարեանը, ինչպէս նաեւ քոնկրետ սականներու, նահանգային եւ տեղական պաշտօնատարներու ներկայացուցիչներ, ուղեկից եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, ՀՄԸՄի Շրջանային վարչութեան անդամներ, ինչպէս նաեւ Նաւասարդեան խաղերու պատուոյ նախագահներ եւ տիպար ՀՄԸՄականներ, վեթերան միութեանականներ, մարզիկներ ու արի-արեւունչներ:

Գրադարանի անձնակազմէն Նիքի Ուինսլոյի բացման խօսքէն ետք, Հանդիսութիւնը ձեռնհասօրէն վարեց ՀՄԸՄի Լոս Անճելէսի մասնաճիւղի խմբապետուհիներէն Թամար Ղարիպեանը, որ ներկաները ողջունելէ ետք, յիշեցուց 100ամեակի նուիրուած ձեռնարկները:

Զոյգ առաջնորդներու գլխաւորած միացեալ աղօթքէն ետք, երկու հոգեւոր առաջնորդներն ալ իրենց սրտի խօսքը փոխանցեցին: Յովնան արք. Տէրտէրեան հաստատեց, թէ ՀՄԸՄի «Բարձրացիր, Բարձրացուր» նշանաբանը, ոչ միայն ներշնչումի աղբիւր հանդիսացած է բազմաթիւ սերունդներու, այլ նաեւ մեր աւանդութիւններուն պահպանող հանդիսացած է, որուն համար պատիւի արժանի է: Մուշեղ արք. Մարտիրոսեան, անդրադառնալով ՀՄԸՄի փառահեղ անցեալին, կեդրոնացաւ անոր սերունդներուն տուած ազգային ու կրօնական

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**Տէր եւ Տիկ. Խաչիկ Թիթիզեան եւ ընտանիք**

**Կը շնորհաւորեն ձեր Նոր Տարին եւ Ս. Ծնունդը**

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**Մարտիրոսեան Ընտանիք**

Լաւագոյն Մաղթանքներով Կը Շնորհաւորէ Իր Հարազատներուն Եւ Բարեկամներուն Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Շրջանային Վարչութեան Կազմակերպած 100ամեակի Ձեռնարկներ



պետ Սազո Կարապետեան, որ շեշտելով ՀՄԸՄԻ 100ամեակը պատշաճօրէն նշելու կարելութիւնը, ընդգծեց անոր իւրայատուկ դերը Հայկական իրականութեան մէջ, գլխաւոր առանցք ունենալով իր իմաստալից «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր» նշանաբանը: Ապա, շնորհակալութիւն յայտնելով ՀՄԸՄը արժեւորող ներկաներուն, գնահատեց ցուցահանդէսը կազմակերպած արուեստագէտներու ներդրումը:

Յայտագիրի վերջին բաժինով ելոյթ ունեցան նաեւ պատմական նշանակութիւն ունեցող ցուցահանդէսը ձեւաւորած արուեստագէտներ Արա Օշականն ու Հէրի Որբերեանը: Անոնք հետաքրքրական ձեւով բացատրեցին, թէ ինչպէս գեղագիտական ձեւաւորումով կարո-

ղացած էին համադրել եւ հանրութեան ներկայացնել ՀՄԸՄի պատմութիւնը, գլխաւորաբար Հայկ Դեմոյեանի հաւաքած մարզական, սկաուտական եւ այլ աշխատանքներու վերաբերող լուսանկարներու եւ յանձնախումբի հաւաքած իրերու համադրումով: Եւ իսկապէս, այդ օրը եւ բնականաբար ցուցահանդէսի յաջորդող օրերուն, Կլենտէյլի հանրային գրադարանի Reflect Space & passageway բաժինը ՀՄԸՄի կեդրոնի վերածուած էր: Հոն էին ՀՄԸՄի պատմութիւնը ներկայացնող բոլոր մանրամասնութիւնները: Հոն էր Ծաւարչ Քրիսեանի ոգին, անոր հիմնած մարզական խումբերը, մարզիկները իրենց անհրաժեշտ իրերով: Հոն էին 1912ին Հելսինքիի մէջ կայացած Միջազգային Ողիմպիականին մասնակցած հայ մարզիկները, որոնք իրենց սխրանքները կը պատմէին մեզի: Հոն էին Ծաւարչ Քրիսեանի հրատարակած «Մարմնամարզ»ի հնամաշ օրինակները, անցեալէն պահպան-

ուած սկաուտական գօտիներ ու պէճեր, զարդասեղներ, յաղթանակներ պատմող բաժակներ եւ այլ արժէքաւոր իրեր: Հոն էր նաեւ մանաւանդ 1929ին Անգլիոյ մէջ կազմակերպուած Համաշխարհային սկաուտական բանակումին մասնակցած Ժիրայր Պէյլերեանի սկաուտական տարագն ու ՀՄԸՄԻ անդամատետրը, քիչ անդին կախուած էր նաեւ շրջանի սկաուտներու ձեռնային աշխատանքով պատրաստուած կամուրջը:

Կողքի սենեակին մէջ գետեղուած էին լուսանկարները զանազան սերունդներ ներկայացնող ՀՄԸՄականներուն, շրջանի ՀՄԸՄի հիմնադիրներէն 101ամեայ արեւելք Յոլակ Յովսէփեանէն մինչեւ նորագոյն սերունդի գայլիկն ու փոքրիկ մարզիկը:

Բնական է, այս բոլորը կարելի էր ապրիլ միայն այցելելով դարբնոցի վերածուած ՀՄԸՄի Կլենտէյլի հանրային գրադարանի այդ անկիւնը: Անոնք որոնք չայցելե-

ղաստիարակութեան, որուն համար կը շարունակուի գործնական ծառայութիւնը ՀՄԸՄի, յանուն ազգին ու եկեղեցւոյ պայծառացման:

Օրուան գլխաւոր պատգամաբերն էր ՀՄԸՄԻ 2017 տարեշրջանի Տիպար ՀՄԸՄական տոքթ. Ծահէ Ենիգոմշեանը, որ ընդգծելով 100ամեայ ՀՄԸՄի կենսունակութիւնը, յիշեցուց անոր հայկական եւ տեղական երիտասարդական-սկաուտական բազմատեսակ առաքելութիւնները համախմբող միութիւն ըլլալու հանգամանքը: Իսկ ՀՄԸՄի նպատակը մատնանշելով, եղբայրը յայտնեց, թէ անոր գլխաւոր նպատակը առողջ երիտասարդութիւն ունենալն է, որոնց համար անհրաժեշտ է ստեղծել հայկական, միասնական եւ կամաւոր աշխատանքի հաւատք ներշնչող միջավայր մը:

Ապա, անդրադառնալով ՀՄԸՄի դիմագրաւած մարտահրաւերներուն եւ արձանագրած նուաճումներուն, ան հպանցիկ պատմական ակնարկ մը նետեց անոր դիմագրաւած դժուարին ուղիին, մատնանշելով յատկապէս Հայաստանի խորհրդայնացումէն ետք հարկադրաբար հայրենիքէն դուրս գալը, Պոլսոյ մէջ լուծարման ենթարկուիլը, Սփիւռքի մէջ ինքնակազմակերպման յատկանշական երեւոյթը, 1968ին, ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղով շրջանի ՀՄԸՄի ստեղծումը, 1989ին Հայրենիքի մէջ վերընձիւղման եւ այնուհետեւ անցած յաղթական ճանապարհը: Եղբայրը հպարտութեամբ ընդգծեց, թէ ներկայիս հայրենիքի եւ 26 երկիրներու մէջ ՀՄԸՄը կը գործէ 110 մասնաճիւղերով, իսկ Արեւմտեան ԱՄՆի մէջ՝ 17 մասնաճիւղերով եւ երկու միաւորներով:

Այնուհետեւ անդրադառնալով ՀՄԸՄի շինիչ դերակատարութեան համայնքէն ներս, գնահատեց անոր հաւաքական գործունէութիւնը եւ ըսաւ. «Անցած 100 տարիներուն, ՀՄԸՄի շարքերէն ներս գործած, անդամակցած ու անցած են շուրջ կէս միլիոն անձեր, սակայն մեր ամենամեծ յաջողութիւնը եղած է երիտասարդութիւնը մեր արժէքային համակարգով դաստիարակելը, ինչ որ մեծագոյն բարիքը եղած է համայնքին համար»:

Շրջանային վարչութեան անունով ելոյթ ունեցաւ փոխատենա-

St. Vincent Jewelry

Time to Bling in the NEW YEAR

WHOLESALE PRICES DIRECT TO THE PUBLIC

650 S. Hill Street DTLA | DTLAglam.com

# ՀՄԸՄԻ Ծրջանային Վարչութեան Կազմակերպած 100ամեակի Ձեռնարկներ

ցին պատմական այս ցուցահանդեսը, անկասկած շատ բան փախցուցին:

**ՀՄԸՄ-ի ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՅՈՆ**

ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած Ծրջանային վարչութեան երրորդ կարելուր նախաձեռնութիւնը Ժողովրդային փառատօնն էր, որ տեղի ունեցաւ Կիրակի, 16 Սեպտեմբեր 2018ին, Կլենտէյլի Հանրային գրադարանի կողքին գտնուող Կեդրոնական զբօսայգիին մէջ:

Փառատօնը սկիզբ առաւ կէսօրին, սկսուեալով տողանցքով, գրադարանի դիմացի պուրակէն, առաջնորդութեամբ Ամերիկայի, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ եւ ՀՄԸՄի դրօշներուն:



Տողանցքը գլխաւորեց ՀՄԸՄի նուագախումբը, որ իր նուագած յատուկ քայլերդանակներով եւ յատկապէս ազգային երգերու երաժշտութեամբ, մեծ ոգելորութիւն ստեղծեց տողանցողներուն եւ զանոնք երկարաշունչ ծափողջոյններով դիմաւորող հանրութեան մօտ: Ինքնավաստ Հպարտութեամբ տողանցեցին ՀՄԸՄի արի-արենուշներն ու մարզիկ-մարզկուհիները: Տողանցեցին խորխտ ու հաստատակամ: Անոնք ՀՄԸՄականի յատուկ պարծանքով եւ համոզումով քայլեցին, համայն աշխարհին ըսելու, թէ իրենք հարազատ գաւակներն են այն ժողովուրդին, որ միայն յառաջ ընթանալ գիտէ եւ չընկրկիր ոչ մէկ տկարութեան առաջ: Այո, իրենք ժառանգորդներն են 100ամեայ այն կազմակերպութեան, որ հայրենասիրութեամբ սերունդներ դաստիարակեց, սկսուեալով սկստական եւ մարզական իր շարքերուն ընդմէջէն Հայ ժողովուրդի որբերու փաղանգը յուսադրեց եւ իրենց նման նորահաս սերունդներուն առողջ միջավայր ստեղծեց:

ՀՄԸՄի շարքերը տողանցեցին Հարվըրտ փողոցով, անցան Պրենտ պողոտայով եւ ապա շրջան ընելով Քոլորադո պողոտայի վրայ վերադարձան Հանրային զբօսայգի եւ միացան փառատօնին, ուր արդէն իսկ Հայկական միջնորդութեան կը տիրէր: Փառատօնի շրջափակէն ներս տեղադրուած էին զանազան կրպակներ, ուր կը վաճառուէին ուտելիքներ,

յուշանուէրներ, գիրքեր, հայութեան եւ ՀՄԸՄի առնչուող հետաքրքրական իրեր: Ստեղծուած միջնորդութեան ոգելորդ էր: Գործադրուեցաւ զեղարուեստական զեղեցիկ յայտագիր մը, որ իր բովանդակութեամբ եւ ներկայացումով Հայկական փառատօնի իսկական պատկերը կը ներկայացնէր:

Իւրայատուկ յայտագիրը վարեցին Հանդիսավարներ ՀՄԸՄական ղուկտ. Սիւզի Օհանեան (անգլերէնով) եւ Բալարէկ Պարսամեան, որոնք բարի գալուստի խօսքերով ողջունելէ ետք ներկաները, բացատրեցին օրուան խորհուրդն ու փառատօնի նպատակը: Նուագախումբի «Ով Հայ Արի» սկսուեալով վարեցին նուագումբէն ետք, ՀՄԸՄի Ծրջանային խմբավարութիւնը Շարլին Գօզալեանի հրահանգով կատարուեցաւ դրօշակի

գով կատարուեցաւ դրօշակի արարողութիւն: Ամերիկայի եւ Հայաստանի քայլերգները դարձեալ նուագեց ՀՄԸՄի նուագախումբը: Փառատօնի կազմակերպիչ յանձնախումբի անունով ներկաները ողջունեց իրաւաբան Կարօ Ղազարեան եւ բեմ հրաւիրեց շրջանի ՀՄԸՄի հիմնադիրներէն ծերունակաբար 101ամեայ Յուլիա Յովսէփեանը: Ան յուզումով բարեւեց ներկաները, շնորհաւորեց իր պաշտած կազմակերպութեան 100ամեակը եւ խրախուսեց ներկայ արի-արենուշները կառչած մնալու ՀՄԸՄին, դառնալու անոր դեկավարները եւ առաջնորդելու իրենց սիրելի կազմակերպութիւնը դէպի նորանոր բարձունքներ:

Ծրջանային վարչութեան պատգամը փոխանցեց փոխատենայեա Սագօ Կարապետեան, որ ընդգծելով ՀՄԸՄի ստեղծման կարեւորութիւնն ու արձանագրած նուաճումները, շեշտեց անոր կարեւոր դերը Հայ երիտասարդութեան ազգային դաստիարակութեան մէջ:

Այնուհետեւ փառատօնը խանդավառեցին գաղութի սիրուած երգիչներ՝ Տիգրան Ասատրեան, Սուրօ, Անի Քրիսթի, Վարանդ, Յովհաննէս Պալեան եւ Մեր Հոփօ: Փառատօնի եզրափակիչ բաժնով ելոյթ ունեցաւ անզուգական երգիչ Յարութ Փամպուքճեանը, որ ըստ սովորութեան իր երգերով առաւել շիկացուց ուրախ միջնորդութեան: Փառատօնը վերջ գտաւ երեկոյեան ժամը 7:30ին:

Մասնակիցներէն շատերը, առիթը պատեհ գտնելով այցելեցին նաեւ Կլենտէյլի Հանրային գրադարանի մէջ կազմակերպուած ՀՄԸՄի եզակի ցուցահանդեսին:

**ՀՄԸՄԻ 100ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵԶՐԱՓՈՒԿԻ ԶԵՆՈՒՆԱՐԿՆԵՐ**

ՀՄԸՄի հիմնադրութեան 100ամեակին նուիրուած եզրափակիչ ձեռնարկը հրապարակային տօնակատարութիւնն էր, որ տեղի ունեցաւ երկու ձեռնարկներով: ՀՄԸՄի 100ամեակի Հիսուսային Քալիֆորնիոյ մէջ. Առաջին ձեռնարկը Հիսուսային Քալիֆորնիոյ շրջանի ՀՄԸՄասէր հասարակութեան համար էր, ուր կը գործեն ՀՄԸՄի Սան Ֆրանսիսքոյի, Սանթա Գլարայի «Անի» եւ Ուոլնաթ Քրիթի «Կարս» մասնաճիւղերը:

Այս երեք մասնաճիւղերու ջանքերով կազմակերպուած ձեռնարկը տեղի ունեցաւ Ուրբաթ, 5 Հոկտեմբեր, 2018ի երեկոյեան, Սան Ֆրանսիսքոյի «Սարոյեան» սրահին մէջ, շուրջ 400 ՀՄԸՄասէրներու ներկայութեամբ: Ձեռնարկին կը մասնակցէին առաջնորդ Յովհանն արք. Տէրտէրեան, առաջնորդական փոխանորդ Թորգոմ եպս. Տօնոյեան, Հոգեւոր Հովիւներ, ՀՄԸՄի Կեդրոնական եւ Ծրջանային վարչութեան, ՀՅԴ կոմիտէներէն եւ շրջանի քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Ձեռնարկի հանդիսավարութիւնը զեղեցիկորէն կատարեցին խոստմնալից երիտասարդներ Թամար Տէրմէնճեան եւ Կարէն Տէր Ուաչատրեան: Ձեռնարկի բացման աղօթքն ու իրենց օրհնութիւնները փոխանցեցին Յովհանն արք. Տէրտէրեան, Թորգոմ եպս. Տօնոյեան եւ Պարոյր վրդ. Շէրտէղեան:

Հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր, վաստակաշատ ՀՄԸՄական Ժիրայր Սարգիսեան, որ հասակ առած է ՀՄԸՄի շարքերէն ներս, որուն «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր» նշանաբանը եղած է իր կեանքի ուղին: Եղբայրը իր սրտի խօսքը փոխանցելով, անդրադարձաւ իր ապրումներուն եւ իր խրախուսիչ պատգամները փոխանցեց ներկաներուն, մասնաւորաբար՝ երիտասարդ սերունդին: Ապա, Հպանցիկ ակնարկ մը նետելով ՀՄԸՄի պատմականին, կեդրոնացաւ ՀՄԸՄի 100ամեակին նուիրուած հայրենի ձեռնարկներուն, որոնք անկասկած առաւել հայրենասիրութեամբ տողորեցին բոլոր ՀՄԸՄականներու սրտերը:

ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Ծրջանային վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետ Մանուէլ Մարսէլեան, որ մատնանշելով ՀՄԸՄի Արեւմտեան ԱՄՆի շրջանի յիսուն տարիներու բեղուն գործունէութիւնը 100ամեայ ՀՄԸՄի պատմութեան մէջ, իր գոհունակութիւնը յայտնեց, թէ Հիսուսային Քալիֆորնիոյ շրջանէն երեք քոյրեղբայրներ 28 Հոկտեմբերին, պիտի արժանանան շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն ծառայութեան շքանշանին: Ապա, վեր առնելով ՀՄԸՄի Սան Ֆրանսիսքոյի, «Անի», «Կարս» մասնաճիւղերու եւ Լոս-ոֆ միաւորի աշխույժ գործունէութիւնը, առ ի երախտագիտութիւն, անոնց ատենապետներուն յանձնեց ՀՄԸՄի 100ամեակը յատկանշող յատուկ յուշատախտակներ:



Մի Սան Ֆրանսիսքոյի, «Անի», «Կարս» մասնաճիւղերու եւ Լոս-ոֆ միաւորի աշխույժ գործունէութիւնը, առ ի երախտագիտութիւն, անոնց ատենապետներուն յանձնեց ՀՄԸՄի 100ամեակը յատկանշող յատուկ յուշատախտակներ: Սրտի իր խօսքը փոխանցեց նաեւ ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան անդամ Վիգէն Դաւթեան: Ան իր ուրախութիւնը յայտնեց ձեռնարկի մասնակից մեծաթիւ ՀՄԸՄասէրներու խանդավառ ներկայութեան եւ 100ամեակի ձեռնարկի բացառիկ յաջողութեան համար:

Ձեռնարկին պաշտօնական բաժնի աւարտէն ետք, ներկաները մինչեւ ուշ գիշեր խանդավառութեամբ վայելեցին հանրաժանօթ երգիչ Յարութ Փամպուքճեանն ու անոր հրամցուցած զեղեցիկ երգերը:

ՀՄԸՄի 100ամեակի Հարաւային Քալիֆորնիոյ մէջ. Երկրորդ հրապարակային ձեռնարկը Հարաւային Քալիֆորնիոյ Հայութեան համար էր, որ տեղի ունեցաւ Կիրակի, 28 Հոկտեմբեր 2018, երեկոյեան ժամը 5ին, Կլենտէյլ Հայ Արուի հանդիսասրահը, մասնակցութեամբ աւելի քան 800 ՀՄԸՄասէրներու: Ձեռնարկին ներկայ էին թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան, ՀՅԴ Բիւրոյի անդամներ Վիգէն Եագուպեան եւ Յակոբ Սաչերեան (օրուան բանախօս), ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան անդամներ Վիգէն Դաւթեան եւ Օշին Փիրումեան, նահանգային ծերակուտակաւ Էնթրի Փորթմանիւն, Լոս Անձելըս գաւառի վերահսկիչ Քեթրին Պարճըրը, Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի անդամներ Կարօ Իսախանեան եւ Ռազմիկ Շիրինեան, Հայ Դատի ատենապետ Նորա Յովսէփեան, ՀՕՄի Ծրջանային վարչութեան անդամներ՝ ատենապետ Սիլվա Փոլատեան, Մարալ Թուլումեան եւ Արչօ Աւագեան, Կլենտէյլի քաղաքապետ Ջարեհ Սինանեան, քաղաքապետական խորհուրդի անդամներ, Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահներ եւ տիպար ՀՄԸՄականներ, ուղեկից կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, հրաւիրեալներ եւ մեծ թիւով ՀՄԸՄականներ եւ համակիրներ:

Հանդիսութիւնը սկսաւ դրօշակի արարողութեամբ, ընկերակցու-

# ՀՄԸՄԻ Շրջանային Վարչութեան Կազմակերպած 100ամեակի Ձեռնարկներ

Թեամբ ՀՄԸՄԻ փողերախումբին եւ գլխավորութեամբ Շրջանային խմբապետուհի Շարլին Գէօրգալեանի: Ձեռնարկի հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց ՀՄԸՄԻ երիտասարդական բաժանմունքի անդամներէն Սօսի Պեքարեան Սեթի:




Ձեռնարկը օրհնեց եւ ՀՄԸՄԻ 100ամեայ գործունէութիւնը բարձր գնահատեց Առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան: Հայ ազգի բարեկամ ծերակուտական Ատրմ Շիֆ չկարենալով ձեռնարկին ներկայ գտնուիլ, տեսերիզով իր շնորհաւորական պատգամը յղած էր, որուն ունկնդրումէն ետք, Քեթրին Պարճըր, բեմ



բարձրանալով՝ շնորհաւորեց ՀՄԸՄը, դրուատեց անոր ունեցած մեծ դերը հայաշատ Լոս Անճելըս գաւառի երիտասարդութեան դաստիարակութեան մէջ եւ առ ի գնահատանք՝ պաշտօնական գնահատագիր մը յանձնեց Շրջանային վարչութեան ատենապետ Մանուէլ Մարսէլեանին: Ապա, սրահին մէջ ստեղծուեցաւ իւրայատուկ ՀՄԸՄական մթնոլորտ մը, երբ մուտք գործեցին դեռատի մարմնամարզիկներ եւ սկաուտներ, որոնք բեմին վրայ ցուցադրեցին իրենց մարմնի ճկունութիւնն ու սկաուտական աշխատանքները: Շրջանային վարչութեան պատգամը անգլերէնով փոխանցեց Արմանտ Քիլիճեան, որ անդրա-

դարձաւ ՀՄԸՄԻ սկզբունքներուն՝ Հայ երիտասարդները դաստիարակել ֆիզիքապէս եւ հոգեպէս, որպէսզի անոնք դառնան յանձնառու հայեր: Տպաւորիչ այս պատգամին յաջորդեց ՀՄԸՄԻ «Արտակարգ պատուանշան»ի տուչութիւնը: ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան անդամներ Վիգէն Դաւթեան եւ Օշին Փիրումեան «Արտակարգ պատուանշան»ով պարգեւատրեցին տասնամեակներով ՀՄԸՄԻ սկաուտական շարժման մէջ մեծ դեր ու վաստակ ունեցած Վարուժ Միրզայեանը: Այնուհետեւ, խումբ մը արիարենուշներ, սահիկներու ընկերակցութեամբ ներկայացուցին

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



Յանուն՝  
**ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ**

Կը շնորհաւորենք Հայազգի մեր բոլոր զաւակները մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի Ծննդեան Սուրբ Տօնին առթիւ  
Կ'աղօթենք, որ 2019 տարուան ընթացքին, Բարձրեալն Աստուած իր առատ օրհնութիւններով լեցնէ մեր սիրտերը ու ազգապատկան մեր բոլոր կառոյցները:

**Տէր Յիսուս Քրիստոսի Ծննդեան Պաշտամունք Պատգամաբեր՝ Վեր. Վաչէ Էքմէքճեան**

Կիրակի, Յունուար 6, 2019, երեկոյեան ժամը 6:30ին  
Քրիստոնէական Առաքելութիւն Հայոց Եկեղեցի  
125 S. Louise St., Glendale, CA 91205

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**Սաուր Պէյ**

**ՀՅԴ**  
**«Արամ Մանուկեան»**  
**Կոմիտէ**

**ՀՕՄԻ**  
**«Արաքս» Մասնաճիւղ**

**Այս Նոր Տարուան Սեմին Որոշենք Վառ Պահել Հայութեան Պայքարի Չափը**

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Շրջանային Վարչութեան Կազմակերպած 100ամեակի Ձեռնարկներ

ՀՄԸՄԻ պատմությունը: Անոնք հայերենով եւ անգլերենով, փոխն ի փոխ, ներկայացուցին ՀՄԸՄԻ անցեալի իրագործումները, հասնելով մինչեւ Յուլիս 2018ին Հայրենիքի մէջ իրագործուած Համա-ՀՄԸՄական ընդհանուր Սկսու-տական բանակումը:



Ուրախ այս մթնոլորտին մէջ, բե-մը յանձնուեցաւ օրուան բանա-խօս, ՀՅԳ Բիւրոյի անդամ Յակոբ Սաչերեանին, որ ամակուծեցին ի վեր ՀՄԸՄական, սկսուտ, մարդիկ եւ վարչական եղած է: Եղբ. Սաչերեան, ՀՄԸՄականի գեղեցիկ յուշերով սկսաւ իր պատգամը: Միութիւն մը, որ իր հիմնադրութենէն մինչեւ Ազատ ու անկախ Հայրենիքի մայրաքաղաքի Հանրապետութեան հրապարակի վրայ յաղթական տո-ղանցելն ու Բիւրականի մէջ բանա-կիլը, երկար ու տազնապալից ճամբայ կտրած էր:

կան չգտաւ Հայաստանի Հանրապետութեան ու ՀՄԸՄԻ 100ամեակներու նոյնացումը: Կատարուած իրագործումներէն ետք եղբայրը անհրաժեշտ գտաւ սկզբունքային մօտեցումներով նայիլ դէպի յաղթական ապագան, ՀՄԸՄը ազգային արմատներու կառչած միութիւն պահելով, աւանդական մեր բարքերը չմոռնալով եւ մանաւանդ վառ պահելով ազգային մեր տեսլականները: Օրուան բանախօսին ելոյթէն ետք, Շրջանային վարչութիւնը «Ծառայութեան» շքանշանով մեծարեց խումբ մը ՀՄԸՄականներ, որոնք իրենց գործունէութեամբ, նուիրումով եւ ՀՄԸՄականի հաւատքով, մեծապէս նպաստած են շրջանի ՀՄԸՄԻ վերելքին:

Շրջանի բարձրագոյն այդ շքանշանին արժանացան ՀՄԸՄականներ՝ Մարո Քէչիչեան, Վաչիկ Սարգիսեան, Արա Քերքեզեան, Սարգիս Թաթիկեան, Արմիկ Աբրահամեան, Պաղտիկ Օհանեան, Ստեփան Պաղպուտարեան, Արթ Սաչատուրեան, Թովմաս Թոքմաճեան, Մարո Ղազարեան, Ճէք Գասամանեան, Անահիտ Գասպարեան եւ Ալին Աղբաբեան: Հանդիսութեան ընթացքին, նաեւ մէկ առ մէկ ոգեկոչուեցան անցնող տարուան ընթացքին Արեւմտեան շրջանէն՝ մեզմէ առյաւէտ բաժնուած ՀՄԸՄականները, յարգանքի եւ յուզումի մթնոլորտ մը ստեղծելով սրահին մէջ: Անոնք էին՝ Ճորճ Ժամկոչեան, Վարդգէս Մեսրոպեան, Աւետիս

Ժամկոչեան, Ռոպերթ Սարգիս, Ժորժ Ահարոնեան, Սերժիկ Իսաղուլեան եւ Գէորգ Սամիսեան:

Ձեռնարկի վերջին բաժնով, ազգային հայրենասիրական փունջ մը երգերով ելոյթ ունեցաւ Քրիստափոր Արապեան, ընկերակցութեամբ Կրէկ Հօշարեանի նուագախումբին, իսկ Հանդիսութիւնը փակուեցաւ վարանդ Աւանեսեանի կողմէ 100ամեակի քայլերգի կատարումով (խօսք՝ Ներսէճ Լիպարեանի, երաժշտութիւն՝ Վահրամ Էմմիլեանի):

Հրապարակային գեղեցիկ այս ձեռնարկէն ետք, Օրուան պաշտօնական հիւրերը, մեծարեալ քոյր եղբայրներն ու Շրջանային յանձնախումբերու ներկայացուցիչները, Շրջանային վարչութեան կողմէ, ՀՄԸՄԻ Անտոնեան սրահին մէջ կազմակերպուած մտերմիկ ընթրիք-խրախճանքի մը հրաւիրուեցան, որ հովանաւորուած էր ՀՄԸՄականներ տէր եւ տիկ. Բաֆֆի եւ Սիւզի Օհանեաններու կողմէ:

Այսպիսով, եղբայրակուեցան ՀՄԸՄԻ 100ամեակին նուիրուած միամեայ ձեռնարկները, որոնք իրենց յաջող կազմակերպումով, մեծ աղմուկ բարձրացուցին շրջանէն ներս, անգամ մը եւս վկայելով, որ ՀՄԸՄը երիտասարդ կազմակերպութիւն է եւ ծնունդ առած է իր ժողովուրդի յաջորդական սերունդները ազգային նկարագիրով դաստիարակելու սրբազան գործին համար:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Nova  
Automotive**

Glendale, California

**Mr. & Mrs.  
Jirair & Rita  
Keuroghlian**

*Merry Christmas  
& Happy New Year*

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Տէր Եւ Տիկ.  
Աւետիք  
Եւ Անգիմէ  
Իզմիրլեան**

Լաւազոյն  
Մաղթանքներով  
Կը Շնորհաւորեն  
Համայն Հայութեան  
Նոր Տարին  
Եւ Ս. Ծնունդը

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



# ՀՄԸՄԻ Արժանաւոր Եղբայր՝ Յակոբ Օվայեան

Երբ, 29 Մարտ 2008ին, շրջանի հայութիւնը հրաժեշտ տուալ յետեղեռնեան սերունդի լուսագոյն ներկայացուցիչներէն Յակոբ Օվայեանին:

Եղբ. Օվայեանի մահով, ոչ միայն Օվայեան ընտանիքը կորսնցուց հոգատար ամուսին մը եւ գուրգուրոտ հայր մը, այլ նաեւ ՀՄԸՄը կորսնցուց վաստակաշատ դեկավար մը, ազգանուէր հայ մը, հաւատաւոր դաշնակցական մը, որ մեծ ներդրում ունեցած է ՀՄԸՄէն ներս, ինչպէս նաեւ թեմական կառոյցներուն, «Համազգային»ի եւ ազգային բազմաթիւ հաստատութիւններու մէջ:

Տարագիր ընտանիքի զաւակ եղբ.



Յակոբ Օվայեան ծնած է 1927ին, Սանճաքի Գլըրբզխան աւանը: 1938ին, Սանճաքի պարպումէն ետք ընտանիքին հետ փոխադրուած է Հալէպ, Սուրիա: Նոյն տարին անդամակցած է ՀՄԸՄի Հալէպի մասնաճիւղին իբրեւ գայլիկ, ինչպէս նաեւ տեղւոյն պատանեկան միութեան:

Եղբայրը երկար տարիներ ծառայած է ՀՄԸՄի շարքերէն ներս իբրեւ սկաուտ, ֆուլթայլի մարզիկ, սկաուտ խմբապետ, Սկաուտական խորհուրդի անդամ եւ վարչական:

Յաճախած է Հալէպի «Զաւարեան» վարժարանը, ապա՝ Հալէպի Ամերիկեան քոլէճ, որմէ ետք, երկրորդական ուսումը շարունակած է Կիպրոսի «Մելքոնեան» կրթական հաստատութենէն ներս, զոր 1948ին աւարտելէ ետք, նետուած է ուսուցչական ասպարէզ: Եղած է Հալէպի «Կիւլպէնկեան» ազգ. վարժարանի տնօրէն: Երջան մը Ամերիկեան Արապիքն Պէքթըլ Բամփրնիի (ABC) ընդհանուր տնօրէնին անձնական քարտուղարի պաշտօնը վարելէ ետք, վերադարձած է ուսուցչական ասպարէզ՝ պաշտօնավարելով Հալէպի «Հայկազեան» ազգ. վարժարանին եւ «Քարէն Եփփէ» ձեմարանին մէջ:

1948ին անդամակցած է ՀՅԴ շարքերուն: 1955ին ամուսնացած է Աղանի Քեօշկէրեանի հետ: Ունի հինգ զաւակներ եւ բազմաթիւ թոռներ:

1961ին ընտանեօր փոխադրուած է Պէյրութ, Լիբանան, ուր նաեւ շարունակած է ուսուցչական իր ասպարէզը, երկար տարիներ իբրեւ տնօրէն պաշտօնավարելով

«Էհրամճեան» վարժարանին մէջ: Միաժամանակ, փոխանցուելով ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղի շարքերը, ստանձնած է պատասխանատու պաշտօններ, եղած է վարչութեան քարտուղար, ատենապետ եւ երկար տարիներ վարած է Երջանային Սկաուտական խորհուրդի քարտուղարի պաշտօնը:

1961-1974 Լիբանանի մէջ ազգային հասարակական կեանքին իր արդար բաժինը բերելէ ետք, ընտանիքին հետ վերջնականապէս հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Լոս Անճելըս: Նոյն տարին իսկ փոխանցուելով ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղի շարքերը, ընտրուած է շրջանի առաջին Երջանային վարչութեան ատենապետ եւ այնուհետեւ, ամբողջ տասը տարիներ Երջանային վարչութեանց յաջորդական կազմերուն մէջ ստանձնած է զանազան պատասխանատու պաշտօններ:

1976ին, կարգ մը ՀՄԸՄական եղբայրներու հետ հիմը դրած է Նաւասարդեան մարզախաղերուն, որոնք մեծ ժողովրդականութիւն կը վայելեն եւ իրենց իւրայատուկ տեղը նուաճած են շրջանի հայկական իրականութենէն ներս:

1983ին, Աթէնքի մէջ մասնակցած է ՀՄԸՄի Գ. Ընդհանուր ժողովին:

1985ին, ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերու 10ամեակին առիթով, օրուան Երջանային վարչութիւնը, զինք եւ երկու այլ եղբայրներ պարգեւատրած է, եզակի այս մարզախաղերու ստեղծման եւ անոնց միջոցաւ շրջանի երիտասարդութիւնը մարզական մաքուր միջավայրի մը մէջ համախմբելուն համար:

1987ին Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութիւնը եւ Լոս Անճելըսի քաղաքապետութիւնը բարձր գնահատելով եղբայր Օվայեանի միութենական բեղուն գործունեութիւնը, յատուկ յուշատախտակներով պարգեւատրած է զինք:

Հաւանաբար կրթական մշակի իր պարտականութենէն եւ ՀՄԸՄի հանդէպ ունեցած սէր ու յարգանքէն մեկնած, եղբայր Օվայեան մեծ դերակատարութիւն ունեցած է նաեւ Քալիֆորնիոյ Հայ աշակերտական մարզախաղերու՝ բոլորիս ծանօթ ՔԱՀԱՄի կազմակերպման մէջ:

ՀՄԸՄի 80ամեակը եւս երջանկութեան առիթ հանդիսացաւ եղբ. Օվայեանին: Պատմական թուական ըլլալէ անկախ, օրուան Երջանային վարչութիւնը «Տիպար ՀՄԸՄական-1998» տիտղոսը շնորհած էր եղբոր:

2004 Հոկտեմբերին, ՀՄԸՄի Երջանային ներկայացչական 26րդ ժողովի բացումին, Երջանային վարչութիւնը ՀՄԸՄի «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրեց եղբայրը, մեծ անակնկալի մատնելով զինք ու իր ընտանիքը:

Եղբայրը հիմնադիրը եղած է Սիւսեցիներու հայրենակցական միութեան եւ երկար տարիներ վարած է անոր ատենապետի պարտականութիւնը: Գործօն



մասնակցութիւն ունեցած է «Համազգային»ի մշակութային, ինչպէս նաեւ Հայ-ամերիկեան տարեցներու միութիւններէն ներս: Ան ներկայութիւն էր նաեւ Ազգային կառոյցներէն ներս, միշտ ծառայելու եւ իր օգտակարութիւնը ցուցաբերելու ընդհանուր աշխատանքներուն եւ ծրագիրներու իրագործման մէջ:

Եղբայր Օվայեանի յիշատակը, նուիրումը, սէրը եւ յարգանքը օրինակ պիտի ծառայէ բոլորին: Թեմիս առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի վկայութեամբ, «մեծ հայասէր մը, մեծ հայրենասէր մը, ազգի ծառայ մը, նուիրեալ մըն էր Օվայեան, որ կը պատկանի այն սերունդին, որուն համար ծառայութիւնը, նուիրումը եւ զոհողութիւնը բառին ամբողջական իմաստով կեանքի էր վերածուած եւ հարազատութեան իր թարգմանութիւնն էր... Յակոբ Օվայեան եղաւ տոկուն եւ զօրաւոր մարդ մը, իր ծառայութեան ուղեւորութեան ընթացքին, որ անկասկած, իբրեւ գիտութիւն եւ կրթութիւն ինչ որ կ'ամբարէր իրեն համար պիտի ըլլար ուժ եւ զօրութիւն: Եւ ինչ որ ամբարեց իբրեւ մարդ, իբրեւ ուսուցիչ, դաստիարակ եւ տնօրէն, իբրեւ յանձնառու ժողովական, նուիրեալ, գործունեայ եւ տիպար ՀՄԸՄական, իբրեւ նուիրեալ հայրենակից, իբրեւ հայ-տարեցներու միութեան երկարամեայ նուիրեալ, եւ ամէն մակարդակի իբրեւ նուիրեալ եւ ուխտեալ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գիւնուոր եւ մանաւանդ հայ եկեղեցւոյ ծառայ, Աստուծոյ խօսքերը իր կեանքի համար թարգմանը եղան, որովհետեւ ինք իր ծառայութեան մէջ մնաց համեստ, եղաւ իմաստուն եւ խոհեմ, միշտ փորձեց արդարութեան եւ արդարամտութեան իր ծառայութեամբ առաջնորդել:

«Մեզի կը մնայ յիշել զինք իբրեւ անխոնջ եւ նուիրեալ ծառայ մեր հաւաքականութեան եւ Աստուծոյ, անմահացնելով անոր յիշատակը»:

ՀՄԸՄական, իր գործակիցներէն Մարո Քէշիշեան, կը վկայէ, որ Օվայեան «ամբողջ 70 տարիներ եղած էր այն իրաւ ՀՄԸՄականը, որ 1938ին, ՀՄԸՄի Հալէպի մասնաճիւղին իբրեւ գայլիկ արձանագրուելով եւ այնուհետեւ Պուրճ Համուտի եւ Լոս Անճելըսի մասնաճիւղերուն անդամակցելով, անցած էր այս մեծ ընտանիքի բոլոր հանգրուաններէն. գայլիկէն, ֆուլթայլի մարզիկէն մինչեւ Երջանային վարչութեան ատենապետ... եղբ. Օվայեան, անցնող 80 տարիներուն, իր համեստ բնուորութեամբ յարգանքը վայելեց իր հարազատներուն ու շրջապատին: Իր ձգած հետքերը երբեք պիտի չկորսուին եւ հարազատ թարգմանը պիտի հանդիսանան ՀՄԸՄի իմաստալից «Բարձրագի՛ր, Բարձրացո՛ւր» նշանաբանին, որուն ինք այնքան հաւատքով կը մօտենար»:

Օվայեանի աշակերտներէն, իր կուսակից Սեդօ Պոյաճեանի վկայութեամբ. «Դաշնակցական Օվայեանը կը պատկանէր այն սերունդին, որ օտարութեան մէջ փորձեց կերտել հաւաքական կեանք՝ հայրենազուրկ հայուն համար»: Այդ սերունդին համար առաջնորդող երեք գլխաւոր սկզբունքներն էին՝

- Գործօն կեանք մը, թէկուզ լի սխալներով, աւելի պատուաբեր ու օգտաշատ է, քան անսպասակ ու ծոյլ կեանք մը:
  - Կեանքը կը սկսի աւարտիլ այն օրը, երբ կը սկսինք մնալ լուռ եւ անտարբեր այն հարցերուն նկատմամբ, որոնք կենսական են անհատի էութեան եւ հաւաքական լինելութեան:
  - Գլուխը երբեք չխոնարհել, այլ զայն բռնել բարձր ու նայիլ աշխարհի ուղղակի երեսին:
- Օվայեան փորձեց կատարել այդ բոլորը այն մէկ սկզբունքի գիտակցութեամբ, որ պէտք է նախ ապահովել, որ ոտքդ զետեղած ես ճիշդ գետնի վրայ ու ապա կառչիլ անոր ամբօրէն: Ի վերջոյ եթէ մարդ տուած է իր լուսագոյնը, ալ աւելի ի՞նչ կը մնայ:

# Միութենական Կեանք

## ԱՐՄԷՆ ԿԱՐՕ ՀԱՅԹԱՅԵԱՆ

Լիբանանի 1970ական թուականներու քաղաքացիական պատերազմին, ըստ հայոց ճակատագրին, գաղթականութիւնը մեզ ալ վիճակուեցաւ: 1976 Սեպտեմբերին իջանք Լոս Անճելըսի օդակայանը: Պետական թուղթերու ու պայուսակներու քննութենէ ետք ելանք դուրս, հոն մեզ դիմաւորելու եկած էին ընտանեկան պարագաներս եւ անմիջական բարեկամներ:

Բարեկամներս բարի գալուստ մաղթելէ ետք ցտեսութիւն ըսելով, վերադարձան իրենց տուները: Ես աղջկաս հետ նստայ մեզ դիմաւորած եղբորս ինքնաշարժը, տիկինս եւ տղաս քրոջս ինքնաշարժը: Վերջապէս հասանք տուն:

Հազիւ տուն մտած քահ-քահ մը տիկնոջս եւ քրոջս կողմէ: Ինչո՞ւ այսքան կը խնդար հարցուցի: Այսպէս, պատասխանեց տիկինս: Տղաս, որ այդ ժամանակ երեք ու կէս տարեկան էր, ճամբուն վրայ տեսեր էր սեւամորթ մը՝ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով: Սեւամորթը տեսնելուն պէս մօրը կ'ըսէ. «Նայէ մայրիկ այս մարդը որքան աղտոտ է, բնաւ չէ լողցեր»:

Ա՛յ սիրուն տղաս, ըսի վաղը շատ կը տեսնես այդ մարդոցմէ, ջանացի բացատրել, թէ անոնք աղտոտ չեն, այլ մորթի գոյնն է:

Երեք օր Կիրակի էր, եղբայրս առաջարկեց մեզ տանիլ Լոս Ֆելիսի փարք, հոն ՀՄԸՄի սկաուտները Ֆուլի նախաձաշ կազմակերպած էին եւ ուր կրնայինք հանդիպիլ հին ընկերներու: Իրաւ ալ առաջին ծանօթը որ մօտեցաւ հարցուց՝ հա՛յ Կարօ, ե՞րբ եկար:

Երեք օր առաջ, պատասխանեցի: Ինչպէ՞ս սիրեցիր մեր Ամերիկան: Նորեկ եմ, ըսի, դեռ ժամանակ կ'ունենամ Ամերիկան ճանչնալու:

Ծանօթիս հեռանալէն վերջ կը մտածէի, թէ ե՞րբ Ամերիկան մերն է եղեր, որ չէի գիտեր:

Մի քանի վայրկեան ետք ուրիշ ընկեր մը վազելով քովս կու գայ: Մի քանի քայլ հեռաւորութեան կանգ կ'առնէ. աչքերը ջրոտած են, մօտենալով կ'ողջագուրուի հետս հարց տալով՝ Կարօ ճան, ո՞ղջ ես, մեռած ես ըսին, Ֆարայ-յա գիւղի բարձունքին քեզ սպաներ են ըսին:

Շիտակ են ըսած, պատասխանեցի, բայց քու տեսած Կարօն չէր, այլ ուրիշ Կարօ մը, որուն հետ երկու եղբօր թոռներ ենք եղած: Կարօ շատ ուրախ եմ քեզ ողջ տեսնելով, ըսաւ ընկերս:

Այդ այցելութեանս հանդիպեցայ նաեւ ինծի ծանօթ Պարգեւ Շիրինեանի զակին՝ Ռազմիկին, որ սկաուտներու ընդհանուր խմբապետն էր: Ան ինծի առաջարկեց աշխատիլ սկաուտական խորհուրդի մէջ: Չմերժեցի, իսկ խորհուրդի կազմը, նկատի ունենալով իմ տարիներու փորձառութիւնը այդ մարզէն ներս, իբրեւ երէց եղբայր զիս ընտրեց խորհուրդի ատենապետ: Այս եղաւ մուտքս Ամերիկայի մէջ միութենական կեանքի:

Կիրակի օր մըն էր, «Ասպարէզ» եռօրեայ թերթի բաժանորդագրութեան անդամակցելու թղթիկը տուին, որ լեցնեմ: Ցանկութիւնս ալ այդ էր, ունենալ թերթ կամ գիրք, որպէսզի ժամանակս հաճելի անցընեմ:

Երբ կ'ուզէի բաժանորդագրութեան հարցարանը լեցնել նկա-



տեցի, որ հարցումները անգլերէն էին, ոչ մէկ հայերէն գիր, իսկ ես անգլերէն գրել չէի գիտեր, հազիւ թէ քիչ մը խօսիլ կրնայի: «Ասպարէզ»ի հասցէին նամակ ուղարկեցի, խնդրելով դիմումագիրքին մէջ մաս մըն ալ հայերէն աւելցնել:

Սեպտեմբերէն հասանք նոր տարի, չստացայ հայկական որեւէ միութենէ կամ կուսակցութենէ օրացոյց մը. սա ցաւ էր սրտիս: Կաղանդէն երկու շաբաթ առաջ կը հանդիպիմ ՀՄԸՄի սկաուտներս ողբացեալ Ցակոբ Օվայեանին, որ շրջանի կոմիտէի ներկա-


յացուցիչն էր: Ան սեղմելով ձեռքս եւ ուսիս թափ տալով կը շնորհաւորէ զիս, նամակիս համար, որ ուղարկած էի օրացոյցի առնչութեամբ, խոստանալով անպայման յաջորդ տարի օրացոյց տալ:

Երկու տարի ետք խմբապետ Ռազմիկ ուսանելու պատճառով կը հեռանար իր պաշտօնէն, թողելով շատ եռանդուն եղբայր Ջարեհին: Ծնունդը մօտ ըլլալով կանչեցի արի եւ արեւուշ խմբապետները, որպէսզի ծնունդի առթիւ պտրտին հայոց տունները եւ Ծնունդը շնորհաւորեն, միաժամանակ նուիրատուներէն ապահովելով փոքր եկամուտ մը: Առարկեցին առաջարկիս, ըսելով ըսելով, թէ Ծնունդի երգերը գիտցողներու թիւը սահմանափակ է եւ ժամանակ չկայ ուրիշներ սորվեցնելու: Ըսի ինչու չէ, ունինք մօտ ամիս մը սորվեցնելու, ես կը խօսիմ վալիի վարդապետ Հայր Մանհիկեանին հետ, որ գայ սորվեցնէ երգերը: Ապշեցան ամիս մը լսելով, խորհելով Ծնունդը Դեկտեմբերի 24ին է, իսկ իմ մտքինս 6 Յունուարն էր:

Այդպէս ալ եղաւ: Մինչեւ 6 Յունուար երգերը սորվեցան եւ երեք խումբերու բաժնուած շրջեցան հայերու տունները: Ակումբին մէջ ես իրենց վերադարձին կը սպասէի, որպէսզի ստանձնեմ նուիրատուներէն բերուելիք գումարները: Ինծի անակնկալ եղաւ երբ ժամը 10ին առաջին խումբը վերադարձաւ: Հարցուցի ինչո՞ւ այսքան շուտ վերադարձաք: Պատասխանեցին՝ եղբայր Հայրթայեան ժամը արդէն 10ը անց է, գիշերուան այս ժամէն ետք արգիլուած է նուագելով կամ երգելով աղմկել, օրէնքը խախտած կ'ըլլանք: Ու ես նոր կ'անդրադառնայի, որ հոս ոչ Լիբանան էր, ոչ Սուրիա կամ Կիպրոս, ուր Ծնունդի աւետիսը կ'երգէին մինչեւ առաւօտ:

Կիրակի օր մը, երբ ակումբ կը գտնուէի, ծերունի կին մը մուտք գործեց ներս եւ խնդրեց պատասխանատու մը տեսնել: Ըսի մայրիկ եթէ խնդրանք կամ հարց մը ունիս խօսէ: Ըսաւ, թէ կ'ուզէր տեսնել այն պատասխանատուին,

## ԳԻՐ ՈՒ ԳԻԾ



Մարտի 18  
Ասպարէզ

# Միութենական Կեանքէս

որ Լուսաւորչական ծնունդի օրը սկսուած է արեւուն խումբը դրկած էր մեր ծնունդը շնորհաւորելու: Ըսի՛ այդ անհատը ես եմ: Մերունին մօտեցաւ ինծի ձեռքը երկարեց վիզիս, զգացի միտքը, համբուրեց ճակատս ու ըսաւ՝ եաւրուս տարիներ է Ամերիկա կ'ապրիմ եւ այս առաջին անգամ ըլլալով Յունուար ճին Մանդեան աւետարտութիւն մեզ, շատ ուրախացայ: Բարեմաղթանքներ տալով ծերունին հեռացաւ ակումբէն:

Մինչ այդ Լուս Անճելըսի մէջ ՀՄԸՄ-ը ունէր միայն Հոլիվուտի շրջանին մէջ միայնակ շրջան մը: Պարսկաստանի վերիվայրումներու շրջանին, բազմաթիւ ազգակիցներ եկան հաստատուելու Քալիֆորնիոյ Լուս Անճելըսի շրջանի կիսնտէյլ քաղաքը ու ցանկացան կազմել շրջանի «Արարատ» մարզական եւ սկստական կառոյցները: Մինչ այդ շրջանս աշխատանք տարած էր կիսնտէյլի մէջ մասնաճիւղ հիմնելու: Եղբ. Զարեհի առաջնորդութեամբ արդէն նշանակուած էին այդ շրջանը ապրող մի քանի պատասխանատու սկստական թէ արեւուն: Անշատ ՀՄԸՄի մը ստեղծումը պիտի խոչընդոտէր շրջանի աշխատանքները: Խորհրդակցութեան կանչեցինք «Արարատ»ի կազմակերպիչները, լուսաբանութիւններ տուինք կացութեան մասին եւ առաջարկեցինք միասնաբար կազմել «Արարատ»ի մասնաճիւղը՝ Շրջանային վարչութեան հո-

վանին տակ: Առաջարկը ընդունելութիւն գտաւ եւ շրջանը կարճ ժամանակ ետք փայլուն յաջողութիւններ արձանագրեց իր գործունէութեան մէջ:

Միութեան երրորդ շրջանի մը կազմակերպման վայրը Վալիս էր: Կիրակի մը, եղբայրներ Ստեփան Պաղպուտարեան եւ Կարօ Հայթայեան կ'երթան Վալիս Ֆերասեան դպրոցի բակը ու շրջանի հայրենակիցներէն 35 ստորագրութիւն կը հաւաքեն, որոնք կը խոստանային թիկունք կանգնել շրջանին մէջ նոր մասնաճիւղի մը ստեղծման պարագային: Գիմումնազիրները կ'ուղարկուին Շրջանային վարչութեան, զոր իր համաձայնութիւնը կը յայտնէ: Մինչ այդ Հոլիվուտի շրջանէն երկու վարիչ սկստական, որոնք մեծ հաճութեամբ կ'արտայայտուէին արդիւնքի մասին ու իրապէս ալ, կարճ ժամանակէն շրջանին մէջ կը կազմուի ՀՄԸՄի մասնաճիւղը:

Քիչ ժամանակ անց Թորընս շրջանի համակիրներէն կը ստանանք նամակ մը, ուր փափաք կը յայտնեն մասնաճիւղ մը ունենալու շրջանէն ներս, որու համար կը սպասէին մեր օժանդակութեան: Առաջարկը իրականացաւ, ու այս ընթացքով ուռճացաւ ՀՄԸՄը, իր մասնաճիւղերու թիւը հասցնելով 25ի, իսկ անդամներուն՝ հազարներու: ՀՄԸՄը իր կազմութեան առաջին տարիէն ունեցաւ իր Նաւասարդեան Ողիմպիական խաղերը աւելի քան

40 տարի առանց ընդհատումի: Վերջերս մենք տօնեցինք նաեւ ՀՄԸՄի 100ամեակը Մայր Հայաստանի հողին վրայ, հոգեկան մեծ հրճուանք պարգեւելով մանաւանդ անոնց, որոնք ապրած են անոր շարքերէն ներս: Այս պահունակականութեամբ կ'երազեմ այն տարիները, որ ապրեցայ ՀՄԸՄի ընտանիքէն ներս: Պատանեկան տարիքիս արդէն մաս կը կազմէի սկստական շարքերուն: Գիտար էր քալուածքի կամ հագուածքի տարբերութիւն մը կուսէի: Քալուածքը եւ բարեւելը շատ կարեւոր կը նկատէին մեր աստիճանաւորները:

1944 եւ 1945 տարիներուն եղած եմ Հալէպի Ողիմպիականի մասնակիցներէն իբրեւ սկստական ու հիացած եմ Հալէպի սկստականներու

նուագախումբով, այնքան գրաւիչ ու ազդեցիկ, որ այդ երկրի լաւագոյնը կը համարուէր: Կը յիշեմ նաեւ երբ Նոր Գիւղի շրջանը գտնուող «Աճուրլուխ» կոչուող հողաչերտը մէկ շաբթուայ մէջ մաքրելով, ոտնագնդակի դաշտի վերածեցին, որուն բացումը կատարեց Զարեհ Եպիսկոպոս, յետագային՝ կաթողիկոս Կիլիկեան Աթոռի: Յիշատակութեան արժանի են նաեւ Պէյրութի ոտնագնդակի, պասքեթպոլի եւ հեծանիւի տղաքը, որոնք կը ճակատէին Եւրոպայի եւ Միջին Արեւելեան երկիրներու լաւագոյններուն հետ, երբեմն փայլուն յաղթանակներով, ՀՄԸՄի եւ հայուն փառքը պանծացնելով:


Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր ՀՄԸՄ դուն պարծանքն ես ողջ հայութեան:

**Սկսուող  
Միշտ՝ Պատրաստ  
  
Գայլիկը  
Միշտ՝ Լաւագոյն**

**Հրայր  
Եւ Աստղիկ  
Թէճիրեան**

Կը մաղթենք, որ  
այս Նոր Տարուան  
ընթացքին  
մարդկութեան  
հորիզոնին վրայ  
խաղաղութեան  
ծիածանը երեւելի  
դառնայ

**Robert's Catering Service**  
*By Roubina Begoumian*



**Շնորհաւոր Նոր Տարի  
Եւ Ս. Ծնունդ  
Կը Մաղթենք Ձեզ  
Երջանիկ Տօն Եւ Ուրախ Տարի**

[www.robertscateringservice.com](http://www.robertscateringservice.com)  
818-848-8337

# Ինչ Որ Բան, Ինչ Որ Տեղ Սխալ է

ԴՈՎՏ. ՄԱՐԻ ՌՈԶ ԱԲՈՒՍԷՖԵԱՆ

«Ե՛ս Ոչ Մէկի Անունը Չեմ Տալիս, Բայց Ինչ Որ Բան, Ինչ Որ Տեղ Սխալ է»  
ՎԻԼԵԱՄ ՍԱՐՈՅԵԱՆ



Սարոյեանի պէս մի մեծութիւն քաջ գիտեանալով այդ սխալների պատասխանատուներին, նախընտրեց առանց անուններ մատնանշելու դատապարտել նրանց արարքները: Այդ արարքներից ամենաչարագոյնը համարեց պատերազմն ու սպանդը, աղքատութիւնն ու տեղահանութիւնը, սոցիալութիւնը, անտարբերութիւնն ու բռնութիւնը, ժողովուրդների ու մարդկային ստրկացումը, անարդարութիւնն ու իրաւունքների ոտնահարումը, որն արարում էին մեծ պետութիւնները առանց հաշուետու լինելու, առանց դատապարտուելու: Այդ ամէնը նա դատապարտեց միախառնելով իր՝ սարոյեանական, իւրայատուկ բարութեան պատգամով:

Յաւօք, այդ պատգամները ոչ միայն տեղ չհասան, այլ կարծես աւելի խորացրին թուարկած սխալները, որի բարոյացում այսօր ողջ աշխարհն է փոթորկուել, իր դիմագիծը կորցրել: Ինչպէս տեսնում էք անուն տալու հարկ չկայ այլեւս, քանզի սխալները դատապարտողներ չկան: Ամէն ինչ բացայայտ է արւում եւ ցաւալի իրականութեամբ սխալն ամէնուր է, իսկ անուն տուողին կամ պատժում կամ վերացում են: Ահա այս մթնոլորտում ենք հրաժեշտ տալիս արդէն ապրուած տարւուն, նոյն սխալներով եւ լուրթեամբ, թեւակոխելով մի նոր թուական: Թէ ինչպիսի՞ գնահատանք կը ստանայ Հին տարին մարդկութեան պատմագիտութեան մէջ, պարզ է բոլորիս, քանզի գիտակ ենք նախորդ տարիների արդիւնքին: Յաւալին այն է, որ ոչ միայն անցեալի իրակաւութիւնն է աղաւաղուած, այլ նաեւ՝ ներկայի:

Արեւմուտքի տիրակալների շահերի համար աշխարհի տարբեր երկրներում գործադրուող քայքայիչ պատերազմները մարդկութեանը ընտելացրել են սպանդին ու տեղահանութիւններին, սովին ու համաճարակներին: Նայեցէք ձեր շուրջ եւ կը համոզուէք թէ ինչ թշուառութեան մէջ մխրճուած է աշխարհը դիմաւորում 21րդ դարի գալիք 2019 թուականը:

Շուրջ 7 տարի է արդէն եմէնը պատերազմի մէջ է: Այդ աղքատիկ, սովամահութեամբ, համաճարակով խեղդուող ժողովուրդը թէեւ չի յանձնուած, բայց կանգնած է իսպառ ոչնչացման առջեւ եւ ոչ մէկը չի միջամտում կասեցնելու այդ կործանումը: Եւ դա արւում է մարդկութեանը յայտնի 20րդ դարի առաջին եւ նմանը չունեցող հայկական ցեղասպանութիւնից ընդամենը մէկ դար անց, առաջագէտ հռչակուած 21րդ դարում, երբ մենք դեռ սպասում ենք, որ մեր Յեղասպանութիւնը դատապարտեն:

Մէկ այլ փայլուն օրինակ է Սուրիան, որից միայն փլատակ է մնացել: Աֆղանստանը, Պաղես-

տինը, Իրաքը, Աֆրիկեան երկրները, ո՞ր մէկը թուել:

Տեղահան եղած ժողովուրդները՝ Սուրիա, Մէյնմար, Ռոհինգա, Վենեզուելա, Հոնդուրաս, Լիբիա եւ այլուր, չգիտեն ուր փախչեն սպանդից ու սովամահութիւնից: Գարձել են մերժուած, ատելի տարրեր իրենց երկրները ոչնչացնող, իրենց այդ վիճակին մատնած ժողովուրդների համար: Ստիպուած բաց երկնքի տակ անապատները, ճանապարհներն ու անտառներն են դարձրել իրենց բզկտուած ընտանիքների «օթեւան» կոչեցեալը, զուրկ մարդկային բնական ամենահասարակ կարիքներից: Եւ սա 21րդ դարասկզբին է, ուր մարդկութիւնը ցնծութեամբ է դիմաւորում էլեկտրոնային սարքերի ամէնօրեայ իւրաքանչիւր յայտնագործութիւն, ուր գիտութիւնը նորանոր նուաճումներ է արձանագրում:

Մնում է եզրակացնել, որ գիտութիւնը ամուսն է մարդկութեան թշուառութեան հաշուին:

Ճիշտ է, որ դեռ ապրուելիք օրեր ունենք առջեւում մինչեւ տարեվերջ եւ դեռ կանուխ է տարին ամփոփելու, սակայն պարտադրուող արագընթաց միջավայրը, ինչպէս ամէն ինչում, ստիպում է ժամանակից շուտ գործել, ծրագրել, գրել, այդպէս էլ տարին աւարտելու պարագային է: Եւ քանի որ կանխատեսումներով ենք ապրում, դրանք իրականութեան վերածում, ուստի կարող եմ հրաժեշտ տալ աշխարհի եւ նաեւ մեզ համար բաւական փոթորկալիք դարձած 2018 թուականին:

Եթէ այս համեմատութեամբ ընդունենք մեր երկրի անցած տարին, պիտի արժեւորենք այն ամէնը որով փակուած ենք Հին տարուայ էջը:

Վերջապէս աւարտուած են նաեւ մեր երկրի խորհրդարանական ընտրութիւնները, բնականաբար ինչպէս միշտ, մեծամասնութիւնը շահած է ժողովրդին առաջնորդող, ժողովրդին իր կամքը թելադրող կուսակցութիւնը եւ յուսանք, որ ցանկալի յաջողութեամբ աւարտուած այս թո՛հ ու բո՛հ կը մաքրի երկրում ստեղծուած թունաւոր ատելութեան, թմբուկների, վայրագ գոչումներ-

րի, միմեանց յօշոտելու, Հիստերիայի ալիքը:

Եւ ուրեմն նոր վարչակարգով, միադէմ խորհրդարանով, ժողովրդին ընդունելի վարչապետով, սկսելու ենք մի նոր թուական, նոր սպասելիքներով, նոր յոյսերով, որ գոնէ այս անգամ Հին սխալները վերլուծելով, այդ սխալներից դաս առնելով, ամենատարբեր կարծիքներում իսկ իրար հանդուրժելով, աւելի արդար միջոցներով նորը կերտելու հեռանկարով աշխատենք:

Հարցը սակայն արդեօք միայն նորի՞, վարչապետի յաղթանակի մէջ է, թէ բազում Հին սխալների, կիսաւարտ ազգադաւ որոշումների վերջնական ուղղման, ազգային շահերն ու պահանջները օրէնքի հիմք դարձնելու, երկրում իր արմատները ամրակայած ատելութեան, քայքայիչ սովորութիւնների ու մտայնութեան վերացման, օտարամոլ, անընդունելի բարքերի դէմ պայքարի, ժողովրդի մտածողութեան ու հասարակական յարաբերութեան նոր մակարդակի բարձրացման համար տարուող աշխատանքի, հասարակութեան միտքը կրթելու, հասարակական Հնչեղութիւն ունեցող հարցերը անկողմնակալ, առանց ատելութիւն ներարկելով բարձրացնելու եւ դրանց լուծումներին հասնելու աշխատանքի մէջ է:

Անցած տարին, ինչպէս տարբեր մեծ երկրներում, այդպէս էլ յատկապէս մեր երկրում, բացայայտեց այնպիսի յանցագործութիւններ իշխող վերնախաւի ներկայացուցիչների մօտ, որ անհամատեղելի էր սովորական մարդկային մտածողութեանը:

Միաժամանակ բացայայտեց նաեւ բարձրագոյն նոր օրէնսդիր մարմինների Հին մեթոդներով՝ կառավարութեան միջամտութեամբ ու համաձայնութեամբ, անցանկալի մարդկանց դէմ մեղադրանքների պատժելիութեան միջոցներ ձեռնարկելու զաղտնի խօսակցութիւնները, աւելորդ անգամ շեշտելով ոչ միայն Հնի իշխանութիւնը, այլ ամենակարեւորը, ինչպէս ամէնուրեք, մեր երկրում նոյնպէս, իշխանութեան իւրաքանչիւր քայլը այլեւս թաքցնել հնարաւոր չէ: Թէեւ այլ հարց է, թէ իշխանութիւնները որքան կարեւորութիւն են տալիս այդ բացայայտումներին:

Մի կողմից հասարակական փտախտի բացայայտումն ու խստագոյն դատապարտումը, դրա վերացման դէմ պայքարի գործադրումը, միւս կողմից այդ գործադրման իրականացումը Հին միջոցներով, ոչ միայն խախտում է ժողովրդի վստահութիւնը, այլ ստուերում է նաեւ հռչակուած յեղափոխութեան իմաստը: Ինձ չկրկնելու համար, պարզապէս ուզում եմ յիշեցնել, որ մենք երկրորդ նախագահից առաջ եւ յետոյ երկու այլ նախագահներ ենք ու-

նեցել, որոնք նոյնքան պատասխանատու են օրէնքի եւ մեր ժողովրդի առաջ, որքան պատասխանատուութեան ենթարկուող երկրորդ նախագահը:

Յուսանք, այս նոր տարում աւելի լուրջ, իսկապէս անկողմնակալ եւ հնարաւորինս արդար հիմքերի վրայ կը դրուեն մեր օրէնսդիր մարմինների գործունէութիւնը, որից եւ կախուած է մեր ժողովրդի կապն ու վստահութիւնը ոչ միայն գործող իշխանութեան, այլ նաեւ ամենակարեւորը՝ իր երկրի հանդէպ: Մարդիկ կապուած են այն երկրին, ուր օրէնքի ուժն է գործում, ուր մարդկանց իրաւունքները պաշտպանուած են օրէնքով:

Մեր քաղաքական եւ սոցիալական անվերջ անհանգիստ, անբաւարար, իրար դէմ որոգայթ լարող իրավիճակները մինչեւ օրս ժողովրդին մեկուսացրել են իր իսկ անցած ճանապարհի, իր դժուարութեամբ կերտած պատմութեան իրական իմացութիւնից, որի արդիւնքում ժողովուրդը հեւտօրէն յարմարուած է նոր իրավիճակներին, մոռացութեան մատնում իր կրած տառապանքը, դառնում է քաղաքական անգիտութեան գոհ, որին կարելի է ամէն առիթով իրար դէմ լարել, կարելի է ցանկացած քարոզչութեան հետեւող դարձնելով ամբոյսի վերածել:

Անցնող տարում լրացաւ մեր երկրի առաջին անկախութեան 100ամեակը, անկախութիւն, որը ստեղծուեց փլատակների, համատարած չբաւորութեան, պատերազմների, կորուստների մէջ, ժողովրդի անասանան նուիրումի ու զոհողութեան շնորհիւ: Այդ անձեւ քառսը երկրի վերածեցին եւ դեկավարեցին երկրից դուրս լաւագոյն համալսարաններում բարձրագոյն կրթութիւն ստացած ու յղկուած, պատկառելի նուիրեալների մի խումբ, որոնց անձնագոհ, անշահախնդիր աշխատանքի շնորհիւ մեր բզկտուած երկիրը ճանհաղուեց ու հաստատեց իր գոյութիւնը եւ դեռ շարունակում է գոյատեւել:

Սակայն Հայաստան ներխուժած մերկ ու սոված բուլքերիկների ոհմակը զարմանալի արագութեամբ քերեց, ոչնչացրեց, ստայոյ քարոզներով այնպէս խեղաթիւրեց մեր երկրի այդ էջը, դրա հետ նաեւ ժողովրդի դիմագիծը, այնպիսի ատելութիւն սրսկեց այդ փոքրիկ հողակտորը երկրի վերածողների հանդէպ, որ մինչ այսօր իր երկրի վրայ ապրող ժողովուրդը ոչ միայն անտեղեկ է իրեն երկիր պարգեւածների անուններից, նրանց կենսագրութիւնից, նրանց ներդրածից ու նրանց կտակածից, այլեւ շարունակուող ատելութեամբ է լեցուած այդ հրաշալկերտ հարստութիւնը՝ հայրենի հող կոչուածը իրենց պարգևողների դէմ, յանձին ՀՅԴին: Դրա վառ ապացոյցներից էր նաեւ մեր երկրորդ անկախութեան կերտումը, որն անուանեցին Յրդը, դրանով չէզոքացնելով, կրկնակի անգամ ջնջելով առաջինը ստեղծողների ներդրումը: Պիտի մտածել, որ սովետների իշխանութեան օրօք անկախ ենք եղել ու չենք իմացել եւ կրկնակի անգամ ցանկացել ենք անկախանալ:

Իսկապէս, երբ ժողովուրդը ան-

# Ինչ Որ Բան, Ինչ Որ Տեղ Սխալ Է

գիտակ է իր պատմությունից, նրան կարելի է հեշտորէն յիմարացնել: Իսկ ամենացաւալին այն է, որ նոյնիսկ Սփիւռքի մամուլը ընդունեց այդ սոցիալական քարաքանդակը, մեր երկրորդ անկախութիւնը համարելով երրորդը, որը դեռ չարունակուած է շրջանառել: Ջարմանալի չի լինի եթէ այսօրուայ իշխանութիւնն էլ, որն իրեն անուանում է յեղափոխական, այն համարակալն որպէս 4րդ անկախութիւն:

Անցնող 100ամեակը մեզ պարտադրում է գործուած բազում սխալների շարքում այս գալիք տարում ուղղել նաեւ ամենակարեւորը, ժողովրդին երկիր ձեւաւորած իշխանութեան պատմութեան ուսումնասիրումն ու դրա ճիշդ ընկալումը, հետեւաբար նաեւ այդ կուսակցութեան՝ ՀՅԴի պատմութիւնը, որն առաջնորդեց վհատուած հայութեան իր անկախութիւնը ստեղծելու: Որեւէ ժողովուրդ պիտի երազէր ունենալ ՀՅԴի հաւասար մի կուսակցութիւն, որն առանց պետականութեան, առանց օտար երկրների օժանդակութեան, աւելին՝ նրանց հալածանքների տակ, 128 դժնդակ տարիներ համատարած չկամութեան մէջ, ոչ միայն մնաց իր ժողովրդի կողքին, այլ առաջնորդում է նրան մինչեւ օրս: Յաւալի եւ բոլորին յայտնի իրականութիւն է այսօր, որ իր երկրում ԼՏՊի կողմից ստեղծուած ատելութիւնը այդ կուսակցութեան հանդէպ,

որը յատուկ միտումով արուեց, որ երկրից վերացուի ազգային ջիղը, որ երկրի առ ու ծախին խանգարիչ ուժ չլինի, շարունակուած է առ այսօր, տիրապետող դառնալով յատկապէս չորրորդ իշխանութեան համատեքստում: Ինչպէս էլ որակաւորենք, դատապարտենք ՀՅԴ ղեկավարների, անհեռանկար գործունէութիւնը երկրում՝ սկզբունքային գիջումների դիմելը, երեք իրարայնորդ իշխանութիւններին գլուխ խոնարհելը, ինչպէս բոլոր այլ կազմակերպութիւնները, միեւնոյն է, այսօր ցաւալի փաստ է, որչնչով արդարացուող, խստագոյնս մեղադրուող, որ առաջին անգամ իր երկրում, իր ժողովրդի կողմից մերժուեց իր դէմ տարուող ատելութեան եւ տիրող բացասական քարոզարշաւի շնորհիւ, իր տեղը գիջելով երէկուայ պատահական ծիլ տուած կազմակերպութիւններին (մերժում եմ նրանց անուանել կուսակցութիւն, քանզի կուսակցութիւն կոչուելու համար տարիների երկար գործունէութեան ճանապարհ պէտք է անցնել, որը չունեն այսօրուայ, երկրի ճակատագիրը որոշող խորհրդարանի ինքնակոչ խմբակցութիւնները):

Յուսանք, որ ծանրագոյն հարուածներից միշտ էլ իր ողջ պատկառանքով ամուր կանգնած համասփիւռ հայութեան առաջնորդող ՀՅԴ, առաջին հերթին ընդունելով, ապա վերանայելով եւ ուղ-

ղելով թոյլ տուած սխալները, նոր աւելնով կը շարունակի իր գործունէութիւնը, հարազատ մնալով 128ամեայ իր փորձուած սկզբունքներին, ի փառս հայութեան ամբողջական պահպանման ու յարատեւման:

Սակայն այս պահին մեր ազգի հրատապ եւ հիմնական ծրագիրը Արցախի անձեռնմխելիութեան պահպանումն ու վերջնական լուծում տալը, այն կրկին Հայաստանի կազմում ընդգրկելն է: Այս հարցում մեր ժողովուրդը կարիք ունի քաղաքական լուրջ կրթութեան, որը երբեք չունեցաւ նոյնիսկ երկրորդ անկախութիւնից յետոյ առ այսօր, որի արդիւնքում Արցախը կանգնեցրին վտանգաւոր գիջումների առջեւ:


Ժողովուրդներին միայն սոցիալական հարցերով զբաղեցնելը, նրանց տրամադրելը իրենց հարստահարողների դէմ, քաղական հարցերը գաղտնօրէն լուծելու հին միջոց է, որին պէտք է վերջ տրուի:

Մեր նոր վարչապետը իր «յեղափոխութեան» հռչակագրում երբեք վերջնականօրէն չանդրադարձաւ Արցախի անձեռնմխելիութեան հարցին, միայն չեղտեց արցախցիների որոշման կարեւորութիւնը բանակցութիւններում, քաջ գիտենալով, որ պետութիւնները իրենց շահերը չեն հիմնում ժողովրդների ցանկութիւնների վրայ: Իսկ ամենահիմնականը՝ երբեք չդատապարտեց Արցախը

բանակցութիւնների մասնակցութիւնը հարց դարձրած այն անձանց, ովքեր յաղթանակած երկիրը յանձնեցին գիշատիչ բանակցողների հայեցողութեանը:

Մեր նման փոքրաթիւ եւ անկայուն վիճակում գտնուող, յատկապէս դարերով օտարի հետ յոյս կապող, օտարամոլ մի ժողովուրդ, պարտաւոր է քաղաքական լուրջ պատրաստուածութիւն ունենալու իր դէմ լարուող թակարդների հօտառութիւնը զգալու, մեծ պետութիւնների «բարեկամական» առաջարկների գաղտնագիրը հասկանալու, ամենակարեւորը՝ գործած սխալներից դաս առնելու, որ 100 տարի յետոյ կրկին, աշխարհաքաղաքական շահերի նոր գոհ դառնալով, տարածքների եւ իրաւունքների կորուստներ չունենանք: Յատկապէս հիմա, երբ մեր վարչապետի ծրագրում կայ նաեւ առանց նախապայմանի թուրքիոյ հետ սահմանային մերձեցումը, որին անհամբերութեամբ, առանց կործանիչ հետեւանքները տեսնելու, սպասում է մեր ժողովուրդը եւ որը աւելի հրատապ է դարձնում նշած քաղաքական պատրաստուածութիւնը:

Մենք տասնեակ, կամ հարիւրաւոր միլիոններով ժողովուրդ չենք, որ անտարբեր մօտենանք մեր այլասերուող մի քանի հազարների հանդէպ: Մեր իւրաքանչիւր մասնիկը հաշուի մէջ է, —>



ՀԱՌՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՀԱՌՐՉԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# Ararat Foundation



Color Dots Printing & Graphics

Wishes you a  
Happy New Year  
& Merry Christmas

Raffi & Sona Djiguerian

- 1-4 COLOR PRINTING
- SAME DAY PRINTING
- PROMOTIONAL ITEMS
- LAYOUT & DESIGN
- DIRECT MAILING
- PHOTOGRAPHY

# Ինչ Որ Բան, Ինչ Որ Տեղ Սխալ Է

պէտք է զգոյշ լինենք ոչ միայն պահպանելու այդ իւրաքանչիւր մասնիկը, այլ հիմնաւոր կրթութիւն տալով իրենք դիմադրեն, մերժեն ի վնաս սեփական ապագայի հանդէպ տարուող իւրաքանչիւր քարոզչութիւն, մինչեւ իսկ սեփական իշխանութիւնից կամ աշխարհահռչակ հեղինակութիւններից եկող: Այս հարցում բաւական մեծ աշխատանք ունեն տանելու մեր կրթական հաստատութիւններն ու հասարակական կազմակերպութիւնները:

Այլասերուելու քարոզչութեամբ զբաղուելու փոխարէն պարտաւոր ենք մեր երկրի բնապահպանման արժէքները քարոզել, մեր սակաւ գետերն ու լճերը, անտառները, գործարանների, հանքերի վնասակար թափոններից պաշտպանել, մեքենաների հեղեղ դարձած երեւանի թունաւորուած օդի մաքրման միջոցների մասին մտածել ու բարելւման օրէնքներ որդեգրել: Մեր անչափ փոքրիկ երկրի արժէքաւոր սակաւ հանքերի շահագործումը օտարների ճանկերից փրկել ու կրճատել: Միշտ յիշենք, որ մեզնով չի աւարտուում երկիրը, դեռ գալիք սերունդներ ունենք, որոնք նոյնպէս պարտաւոր են օգտուել հայրենի հողի հարստութիւններից:

Անցնող տարում մեր ժողովուրդը հպարտօրէն հիւրընկալեց Ֆրանկոֆոնիայի միջազգային գիտաժողովի մասնակիցներին: Հետաքրքիր մի զուգահիշակութեամբ մենք



յայտնուեցինք մի իրավիճակում, ուր մեր երկրում Ֆրանսիայի նախագահը քարոզում էր Ֆրանսերէնի անհրաժեշտութիւնն ու տարածումը, այն դէպքում, երբ մօտ 200 երկրներ են խօսում այդ լեզուով: Մինչդեռ ի հակադրութիւն այդքան տարածուած ֆրանսերէնի, մենք մեր երկրում նոյն այդ պահին, արհամարեցինք մեր լեզուն: Դրա փայլուն օրինակն էր մեր վարչապետի ֆրանսերէնով

ելոյթը, որը հպարտութիւն ու հիացում պարգեւեց տեղի հայութեան, երբ մեր հազարամեայ պատմութիւնը պարտադրում է մեզ, որպէս դեռ գոյատեւող եւ ստեղծարար ժողովուրդ, հպարտօրէն հնչեցնել մեր լեզուն: Սփիւռքի ողջ տարածքում մենք կոտորում ենք մեր երեխաներին, որ հայերէն խօսեն օտար լեզուների խառնարանում, երբ նրանք տիրապետում են մի քանի լեզուների, իսկ մեր երկրում զլանում ենք մեր սեփական լեզուն հնչեցնելու եւ դեռ պարծենում, որ օտարի լեզուն ենք տիրապետում: Մենք երկրներ չունենք մեր իշխանութեան տակ նրանց մեր լեզուն պարտադրելու, իսկ իր երկրից դուրս ցրուած հայութեանը պարտադրում է տեղական լեզուն: Ուրեմն մեր լեզուի միակ պահպանման կենտրոնը մեր երկիրն է եւ մենք պարտաւոր ենք վարչապետից սկսած, իւրաքանչիւր անհատ, սովորելու եւ օգտագործելու իր լեզուն մինչեւ իսկ միջազգային ամբիոններից: Իսկ այսօր մենք դեռ ականատեսն ու վկան ենք մեր լեզուի աղաւաղմանը մեր իշխանութեան բարձրագոյն օրգաններում: Օտար լեզուներ տիրապետելուց եւ դրանցով հպարտանալուց առաջ, ազգային պարտաւորութիւնն է, յղկուած եւ հարուստ բառապաշարով հայերէնի իմացութիւնը: Բաւական է այլեւս մեր ականջները սղոցեն—կոռուպցիա, դիսբալանս, կոնկրետ, դէ ֆակտօ, կոնսօլիդացուած, աղեկուատ եւ այլ բառերով (չարքն այնքան երկար է, որ մէկ գրութեան մէջ իսկ չի տեղաւորուելու), որն օրէօր մոլախոտի արագութեամբ տարածուում ու ոչնչացնում է մեր լեզուն:

Մենք նոյնքան մեծ աշխատանք ունենք տանելու մեր երկրում տարածուած ընտանեկան եւ սեռային բռնութիւնները վերացնելու հարցում, որը նոյնպէս ժողովրդի, հասարակութեան կրթութեան մակարդակի բարձրացումով, օրէնքի առջեւ պատասխանատուութեան հետեւողական աշխատանքով է լինելու: Նաեւ, եւ առաջին հերթին՝ պէտք է լրջօրէն քննարկել եւ հասարակութեան բաց լսարանին ներկա-

յացնել խնդիրը: Մինչ աշխարհում տարածուած եւ արդէն անընդունելի չափերի հասած այս ախտը, որը դարձաւ անցնող տարուայ Նոբելեան Մրցանակի նիւթ, որով պարգեւատրուեցին սեռային բռնութեան զոհ՝ Նադիա Մուրադը եւ այդ բռնութեան հարիւրաւոր զոհերին բուժող Դէնիս Մուկուիշը, մեր երկրում ամէն կերպ դեռ շարունակում են կոծկել եւ պատժից զուրկ թողնել:

Անշուշտ այս հարցին անդրադառնալու եմ յատուկ յօդուածով, սակայն այսօր տարեվերջի ամփոփման մէջ այդ էլ ընդգրկեցի որպէս գալիք տարուայ մեր ժողովրդի կրթութեան հրատապ անհրաժեշտութիւն:

Վստահ եմ անցնող տարում ինձ հետ նաեւ շատերը զգացիք, թէ մենք որքան ազգային պաշտօնական արարողութիւնների աւանդութեան պակաս եւ յղկուելու կարիք ունենք, յատկապէս մեր իշխանութեան ներկայացուցիչները:

Մենք ազգովին զարկ ենք տուել կեր ու խումին, եկեղեցական արարողութիւններին եւ աչքաթող ենք արել ազգային պաշտօնական արարողութիւնները, իսկ ժամանակի հրամայականը թելադրում է մեզ թէեւ ուշացումով, սկսել մշակել նաեւ դա, որպէս հին եւ բարձրագոյն մշակոյթ ստեղծած ազգ:

Տարեվերջի իմ այս ամփոփումի մէջ ուզում եմ յիշեցնել, որ եկող տարին առաւել դժուար է լինելու մեր երկրի համար, քանզի նոր վարչակարգով յայտնուել ենք մեծ տէրութիւնների նոր շահերի խաչմէրուկում, ուր արդէն սկիզբ առած մեզ պարտադրող նոր պահանջները ի վնաս մեր յետագայ գոյութեանն են գործելու:

Ուրեմն ազգովին կենտրոնանք մեր դէմ ծառայած ներքին եւ արտաքին խնդիրները միասնական համատեղութեամբ, փոխադարձ յարգանքով ու ըմբռնումով լուծելու, հին սխալներն ընդունելով եւ ուղղելով, մեր երկիրը դարձնենք համայն հայութեան իրաւունքի պաշտպան, մեր ապագայ սերունդների մշտական բնօրրան:

15 Դեկտ. 2018թ.

ԸՆՈՐՅԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## Վասպուրականի Հայրենակցական Միութիւն

**Կը Մաղթենք, Որ  
Քալիֆորնիահայութիւնը  
Նոր Տարին Դիմաւորէ  
Միասնականութեամբ,  
Համախոհութեամբ Եւ  
Հանդուրժողութեամբ**

ԸՆՈՐՅԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**ԻՄ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ՝  
Ի ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՐՑԱԿ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ.**

Սրտագին Շնորհաւորանքներս՝  
Նոր Տարուայ եւ Սբ. Ծնունդի առթիւ:

Հայրենակիցներ, որպէս **մասնակիցներ** եւ **վկաներ**

**Նոր Հայասանի** իրականացման, բոլորս կարիք ունինք մենք զմեզ զօրակցելու եւ մասսայական մասնակցութեան միջոցով իրականացնելու

**Նոր Սփիւռքի** ստեղծումը բոլոր կրօնական յարանուանութիւններու, բոլոր կուսակցութիւններու, բարեգործական, հայրենասիրական եւ հայրենակցական միութիւններու ու յատկապէս **լուռ մեծամասնութեան համագործակցութեամբ:**

Մենք կարիք ունինք ստեղծելու **համասփիւռքեան ազգային գերագոյն կառոյց մեր հաւաքական նշանակներու ամբողջական իրականացման համար, ի ծառայութիւն մեր գոյգ հանրապետութիւններ՝ Հայասանի եւ Արցախի ու Սփիւռքի:**

**Խօսքը գործի վերածելու ժամանակն է:**

Հայրենիքը մեզի կը սպասէ:

Այս պիտի ըլլայ **մեր մեծագոյն ներդրումը հայրենիքին, մեր ազգային բարձր նշանակներուն եւ մեր Դասին օգտին:**

Ինչպէս մեր ժողովուրդի մեծ բանաստեղծ  
Եղիշէ Չարենց ըսած է  
իր հռչակաւոր «Պատգամ»ին մէջ.

Ով Հայ ժողովուրդ,  
քո միակ փրկութիւնը  
քո հաւաքական ուժի մէջ է:



**VAHE KARAPETIAN**  
PRESIDENT, PAN ARMENIAN UNITY  
**PanArmenianUnity.org**  
LOS ANGELES, CALIFORNIA, USA

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ



**«Ասպարէզ»ի 110րդ ամեակի  
 փարուան մեծագոյն բարերարներուն՝  
 Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններուն  
 եւ իրենց անմիջական մեծ ընտանիքի  
 անդամներուն կը մատըքենք  
 առողջութիւն ու յաջողութիւն:  
 Համայնքին եւ ազգին չեր բաշխած  
 բարիքները թող բազմապատկուած  
 վերադառնան շեզի՝ բարերարութիւններու  
 անվերջ շարանը ա՛լ աւելի երկարելու,  
 անոնց փարողութիւնը ա՛լ աւելի  
 ընդլայնելու չեր ազնիւ ցանկութիւնը  
 իրականացնելու համար:**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ





# Ասպարեզ



ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ



# Congratulations Asbarez on Your



[SuperKingMarkets.com](http://SuperKingMarkets.com)



ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ

ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ

ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՐՅԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԷՒ ՄՈՒԲԵ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ



## Եղբ. Վահան Ծամլեանի Պատգամը՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան Ցրդ Մարգախաղերուն Առիթով

Կ'ողջունեմ ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերը:

Անգամ մը եւս մշտադաւար հայութիւնը ներկայացնող մեր ազգային կազմակերպութիւնը՝ ՀՄԸՄը, որ կը տողանցէ հպարտութիւն ներշնչող շարքերով:

ՀՄԸՄը ջանակիրն է հայ ժողովուրդի հոգեկան ու ֆիզիքական արժանիքներուն:

ՀՄԸՄը առաջնորդ է, դաստիարակ է:

Հայ ժողովուրդի նկարագիրն ու արժանիքները բարձր պահող ազգապահպանման ամուր բերդ է: Օտարութեան դէմ ապահով երդիք ունեցող ակումբ է:

Ծառայել ՀՄԸՄին՝ կը նշանակէ ծառայել հայ ժողովուրդին: Որովհետեւ, մեր պատանիներն ու երիտասարդներն են մեր ապագան, մեր ապահովութիւնը, մեր պատիւը:

Ինչ աշխատանք որ կը կատարուի ՀՄԸՄԻ համար, ինչ որ կը նուիրուի ՀՄԸՄին, միայն ու միայն հայ ժողովուրդին համար է:

Ազգերու յոյսն ու ապագան երիտասարդութիւնն է: Առողջ երիտասարդութիւնը:

ՀՄԸՄը հայ երիտասարդութեան միջնաբերդն է:

Հզօրացնենք, առաւել հզօրացնենք ՀՄԸՄը:



## Եղբ. Անդրանիկ Անտոնեանի Պատգամը՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 9րդ Մարգախաղերուն

Այսօր ՀՄԸՄԻ Նաւասարդեան 9րդ մարգահանդէսի պատեհ առիթը զիս կը տանի ետ, իմ անցեալ յուշերուս գիրկը, երբ ես տակաւին մանուկ՝ անհաստատ քայլերով կը մտնէի ՀՄԸՄԻ դռնէն ներս, իբրեւ առաջին դասարան-

ցի: Այսպէս է, որ տարիներու ընթացքին այդ շարքերէն ներս աստիճանական յառաջդիմութեամբ, կեանքս ճոխացաւ բարոյական այդպիսի հարստութեամբ, որուն համար պարտական կը մնամ այս անզուգական կազմակերպու-

թեան: Եւ առանց ստորագնահատելու նոյն բարի նպատակին հետամուտ այլ կազմակերպութեանց վաստակը, երբ աչքիս առաջ կ'ունենամ ՀՄԸՄԻ մօտաւորապէս մէկ դարաշրջանի բեղուն գործունէութեան պատկառելի գումարը, հպարտ կը զգամ անոր շարքերուն պատկանած ըլլալու բախտաւորութեամբ: Արդարեւ, պահ մը փորձեցէ՛ք վերանայիլ այն երկար ճանապարհին, որ ՀՄԸՄինը եղաւ եւ ջանանք գնահատել ձեռք բերուած այն հսկայ ժառանգութիւնը, որ յաջորդական սերունդներու վաստակին գումարն է: Վաստակ մը, որուն տիրանալու համար հարկ եղաւ շարժման մէջ դնել իրարայաջորդ սերունդներու ոյժն ու եռանդը եւ նիւթական ու բարոյական զոհաբերութիւնը:

Եւ այսօր, ի տես բազմաթիւ մասնաճիւղերով հայկական կեանքը աշխուժացնող բազմազար նուիրեալ ՀՄԸՄականներու եւ փառաշուք այս հանդիսութեան, սիրոյ եւ երախտագիտութեան զգացումներով կը խոնարհինք յիշատակին առջեւ այն մեծերուն, որոնք ազնիւ մտածումը ունեցան հիմնաքարը դնելու այս հոյակապ կազմակերպութեան:

Ու հիմա, կանգնած՝ մէկդարեայ հեռաւորութեան վրայ, երբ ետ կը նայինք եւ հայօրէն կը հրճուինք մեր ՀՄԸՄականի հանգամանքով, կը զգանք այն ծանր պարտաւոր-

ութիւնը, զոր ունինք այս կազմակերպութեան հանդէպ: Որովհետեւ, բաւական չէ հպարտ զգալ ՀՄԸՄԻ անցեալի փառքի տոկոսներով գումարուած պատուոյ շքանշաններով, այլ պայման է, որ շարքերը խտանան նոր զոհաբերութեան պատրաստակամ ոյժերով, առաւել վճռական շարունակելու համար դժուարութեամբ սկսուած այն ճամբան, որ կը ձգտի դէպի մեր տանջուած ժողովուրդի դարաւոր երազներու իրականացումը:

Ահա այս անխառն ակնկալութեամբ, ես՝ ընտանեօք, պատուրւած կը զգամ, մէկ կողմէն, իմ ՀՄԸՄականի հանգամանքին համար եւ միւս կողմէն, այսօրուան փառահեղ հանդիսութիւնը հովանաւորող ըլլալու ուրախութեամբ:

Եւ Օգտագործելով այս ուրախ առիթը, սրտի ջերմութեամբ կը շնորհակարտեմ ՀՄԸՄԻ կեդրոնական եւ Ծրջանային ժրջան վարչութիւնները, ինչպէս նաեւ կազմակերպութեան շարքերը խտացնող կրտսեր ու երէց անդամ-անդամուհիները, դանոնք յետագային աւելի մեծ նուաճումներու մէջ տեսնելու յոյսով:

Այս առիթով ջնոնանք մեր սրտագին մաղթանքը Միջին Արեւելեան երկիրներուն, որպէսզի անոնք վերստանան իրենց սկզբնական անդորրութիւնը եւ մեր տառապող հայութիւնն ու վերստեղծէ իր նախկին բարգաւաճ կեանքը:



## Եղբ. Ճորն Ատամեանի Խօսքը՝ 1985ի ՀՄԸՄԻ Նաւասարդեան 10րդ Մարգախաղերուն

Իր հիմնադրութենէն ի վեր, հարիւր հազարաւոր հայ պատանիներ անցած են ՀՄԸՄԻ շարքերէն եւ մտած հայ ժողովուրդին ծառայելու գործին մէջ: Այդ ծառայութեան, ինքնակերտումի եւ ազգային հպարտութեան զգացումը ստացած են մարմնակրթական մեծ կազմակերպութեան դպրոցին մէջ: Յունահռոմէական իտէալը՝ «Առողջ միտք, առողջ մարմինի մէջ» եւ ՀՄԸՄԻ արիւններուն նշանաբանը՝ «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» տասնամեակներ շարունակ, գիտակից եւ նկարագիրով վսեմ սերունդներ հասցուցած են:

Ես ալ, փոքր տարիքէս, մեծցած եւ սնած եմ ՀՄԸՄԻ ընտանիքին մէջ: Չարքաչութիւն, եղբայրասիրութիւն, զոհողութիւն եւ ազգասիրական ոգի, բոլորը սորված եւ իւրացուցած եմ հոն: Երախտապարտ եմ մեր կազմակերպութեան եւ մեծ ուսուցիչներու ու

խմբապետներուս:

Այսօր, Սփիւռքի ամբողջ տարածքին, մասնաւանդ Միջին Արեւելք եւ Հիւսիսային Ամերիկա, նախախնամական դեր կը կատարէ ՀՄԸՄը՝ իր շուրջ հաւաքելով բազմազար երկսեռ երիտասարդութիւն, դաստիարակելով զանոնք իր աւանդական ծոցին մէջ, միշտ լծուած հայապահպանման, հայ մարմինի, հայ միտքի եւ հայ ոգիի ազնիւ առաքելութեան:

Իբրեւ պատգամ, կոչ պիտի ընէի մեր ազգանուէր ժողովուրդին, որ ՀՄԸՄը օժտէր սեփական եւ արդիական մարգավայրերով, որպէսզի մեր պատանիներն ու երիտասարդները իրենց ուղիքին տակ զգային սեփական հողը եւ նոր շարքերով, վերանորոգուած հոգիներով, շարունակէին իրենց արժանաւոր նախորդներուն դեռ չիրագործուած երազը իրականացնել:

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ



## Եղբ. Սարգիս Արեւեանի Պատգամը՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 11րդ Մարգախաղերուն

Թարմ է յիշողութիւնս, 11 տարիներ առաջ East LA College-ի դաշտին վրայ, երբ կատարուեցան առաջին Նաւասարդեան մարգախաղերը քանի մը հարիւր հանդիսականներու առջեւ: Եղբ. Վարդգէս Տէր Կարապետեան, դաշտին վրայ հանդիսականներու հետ կեցած՝ կ'ուզէր մեզի ըսել, թէ այն, ինչին ականատես կ'ըլլանք երազ չէր, այլ իրականութիւն, եւ ինք՝ ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան ատենապետը, հեռուոր Պէյրութէն եկած էր քաջալերելու:

Այսօր, Նաւասարդեան մարգախաղերը կը մնան ներկայ իրականութիւններ, եւ մեր յիշատակներուն մէջ անցաւ շատ սիրելի եղբայր ատենապետը, որուն կորովը, համոզումները, աննկուն կամքը եւ երազները յաւիտեան մեզ հետ պիտի մնան, եւ այսօր դուք բոլորին փաստը կը տեսնէք ձեր առջեւ:

ՀՄԸՄը 11 տարիներու ընթացքին շատ մեծցաւ, զօրացաւ եւ կազմակերպուեցաւ, ու այդ բոլորը՝ շորհիւ ՀՄԸՄԻ հանդէպ Հայ ժողովուրդին տածած հաւատքին, եւ ինծի նման հարիւրաւոր ՀՄԸՄականներու աշխատանքին: Այդ բոլոր ՀՄԸՄականները ՀՄԸՄին տուին ինչ որ ունէին, եւ զայն բարձրացուցին հոն, ուր շատեր խորհեցան թէ անկարելի էր հասնիլ:

Իսկ Հիմա եկած է ժամանակը, որ մեր երիտասարդ պատասխանատուները արդիականացնեն ՀՄԸՄը եւ նոր դռներ ու պատուհաններ բանան, որպէսզի մեր ամերիկահայ երիտասարդութիւնը իր տան նման հանգիստ զգայ ՀՄԸՄԻ տան մէջ, այնպէս, ինչպէս ՀՄԸՄը մեր սեփական երկրորդ տունն էր, երբ մենք պատանիներ եւ երիտասարդներ էինք: ՀՄԸՄԻ յարկին տակ մեզի հանդէպ ցուցաբերեցին սէր եւ կորով, հետեւաբար, մենք ալ նոյնը պիտի ընենք ամերիկահայ պատանիին, որպէսզի ՀՄԸՄը շարունակէ աճիլ:

Մեծ հաճոյքով կատարած եմ

տարիներու աշխատանքս. գործակցած եմ նուիրեալ Հայերու հետ, որոնց մտահոգութիւնը միշտ եղած է Հայ պատանին եւ Հայ Դատը: Ժողովներէ, դաշտերէ եւ սրահներէ ունիմ յիշատակներ, որոնք միշտ թարմ կը մնան սիրտիս մէջ: Տարիներու ընթացքին հաստատած եմ բարեկամական կապեր, որոնք կը գոյատեւեն մինչեւ այսօր:

ՀՄԸՄին ծառայելը ինծի տուած է հոգեկան մեծ հարստութիւն:

Կը յուսամ, որ մեր երիտասարդութիւնն ալ նոյնքան հաւատարիմ կը մնայ ՀՄԸՄԻ գաղափարականին եւ Հպարտութեամբ կը շարունակէ ծառայել այդ առնչութեամբ տարուելիք աշխատանքներուն:

## Honorary President of Homenetmen 12th Navasartian Games Mr. Garo Soghanalian

*The Homenetmen Western United States Regional Executive Committee expresses joy and Pride for Valued presence of a special young Armenian amongst us today. Born, raised and educated in this country, Mr. Garo Soghanalian is the honorary president of the 12th Homenetmen Navasartian Games. We deeply thank him for willingly making us this great honor.*

*Functioning for 19 years now in the Unites States, Homenetmen has been striving for progress and modernization. Its purpose is to create conditions that would provide the young American Armenians sprouting in the community, an attractive roof under which they will willingly unite to be communed by the ideas of Homenetmen, on universal and humanitarian standards.*

*We believe that Mr. Garo Soghanalian, with his exemplary attitude, will prove to be conductive to the realization of Homenetmen's noble goals. We hope that other American Armenians will follow his footsteps in supporting the Homenetmen and its functions.*



## ՀՄԸՄԻ Նաւասարդեան 13րդ Մարգախաղերու՝ Պատուոյ Նախագահ Վաչէ Մանուկեանի Պատգամը

Սիրելի ՀՄԸՄական եղբայրներ եւ քոյրեր, Հպարտութեամբ եւ ուրախութեամբ կ'ողջունեմ ձեզ, միջմասնաճիւղային Նաւասարդեան 13րդ մարգախաղերու փառատունին երջանիկ այս առիթով:

Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ Հայրապետին՝ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. վեհափառ կաթողիկոսի ներշնչող ներկայութեամբ, ձեր խանդավառ շարքերով եւ ծովածաւալ ժողովուրդի քաջալերանքով, եկէք նոր շունչ եւ նոր ոգի ներարկենք Քալիֆորնիոյ մեր գաղութին:

Ըսուած է՝ երիտասարդութիւնը ողնասիւնն է ժողովուրդին: Կազմակերպուած եւ գաղափարապաշտ երիտասարդութիւնը կերտիչն է այդ ժողովուրդի ապագային:

ՀՄԸՄԻ հիմնադրութեան 70ամեակին նուիրուած այս փառատունին կը մաղթեմ, որ միշտ խիտ ըլլան ձեր շարքերը, յաղթական ձեր երթը եւ շողջողուն Հայ ժողովուրդի ապագայ նուաճումները:

Պատուոյ Նախագահ Վաչէ Մանուկեանի Պատգամը՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 14րդ Մարգախաղերուն

Մինչ ժամանակաշրջանս կը մօտենայ իր աւարտին՝ կը փափաքիմ հակիրճ ակնարկ մը նետել



այն հսկայ յառաջացումին եւ հսկայական նուաճումներուն վրայ, զորս Արեւմտեան Միացեալ Նահանգներու ՀՄԸՄը արձանագրեց անցեալ տարուան ընթացքին: Շրջանային վարչութիւնը ընդարձակումն ու յառաջացումը դարձուցած է արմատական նպատակակէտեր, մինչ այդ շարունակելով ՀՄԸՄԻ սկաուտներուն եւ մարզիկներուն փոխանցել հիմնականները՝ բարոյագիտական գորաւոր զգացում եւ ազգային դիմագիծ: Այս տարուան Համահայկական մարգախաղերը, ՔԱՀԱՄը եւ երկար վազքի մրցումները, ՀՄԸՄԻ յաջող ձեռնարկներէն էին եւ օրինակ մը այն եղբայրական ոգիին, որ կը մշակուի այս կազմակերպութեան կողմէ:

Յառաջիկայ տարիներուն, ՀՄԸՄը հաւատարիմ պիտի մնայ նոյն հիմնական արժէքներուն եւ աւելի լաւ ապագայ մը պիտի ապահովէ մեր երիտասարդութեան:

Շրջանային վարչութեան շէնքի ծրագիրը, մնայուն ճամբարի եւ մարզական համալիրի մը հաստատումը, մաս կը կազմեն այն ծրագիրներուն, որոնք պիտի իրականացուին մեր սկաուտներուն եւ մարզիկներուն համար:

Հակառակ անոր, որ ժամանակը եկած է Նաւասարդեան 13րդ Մարգախաղերու Պատուոյ Նախագահի պարտականութիւնս իմ յաջորդիս՝ Մարտիկ Յովսէփեանին, որպէս պատուոյ ատենապետը Շրջանային Տնտեսական յանձնախումբին, յանձնառութիւնը ստանձնած եմ գործօն մասնակցութիւնս բերել այս կազմակերպութեան մէջ:

Արդ, Նաւասարդեան 13րդ Մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը կը փոխանցեմ, յառաջացումով եւ նուաճումով յատկանշուող տարուայ մը անոյ՝ յիշատակներով:

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## ՀՄԸՄԻ Նաւասարդեան 14րդ Մարգախաղերու Պատուոյ Նախագահ Մարտիկ Յովսէփեանի Պատգամը

Սիրելի ՀՄԸՄական քոյրեր եւ եղբայրներ, Իբրեւ պատուոյ նախագահը Նաւասարդեան 14րդ Մարգախաղերուն, կը փափաքիմ յատուկ պատգամ փոխանցել ՀՄԸՄի ողնասիւնը կազմող սկաուտներուն եւ մարզիկներուն:



Դուք ձեր դիմաց ունիք խոստմնալից ապագայ մը, որ լեցուն է մեծ առիթներով: Զեզմէ իւրաքանչիւրը նշանակալից եւ մասնայատուկ նպաստ մը ունի տալիք այս աշխարհին եւ ես կը քաջալերեմ ձեզ՝ ձգտելու անհատական եւ խմբային գերազանցութեան:

ՀՄԸՄը ձեզի կը տրամադրէ այն կենսական միջոցները, որոնց շնորհիւ կրնաք ընկերութեան կարեւոր անդամը դառնալ: Այս կազմակերպութեան աշխատանքներուն մասնակցութեամբ կրնաք սորվիլ հայ գաղութին մէկ մասը դառնալ, անոր գլխաւոր ու հատուկ էակները դառնալ:

Նաւասարդեան մարգախաղերը նուիրուած են Արցախեան շարժումին, որուն ղեկավարները Արցախը Հայաստանին վերամիացնելու պահանջատիրութեամբ ցոյց տուած են օրինակելի քաջութիւն եւ բարոյագիտութիւն: Կը պահանջեն հայուն իրաւունքը, հսկայական յոռաջացում արձանագրելով աշխարհացրիւ հայութեան համար: Ինչպէս որ Արցախեան շարժումին մասնակիցները հայ ժողովուրդին համար աւելի լաւ ապագայի մը կը ձգտին, դուք եւս պէտք է ձեր նպաստը բերէք այս ուղղութեամբ:

Մեծ հպարտութեամբ կ'ընդունիմ այս տարուան Նաւասարդեան 14րդ Մարգախաղերու Պատուոյ նախագահի պաշտօնը, բարեխառութեան լաւագոյն մաղթանքներս փոխանցելով, այս շաբաթավերջի աշխատանքներուն մասնակցող բոլոր մարզիկներուն եւ սկաուտներուն:

Մեծ հպարտութեամբ կ'ընդունիմ այս տարուան Նաւասարդեան 14րդ Մարգախաղերու Պատուոյ նախագահի պաշտօնը, բարեխառութեան լաւագոյն մաղթանքներս փոխանցելով, այս շաբաթավերջի աշխատանքներուն մասնակցող բոլոր մարզիկներուն եւ սկաուտներուն:



## Ատոմ եւ Սթելլա Թունճուկեաններ՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 15րդ Մարգախաղերու Պատուոյ Նախագահ

Եղբ. Ատոմ Թունճուկեան ծնած է Սուրիա: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Պէյրութ, Լիբանան: Միջնակարգ ուսումը ստացած է Նշան Փալանճեան ձեմարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Պէյրութի Աւետարութ, Լիբանան:

Միջնակարգ ուսումը ստացած է Նշան Փալանճեան ձեմարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Պէյրութի Աւետարութ, Լիբանան:

ՀԱՌՈՒՄՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՈՒՄՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՈՒՄՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# GROUP SERVICES

BUSINESS & TAX MANAGEMENT  
OVER FORTY YEARS OF EXPERIENCE

## Կարէն Բէնեասեան,

եւ իր Հաշուապահական գրասենեակի անձնակազմը՝  
Անահիտ Զաքարեան,  
եւ Գրեթա Քովաքեան

### Կը շնորհաւորեն համայն հայութեան Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը

805 E. BROADWAY SUITE #D GLENDALE, CA 91205  
Tel: (818) 247-2400 Fax: (818) 247-0216

ՀԱՌՈՒՄՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՈՒՄՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՀԱՌՈՒՄՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## Ատոմ եւ Սթելլա Թուննուկեաններ՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 15րդ Մարգախաղերու Պատուոյ Նախագահ

րանական երկրորդական վարժարանին:

Այնուհետեւ Համալսարանական ուսումը ստացած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ, մասնագիտանալով տնտեսագիտութեան մէջ, որուն պատկառ զիտութեան վկայականը ստանալէ ետք, ուսումը շարունակած է Ֆրանսայի INSEAD հանրաժանօթ Համալսարանին մէջ, ուր արժանացած է մագիստրոսի աստիճանին ելեւմտական եւ հաշուապահական (MBA in finance & banking) մարզին մէջ:

Ան ամբողջ 20 տարիներ անընդմէջ գործօն մասնակցութիւն բերած է ՀՄԸՄԻ շարքերէն ներս, նախ իբրեւ ՀՄԸՄԻ Պէյրութի մասնաճիւղի սկաուտ, ապա իբրեւ անոր պատրէֆպոլի լաւագոյն մարզիկը՝ նշանաւոր թիւ 7ը եւ բոլորին ծանօթ «ճեներայ»ը: Եղբայրը մեծ դերակատարութիւն ունեցած է իր մասնաճիւղին, ինչպէս նաեւ Լիբանանի եւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի պատրէֆպոլի Ա. խումբերու տեղական եւ Լիբանանէն դուրս արձանագրած յաղթանակներուն:

Սթելլա Գաւզէճեան-Թուննուկեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Փոքր տարիքին յաճախած է Նշան Փալանճեան ճեմարանը, որուն երկրորդական բաժինէն վկայուելէ ետք յաճախած է Lycee Francaise քոլեճը, այնուհետեւ աւարտած է Կարմիր Սաչի Հիւանդապահութեան ճիւղը:

Այնուհետեւ ստանձնած է ընկերային ծառայողի պատասխանատուութիւնը Լիբանանի Ազգային վարժարաններէն ներս, «Գարակէօզեան» բարեսիրական հաստատութեան կողմէ:

Ան 25 տարիներ անընդմէջ իր գործօն մասնակցութիւնը բերած է ՀՄԸՄԻ շարքերէն ներս՝ անդամակցելով ՀՄԸՄԻ Պէյրութի մասնաճիւղին, նախ՝ իբրեւ արեւուշ, ապա իբրեւ պատրէֆպոլի մարզկուհի: Ան իր գեղեցիկ եւ տպաւորիչ խաղարկութեան շնորհիւ ներգրաւուած է իր մասնաճիւղի՝

ՀՄԸՄԻ Պէյրութի աղջկանց Ա. խումբին մէջ, ինչպէս նաեւ Լիբանանի Ազգային եւ Համալսարանականներու խումբերուն՝ ըլլալով նաեւ անոնց խմբագրատուհին, նշանաւոր թիւ 4ը: Ան բազմիցս ներկայացուցած է ՀՄԸՄը եւ Լիբանանը Միջազգային, միջինարեւելեան եւ եւրոպական մրցաշարքերու:

ՀՄԸՄԻ բարիքներէն օգտուելով, Համակրելի այս զոյգը ամուսնացած է 1973ին, հետագային բախտաւորուելով երկու մանչ զաւակներով՝ Յովան եւ Շահան:

Թուննուկեան զոյգը, անհերքելի կը գտնէ ՀՄԸՄԻ բերած նպատաւոր դերը իր անհատականութեան եւ նկարագրի կերտման մէջ: Անոնք յատուկ հպարտանքով ընդունած են ՀՄԸՄԻ Նաւասարդեան 15րդ Մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը, նախ՝ իրենց երախտագիտութիւնը յայտնելու ՀՄԸՄԻ, որուն շարքերուն մէջ դաստիարակուած են, երկրորդ՝ որովհետեւ անիկա նուիրուած է Հայ Յեղափոխական Գահակցութեան 100ամեակին:

Երկու հաւատաւոր ՀՄԸՄականներն ալ իրենց կեանքին մէջ մեծ յաջողութիւններու հասած են, սակայն երբեք իրենց նիւթական չեն զլացած Հայ ազգին, հայրենիքին եւ իրենց սիրելի կազմակերպութեան՝ ՀՄԸՄԻ նկատմամբ: Աւելին, քոյր Սթելլա Թուննուկեան գործօն մասնակցութիւն կը բերէ իր շրջապատի հայկական Համայնքներու զարգացման գործին: Ան գործօն անդամ է նաեւ Համազգայինի Մշակութային եւ Կրթական Միութեան, որուն ներկայիս կը ծառայէ իբրեւ Կեդրոնական վարչութեան անդամ:

Իրենց համար չկայ որեւէ կազմակերպութիւն, որ կարենայ երկու բառերու մէջ բացատրել իր ազնուագոյն նպատակը, որ կը զբսելորուի ՀՄԸՄԻ «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» նշանաբանով:

## Եղբ. Վարդգէս եւ Ֆլորա Ալահայտոյեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 16րդ Մարգախաղերուն

Եղբ. Վարդգէս Ալահայտոյեան ծնած է Պէյրութ, Լիբանան, ՀՄԸՄական եւ դաշնակցական ընտանեկան յարկի մը տակ: Նախնական ուսումը ստացած էր Պէյրութի Հայ աւետարանական քոլեճին մէջ:

Փոքր տարիքին անդամակցած է ՀՄԸՄԻ Պէյրութի մասնաճիւղին, նախ իբրեւ գայլիկ, ապա՝ սկաուտ: 16 տարեկանին, Հմայուելով մարզական կեանքով՝ ընտրած է պատրէֆպոլը եւ իր լաւ խաղարկութեամբ դարձած էր իր մասնաճիւղի Ա. խումբի լաւագոյն մարզիկը, նշանաւոր թիւ 14ը: Իր լաւ խաղարկութեան եւ ղեկավարի յատկութիւններուն շնորհիւ,

1951-1955 նշանակուած էր իր խումբին խմբագրատու:

Ան մաս կազմած է Լիբանանի ներկայացուցչական խումբին եւ բազմիցս Լիբանանն ու ՀՄԸՄը ներկայացուցած է Միջին Արեւելքի, եւրոպական եւ միջազգային մրցաշարքերու, հասնելով մինչեւ Մոսկուա: Մարզական իր կեանքէն անկախ, եղբայրը եղած է Պէյրութի մասնաճիւղի գործօն վարչականներէն մէկը եւ քանի մը շրջաններ ընտրուած էր ՀՄԸՄԻ Լիբանանի Ծրջանային վարչութեան անդամ: Ան մեծ դեր խաղած էր ՀՄԸՄԻ համագործակցային կառույցի ստեղծման մէջ: Մասնակցած էր ՀՄԸՄԻ առաջին

Պատգամաւորական Ընդհանուր ժողովին եւ ընտրուած էր ՀՄԸՄԻ առաջին Կեդրոնական վարչութեան անդամ:

1954ին ծանօթացած է ազգային գործիչ իրաւբան Հայկ Էֆէնտի Պալեանի դասեր Ֆլորայի հետ: 1955ին, ամուսնանալով անոր հետ՝ կազմած է Հայկական տաքուկ իր բոյնը, ապագային բախտաւորուելով երկու զաւակներով՝ Ռուզաննա եւ Փիթըր: Նոյն տարին փոխադրուած է Ուաշինկթըն Տի. Սի., ուր Համալսարանական ուսումը ստացած է American Banking Institute Համալսարանին մէջ, ուրկէ վկայուած է M.B.A. վկայականով: Ապա, իբրեւ փոխտնօրէն՝ աշխատանքի հրաւիրուած է National Bank of Washington, զոր ձեռնհասօրէն վարած է 12 յաջորդական տարիներ:

Գրամատնային մարզէն ներս արդէն իսկ լայն փորձառութիւն եւ մեծ վստահութիւն չաւած եղբ. Ալահայտոյեան 1965ին վերադարձած է իր ծննդավայրը եւ հիմնած Washington D.C. International Bank-ի Transt Orient Bank մասնաճիւղը, որուն տնօրէնի պաշտօնը ստանձնած է մինչեւ 1975: Այնուհետեւ, փոխադրուելով Քուէյթ՝ երկու տարիներ տնօրէնի պաշտօնը ստանձնած է Kuwait Financial Center դրամատան: 1978ին, Լիբանանի խաղաղութեան նշոյլներէն յուսադրուած վերադարձած է Պէյրութ եւ վերստանձնած իր դրամատնային նախկին պաշտօնը, սակայն նոյն տարուան աշնան, ընտանիքին հետ վերջնականապէս հաստատուած է Քալիֆորնիա, ուր իր քուէյթցի ճարտարապետ ընկեր-



ներուն հետ հիմնած է Tricon Enter Inc. շինարարական ընկերութիւնը, որուն տնօրէնի պաշտօնը ստանձնած է:

Հակառակ բազմազբաղ ըլլալուն, եղբ. Ալահայտոյեան ՀՄԸՄական իր գործունէութիւնը շարունակած է նաեւ Ամերիկայի մէջ, ուր երկու յաջորդական շրջաններ ընտրուած է Կեդրոնական վարչութեան անդամ եւ երկար տարիներ գործօն մասնակցութիւն բերած է ՀՄԸՄԻ Ամերիկայի Ծրջանային վարչութեան Տնտեսական յանձնախումբին մէջ: Իսկ 1991ին, կնոջ հետ սիրայօժար ընդունած է պատուոյ նախագահութիւնը ՀՄԸՄԻ 16րդ Նաւասարդեան Մարգախաղերուն, լիովին կատարելով իր միութենական պարտականութիւնը իր սիրած միութեան՝ ՀՄԸՄԻ հանդէպ:

Եղբայրը իր մահկանացուն կնքեց 24 Հոկտեմբեր 2016ին, խոր վիշտ պատճառելով իր զաւակներուն եւ ՀՄԸՄԻ մեծ ընտանիքին:



## Եղբ. Ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեաններ՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 17րդ Մարգախաղերու Պատուոյ Նախագահ

Եղբ. Ժիրայր Սարգիսեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Նախնական ուսումը ստացած է Էլրէֆիէի Ս. Յակոբ Ազգային վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Նոյն շրջանի Կեդրոնական վարժարանին: Անոր եղբոր հաստա-

տումով՝ ազգային իր կրթութիւնը ստացած է ՀՅԳԻ «Ազատամարտ» (Էլրէֆիէի) ակումբին եւ ՀՄԸՄԻ շարքերուն մէջ:

Եօթը տարեկանին միացած է ՀՄԸՄԻ շարքերուն՝ իբրեւ գայլիկ եւ այնուհետեւ, իր հետեւողական

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

Եւ բժախնդիր աշխատանքին շնորհիւ հասած է սկաուտական բարձրագոյն պաշտօններու՝ Գայլիկ պատասխանատու, Երէց սկաուտ, Մասնաճիւղի խմբապետ, իսկ 1966ին ՀՄԸՄԻ Պէյրութի շրջանի ընդհանուր խմբապետ: Ան մասնակցած է Յունաստանի մէջ կազմակերպուած համաշխարհային 11րդ եւ Եգիպտոսի համա-արաբական երկիրներու ճամպորհներուն: Իսկ 1990ին նշանակուած է ՀՄԸՄԻ Համագաղութային 4րդ Ընդհանուր բանակումի (Յունաստան) ընդհանուր խմբապետը:

Մեծ հետաքրքրութիւն ունեցած է ոսկերչական ասպարէզին նկատմամբ: Ան իր հետեւողականութեան եւ սիրած այս մարզին նուիրումին շնորհիւ, մեծ յաջողութիւններու հասած է եւ այսօր սեփականատէրն է Giroux Fine Jewelry ոսկերչական հաստատութեան: 1968ին ամուսնացած է ՀՄԸՄԻ Լիբանանի պապեթպոլի ծանօթ մարզկուհի Սրբուկ Օհանեանի հետ: Հետագային բախտաւորուած են երեք զուակներով՝ Թամար, Սագօ եւ Զարեհ, որոնք հետեւելով իրենց ծնողներուն օրինակին՝ գործօն մասնակցութիւն բերած են եւ կը շարունակեն բերել ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի աշխատանքներուն: Անոնք իրենց ծնողները հարստացուցած են հինգ ՀՄԸՄական թոռներով:

Եղբայրը զանազան պատասխա-

նատու պաշտօններ վարած է ՀՄԸՄԻ մէջ. Շրջանային եւ Կեդրոնական վարչութեան անդամ-փոխատենապետ: Թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ մասնակցած է ՀՄԸՄԻ շատ մը Շրջանային ժողովներու, ինչպէս նաեւ բազմաթիւ ՀՄԸՄԻ Պատգամաւորական ընդհանուր ժողովներու: Եղբայրը երբեք մարդասիրական իր օգնութիւնը չէ զլացած իր ծննդավայրին, Հայաստանին, Արցախին ու Զուախքին:

1992ին, կնոջ՝ Սրբուկին հետ ստանձնած է ՀՄԸՄԻ Նաւասարդեան 17րդ Մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը: ՀՄԸՄԻ Սան Ֆրանսիսքո հովիտի մարզադաշտը կը կրէ «Ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեան անունը, առ ի երախտագիտութիւն մասնաճիւղին կատարած իր իշխանական նուիրատուութեան: Ան նիւթական եւ բարոյական մեծ ջանք թափած է ՀՄԸՄ-ՀԱՍԿի Բիւրականի բանակավայրի ապահովման գործին մէջ:

2002ին, ան արժանացած է Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի, երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութեան ոսկեայ յուշամետալին, իսկ Հայրենիքին առաւել օգտակար Հանդիսանալու նպատակով, սեփականատէրն է Երեւանի «Եուրօփա» պանդոկին: 2015ին, եղբ. Ժիրայր Սարգիսեանին շնորհուած է «Տիպար ՀՄԸՄական-2015» տիտղոսը:

## Եղբ. Քերոբ Առաքելեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 16րդ Մարգախաղերուն

Եղբ. Քերոբ Առաքելեան ծնած 1909ին, Այնթապ: 1914ին, ընտանիքին հետ հաստատուած է Հալէպ, Սուրիա: 1918ին, վերադարձած է Ատանա: Նոյն տարին եղած է Հայ արիւններու սկաուտական խումբի առաջին անդամներէն: Միայն թրքերէն խօսակցական լեզուն իմացող եղբ. Առաքելեան միայն մէկ տարի բախտաւորութիւնը ունեցած դպրոց յաճախելու եւ հայերէնին ծանօթանալու: Քեմալական շարժման ընթացքին փոխադրուած է Քոքինիա, Յունաստան: 6 ամիսներ առաւօտեան դպրոց յաճախելով եւ կօշիկ ներկելով ընտանիքին օգնած է: Ապա, նետուած է կեանքի ասպարէզ, մասնագիտանալով ատաղձագործութեան մէջ:

1922ին, ծանօթ ՀՄԸՄական Մամուլեանի հետ հիմնած է ՀՄԸՄԻ Քոքինիոյ մասնաճիւղը, որուն առաջին սկաուտներէն մէկը եղած է: 1924ին, սկաուտական կողքին, միացած է ֆուլթպոլի խումբին



եղած է անոր խմբապետը: 1930ին, ընտանիքին հետ փոխադրած է Մեքսիքօ եւ միացած է երկրի ֆուլթպոլի խումբին եւ մինչեւ 1939 եղած է անոր

ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Merry Christmas  
Happy New Year

THIS YEAR, GO PLACES YOU'VE NEVER BEEN BEFORE

**LEVON TRAVEL**  
LOS ANGELES | YEREVAN | TBILISI

CALL US TOLL FREE 1(800)445 3866 OR (818) 552 7700 | www.LevonTravel.com

ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## Եղբ. Քերոբ Առաքելեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 18րդ Մարգախաղերուն

փայլուն աստղերէն մէկը: Միաժամանակ, սկսած է խաղալիքի առուծախով զբաղելու եւ մեծ յաջողութիւններու հասած է:

1964ին փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ: 1968ին, մեծապէս նպաստած է ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան եւ բարգաւաճման աշխատանքներուն: Բազմաթիւ անգամներ ընտրուած է մասնաճիւղի վարչութեան անդամ եւ վարած է ատենապետի պաշտօնը: Ան մեծ ներդրում ունեցած է նաեւ ՀՄԸՄԻ Մոնթեպելլոյի մասնաճիւղի հիմնադրութեան մէջ:


1976-1981, յաջորդական երկու

չրջաններ եղած է Շրջանային վարչութեան ատենապետ: Մասնակցած է 1979ին, Կիպրոսի մէջ գումարուած ՀՄԸՄԻ Պատգամաւորական Բ. ընդհանուր ժողովին: 1981ին ստանձնած է ՀՄԸՄԻ Նաւասարդեան 6րդ մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը: 1982ին, արժանացած է «ՀՄԸՄԻ Արժանեաց Ոսկի Շքանշան»ին, 1988ին՝ Գարեգին Բ. կաթողիկոսին կողմէ «Կիրիլեան Ասպետ»ի շքանշանին: 1993ին ստանձնած է ՀՄԸՄԻ Նաւասարդեան 18րդ մարգախաղերու պատուոյ նախագահութիւնը եւ այդ առիթով հիմնած է ՀՄԸՄԻ «Առաքելեան» հիմնադրամը:

## ՀՄԸՄԻ 19րդ Նաւասարդեան Մարգախաղերը Նուիրուեցան ՀՄԸՄԻ Կտակարար Երուանդ Սիսեանի Յիշատակին

Երուանդ Սիսեան ծնած է Քան, 1901ին: Կեանքի պայմանները դաժան եղած են նուիրական այս հայորդիին համար: Հազիւ մանկութիւնը ավարտած, պատանեկութեան քաղցր օրերը դատապարտուած են հայկական ջարդն ու կոտորածը տեսնելու դաժանութեամբ: Դպրոցական կրթութիւն չէ ստացած: Կեանքի ասպարէզը եղած է իր դպրոցը: 1915ին, մազապուրծ թուրքի ճիրաններէն, ընտանիքին հետ աչքը կը բանայ մայր հայրենիքի մէջ: Ասպարէզով վաճառական էր:

1918ին, հայրենիքի անկախութեամբ գինովցած, գոհունակութեամբ կը շարունակէ իր ասպարէզը մայրաքաղաք Երեւանի մէջ: Բայց աւաղ, այդ օրերն ալ երկար չեն շարունակուիր: Հայաստան կը կորսնցնէ իր անկախութիւնը: Երուանդ Սիսեան, չզիմանալով համայնավար բռնակալութեան՝ կը փոխադրուի Պարսկաստանի Թաւրիզ քաղաքը, ապա՝ Թեհրան, ուր կը մնայ մինչեւ 1928:



Թափառական հայու ճակատագիրն ենթարկուած, Երուանդ Սիսեան 1928ին կը փոխադրուի Փարիզ, Ֆրանսա, ուր դարձեալ յաջողութեամբ կը շարունակէ առեւտրական իր աշխատանքը մինչեւ 1939: Ապա, նոյն տարին դարձեալ կը փոխադրուի Պարսկաստան, ուր կը հանդիպի իր կեանքի ընկերոջ՝ Երանուհի Թերճիմանեանին: 1941ին կ'ամուսնանան եւ միասնաբար կը շարունակեն իրենց առեւտրական աշխատանքները:

1945ին, կը փոխադրուին Լոս Անճելըս, ուր կ'ապրի մինչեւ իր մահը՝ 4 Մարտ 1994: Երուանդ Սիսեան, իր ապրած 92 տարիներուն ընթացքին երբեք միութենական չէր եղած, սակայն եղած էր գիտակից, ազնիւ եւ ազգասէր հայ: Միշտ մնացած էր լուսանցքի մէջ, համեստ ու ազգին հանդէպ պարտականութեան գիտակից հայ:

Հայոց Յեղասպանութիւնը ասպարած, հայրենիքի կարճատեւ անկախութիւնը վայելած, համայնավար լուծէն փախած, վանեցի յոյժ ազգանուէր ընտանիքէ սերած պատուական այս հայորդին, իր ամբողջ կեանքին ընթացքին վաստկածը խնայեց, սակայն երբեք ազահ չեղաւ: Ինքնաբուխ նուիրատուութիւններով օգտակար հանդիսացաւ իր հարազատներուն, շրջանի հայկական դպրոցներուն, եկեղեցիներուն, յուշարձանին եւ վերջապէս Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ ՀՄԸՄԻն, որուն կտակեց իր ամբողջ հարստութիւնը:

ՀՄԸՄԻն կտակեց իր հարստութիւնը, որովհետեւ ան հաւատացած էր ՀՄԸՄԻ վեհ նպատակներուն, գաղթօճախի հայ երիտասարդութիւնը հայ պահելու, ազգասիրական եւ պահանջատէրի զգացումը անոնց մէջ դրոշմելու սրբազան գործին:

ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեծ ընտանիքը

երախտապարտ է Երուանդ Սիսեանին, որուն կտակածը առիթ հանդիսացաւ ՀՄԸՄԸ օժտուելու բանակավայրով մը, ուր բանակող ՀՄԸՄականները միշտ իրենց յարգանքը կը մատուցեն, բանակավայրի մէջ զետեղուած անոր յիշատակը անմահացնող յուշաքարի առաջ խունկ վառելով,

ծունկ մը աղօթք կատարելով եւ ծաղիկներ զետեղելով:

Նոյն նպատակով նաեւ 1994ին, օրուան Շրջանային վարչութիւնը ՀՄԸՄԻ 19րդ Նաւասարդեան Մարգախաղերը նուիրուեց Երուանդ Սիսեանի եւ իր համեստ կնոջ՝ Երանուհի յիշատակին:

## Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարինէ Անտոնեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 21րդ Մարգախաղերուն

Հրաչ Անտոնեան ծնած է Հալէպ, Սուրիա, հայասեր եւ մանաւանդ ՀՄԸՄական ընտանեկան յարկի մը տակ: Փոքր տարիքէն անդամակցած է ծննդավայրի ՀՄԸՄԻ մասնաճիւղին, ուր եղած է գայլիկ, ապա սկաուտ, նոյն ժամանակ լաւ մարզիկ՝ փինկ-փոնկի, թենիսի եւ պասքեթպոլի մարզաճիւղերուն մէջ:

Աւելի ուշ, հմտանալով մասնաւորաբար փինկ-փոնկի եւ թենիսի մարզաճիւղերուն մէջ՝ նոյնիսկ ՀՄԸՄԸ ներկայացուցած է Սուրիոյ ախոյեանութեան մրցումներուն:

Այնուհետեւ, հակառակ զանազան միջավայրեր փոխած ըլլալուն, միշտ մնացած է ՀՄԸՄԻն հաւատարիմ ու անոր գործունեայ անդամներէն մէկը:

Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Հայկազեան վարժարանին մէջ, ապա յաճախած է նոյն քաղաքի Քարէն Եփփէ ճեմարանը: 1967ին, ընտանիքին հետ Լիբանան փոխադրուելով՝ երկրորդականի իր ուսումը շարունակած է Պուրճ Համուտի Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլեճին մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է:

Նոյն տարին ընտանիքին հետ փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ, ուր անմիջապէս միացած է ՀՄԸՄԻ իր ընտանիքին՝ Լոս Անճելըսի մասնաճիւղին: Նոյն ժամանակ ուսումը շարունակած է Լոս Անճելըսի Սիթի քոլեճին մէջ, ապա՝ Նորթրիքի Նահանգային համալսարանին, ուր մասնագիտացած է համակարգչի գիտութեան (Computer Science) ճիւղին մէջ, վկայուելով պսակաւոր գիտութեան վկայականով:

Անուրանալի է եղբ. Անտոնեանի ՀՄԸՄականի բեղուն կեանքն ու նուիրեալ գործունէութիւնը: Ան մաս կազմած է ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղի զանազան յանձնախումբերուն, ընտրուած է վարչական, տարիներ շարունակ եղած է Շրջանային վարչութեան տնտեսական յանձնախումբի անդամ, ինչպէս նաեւ ընտրուած է Շրջանային վարչութեան անդամ:

ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղը, առ ի գնահատանք եղբոր բազմավաստակ նիւթա-բարոյական գործունէութեան, մասնաճիւղի 20ամեակին առիթով,



1988ին յատուկ յուշատախտակով մը գնահատած է գայն:

Իր ընդունակութեան եւ ձեռնբերեցութեան շնորհիւ, եղբայրը նաեւ մեծ նուաճումներ արձանագրած է իր գործի ասպարէզին մէջ: 1975էն ի վեր ան սեփակաւոր տէրերէն մէկն է հանրաճանօթ Discount Tire Center-ի եւ երկար տարիներ վարած է անոր CEO-ի (Chief Executive Secretary) պաշտօնը:

1979ին, Հայաստանի մէջ, հարազատներու վերամիացման հանդիպման մը ընթացքին, Երեւանի մէջ կը ծանօթանայ Հալէպի ծանօթ ՀՄԸՄական մարզիկ Արսէն Տէր Յովհաննէսեանի դստեր Մարինէին հետ եւ երկու տարիներ ետք, 1981ին կ'ամուսնանան, յետագային բախտաւորուելով երկու զաւակներով եւ երեք թոռներով: Մարինէին շատ շուտ կ'ընտելանայ ՀՄԸՄԻ շրջապատին հետ եւ համոզուածով օգտակար կը հանդիսանայ անոր գործունէութեան:

Տէր եւ տիկ. Անտոնեանները եղան այն բացառիկ բախտաւորներէն, որոնց Նաւասարդեանի Պատուոյ նախագահութեան ընթացքին շրջանը գտնուելով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը, հայրապետական իր օրհնութիւնները փոխանցեց իրենց եւ ՀՄԸՄԻ մեծ ընտանիքին:

Տէր եւ տիկին Հրաչ եւ Մարինէ Անտոնեանները նոյն ոգեւորութեամբ կը շարունակեն իրենց պարտականութիւնները ՀՄԸՄԻ հանդէպ:



# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ



## Տէր Եւ Տիկ. Կարպիս Եւ Թերէզ Քէմանճեաններ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 22րդ Մարգախաղերու Պատուոյ Նախագահ

Կարպիս Քէմանճեան ծնած է Հալէպ, Սուրիա, Այնթապցի ազգանուէր ընտանեկան յարկի մը տակ: Նախնական կրթութիւնը աստացած է իր ծննդավայրին մէջ: Աւելի ուշ, ծնողքին հետ փոխադրուած է Լիբանան, ուր ու-

սումը շարունակած է Սիմոնեան քոլեճին մէջ: Յատուկ հետաքրքրութիւն ցուցաբերելով՝ խորացած է Plastic production-ի մանրամասնութիւններուն մէջ եւ ապագային հիմնած է իր անձնական Plasco Press

առեւտրական հաստատութիւնը, նոյն ճիւղին մէջ եւ մեծ յաջողութիւն արձանագրած է:

Կարպիս Քէմանճեան փոքր տարիքէն միշտ սիրած է մարզական կեանքը եւ մանաւանդ յատուկ սէր ունեցած է ֆութպոլի նկատմամբ, որուն համար ան առաւելաբար ներկայ գտնուած է Նաւասարդեան մարզախաղերու ֆութպոլի մրցումներուն:

1975ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբնական օրերուն, ծանօթացած է ապագայ իր կողակիցին՝ Թերէզ Մանուկեանին, որուն հետ ամուսնացած է 1977ին եւ կազմած է Հայկական ընտանեկան երջանիկ բոյն մը, աւելի ուշ բախտաւորութիւնով աղջիկ զաւակով մը, զոր անուանած են Ռոզալին:

1981ին, Քէմանճեան ընտանիքը փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ բնակութիւն հաստատած Փասատինա Քաղաքը, ուր ծնած է իրենց երկրորդ զաւակը՝ Յարութը:

Աշխատանքային իր հորիզոնները ընդարձակելով, Կարպիս Քէմանճեան Plastic production-ի գործարաններ բացած է Չինո, Ֆուլըթըն եւ Պոսթըն քաղաքներուն մէջ եւ մեծ յաջողութիւն արձանագրած է: Աւելի ուշ, յարմար առիթով մը մէկ առ մէկ վաճառած է զանոնք: Այնուհետեւ փոխելով իր արհեստը, զբաղած է բժշկական գործիքներու արտադրութեամբ եւ Սիկար կտրելիք

գործիքներու պատրաստութեամբ: Կարպիս Քէմանճեանի վերջին արտադրութիւնը համբաւ ստանալով՝ ներկայացուած է միջազգային ճանաչում ունեցող «Տաւիտով» ընկերութեան միջոցաւ:

Կարպիս եւ Թերէզ Քէմանճեան անդամ են ՀՄԸՄԻ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղին, ուր նաեւ իրենց զաւակները անդամակցած են իբրեւ արեւուշ եւ սկաուտ, իսկ աւելի ուշ անոնք միութենական իրենց պարտականութիւնները շարունակած են ՀՄԸՄԻ մարզական կեանքին մէջ:

Պէտք է ընդգծել, թէ քոյր Թերէզ Քէմանճեան, մասնաճիւղին մէջ բացի գործօն ծնողը ըլլալէ, նաեւ զանազան պատասխանատու պաշտօններ ստանձնած է ՀՄԸՄԻ շրջանային մակարդակի վրայ: Ան նոյնիսկ ընտրուած է Շրջանային վարչութեան անդամ եւ իր հետեւողական աշխատանքով արդարացուցած է իր պաշտօնը: Ան նաեւ մեծ ներդրում ունեցած է Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ բարեգործման աշխատանքներուն եւ երկար տարիներ ստանձնած է անոր Տիկնանց միութեան պատասխանատուի պարտականութիւնները:

Քէմանճեան ընտանիքը մինչեւ օրս, իր օգտակար ներդրումը կը շարունակէ բերել ընդհանրապէս ՀՄԸՄԻն եւ յատկապէս Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղին:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# Sinanian

## Development, Inc.

**Հայաստան Աշխարհի, Սփիւռքի, Արցախի եւ Չաւախքի Հայութեան Կը Մաղթենք Ազգային Երազներու Իրականացում եւ Երջանիկ Ու Բարգաւաճ Ապագայ**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ



## Տէր Եւ Տիկ. Տիգրան Եւ Զարուհի Տէր Ղազարեաններ՝ ՀՄԸՄԻ 23րդ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահ

Տիգրան Տէր Ղազարեան ծնած է 1908ին, Խարբերդ: Հայոց Յեղապանութեան ընթացքին Հայրը ձերբակալուած եւ դաժան ծեծի ենթարկուելով՝ մահանաձ է բանտին մէջ: Այնուհետեւ, մայրը զանազան ծառայական աշխատանքներ կատարելով՝ պահած է ընտանիքը: Համաշխարհային Ա. պատերազմին ընթացքին մտած է Եւրոպացի միսիոնարներու Խարբերդի որբանոցը: Պատերազմի աւարտէն ետք փոխադրուած է Լիբանան եւ ուսանած է նախ ձիւպէյի, ապա Անթիլիասի որբանոցներուն մէջ:

1933ին միացած է ՀՅԴ շարքերը եւ բախտաւորութիւնը ունեցած է գործակցելու Լեւոն Ծանթի եւ Նիկոլ Աղբալեանի հետ: Պէյրութի մէջ ան մօտէն հետեւած է ՀՄԸՄԻ բոլոր աշխատանքներուն: 13 Մայիս 1949ին, երկար տարիներու թափառումէ ետք, վերջապէս դաժան ճակատագիրով իրարմէ բաժնուած Տէր Ղազարեան ընտանիքը Համախմբուած է Շիքակոյի մէջ: 1954ին ամուսնացած է Զարուհի Արթինեանին հետ: Շիքակոյի մէջ իր ներդրումը բերած է ՀՄԸՄԻ աշխատանքներուն, «Ասպարէզ»ի միջոցաւ նաեւ հեռուոր Քալիֆորնիոյ ՀՄԸՄԻական կեանքին եւ անձնական նախաձեռնութեամբ անոր նոր ակումբը գնելուն աշխատանք տանող հիմնադիր խումբին անդամներէն մէկը հանդիսացած է:

Զարուհի Տէր Ղազարեան ծնած է Վան: Երկրորդականի իր ուսումը աւարտելէ ետք, մէկ տարի յաճախած է British Syrian Training College-ը (BSTC): Ապա կը

յաճախէ American university of Beirut (AUB), հետեւելով հիւանդապահութեան ճիւղին, որմէ վկայեալ հիւանդապահուի դուրս գալէ ետք, հինգ տարիներ իբրեւ դպրոցի հիւանդապահուի ծառայած է BSTC-ին:

Այնուհետեւ, մասնագիտանալու համար մեկնած է Անգլիա, երբ իր մտերիմ ընկերուհիներէն, Տիգրան Տէր Ղազարեանի քոյրը Աղանին հրաւիրած է զինք Շիքակո: Ընդունալով հրաւերին, 1954ին փոխադրուած է Շիքակո եւ նոյն տարին ամուսնացած է Տիգրան Տէր Ղազարեանին հետ: Ամուսնանալէն ետք մասնակի ժամով հիւանդանոցի մէջ աշխատած եւ օգնած է ամուսինին:

Յարատեւ աշխատանքի շնորհիւ Տէր Ղազարեան զոյգը բաւական հանգիստ կեանք մը ապահոված է եւ օգտակար հանդիսացած է իր շրջապատին, յատկապէս ազգային հաստատութիւններուն: Իրենց զանազան օժանդակութիւններուն առնթքեր, ամէն տարի հովանաւորած են ՀՄԸՄԻ նաւասարդեան մարգախաղերը:

Ատենի Ծրջանային վարչութիւնը, բարձր գնահատելով տէր Եւ տիկ. Տիգրան Եւ Զարուհի Տէր Ղազարեաններու ՀՄԸՄԻ հանդէպ ցուցաբերած հաւատքն ու նուիրումը, որոշած էր տարուան նաւասարդեան մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը վստահիլ անոնց:

Հայոց Յեղապանութեան դառնութիւնները ապրած ու որբացած այս զոյգը, ինքնաբոլիս իրենց կտակէն մեծ բաժին մը վերապահած էին ՀՄԸՄԻին:

## Քոյր Աշիէն Փիլաւեան՝ ՀՄԸՄԻ 25րդ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահ

Աշիէն Փիլաւեան ծնած է Հալէպ: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրի Կրիկեան վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Հալէպի Քոյրերու վարժարանին: Այնուհետեւ, 6 տարիներ զբաղած է ուսուցչութեամբ, Հալէպի Կրթասիրաց վարժարանի մասնկապարտէզի բաժինին մէջ: Փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸ-

Մին, իսկ երիտասարդական տարիներուն գործօն մասնակցութիւն բերած է տեղւոյն Օրիորդաց միութեան աշխատանքներուն, ստանձնելով վարչական եւ պատասխանատու պաշտօններ:

1955ին ամուսնացած է ՀՄԸՄԻ Սուրիոյ ֆութպոլի Ա. խումբի 15 տարիներու լաւագոյն մարզիկ Ալեքսան Փիլաւեանի հետ: Իբրեւ

գիտակից եւ ազգասէր հայուհի, ան համերաշխութեամբ եւ հաւատարմօրէն գործակցած է իր կողակիցին հետ:

Վահրիճ Եւ Բեգլար, երկու որդիներով արդէն իսկ բախտաւորուած՝ Փիլաւեան ընտանիքը 1968ին փոխադրուած է Լիբանանի Անթիլիասի շրջանը: Անոնք նիւթական իրենց օժանդակութիւնը երբեք չեն զլացած ազգին:

Անոնք միշտ զօրակցած են ՀՄԸՄԻին: Բազմաթիւ անգամներ Հովանաւորած են ՀՄԸՄԻ ձեռնարկները եւ իրենց նուիրատուութիւններով սատար կանգնած են հայկական այս մեծ ընտանիքի յաջողութիւններուն: Այսօր, գոյութիւն ունեցող ՀՄԸՄԻ միակ սկաւտական երգարանը հրատարակուած է հանգուցեալ եղբ. Ալեքսան Փիլաւեանի մեկենասութեամբ: Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով, Փիլաւեանները 1977ին վերջնականապէս փոխադրուած են Ամերիկա եւ հաստատուած Լոս Անձելըսի Սանթա Մոնիքա քաղաքը, ուր մինչեւ օրս կ'ապրին:

Հոս եւս Փիլաւեան ընտանիքը մօտէն հետաքրքրուած է ՀՄԸՄԻով, որ այդ օրերուն կը յատկանշուէր Լոս Անձելըսի մասնաճիւղով: Անոնք նախագահած են մասնաճիւղի առաջին ձեռնարկին եւ միշտ ներկայութիւն եղած են ՀՄԸՄԻ բոլոր ձեռնարկներուն:

Փիլաւեան զոյգը միշտ հայկական մթնոլորտը պահպանած է իր տան եւ շրջապատին մէջ, որուն շնորհիւ իրենց երկու որդիներն ալ յաջող գործատէրեր եւ գիտակից հայեր են: Մեծ որդին՝ հանգուցեալ Վահրիճ Փիլաւեան երկար տարիներ անդամակցած է ՀՄԸՄԻ Ծրջանային տնտեսական յանձնախումբին:

Քոյր Փիլաւեան իր հանգուցեալ ամուսնոյն՝ եղբ. Ալեքսան Փի-



լաւեանի յիշատակին յաճախակնյայտ նուիրատուութիւններ կատարած է ՀՄԸՄԻին: Ան նոյնիսկ իր ամուսնոյն մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները յատկացուցած է ՀՄԸՄԻին:

2000 տարեշրջանին, Աշիէն Փիլաւեան, ընդառաջելով օրուան Ծրջանային վարչութեան խնդրանքին, ստանձնած է ՀՄԸՄԻ 25րդ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը, ըլլալով առաջին իգական սեռի ներկայացուցիչը, որ նման խիզախ եւ խիստ գնահատելի քայլ մը կ'առնէր շրջանի ՀՄԸՄԻ պատմութեան մէջ: Ան այս քայլին դիմած էր, յարգելու համար յիշատակը իր շատ սիրելի ամուսնոյն, որ իր ամբողջ կեանքին ընթացքին եղած էր հաւատաւոր ՀՄԸՄԻական մը:

Քոյր Փիլաւեան յաճախ գլխաւոր Հովանաւորը հանդիսացած է ՀՄԸՄԻ նաւասարդեան մարգախաղերուն եւ ամէն առիթով իր նիւթական օգտակարութիւնը կը ցուցաբերէ ՀՄԸՄԻ մեծ ընտանիքին:

## Տէր Եւ Տիկ. Վաչէ Եւ Ճէյն Սողոմոնեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ 26րդ Նաւասարդեան Մարգախաղերուն

Վաչէ Սողոմոնեան ծնած է Քեսապ, Սուրիա: Փոքր տարիքին, ընտանիքին հետ փոխադրուած է Պէյրութ, Լիբանան եւ անդամակցած է ՀՄԸՄԻ Պէյրութի մասնաճիւղին իբրեւ գալլիկ, ապա՝ սկաւտ: Մարզանքի հանդէպ յատուկ սէր ունենալով, անդամակցած է նաեւ սկաւտական պատրիսթայի Ա. խումբին, միաժամանակ հմտացած է փինկ-փոնկի եւ լողի մարզաճիւղերուն մէջ, յատուկ սէր ունենալով նաեւ հեծելաբարձի մարզաճիւղին նկատմամբ: Ան բազմաթիւ անգամներ մասնակցած է սկաւտական իր խումբին կազմակերպած Պէյրութ-Սայտա հեծելաբարձներուն, նաեւ յաջողութիւններ արձանագրած է փինկ-փոնկի մարզաճիւղին մէջ: «Առողջ միտք, առողջ մարմինի մէջ» նշանաբանը եղած է իր կեանքի հաւատամբը:

Նախակրթարանի ուսումը ստացած է Ս. Նշան Ազգային վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ էջրեֆիէի Հայ աւետարանական երկրորդական վարժարանը: 1955ին, չորս ամիս Քուէյթի մէջ աշխատելէ եւ դպրոցականը ապահովելէ ետք փոխադրուած է Ամերիկա եւ համալսարանական ուսումը ստացած է Սեն Հոգէի Քալիֆորնիա համալսարանը, մասնագիտանալով քիմիական ճարտարագիտութեան մէջ: Ապա, աշխատած է Ֆուլթըթըն քաղաքի Bakman Instruments ընկերութեան մէջ եւ վարած է Research & Development for Laboratory & Medical Instrumentation-ի պաշտօնը: Նոյն ճիւղին մէջ առաւել խորանալով, 1962ին, բժշկական աշխարհին մէջ In Vivo Ion Detection եւ Continuous Flow Cell գիտական երկու նորութիւններու

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

մենաշնորհը վաստակած է:

Քիմիական ճարտարագիտութեան մէջ առաւել մասնագիտացած եւ լայն փորձառութիւն ստացած է «Պըրքլի» համալսարանին մէջ, ուրկէ 1978ին ստացած է իր մակիստրոսի տիտղոսը եւ այնուհետեւ աշխատանքի սկսած է համակարգչային աշխարհի երկրորդ մեծագոյն Digital Equipment Corporation ընկերութեան մէջ: 1980ին Նիւ ձըրզիէն Սան Ֆրանսիսքոյի համալսարանի ուսանողուհի եւ այնուհետեւ մորթային հիւանդութիւններու բժշկուհի ձէյն Գարտաշեանի հետ ծանօթանալով, 1981ին ամուսնացած եւ ընտանեկան բոյն մը կազմած է անոր հետ:



1993ին վերջնականապէս հաստատուած է Ֆրեզնո եւ բացառիկ արտօնութեամբ հիմնած է Digital Equipment Corporation ընկերութեան մասնաճիւղը: Իսկ 1993ին հիմնած է Compuware անձնական իր ընկերութիւնը, որ մինչեւ օրս կը գործէ եւ կը ծառայէ շրջանի մեծագոյն հաստատութիւններուն:

Արցախեան շարժման օրերուն, երկու անգամ, խումբ մը մարզիկներու հետ հեծելաբաշտով նաւա-

սարդեան ջահը Ֆրեզնոյէն Կլենտէյլ փոխանցած է՝ հանգանակելով մեծ գումար մը, որ ատենին փոխանցուած է Արցախ: Նման նախաձեռնութիւն մը կատարած է նաեւ Քեսապի ճամբարի վերագացման նպաստող Armenian Technology ընկերութեան հովանաւորութեամբ, առանձին՝ 22 ժամանոց հեծելաբաշտ մը կատարած է Ստեփանակերտէն մինչեւ

Երեւան: Այս առիթով եւս հանգանակուած գումարը տրամադրած է Արցախի խաղողագործութիւնը վերականգնելու եւ գինիի գործարան մը բանալու խիստ անհրաժեշտ գործին: Եղբոր վաստակը մեծ է յատկապէս Ֆրեզնոյի հայկական իրականութեան մէջ, ուր մեծապէս կը նպաստէ ազգանուէր եւ կրթական գործունէութիւններուն: Ան պատասխանատու պաշտօններ ստանձնած է տեղւոյն եկեղեցւոյ եւ ազգային վարժարանին մէջ:

## Եղբ. Ալպեր Շահինեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 27րդ Մարգախաղերուն

Ալպեր Շահինեան ծնած է Հալէպ, Սուրիա: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Կիլիկիա վարժարանին մէջ: Փոքր տարիքէն անդամակցած է ծննդավայրի ՀՄԸՄԻ մասնաճիւղին՝ իբրեւ մարզիկ:

Ընթերցանութեան հանդէպ յատուկ սէր ունենալով՝ նոյն ժամանակ ստանձնած է մասնաճիւղի «Քրիստափոր» եւ Տիգրանակերտի հայրենակցական Միութեան «Տիգրիս» գրադարաններու պատասխանատուութիւնը:

Պայմաններու բերումով, փոքր տարիքէն նետուած է կեանքի ասպարէզ եւ մասնագիտացած է երկաթագործութեան մէջ՝ «Թորնո» (machinist) ճիւղին մէջ, ուր մեծ յաջողութիւններ արձանագրած է: 1962-1973 Սուրիոյ բանակին մէջ ծառայելէ ետք, անմիջապէս փոխադրուած է Պէյրութ, Լիբանան, ուր եւս շարունակած է



ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տէր եւ Տիկ. Կայծակ եւ Ծովիկ Զէյթլեան Զաւակները՝ Շանթ եւ Հրակ Փեսան եւ Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Լիօ եւ Սեւանա Օհանեան եւ Իրենց Անուշիկ Լիոնան

Լաւագոյն մաղթանքներով  
կը շնորհաւորեն իրենց հարազատներուն  
ու բարեկամներուն  
Նոր Տարին եւ Ս. Ծնունդը

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## Եղբ. Ալպեր Շահինեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 27րդ Մարգախաղերուն

է արհեստը:

1975ին ծանօթացած է եութայէն Լիբանան արձակուրդի եկած իր կողակիցին՝ Աստղիկ Շահինեանին, որուն հետ նոյն տարի ամուսնացած է եւ մէկ տարի ետք, 1976ին վերջնականապէս հաստատուած է եութայի Սոլթ Լէյք Սիթիի քաղաքը: Ապագային անոնք բախտաւորուած են երկու մանչ զաւակներով՝ Քրիստափոր-Դանիէլ եւ Բաֆֆի-Ալպեր, որոնք նաեւ հետեւելով իրենց ծնողներու օրինակին եղած են ՀՄԸՄականներ:

Սոլթ Լէյք Սիթիի մէջ, անձնական կեանքի յաջողութիւններուն առընթեր, Ալպեր Շահինեան բեղուն գործունէութիւն ցուցաբերած է շրջանի ազգային կեանքին մէջ:

Ան եղած է 1981ին հիմնուած ՀՄԸՄի Սոլթ Լէյք Սիթիի «Սպիտակ» մասնաճիւղի հիմնադիրներէն մէկը եւ տարիներով ստանձնած է վարչութեան ատենապետի եւ վարչականի պարտականութիւնները:

2000ին, եղբայրը կը կորսնցնէ իր սիրելի կողակից Աստղիկ Շահինեանը, որ հիմնադիրներէն մէկն էր ՀՄԸՄի Սոլթ Լէյք Սիթիի «Համափուր» մասնաճիւղին: Շահինեան, կնոջ յիշատակը վառ պահելու հետևակարով՝ ստեղծած է «Աստղիկ Շահինեան» կրթաթոշակը, որ ամէն տարի կը տրամադրուի երկու ՀՄԸՄական ուսանողներու, ՀՄԸՄ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութեան խողովակով:

2001ին, եղբայրը նաեւ կնոջ յիշատակին ստանձնած է ՀՄԸՄի Նաւասարդեան 26րդ Մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը:

Ալպեր Շահինեան նուիրեալ հայ մըն է, որ միշտ նեցուկ կը կանգնի եւ ներկայութիւն է ՀՄԸՄի Շրջանային մակարդակի բոլոր ձեռնարկներուն:

Նաեւ եղած է 1981ին հիմնուած ՀՄԸՄի Սոլթ Լէյք Սիթիի «Սպիտակ» մասնաճիւղի հիմնադիրներէն մէկը եւ տարիներով ստանձնած է վարչութեան ատենապետի եւ վարչականի պարտականութիւնները:

2000ին, եղբայրը կը կորսնցնէ իր սիրելի կողակից Աստղիկ Շահինեանը, որ հիմնադիրներէն մէկն էր ՀՄԸՄի Սոլթ Լէյք Սիթիի «Համափուր» մասնաճիւղին: Շահինեան, կնոջ յիշատակը վառ պահելու հետևակարով՝ ստեղծած է «Աստղիկ Շահինեան» կրթաթոշակը, որ ամէն տարի կը տրամադրուի երկու ՀՄԸՄական ուսանողներու, ՀՄԸՄ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութեան խողովակով:

2001ին, եղբայրը նաեւ կնոջ յիշատակին ստանձնած է ՀՄԸՄի Նաւասարդեան 26րդ Մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը:

Ալպեր Շահինեան նուիրեալ հայ մըն է, որ միշտ նեցուկ կը կանգնի եւ ներկայութիւն է ՀՄԸՄի Շրջանային մակարդակի բոլոր ձեռնարկներուն:

ծարարներուն միջեւ աշխատանքային կապերու ստեղծման եւ հզօրացման մէջ:

Իբրեւ միջազգային յաջող գործատէր՝ 2002ին, Լոս Անճելըսի քաղաքապետ ձէյմը Քենեթ Հան զայն նշանակեց Միջազգային առեւտուրի իր գրասենեակի խորհուրդի անդամ, իսկ 2003ին՝ նոյն մարզին մէջ Եւրոպա-Ափրիկէ-Միջին Արեւելք շրջանի ենթայանձնախումբի ատենապետ:

Շարունակելով իր բարեգործութիւնները, Կիտցիներուն իր ծնողներուն՝ Արչաւիր եւ Արաքսի Կիտցիներուն ներու յիշատակին մեծ գումար մը նուիրած է Փասստինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ շինարարական աշխատանքներուն: Ան նաեւ եղած է ՀՄԸՄի Շրջանային վարչութեան կեդրոնատեղիի առաջին նուիրատուներէն: Նաեւ չմոռնալով իր արմատները՝ եղած է Սիսի հայրենակցական միութեան



Հիմնադիրներէն եւ անոր գործունէութեան կեդրոնատեղիի առաջին նուիրատուներէն: Նաեւ չմոռնալով իր արմատները՝ եղած է Սիսի հայրենակցական միութեան

## Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Սիւզան Կիտցիներ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄի Նաւասարդեան 28րդ Մարգախաղերուն

Սարգիս Կիտցիներուն ծնած է Նոր Սիս, Պուրճ Համուտ, Լիբանան: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Լուսինեան Ազգային վարժարանին մէջ (ներկայիս Գասարճեան): Կրթութիւնը աւարտելէ ետք հետեւած է եղբոր՝ Աբոյի օրինակին եւ մասնագիտացած է ոսկերչական մարզին մէջ, երիտասարդ տարիքին դառնալով ծանօթ արհեստաւոր, գործարար, ինչպէս նաեւ ընտանիքին եւ համայնքին մեծահոգի բարերար:

Պատանեկան տարիքին անդամակցած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղին՝ իբրեւ սկաուտ եւ պասքեթպոլի մարզիկ, նոյն ժամանակ նաեւ անդամակցած է ծննդավայրի ՀՅԳ «Քրիստափոր» պատանեկան Միութեան:

Իբրեւ մարզիկ՝ սիրած է պասքեթպոլը եւ հետեւողականօրէն մասնակցած է ՀՄԸՄի աւանդական մրցումներուն: Եղբոր ՀՄԸՄականի գեղեցկագոյն յիշողութիւնը հօր հետ ՀՄԸՄի Հայէպի մէջ իրագործուող միջ-շրջանային մարգախաղերուն ներկայութիւնն է եւ այդ առիթով կազմակերպուած տողանցքի մասնակցութիւնը:

Ապագայ իր յաջողութիւններուն իբրեւ առաջին քայլ՝ եղբայրը կը հիմնէ ոսկերչական առաջին խանութը Պէյրութի Համրա շրջանին մէջ: Հետզհետէ առաւել հմտանալով եւ մասնագիտանալով ոսկերչական մարզին մէջ, այսօր եղբայրը մեծաքանակ թանկարժէք քարերու առեւտուրով կը զբաղի, Միացեալ Նահանգներու մէջ մատակարարելով բազմաթիւ հաստատութիւններու:

1974ին, ծանօթացած եւ ամուսնացած է Սիւզան Կիտցիներուն հետ, որ նոր աւարտած էր Պուրճ Համուտի Սոփիա Յակոբեան քոլեճը: Ան նոյնպէս մարգական

կեանքը կը սիրէր եւ մասնակցած էր Լիբանանի երկրորդական վարժարաններու բազմաթիւ մրցումներու:

Ապագային, Կիտցիներուն զոյգը բախտաւորուած է չորս զաւակներով: Ամուսնութենէն ետք, նորապսակները կը փոխադրուին Հաուայի, ուր կը հիմնեն թանկարժէք քարերու խանութներու ցանց մը, որ մինչեւ օրս կը գործէ Ուայքիքի կղզիին մէջ եւ իր տեսակին մէջ երկրորդն է: 1975ի վերջերը, Կիտցիներները կը փոխադրուին Քալիֆորնիա եւ նոյն տարին եղբ. Կիտցիներուն կը միանայ Կլենտէյլի ՀՅԳ «Ահարոնեան» կոմիտէութեան եւ ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղին շարքերը: Եղբայրը մեծապէս կը նպաստէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ վերանորոգման աշխատանքներուն:

1985էն ի վեր եղբայրը գործօն անդամ է Սան Ֆերնանտո Հովիտի ՀՅԳ «Ռոստոմ» կոմիտէութեան եւ նոյն շրջանի ՀՄԸՄի Մասիս մասնաճիւղին: 1987ին, ան մասնակցած է Աթէնքի մէջ գումարուած ՀՄԸՄի Պատգամաւորական 4րդ Ընդհանուր ժողովին:

1988ին ան ընտրուած է ՀՅԳ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի անդամ եւ նոյն տարուան Դեկտեմբերին պատահած հայաստանի ահաւոր երկրաշարժէն ետք, հայրենի աղէտահար ժողովուրդին անհրաժեշտ օգնութիւնը տրամադրող առաջին պատուիրակութեան հետ մեկնած է Հայաստան: Նոյն տարին, ան կարելոր դեր ունեցած է Հայ Մշակութային Հիմնարկութեան հիմնադրութեան գործին մէջ, իսկ 1997ին՝ Հայ ոսկերիչներու ընկերակցութեան՝ նպաստելով հայրենի ոսկերչական մարզի զարգացման, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի գոր-



## Տէր եւ Տիկ. Չարլի եւ Ճիւլի Կալեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄի Նաւասարդեան 29րդ Մարգախաղերուն

Չարլի Կալեան ծնած է Պուէնոս Այրես, Արժանթին, ազգաւոր վանցի ընտանեկան յարկի մը տակ: Իր մեծ հայրերը Հայոց Յեղապանութենէն փրկուած են եւ Հայաստանի կարճատեւ անկախութենէն ետք, Երեւանէն տեղափոխուած են Թեհրան, Պարսկաստան: Իր ծնողները իրարու ծանօթացած են Պարսկաստանի մէջ եւ ամուսնացած Պուէնոս Այրես: Տեղւոյն ազգային կեանքին մէջ անոնք բերած են գործօն մասնակցութիւն, որ մեծ ազդեցու-

թիւն ձգած է Չարլիի վրայ: 1959ին, երիտասարդ Կալեան ընտանիքը փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ հաստատուած է Լոս Անճելըսի մէջ: Չարլի Կալեան անդամակցած է Բաֆֆի հայրենակցական միութեան սկաուտական բաժինին, որուն հիմնադիրներէն եղած էր մայրը: Աւելի ուշ՝ 1968ին, այս միութիւնը նախաքայլը առած է հիմնելու ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղը: Եղբ. Կալեան նոյն ժամանակաշրջին անդամակցած է

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

նաեւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան եւ «Րաֆֆի» երգչախումբին:

1971ին, Հազիւ 19 տարեկան, Չարլի Կալեան նետուած է կեանքի ասպարէզ եւ անձնական իր աշխատանքը ունենալու հեռանկարով՝ տեղափոխուած է Տենվըր, Քոլորադո, ուր իբրեւ անկախ գործատէր նետուած է Հագուստի արդիւնաբերութեան ոլորտին մէջ: Մինչ այդ, 15 տարեկանին ծանօթացած ըլլալով իր ապագայ կողակից ձիւլիին, երիտասարդ սիրահար զոյգը ամուսնացած է 1973ին եւ տեղափոխուած է Լոս Անճելըս, ուր կեդրոնացած են իրենց ընտանիքին եւ աշխտանքին վրայ: Ապագային, անոնք բախտաւորուած են երեք զաւակներով՝ Քարլօ, Անժելօ եւ Մոնիքա: Երեքը գործօն դեր ունեցած են ազգային մեր կեանքին մէջ, յատկապէս ծառայելով Հայ Դատին:

Չարլի Կալեան մեծ յաջողութիւններ արձանագրած է իր կեանքի ասպարէզին մէջ: 31 տարեկանէն արդէն գործընկերն էր Organic Grown Corp Հագուստի արտադրական ընկերութեան, իսկ 1988ին հիմնած է իր Chazzz CMG, Inc. ընկերութիւնը: Տասը տարիներ իր ընկերութիւնը ղեկավարել է ետք, 1998ին միացած է նոյն մարզին մէջ Հանրածանօթ Tarrant Apparel Group ընկերութեան, որուն յաջողագոյն գործադիր տնօրէնը եղած է մինչեւ

2008: Ներկայիս Կալեան Հիմնադրին ու տնօրէնն է Monarch Apparel Group Հաստատութեան, որ իր մարզին մէջ մեծաքանակ ծառայութիւններ կը մատուցէ աշխարհի տարածքին:

Իր ամէնօրեայ աշխատանքներուն առընթեր, Չարլի Կալեան լայն ժամանակ տրամադրած է ազգային կեանքին: Ան եղած է ՀՄԸՄԻ Ծրջանային վարչութեան փոխատենապետ, ՀՄԸՄԻ Ծրջանային Տնտեսական յանձնախումբի երկար տարիներու անդամ, ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Յաղթանակի պարահանդէսի կազմակերպիչ յանձնախումբի անդամ եւ նոյն պարահանդէսի Հանրածանօթ Հանդիսավար, Հայ Դատի յանձնախումբի անդամ, ինչպէս նաեւ նախագահը University of Southern California (USC) Համալսարանի Հայագիտական Հետազոտութիւններու ամպիոնին:

Եղբ. Կալեան գործօն մասնակցութիւն բերած է եւ կը շարունակէ բերել շրջանի ազգային կեանքին մէջ եւ իր բարեգործութիւններուն համար ան միշտ գանահատանքի արժանացած է Հայկական եւ տեղական զանազան կազմակերպութիւններէ:

2004ին, սիրով ընդառաջելով ՀՄԸՄԻ Ծրջանային վարչութեան ղիմումին, ստանձնած է ՀՄԸՄԻ Նաւասարդեան 29րդ մարգախաղերու պատուոյ նախագահութիւնը:



Եղբ. Ծանթ Հայթայեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 30րդ Մարգախաղերուն

Եղբ. Ծանթ Հայթայեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Նախնական ուսումը ստացած է էշրէֆիէի Ս. Յակոբ վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ նախ Մխիթարեան ձեմարանին մէջ: Երկու տարի Պէյրութի School of English & Advance Studies վարժարանին մէջ անգլերէնի ճիւղին մէջ մասնագիտանալէ ետք նետուած է կեանքի ասպարէզ: Եօթ տարեկանին անդամակցած

է ՀՄԸՄԻ էշրէֆիէի մասնաճիւղին՝ իբրեւ գայլիկ, ապա՝ սկաուտ: Յատուկ սէր ունեցած է առեւտրական մարզին նկատմամբ, որ իր մէջ զարգացած է ազատ ժամերուն իր հօր հետ աշխատելով: 1972ին փոխադրուած է Ամերիկա, ուր զանազան աշխատանքներ ձեռնարկելէ ետք, 1978ին սկսած է ոսկերչութիւն ընելու: Նոյն տարին, ծանօթացած է իր կողակիցին՝ Վերժինին, որուն



In Memory of

# Prof. Harut Barsamian

Փրոֆ. Յարութ Պարսամեանի  
Յիշատակին

Թամարա Պարսամեան

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## Եղբ. Ծանթ Հայթայեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 30րդ Մարգախաղերուն

Հետ ամուսնացած եւ բախտաւորուած է երկու գաւակներով՝ Հայկ եւ Մայք: 1978ին, Վերժինին Հետ միացած է ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղի Ընկերային յանձնախումբին:

ՀՄԸՄԻ «Բարձրացիր, բարձրացուր» նշանաբանը մեծ ազդեցութիւն ունեցած է եղբոր կեանքի յաջողութեան մէջ: Հակառակ իր զբաղուածութեան, ան լայն ժամանակ տրամադրած է ՀՄԸՄԻն, որուն Համար ալ գնահատուած է իր մասնաճիւղին եւ Շրջանային վարչութեան կողմէ:

Իբրեւ Գործօն անդամ՝ պատասխանատու պաշտօններ ստանձնած է ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղուն մէջ: Եղած է վարչական եւ երկար տարիներ ղե-

կավարած է մասնաճիւղի Ընկերային յանձնախումբը, որ այդ օրերուն միակ գործունեայ երիտասարդական միւլտրն էր: 1980էն ի վեր եղբայրը աշխատանք կը տանի Շրջանային վարչութեան տնտեսական յանձնախումբին մէջ: Երկու շրջաններ ընտրուած է Շրջանային վարչութեան անդամ: Ան մեծ վաստակ ունի ՀՄԸՄԻ Նաւասարդեան ձեռնարկներու յաջողութեան եւ յատկապէս յաղթանակի պարահանդէսներուն մէջ:

Իբրեւ յաջող գործատէր՝ եղբոր մասին յաճախ անդրադարձած է նաեւ օտար մամուլը: Եղբայրը սիրայօժար ստանձնած է 2006 տարեշրջանի ՀՄԸՄԻ Նաւասարդեան 30րդ մարգախաղերուն Պատուոյ նախագահութիւնը:

Իսկ Համալսարանական ուսումը՝ Լոս Անճելըսի Համալսարանին մէջ (Cal. State LA), ուր մասնագիտացած է առեւտրական ճիւղին (Business) մէջ:

1977ին անդամակցած է ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղին՝ իբրեւ արծուիկ, ապա՝ արեւուշ, նոյն ժամանակ եղած է նաեւ պասքեթպոլի մարզիկ:

Ազգային ոգիով մեծցած Պոյաճեան զոյգը, Հաւատարմութեան աշխատանքի կարեւորութեան մեծ աշխատանք տարած է ազգային մեր կեանքին մէջ: Էլիզապէթ Պոյաճեան, մայրական իր պարտականութիւններուն առընթեր, կարեւոր պատասխանատուութիւններ ստանձնած է շրջանի Հայ Դատի յանձնախումբին, Փաստինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ընկերային յանձնախումբին եւ

Թեմիս Ազգային վարչութեան կազմին մէջ: Յովսէփ Պոյաճեան պատասխանատու պաշտօններ վարած է զանազան միութիւններու մէջ: Ան եղած է ՀՄԸՄԻ Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի ատենապետը, Փաստինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Ծինարարական յանձնախումբի պատասխանատու, Ազգային առաջնորդարանի Ծինարարական յանձնախումբի անդամ:

Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեանները 2006ին սիրայօժար կերպով ստանձնած են ՀՄԸՄԻ Նաւասարդեան 31րդ մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը: Անոնք միշտ կը զօրակցին ՀՄԸՄԻն եւ Հայ ժողովուրդին օգտակար Հանդիսացող ազգային կազմակերպութիւններու:

## Եղբ. Վարուժ Պետիկեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 32րդ Մարգախաղերուն

Եղբ. Վարուժ Պետիկեան ծնած է Հալէպ, Սուրիա: Փոքր տարիքին ընտանիքին Հետ փոխադրուած է Պոսթըն, Արեւելեան Ամերիկա, այնուհետեւ՝ 1967ին, Սան Ֆրանսիսքօ: Այդ շրջանին Հայկական վարժարաններու չգոյութեան պատճառով յաճախած է տեղւոյն ամերիկեան Հանրային վարժարաններ, նոյն ժամանակ, տունը Հայերէն գրել-կարդալ սորված է ուսուցիչ Հօր օգնութեամբ:



Համալսարանական ուսումը ստացած է Սեն Հոգէի Համալսարանին մէջ, ուր մասնագիտացած է առեւտրական ճիւղին շուկայացումի (marketing) մարզին մէջ, ապա նետուած է կեանքի ասպարէզ. կարճ ժամանակ մը իբրեւ պաշտօնեայ աշխատած է ACS ընկերութեան մէջ: 1985ին, նոյն ընկերութեան կողմէ գործուողուած է Հոլիվուտ, ուր աւելի ուշ բացած է իր անձնական GBH ընկերութիւնը՝ յաճախորդ ունենալով KCET, «Պուլարս» եւ այլ նշանաւոր ընկերութիւններ:

Ներկայիս ան ունի բազմաթիւ մասնաճիւղեր եւ կը գործակցի մեծ ընկերութիւններու ու նշանաւոր Համալսարաններու Հետ:

Եղբ. Պետիկեան ՀՄԸՄԻ Գրեթեմթա Հովիտի «Ծանթ» մասնաճիւղին անդամակցած է իր երկու դուստրերուն՝ Ալիքի ու Թալինի շնորհիւ, որոնք եղած են պասքեթպոլի մարզիկներ, իսկ ինք՝ անոնց եւ անոնց տարեկիցներու մարզիչը, անձնական նախաձեռնութեամբ կազմելով մասնաճիւղի 2. դասակարգի աղջկանց պասքեթպոլի խումբը:

Ազգային կեանքին մէջ, Վարուժ Պետիկեան քանի մը տարիներ մասնակցած է Հայաստան Համահայկական Հիմնադրամի աշխատանքներուն, որոնց ընթացքին ծանօթացած է բազմաթիւ ՀՄԸՄՄականներու եւ գործակցած է անոնց Հետ: Հակառակ իր բազմազբաղ ըլլալուն, ան վարչական

պատասխանատուութիւններ ստանձնած է ՀՄԸՄԻ «Ծանթ» մասնաճիւղին մէջ ընտրուելով վարչական եւ ստանձնելով փոխատենապետի պատասխանատուութիւնը:

Ան առաջին անգամ 2001ին այցելած է Հայաստան, ուր ծանօթացած է Հաշմանդամներու «Փիւնիկ» միութեան անդամներուն Հետ, որոնց տարիներ շարունակ օգտակար Հանդիսացած է:

Այնուհետեւ, խումբ մը ընկերներով Հայաստանի մէջ Հիմնած են «Նուանի» կազմակերպութիւնը, որուն միջոցաւ անվճար ծառայութիւններ կը մատուցուին մտային եւ ֆիզիքական զարգացման կարիքը ունեցող մինչեւ ութ տարեկան երեխաներու եւ անոնց ծնողներուն:

Եղբ. Վարուժ Պետիկեան նուիրեալ Հայորդի մըն է. ան միշտ կը փորձէ օգտակար Հանդիսանալ իր շրջապատին եւ ՀՄԸՄԻ նման այն կազմակերպութիւններուն, որոնք կը ջանան մաքուր շրջապատ մը ստեղծել երիտասարդութեան Համար:

Եղբ. Պետիկեան, Հաւատարմով ՀՄԸՄԻ առաքելութեան, 2007ին սիրով ընդունեց ՀՄԸՄԻ 32րդ Նաւասարդեան մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը:



## Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 31րդ Մարգախաղերուն

Յովսէփ Պոյաճեան ծնած է Ժողովրդական զինուոր, Լիբանան: Հասակ առած է Պէյրութի Քարանթինա արուարձանին մէջ: Նախնական ուսումը ստացած է Մեսրոպեան Ազգային վարժարանին, իսկ երկրորդականը՝ Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քոլեճին մէջ:

Փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄԻ Մար Մըխայէլի «Ծանթ» մասնաճիւղին՝ իբրեւ ֆութպոլի մարզիկ, ուր բաւական յառաջացած եւ աչքառու մարզիկ մը դարձած է: Մարզականին առընթեր, ան նաեւ միացած է ՀՅԴ «Տիգրան Մամշուր» կոմիտէութեան շարքերուն: Կեանքի պայմաններու բերումով, ան կանուխ Հասակին կեանքի ասպարէզ նետուած է՝ մասնագիտանալով ատաղձագործութեան մէջ: Կարճ ժամանակ Գանատա ապրելէ ետք, 1979ին վերջնականապէս փոխադրուած է Ամերիկա եւ Հաստատուած է Փասատինա քաղաքը, ուր նոյն տարին իսկ անդամակցած է տեղւոյն նորաստեղծ ՀՄԸՄԻ «Ազատամարտ» մասնա-

ճիւղին: 1980ին Հիմնած է իր Pasadena Cabinet անձնական իր ընկերութիւնը: Երկու տարիներ ետք Հիմնած է Metro Commercial Construction, Inc Հաստատութիւնը, նոյն ժամանակ գործ տանելով Property Development մարզին մէջ: 1985ին ծանօթացած է Էլիզապէթ Գապագեանի Հետ, որուն Հետ ամուսնանալով՝ կազմած է Հայկական Հարազատ ընտանեկան բոյն մը, ապագային բախտաւորուելով երկու դուստրերով՝ Սիլվա եւ Դայար:

Էլիզապէթ Գապագեան ծնած է Հալէպ, Սուրիա: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի Հայկազեան վարժարանին մէջ: 1973ին, ընտանիքին Հետ փոխադրուած է Լիբանան եւ նախակրթարանի ուսումը շարունակած է էհրամճեան Ազգային վարժարանին մէջ: 1976ին վերջնականապէս Հաստատուած է Ամերիկա: Երկրորդական ուսումը ստացած է Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանին,

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ



## Տէր Եւ Տիկ. Վահագն Եւ Պայծառ Թովմասեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ 33րդ Նաւասարդեան Մարգախաղերուն

Վահագն Թովմասեան ծնած է Պաղտատ, Իրաք: Եօթը տարեկանին անդամակցած է ծննդավայրի ՀՄԸՄԻ մասնաճիւղին՝ իբրեւ գայլիկ: Սակայն յատուկ սէր ու-

նենալով մարզանքի հանդէպ, ան կեդրոնացած է ֆութպոլի մարզաճիւղին մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է Պաղտատի Կիլպէնկեան Հայկական վարժա-

րանին մէջ: Աւարտելէ ետք՝ 1979ին, ընտանիքին հետ փոխադրուած է Անգլիա, ուր քանի մը տարիներ ապրելէ ետք, փոխադրուած են Ֆիլատելֆիա, եւ երկրորդական ուսումը ստացած է Սեն Ֆրանսիս «Հայ սքուլին» մէջ:

1984ին վերջնականապէս հաստատուած է Քալիֆորնիա եւ աւարտած Կլէնտէյլի «Հայ սքուլ»ը: Նոյն տարին փոխանցուած է ՀՄԸՄԻ Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ եւ առաջին անգամն ըլլալով մասնակցած է Նաւասարդեան մարգախաղերուն՝ իբրեւ ֆութպոլի մարզիկ:

Ապա, չորջ չորս տարիներ Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղին անդամակցելէ ետք, 1989ին փոխանցուած է Լոս Անճելըսի մասնաճիւղ եւ ստանձնած է մասնաճիւղի ընկերային յանձնախումբի կրտսեր խումբի պատասխանատուութիւնը, միաժամանակ մաս կազմելով մասնաճիւղի ֆութպոլի խումբին, ապագային դառնալով մարզիչ:

Ընկերային եւ կազմակերպչական իր կարողութիւններուն շնորհիւ, եղբօր վստահուած են զանազան կարեւոր պաշտօններ: Ան երկար տարիներ ընտրուած է Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութեան անդամ եւ ստանձնած է մարզական եւ ընկերային յանձնախումբերու, ինչպէս նաեւ զանազապահի դժուար պարտակա-նութիւնները:

Համալսարանական ուսումը ստացած է University of Southern California (USC) Համալսարանին մէջ եւ մասնագիտացած է ճարտարապետութեան մէջ (Bachelor of Arts in Architecture): Նոյն ժամանակ աշխատած է Հօր Urban Development & Infrastructure Inc. անձնական ընկերութեան մէջ, որուն պատասխանատուութիւնը ստանձնած է 1997էն ի վեր:

Մեծ ոգեւորութեամբ շարունակած է միութենական իր գործունէութիւնը: Բազմիցս մասնակցած է շրջանի ՀՄԸՄԻ բարձրագոյն ժողովներուն: Մեծ ներդրում ունեցած է Նաւասարդեան մարգախաղերու կազմակերպչական աշխատանքներուն մէջ:

ՀՄԸՄէն բացի, եղբայրը անդամ է ՀՅԳԻն եւ իր ներդրումը կը բերէ շրջանի Հայ Դատի յանձնախումբի աշխատանքներուն: Առաւել քան 10 տարիներ «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան պատասխանատու մարմինի անդամ եղած է եւ մասնակցած է Հայաստան եւ Արցախ Հայկական մեր կոթողներու վերանորոգման աշխատանքներուն: 1993ին ծանօթացած է նոյն կազմակերպութեան անդամ Պայծառ Չալիքեանի հետ, որուն հետ ամուսնացած է 1996ին եւ բախտաւորուած են աղջիկ զաւակով մը՝ Սօսէ: Եղբայրը կը սիրէ լուսանկարչութիւն եւ ճամբորդութիւն:

Պայծառ Թովմասեան ծնած է



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ

# Օսկօ Եւ Երան Կիրակոսեաններ Եւ զաւակները Չապէլ, Նաթալի, Ճորճ Եւ Քրիսթին

## Կը Շնորհաւորեն Համայն Հայութեան Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԳ

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## Տէր Եւ Տիկ. Վահագն Եւ Պայծառ Թովմասեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ 33րդ Նաւասարդեան Մարգախաղերուն

Երեւան, Հայաստան: Ծատ փոքր տարիքին, ընտանիքին հետ փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Երկրորդակարգի ուսումը ստացած է Մոնթեպելլոյի Մետրոպոլիտան Ազգային վարժարանին, իսկ համալսարանական ուսումը՝ Քալիֆորնիոյ նահանգի Նորթրիճ համալսարանին մէջ (Cal State Northridge) եւ հետեւած Քաղաքական գիտութիւն (Political Science) ճիւղին:

ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի մասնաճիւղի անդամ է եւ մեծ ներդրում ունեցած է անոր ընկերային յանձնախումբի աշխատանքներուն: Անդամակցած է նաեւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան (ՀԵԴ): 1993ին, իբրեւ Field Deputy, աշխատանքի սկսած է Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ, ձեռքի Կոլլաբրի եւ էրիք Կարսեսթիի քաղաքապետական խորհուրդի նախագահութեանց շրջանին: Ներկայիս նոյն աշխատանքը կը տանի Քալիֆորնիոյ Նահանգային խորհրդարանի անդամ Քեվըն Տը Լիոնի գրասենեակին մէջ: Քոյր Թովմասեան ընդհանրական իր աշխատանքին առնթեր, յատուկ ճիգ թափած է՝

օգտակար հանդիսանալու համար շրջանի հայկական համայնքին, մեծ ներդրում ունենալով հայկական կարեւոր նախաձեռնութիւններու յաջողութեանց մէջ, ինչպէս՝

Հոլիվուտի մէջ After school program, Little Armenia-ի ստեղծման, Հոլիվուտ-Երեւան քոյր քաղաքներու ծրագրի իրականացման, ՀՕՄԻ Մարի Փոսթոյեան մանկամտերին դրամաշնորհին եւ այլ կարեւոր նախաձեռնութիւններու:

Ազգասիրական եւ ծառայական իր աշխատանքներուն համար ան պարգեւատրուած է:

Լոս Անճելըսի մասնաճիւղին, Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանի տնօրէնութեան, Chamber of Commerce-ի, Լոս Անճելըսի ոստիկանութեան բաժանմունքին եւ այլ կազմակերպութիւններու կողմէ:

Թովմասեան ամուսին բնակարանը միշտ բաց եղած է հայկական կազմակերպութիւններու եւ Հայ ժողովուրդի բարեկամ քաղաքական ղեմքերու ի նպաստ ձեռնարկներու կազմակերպման համար:

Հի Սագաճեանի հետ, որուն հետ ամուսնանալով՝ ընտանեկան երջանիկ բոյն մը կազմած է, հետագային բախտաւորուելով մէկ հատիկ տղայ զուակով մը, որ հօր անունով կոչած է ձորճ:

Ժամկոչեան զանազան արհեստներ փորձելէ ետք, վերջապէս կնոջ հետ բացած է լողազգեստի կարատուն մը, որ մեծ յաջողութիւն արձանագրած է:

2005ին, դժբախտաբար, քաղցկեղի հիւանդութենէն տառապելով՝ մահացաւ ձորճ Ժամկոչեանի կինը, զինք առանձին ձգելով իր մէկ հատիկ զուակին հետ:

ձորճ Ժամկոչեան, երկար տարիներէ ի վեր, արդէն իսկ հանգստեան կոչուած է եւ կը զբաղի շատ ակումբներ այցելելով: Այս բոլորէն անկախ սակայն, ան միշտ հիացմունք եւ յարգանք ունեցած է ՀՄԸՄԻ հանդէպ, որուն յատկապէս Նաւասարդեան մարգախաղերուն եւ այդ առիթով

կազմակերպուած ձեռնարկներուն միշտ ներկայ գտնուած է եւ հմայուած անոնց լաւ կազմակերպուածութեամբ:

Ժամկոչեան, տպաւորուած ըլլալով ՀՄԸՄԻ ազգանպաստ գործունէութեամբ, միշտ ուզած է հովանաւորել անոր Նաւասարդեան մարգախաղերը: 2010ի այդ առիթը ընծայուելով իրեն, հոգեկան մեծ գոհունակութիւն ապրած է:

2016ին, Ժամկոչեան մեծ ոգեւորութեամբ նշեց իր 90ամեակը, իր բարեկամներուն եւ ՀՄԸՄԻ-ի քոյր-եղբայրներուն հետ:

ձորճ Ժամկոչեան սրտանց կը հաւատայ ՀՄԸՄԻ առաքելութեան եւ հետապնդած նպատակներուն: 2010էն ի վեր ան մնայուն ներկայութիւն եղած է ՀՄԸՄԻ ծրագրերուն եւ իր նիւթական ու բարոյական աջակցութեամբ նպաստած է անոնց յաջողութեանց:



## Ընկեր ձորճ Ժամկոչեան՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ 35րդ Նաւասարդեան Մարգախաղերուն

Ընկեր ձորճ Ժամկոչեան ծնած է Պուրճ Համուտի Նոր Մարաշ շրջանը, Լիբանան: Յաճախած է ծննդավայրի Քառասուն Մանուկ Ազգային նախակրթարանը: Ան կարելիութիւնը չունենալով աւելի բարձր ուսում ստանալու, ինքնաշխատութեամբ սորված է հայերէն գրել ու կարդալ, ինչպէս նաեւ շատ բան սորված է կեանքի ասպարէզէն:

Երիտասարդ տարիքին անցած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը՝ կնքահայր ունենալով ազգային գործիչ եւ «Ազգակ» պաշտօնակցութիւն նախկին տնօրէն Հայկ Պալեանը: Ան գործած է Նոր Մարաշի «Սարգարապատ» կոմիտէի կողմէն «Օհանջանեան» խումբին մէջ:

Փոքր տարիքին կեանքի ասպարէզ նետուելով՝ փորձած է զանազան արհեստներ սորվիլ: 1954-56, երկու տարիներ աշխատած է Լիբանանի «Ազգակ» օրաթերթին տպարանը՝ իբրեւ գրաչար: 1956ին, իբրեւ գրաչար հրաւիրուած է Արեւելեան Ամերիկայի Պոսթըն քաղաքը եւ աշխատած է տեղւոյն ՀՅԴ պաշտօնակցութիւն «Հայրենիք»ի մէջ:



Չհամակերպելով քաղաքի ցուրտ օդին, մէկ տարի ետք, 1957ին փոխադրուած է Լոս Անճելըս: 1972ին ծանօթացած է Մաքրու-

## Տէր Եւ Տիկ. Գագիկ Եւ Մատին Գէորգեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ 37րդ Նաւասարդեան Մարգախաղերուն

Գագիկ Գէորգեան ծնած է Հայաստանի մայրաքաղաք Երեւան, ուր նաեւ հասակ նետած եւ ուսում ստացած է: Ծատ փոքր տարիքէն աշխատած է իր հօրեղբոր Երեւանի գոհարեղէնի աշխատանոցին մէջ: 1977ին յաճախած է Գոհարեղէնի քոլեճի ձեւաւորման եւ ազամանդ տաշելու բաժանմունքը: Աւելի ուշ, ան անդամակցած է Հայաստանի արուեստի հիմնարկին՝ իբրեւ ձեւաւորող:

Հայկական գոհարեղէնի աւանդութիւններուն արդէն իսկ ծանօթ Գէորգեան, առաւել մասնագիտանալու եւ զօրանալու համար իր մարզին մէջ՝ 1979ին փոխադրուած է Մոսկուա, ուր դիմագրւած է նոր իրականութիւններ: Համբերութեամբ յաղթահարելով իր դէմ ցցուած դժուարութիւնները, յաջողութեամբ ստեղծած է իր պայծառ ասպարէս: Արդէն ինքնավստահ իր արհեստին մէջ, Գագիկ՝ իբրեւ մասնագէտ ձեւաւորող եւ ոսկեայ նուրբ գործեր նորագող, միացած է Սորհրդային Միութեան Արուեստի հիմնարկին: Մոսկուայի մէջ մեծ յաջողութիւններու հասնելէ ետք, 1991ին կը հիմնէ իր առաջին անձնական ընկերութիւնը՝ Estet Jewelry House-ը, ապա՝ ընտանեկան փոքր գործարան մը, ուր տաղանդաւոր ոսկերիչներ կը ստեղծագործեն իրենց գոհարեղէնի գեղեցկագոյն նորաձեւութիւնները: Աւելի ուշ, այս գործարանը կը հանդիսանայ Estet վաճառանիչը, որուն վրայ կեդրոնանալով՝ Գագիկ արագօրէն հմտացած է գոհարեղէնի ճարտարութեան բոլոր գաղտնիքներուն մէջ:

Երկար տարիներէ ի վեր, այս ընկերութիւնը Եւրոպայի գոհարեղէնի ճարտարարուեստի մեծագոյն կեդրոններէն մէկը կը հանդիսանայ: Estet Jewelry House-ը

Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ 37րդ Նաւասարդեան Մարգախաղերուն



# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

չուտով ուսական նշանաւոր անուն դարձած է ամբողջ Եւրոպայի մէջ եւ գոհարեղէնի գլխաւոր շուկաներէն մէկը կը հանդիսանայ Ռուսիոյ մէջ: Իր կենսագրութեան նոր եւ հետաքրքրական էջը կը բացուի 2009ին, երբ Ռուսիոյ մէջ կը հիմնէ եւ կը նախագահէ Հայ ոսկերիչներու հիմնարկութիւնը: Երկու տարիներու պաշտօնավարութեան ընթացքին, կարող առաջնորդ մը հանդիսանալով՝ կը յաջողի մարդիկ համախմբել իր գաղափարներուն շուրջ:

2011ին կը դառնայ Միջազգային Հայ ոսկերիչներու հիմնարկութեան նախագահը եւ առիթ կ'ունենայ գործադրելու իր ծրագրերը: Նոյն տարին հիմնարկութիւնը շատ յաջող ցուցահանդէս մը կը կազմակերպէ Երեւանի մէջ, որ երկար տարիներու երազն էր Հայ ոսկերիչներու հիմնարկութեան բոլոր անդամներուն: Կը սկսի հրատարակութիւնը Հայ ոսկերիչներու հիմնարկութեան միջազգային պարբերականին: Հայ ոսկերիչներու նոր հիմնարկութիւններ կը բացուին Հայաստանի, Չեխիոյ, Ռուսիոյ, Պելճիքայի, Միացեալ Արաբական Էմիրութիւններու եւ Արժանթինի մէջ: Կը բացուի նաեւ հիմնարկութեան կայքը, որ հաղորդակցութեան հոյակապ միջոց մը կը հանդիսանայ աշխարհի Հայ ոսկերիչներու բոլոր հիմնարկութիւններու անդամներուն:

Գագիկ Գէորգեան իր անձնական հաստատութեան նման հոգատար վերաբերում կը ցուցաբերէ Հայ ոսկերիչներու հիմնարկութիւններուն: Գեկտեմբեր 2011ին, իր գլխաւորութեամբ, Հայ ոսկերիչներու հիմնարկութեան առաջին դպրոցը կը բացուի Մոսկուայի մէջ, որ իր կեանքի կարեւորագոյն ծրագիրներէն մէկն էր: Այնուհետեւ, նման դպրոցներ կը բացուին Արցախի, Երեւանի եւ Լոս Անճելըսի մէջ: Իբրեւ հայ՝ Գագիկ Գէորգեան միշտ փափաքած է օգտակար հանդիսանալ իր հայրենիքին: Այսօր, ահա՛ կատարելագործուած արհեստավարժ մը՝ որ աւելի քան 35 տարիներ ծառայելով գոհարեղէնի արդիւնաբերական մարզին մէջ՝ բացառիկ յաջողութիւններ արձանագրած եւ համաշխարհային ճանաչման արժանացած է:

Իր կեանքի մեծագոյն նուաճումը իր ընտանիքն է, կինը՝ Մատինը եւ երկու զաւակները՝ Գայեանէն եւ Էդուարդը: Մատին Պապայեան ծնած եւ հասակ նետած է Երեւանի մէջ, ուր նաեւ յաճախած է տեղւոյն արուեստի քոլեճը, ուրկէ վկայուելէ ետք՝ 1981ին, ամուսնացած է Գագիկի հետ: Մինչեւ 1999 Մոսկուա ապրելէ ետք փոխադրուած է Լոս Անճելըս: Անոնք հպարտ նոր անդամներն են ՀՄԸՄԻ մեծ ընտանիքին՝ իբրեւ Պատուոյ նախագահ 37րդ Նաւասարդեան մարգախաղերուն:

## Եղբ. Սարգիս Նուրեան՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 38րդ Մարգախաղերուն

Սարգիս Նուրեան ծնած է Պէյրութ, Լիբանան, ազգանուէր եւ ՀՄԸՄԻ-կան ընտանեկան յարկի մը տակ: Նախնական կրթութիւնը ստացած է Պուրճ Համուտի Նոր Սիւսի շրջանի Աքսոր Գասարճեան նախակրթարանին մէջ, ապա յաճախած է Սուրէն Ռանամիրեան Ազգային վարժարանը: Երկրորդական ուսումը ստացած է Կիպրոսի անգլիական վարժարանին մէջ:

Եղբ. Նուրեան փոքր տարիքէն, հետեւելով իր ծնողքին քայլերուն, աշխոյժ գործունէութիւն ունեցած է իր ապրած շրջանի հայկական կեանքին մէջ: Փոքր տարիքին անդամակցած է «Գարեգին Նժդեհ» պատանեկան միութեան: 1976ին անդամակցած է Անթիլիասի ՀՅԳ ԼԵՄԻ «Հայաստան» մասնաճիւղին, ուր գործած է տասը տարիներ: 1974-1982, եղբայրը նաեւ անդամակցած է ՀՄԸՄԻ Անթիլիասի մասնաճիւղին: Եղբայրը կը սիրէ ճամբորդել, որսորդութիւն, ձկնորսութիւն,



մոթորայքըլ քչել: 1987ին Հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու Սաութ Պէյլի շրջանը, ուր անդամակցած է տեղւոյն

### Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ Merry Christmas and Happy New Year



From all of us at Custom Probiotics

[www.customprobiotics.com](http://www.customprobiotics.com)



Glendale, CA (800) 219-8405

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## Եղբ. Սարգիս Նուրեան՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 38րդ Մարգախաղերուն

ՀՄԸՄԻ «Արագած» մասնաճիւղին՝ ստանձնելով զանազան պատասխանատու պաշտօններ եւ 1990ին ընտրուած է վարչական: Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ նետուած է ոսկերչական արտադրութեան ասպարէզը, նոյն տարին նաեւ միացած է Հայ ոսկերիչներու ընկերակցութեան, ուր աշխոյժ գործունէութիւն տանելով՝ ստանձնած է անոր փոխնախագահի, այնուհետեւ նախագահի պաշտօնը, որ պատասխանատուութեամբ կատարած է: 1991ին, ան միացած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը եւ պատասխանատու պաշտօններ ստանձնած. յատկապէս 1992-1994 տարիներուն, մաս կազմած է շրջանի Հայ Դատի յանձնախումբին: Ան մինչեւ օրս հաւատարմով կը գործէ իր կուսակցութեան համար:

Եղբ. Սարգիս Նուրեան, միշտ եղած է իր ապրած շրջանի հայկական համայնքին հետ, զգացած է անոր հետ, ապրած է անոր ցա-

ւերով եւ փորձած է օգտակար հանդիսանալ անոր:

Եղբայրը յատուկ սէր ունեցած է ՀՄԸՄԻ հանդէպ, որուն համար ալ իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը ցուցաբերած է իր մասնաճիւղին եւ շրջանային մակարդակի բոլոր աշխատանքներուն:

Իբրեւ հայրենասէր եւ հայրենիքի կարօտով մեծցած անձնաւորութիւն՝ եղբ. Նուրեան փորձած է օգնել իր հայրենիքին եւ իր փորձերը ի գործ դրած է Հայաստանի ոսկերչական մարզի զարգացման մէջ, անձնապէս եւ Հայ ոսկերիչներու ընկերակցութեան միջոցաւ զարկ տուած է Հայաստանի ոսկերչական մարզի զարգացման:

Եղբ. Սարգիս Նուրեան սիրայօժար ստանձնած է ՀՄԸՄԻ Նաւասարդեան 38րդ մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը, առ ի երախտագիտութիւն այն կազմակերպութեան, որմէ շատ բան սորված է իր կեանքին ընթացքին:

տեղւոյն ՀՄԸՄԻ «Սարգարապատ» մասնաճիւղին՝ իբրեւ զայլիկ, ապա՝ Սկաուտ, այնուհետեւ պասքեթպոլի մարզիկ: Ֆերմանեան ընտանիքին համար ՀՄԸՄԻ «Հայ տաքուկ բոյն» մըն է:

Մարօ Փայասեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Նախնական եւ նախակրթարանի ուսումը ստացած է Պէյրութի Նազարեան նախակրթարանին, իսկ երկրորդականը Դարուհի Յակոբեան վարժարանին մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է: Ան եղած է պասքեթպոլի ակնյայտ մարզկուհի մը եւ ըստ իր հաստատումին, երկու զաւակներն ալ պասքեթպոլի սէրը իրմէ ստացած են: Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով չէ կրցած համալսարան ուսում ստանալ: Ամուսինին նման, ինք եւս հայու ազգային արժանապատուութեան զգացումը, ազգային շունչն ու ոգին ժառանգած է ծնողներէն: Պետիկին ծանօթանալէ ետք ամուսնացած է անոր հետ եւ միասին փոխադրուած են Ապու Տապի:

Թէեւ հօրը պտուղի վաճառական ըլլալը որոշ չափով ազդած է իր կեանքի ասպարէզի ընտրութեան մէջ, սակայն կնոջ՝ Մարոյի քաջալերանքն ու նեցուկն են, որոնք զինք կեանքի յաջողութեան հասցուցած է: Ան կնոջ խրախուսանքներով անվախօրէն գործի նետուած է եւ ընտրած է մարզու կեանքի ամենաէկանը նկատուող ուտելիքի մարզը, որովհետեւ եղբոր արդար տրամաբանութեամբ, ինչ ալ ըլլան երկրի մը տնտեսական պայմանները, ժողովուրդը ուտելէ պիտի չզղաղի: 15 Ապրիլ 1993ին, եղբ. Ֆերմանեան Անահայի մէջ կը բանայ իր առաջին խանութը, որուն հաշուական ամենակարեւոր եւ դժուար պարտականութիւնը կը վստահի կնոջ՝ Մարոյին:

Պետիկ Ֆերմանեանի հաստատումով՝ Հայ ազգն ու ՀՄԸՄԻ միշտ եղած են իր սիրտին մէջ, սակայն երբ երկու զաւակները ՀՄԸՄԻ գայլիկ, Սկաուտ եւ մարզիկ եղած են, անիկա դարձած է իր աչքին լոյսը, որովհետեւ ՀՄԸՄԻ չնորհիւ իր զաւակներուն եւ ընտանիքին հայու ինքնութիւնը պահպանուած է:

Ֆերմանեաններուն տունը փոքրիկ Հայաստան մըն է, ուր ամէն ինչ հայերէնով կ'ընթանայ: Պատուական այս զոյգին համար, դպրոցէն ետք, ՀՄԸՄԻն է հայը հայ պահող սքանչելի կազմակերպութիւնը: Այս հաւատարմով է, որ Ֆերմանեանները սիրայօժար ընդունեցին ՀՄԸՄԻ 38րդ Նաւասարդեան մարգախաղերու Պատուոյ նախագահութիւնը եւ այդ առիթով ոչինչ խնայեցին ի սէր ՀՄԸՄԻին:

Շուրջ 25 տարիներ Օրենճ Քաունթի բնակող Ֆերմանեան զոյգը միշտ ներկայութիւն եղած է շրջանի հայկական վարժարանի, եկեղեցւոյ, ՀՄԸՄԻ եւ այլ հայկական կազմակերպութիւններու ձեռնարկներուն:

Թէեւ աւելի քան չորս տարիներ անցած են իրեն նաւասարդեանի Պատուոյ նախագահութեանէն, սակայն անոնք միշտ ներկայութիւն են ՀՄԸՄԻ աշխատանքներուն եւ նոյն ոգիով կը շարունակեն իրենց պարտականութիւնները կատարել այս մեծ կազմակերպութեան նկատմամբ, որուն այնքան երախտապարտ են:

Պետիկ Ֆերմանեան «յաջողած մարդ» ըլլալու «մասնագիտութիւնը» ստացած է իր կեանքին փորձառութիւններու «համալսարանէն», որ աւելի քան գնահատելի է, որովհետեւ այս բարձունքները ան նուաճած է յարատեւ աշխատանքով եւ մարդոց իրենց ճիշդ արժէքը տալու իմաստութեամբ:



## Տէր եւ Տիկ. Պետիկ եւ Մարօ Ֆերմանեաններ՝ ՀՄԸՄԻ 39րդ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահ

Պետիկ Ֆերմանեան ծնած է Հալէպ, Սուրիա, ՀՄԸՄԻ կան նուիրեալ յարկի մը տակ: ՀՄԸՄԻ կան հայրը եղած է պտուղի վաճառական եւ գործի բերումով, ընտանիքին հետ Սուրիոյ Գամիշլի քաղաքը փոխադրուած է, ուր Պետիկը փոխադրուած է տեղւոյն Ազգային Եփրատ վարժարանը մինչեւ 7րդ դասարան: Փոքր տարիքին անդամակցած է Գամիշլիի ՀՄԸՄԻ մասնաճիւղին՝ իբրեւ զայլիկ եւ ապա՝ սկաուտ: 1970ին, ընտանիքին հետ փոխադրուած է Պէյրութ, Լիբանան, ուր Պետիկ նետուած է կեանքի ասպարէզ եւ միութենական կեանքին խառնուելու առիթը չէ ունեցած:

1979ին գործով մեկնած է Ապու

Տապի, ուր զբաղած է սառնադրաններու եւ գովազուցիչ կազմաճներու գործով: 1981ին այցելած է Ամերիկայի Միացեալ Նահանգներէն 15ը եւ որոշած է, եթէ օր մը որոշէ Ամերիկա հաստատուիլ, պիտի նախընտրէ հաստատուիլ Քալիֆորնիա նահանգը: 1985ին ամուսնացած է Մարօ Փայասեանի հետ եւ հետագային բախտաւորուած են երկու մանչ զաւակներով՝ Ճեք-Յակոբ եւ Շանթ: Ըստ իր որոշումին՝ 1989ին ընտանիքին հետ Ապու Տապիէն կը փոխադրուի Ամերիկայի Քալիֆորնիա նահանգը եւ կը հաստատուի Օրենճ Քաունթի քաղաքը, ուր երկու զաւակներն ալ փոքր տարիքէն կ'անդամակցին

## Տէր եւ Տիկ. Վարանդ եւ Հուրի Մելիգնեաններ՝ ՀՄԸՄԻ Նաւասարդեանի 40րդ Մարգախաղեր

Հուրի ճիվէլէկեան ծնած է Պաղատա, Իրաք: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Ազգային վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Հայ Կաթողիկէ քոյրերու վարժարանին: Գլորացական տարիներուն հետեւած է Պաղատաի Հայ երիտասարդական կեդրոնի գրական խմբակի աշխատանքներուն:

1980ին փոխադրուած է Ամերիկա եւ յաճախած է Քալիֆորնիոյ նահանգի Լոնկ Պիչի համալսարանը, մասնագիտանալով Chemical Engineering-ի ճիւղին մէջ: Աւարտելէ ետք տասը տարիներ իբրեւ Environmental Engineer աշխատած է նոյն մարզին մէջ: Իսկ հայրութեան մօտիկ ըլլալու փափաքով, ան ամէն տարի ներկայ գտնուած է ՀՄԸՄԻ Նաւասարդեան ձեռնարկներուն եւ յատկապէս յաղթանակի պարահանդէսներուն:

Ուրիչին օգտակար ըլլալու իր ձգտումը զինք մղած է անդամակցելու ՀՄԸՄԻ Լոնկ Պիչի «Մովիներ» մասնաճիւղին, նոյն ժամանակ մաս կազմած է նորակազմ ՀՄԸՄԻ «Ջաւախք» յանձնախումբին, իսկ աւելի ուշ՝ Հայ Ողնա-

ծուծի նուիրատուներու հիմնարկութեան: Ազատ ժամերուն օգտակար հանդիսացած է Հայ թէ տեղական կազմակերպութիւններու եւ վարժարաններու: Քանի մը տարիներ եղած է անդամ Ալէք Փոլիպոս Ազգային վարժարանի Մնողական օժանդակ մարմնին (Parents Support Committee):

Վարանդ Մելիգնեան եւս ծնած է Պաղատա, Իրաք: Պատանեկան տարիքին անդամակցած է ծննդավայրի ՀՄԸՄԻ մասնաճիւղին, իբրեւ ընկերային բաժանմունքի անդամ: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի կաթողիկէ վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ տեղւոյն պետական վարժարանը: 12րդ դասարանին մասնակցելով պետական Պաքալորիայի քննութեան, իր վարժարանի առաջինը հանդիսացած է, իսկ ամբողջ Իրաքի՝ երկրորդը: Ընդունուած է University of Technology of Baghdad համալսարանի Mechanical Engineer-ի բաժինը, սակայն մէկուկէս տարի ուսանելէ ետք, 1977ին փոխադրուած է եւ 1978ին, եղբոր հետ բացած է իր անձնական տպարանը:

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ



1979ին անդամակցած է ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղին, իբրեւ Ընկերային յանձնախումբի անդամ: Այնուհետեւ մնայուն ներկայութիւն եղած է շրջանի ՀՄԸՄի կեանքին մէջ, մեծապէս օգտակար հանդիսանալով անոր բոլոր մակարդակի աշխատանքներուն:

1980ին, տպագրական աշխատանքին առնթեր նախաձեռնած է Direct Mail Advertising-ի եւ մեծ յաջողութիւններ արձանագրած է: 1990ին կը հիմնէ Closet World հաստատութիւնը եւ յաջողութիւն արձանագրելով՝ կ'ընդարձակուի Քալիֆորնիոյ եւ Լաս Վեկասի մէջ:

2000ին կը գնէ եւ իր հաստատութեան մէջ կ'ընդգրկէ Հիւսիսային Քալիֆորնիոյ Closet Dimensions ընկերութիւնը, իսկ 2001ին՝ Close By Design միջազգային ընկերութիւնը:

Ներկայիս Վարանդ Մելքոնեան նախագահն ու գլխաւոր գործադիր տնօրէնն է (chairman & CEO) Home Organizers Inc.-ի, որ կը ներառէ ինն տարբեր արհեստագիտական ընկերակցութիւններ:

Վարանդը եւ Հուրին, որոնք ծանօթացած էին հայկական հարսանիքի մը ընթացքին, 1989ին կ'ամուսնանան եւ ընտանեկան ուրախ եւ քրիստոնէական հաւատքով լի բոյն մը կը կազմեն, ապագային բախտաւորութիւններէ սիրասուն զաւակներով՝ Արման, Արլին եւ Արէն: Երեքն ալ յաճախելով ազգային վարժարան, հայեցի ուսում կը ստացան, կ'անդամակցին ՀՄԸՄին, իսկ ներկայիս գործօն անդամ են Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան (ՀԵԴ):

Հակառակ իր գերզբաղուածութեան, Վարանդ Մելքոնեան ժամանակ ստեղծած է անդամակցելու կամ գորակցելու այն կազմակերպութիւններուն, որոնք մարդկութեան եւ յատկապէս Հայ ժողովուրդի հզօրացման ու անոր արդար դատի լուծման աշխատանքներուն կը նպաստեն՝ Հայ Դատ, USC Հայկական ամպիոն, Հայ Ողնածուծի Նուիրատուներու Հիմնարկութեան, Հայ Կրթական Հիմնարկութեան եւ այլն:

Մելքոնեան աշխոյժ գործունէութիւն կը տանի Ամերիկեան քաղաքական կեանքին մէջ, ինչպէս նաեւ անդամ է բազմաթիւ ամերիկեան մարդասիրական կազմակերպութիւններու՝ Business and Professional Association, Chamber of Commerce, Kiwanis համալսարհային կազմակերպութիւն: Վերջինը օգտակար կը հանդիսանայ անօթեւաններու, աղքատներու եւ բնական աղէտներէ փրկուած անձերու:

Մելքոնեան զոյգը իր ազգային պարտականութիւնները կը կատարէ նաեւ Հայաստանի, Արցախի եւ Զաւախքի նկատմամբ:

Եղբայրը ազգօգուտ եւ եկեղեցանուէր իր նախաձեռնութիւններուն համար Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ի կողմէ յատուկ զնահատանքի արժանացած է «Ասպետ» շքանշանով: Իսկ ընդհանրապէս իր ծառայութիւններուն եւ յաջողութիւններուն համար ան պարգեւատրուած է Armenian Chamber of Commerce-ի, Հայ ողնածուծի նուիրատուներու Հիմնարկութեան, Հայ Դատի Արեւմտեան Ամերիկայի յանձնախումբին, Հայ Մշակութային Հիմնարկութեան (ACF), ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղին, Միացեալ Հայկական վարժարանին, ՀՄԸՄի Շրջանային վարչութեան, ՀԵԴի, Նահանգային Սորհուրդի անդամներու, պետական անձնաւորութիւններու եւ բազմաթիւ այլ կազմակերպութիւններու կողմէ, որոնց շարքը երկար է:

*Building upon a 100-year-old foundation of love and service, the Armenian Missionary Association of America continues to carry forth His light and promise of hope to all our brothers and sisters around the Globe.*

*May the blessing of His birth remain a light in your life.*

**Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ!**



**ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA**  
**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԼԵՏԱՐԱՆՆԶԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ**

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ



## Տէր Եւ Տիկ. Խաչօ Եւ Արաքսի Աշահեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 41րդ Մարգախաղերուն

Տէր Եւ տիկ. Խաչօ Եւ Արաքսի Աշահեաններ՝ ազգանուէր զոյգը իրենց տքնաջան եւ լաւատես աշխատասիրութեան, հայրենասիրութեան եւ Միացեալ Նահանգներու տիպար քաղաքացիութեան շնորհիւ, ոչինչէն ոչ միայն հասած են իրենց կեանքի ասպարէզի յաջողութեան, այլ նաեւ պատուաբեր դիրքերու հասած են ամերիկեան քաղաքական կեանքին մէջ:

Խաչօ Աշահեան ծնած է Պերաւի Շթորա փոքրիկ գիւղը, Լիբանան: Նախնական ուսումը ստացած է իր ծննդավայրի հարեւան հայաբնակ Այնճար գիւղի Հայ աւետարանական վարժարանին, իսկ երկրորդականը՝ Ջահլէի Աւետարանական պետական երկրորդական վարժարանին մէջ:

Փոքր տարիքէն անդամակցած է ծննդավայրի «Միմոն Վրացեան» պատանեկան միութեան, ապագային ըլլալով անոր ատենապետը: Աւելի ուշ, իբրեւ պասքեթպոլի մարզիկ՝ անդամակցած է ՀՄԸՄԻ Ջահլէի մասնաճիւղին եւ մասնակցած է Լիբանանի ՀՄԸՄԻ եւ տեղական զանազան մրցումներու:

Արաքսին նոյնպէս ծնած է Պէրաւի Շթորա գիւղը եւ եղած է հարեւանը իր ապագայ կողակիցին Սաչոյին: Նախնական ուսումը ստացած է Ջահլէի Հոփսիմեանց վարժարանին, իսկ երկրորդականը՝ նոյն քաղաքի Սեն Քէօր քոլեճին մէջ: Արաքսին եւս փոքր տարիքէն եղած է Շթորայի «Միմոն Վրացեան» պատանեկան միութեան անդամ, նոյն ժամանակ անդամակցելով ՀՄԸՄԻ Ջահլէի մասնաճիւղին, իբրեւ արծուիկ, ապա արեւուշ: Ան ՀՄԸՄԻ-ական բանակումներու մասնակցած է Այնճարի եւ Կիպրոսի մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով, Խաչօն իր ուսումը շարունակելու համար փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ միացած քրոջ: Յաճախած է Cuesta Community College-ը եւ այնուհետեւ 1976ին աւարտած է Cal Poly San Luis Obispo համլսարանը, մաս-

նագիտանալով International Business Management ճիւղին մէջ: Նոյն տարիներուն, Արաքսին եւս Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով փոխադրուած է Ամերիկա եւ իր համալսարանական ուսումը ստացած է Cal Poly համալսարանին մէջ, մասնագիտանալով Financial Management ճիւղին մէջ:

Համագիւղացի հարեւաններ Խաչօն եւ Արաքսին զուգահեռութեամբ մը իրարու հանդիպելով՝ առաւել մտերմացած եւ ամուսնացած են (1986) ու ապագային բախտաւորուած են երկու զաւակներով՝ Հրաչ եւ Նայիրի:

Պէտք է ընդգծել, թէ ամբողջ իր կեանքին ընթացքին Աշահեան կամաւոր աշխատանքով օգտակար հանդիսացած է իր շրջապատին, զանազան քաղաքական, ծառայական եւ ոչաշուկայային կազմակերպութիւններուն ընդմէջէն, անշահախնդիր գործունէութիւն ցուցաբերելով:

Քաղաքական կեանքի իր առաջին քայլը առած է 1999ին, ընտրուելով Գաւառի վերահսկիչ (County Supervisor): 2010ին ընտրուած է Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ: Ան նաեւ զանազան պետական պատասխանատու պաշտօններ վարած է եւ արժանացած յատուկ գնահատանքներու:

Առանձին նախաձեռնութեամբ ան յաջողած է Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ապահովել San Luis Obispo Գաւառին մէջ: Ան մեծապէս կը նպաստէ ամէն տարի Ապրիլին, շրջանի Հայ Դատի յանձնախումբին կազմակերպած Հայոց Յեղասպանութեան Ջատագովման օրուան յաջողութեան:

Իր գործընկեր նահանգային խորհրդարանի անդամ Ատրին Նազարեանի հետ մեծ ջանք թափելով՝ կրցած են Հայոց Յեղասպանութիւնը դասաւանդելու ծրագիրը յաջողցնել ամերիկեան հանրային վարժարաններու մէջ, ինչպէս նաեւ ստեղծել «Հայկական քաբքս»ը:



## Տէր Եւ Տիկ. Վիգէն Եւ Նօնօ Արէլեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 42րդ Մարգախաղերու

Մնած է Պէյրութ, Լիբանան: Փոքր տարիքին անդամակցած է ՀՄԸՄԻ Պէյրութի մասնաճիւղին՝ իբրեւ սկաուտ եւ մարզիկ:

1983ին, ընտանիքն հետ փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ հաստատուած՝ Օրենճ Քաունթի: Նոյն տարին միացած է ՀՄԸՄԻ Օրենճ Քաունթիի «Մարդարապատ» մասնաճիւղին: Եղբ. Արէլեան իր նուիրեալ գործունէութեան եւ պատասխանատուութեան գիտակցութեան շնորհիւ բազմաթիւ պատասխանատու պաշտօններ ստանձնած է եւ լաւապէս կատարած է զանոնք: Հակառակ իր բազմակողմանի միութենական շնորքներուն, ՀՄԸՄԻ մարզական թեւին մէջ, անոր բոլոր մանրամասնութիւններուն ծանօթ ըլլալով մեծապէս օգտակար հանդիսացած է իր մասնաճիւղի եւ Շրջանային Մարզական խորհուրդի բոլոր նախաձեռնութիւններուն: Եղբայրը մեծ ներդրում ունի Նաւասարդեան մարզախաղերու ընդհանուր կազմակերպչական աշխատանքներուն եւ յատկապէս մարզական բոլոր մարզաճիւղերու մրցումներու դասաւորման գործին:

Եղբ. Արէլեան մեծ ներդրում ունի ՀՄԸՄԻ շրջանային եւ համաշխարհային աշխատանքներու յաջողութեան մէջ: Ան հինգ երկամեակներ ընտրուած է ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութեան անդամ եւ ձեռնհասօրէն կատարած է իրեն վստահուած պարտականութիւնները, յատկապէս մարզական բաժինին մէջ. մարզական, կազմակերպական, վարչական, վարչութեան ատենապետ, Շրջանային Մարզական խորհուրդ եւ անոր մօտ Շրջանային վարչութեան կապ, Համա-ՀՄԸՄԻ-ական մարզախաղերու կազմակերպում, ՀՄԸՄԻ կայքի ստեղծում եւ հետեւողականութիւն: Բազմաթիւ անգամներ մասնակցած է ՀՄԸՄԻ Ընդհանուր Պատգամաւորական ժողով-

ներուն եւ իր արդար բաժինը բերած է անոր համակարգչային կազմակերպական աշխատանքներուն մէջ:

Ան նաեւ ձեռնհասօրէն վարած է ՀՄԸՄԻ Արեւմտեան Ամերիկայի շրջանի Շրջանային Ներկայացուցչական ժողովներ:

Եղբայրը կը հաւատայ, որ ՀՄԸՄԻն է Սփիւռքի ապագայ հայութիւնը, որ պիտի պահպանէ մեր աւանդութիւններն ու մշակոյթը: Ըստ եղբ. Արէլեանի՝ սահմանափակ հայկական մեր վարժարաններէն ետք, ՀՄԸՄԻն է անսահման ժամեր տրամադրող դպրոցը, որուն կը պատկանինք բոլորս:

Եղբոր լաւագոյն ՀՄԸՄԻ-ական յիշատակը, զաւակին՝ Շանթին «Մարդարապատ» մասնաճիւղի վարչութեան անդամ ըլլալն է, որ ցոյց կու տար, թէ ՀՄԸՄԻ մէջ հասակ նետած երիտասարդը պատրաստ է վերադարձնելու իր սորվածը, զինք դաստիարակած մասնաճիւղին:

Եղբոր համար ՀՄԸՄԻ մեր երիտասարդութեան կը ծառայէ եւ կ'օգնէ անոնց ապրելու «Բարձրացիր, բարձրացուր» իր նշանաբանով, այսինքն, ՀՄԸՄ կը նշանակէ յաւերժ երիտասարդ:

Եղբոր կողքին միշտ եղած է իր կողակիցը՝ քոյր Նօնօն, որ միշտ քաջալեր հանդիսացած է նաեւ իր դստեր եւ որդւոյն՝ գործօն մասնակցութիւն բերելու ՀՄԸՄԻ աշխատանքներուն:

Եղբոր երազանքն է ՀՄԸՄԻ «Մարդարապատ» մասնաճիւղի երիտասարդութիւնը ոչ միայն շարունակէ իր մեծերուն ժառանգը, այլ նաեւ յառաջդիմէ իր աշխատանքներուն մէջ եւ հասնի իր նախատեսած նուաճումներուն:

Ապագայ ՀՄԸՄԻ-ականներուն համար եղբոր պատգամն է. «Մի վախնաք դժուարին հարցումներ հարցնելէն եւ միշտ ՀՄԸՄԻ-ականի իրաւ ոգիով պայքարեցէք բարձրանալ, ձեզի հետ բարձրացնելով ուրիշները»:

# ՀՄԸՄԻ Նաւասարդեան Մարգախաղերու Պատուոյ Նախագահներ

## Տէր Եւ Տիկ. Համլէթ Եւ Կրեթա Զրախչեաններ՝ Պատուոյ Նախագահ ՀՄԸՄԻ Նաւասարդեան 43րդ Մարգախաղերուն

Եղբ. Համլէթ Զրախչեան ՀՄԸՄԻ մեծ ընտանիքին մէջ իր ծառայութիւնը սկսած է Թեհրանի «Արարատ» մարզամշակութային միութեանէն, 1950ական թուականներուն:

Ան եղած է մարզիկ, լեռնագնաց եւ չմշկող (սքիիսկ): Մարզական գործունէութեան առընթեր, ան նաեւ վարած է վարչական պաշտօններ նոյն միութեան մէջ:

Իր կեանքի պայմանները փոխուեցան: Փոխուեցաւ իր կեցութեան վայրը՝ Թեհրանէն Լոս Անճելըս: Սակայն իր գործունէութեան դաշտը մնաց անփոփոխ: Ան մնաց ու ծառայեց ՀՄԸՄԻ մէջ՝ իբրեւ անոր նուիրեալ կամաւոր զինուորը:


Ան ծառայեց ՀՄԸՄԻ Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղին մէջ՝ իբրեւ վարչական: Ան ծառայեց ՀՄԸՄԻ Արեւմտեան Ամերիկայի Շրջային վարչութեան՝ իբրեւ ատենապետ: Երբեք չխուսափեցաւ պատասխանատուութենէ: ՀՄԸՄԻն ծառայելու իր ներքին ձայնը զինք մղեց, որ ստանձնէ յաւելեալ պարտականութիւններ: Այս ծիրին մէջ ալ եղբ. Համլէթ Զրախչեանը կը գտնենք Կեղրո-

նական վարչութեան մէջ: Անոր կենսագրութիւնը՝ առաւել քան կէս դարու հանրային գործի, սերտօրէն կապուած է ՀՄԸՄԻ մեծ ընտանիքին հետ: Առաւել քան կէս դարու ծառայութիւն մը, զոր ինք կը համարէ ոչինչ՝ բաղդատած այն արժէքաւոր դաստիարակութեան, որ ինք ստացած է ՀՄԸՄԻ մէջ՝ մէկ խօսքով եւ իր բառերով. «Մեր տուածը ՀՄԸՄԻն չնչին մէկ մասն է միայն անոր, որ մենք, սերունդներ ամբողջ, ստացած ենք ՀՄԸՄէն»:

Եղբ. Համլէթ Զրախչեանի համար ուրախութիւն է տեսնելը, որ այսօր Ամերիկայի մէջ ՀՄԸՄԻ դէպքը սկսած են ստանձնելու այն երիտասարդները, որոնք հոս ծնած ու մեծցած են:

Ան գոհունակութեամբ կը հետեւի մեր երիտասարդութեան քայլերուն, նուիրումին ու աշխատանքին:

Այս պատճառով ալ, ինք համոզուած է հետեւեալին. «Տեսէք, չկայ ուրիշ հայկական նման կազմակերպութիւն, որ ունի մեր կարողութիւնը եւ համահայկական կառոյցը, որ ունի մեր մարդու՛ք:



Ու ամենակարեւորը, մեր բոլոր վարչականները, անդամները, կամաւոր կարգով, յօժար կամքով են գործում: Փաստն էլ այն է, որ Նաւասարդեանների ամբողջ աշխատողները կամաւոր անդամ-

ներ ու համակիրներ են: Էնպէս որ, ես հաւատացած եմ, որ շատ փայլուն է լինելու ՀՄԸՄԻ ապագան: Յոյսով եմ, որ մեր երկրորդ հարիւրամեակը նոյնպէս յաջողութիւններով լի է լինելու»:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



**PRIMEX**  
Clinical Laboratories, Inc.

As a leader in the medical testing field, we employ the latest technology and innovations. We are your local laboratory serving southern California for over 20 years. Please visit our website for more information on how we can serve all your laboratory needs.

Wishing you a Merry Christmas & Happy New Year

[www.primexlab.com](http://www.primexlab.com) | Tel. 800-961-7870

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# ճորճ Եւ Արաքսի Թիթիզեան

# VIKEN CHELEBIAN & FAMILY Վիգէն Չէլէպեան Եւ Ընտանիք

Կը մաղթենք,  
որ այս Նոր Տարին  
իր հետ բերէ  
խաղաղութիւն  
Եւ երջանկութիւն

*Լաւազոյն  
մաղթանքներով  
կը շնորհաւորէ  
համայն հայութեան*

**Նոր Տարին  
Եւ Ս. Ծնունդը**

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւնը

# Քալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութիւնը

Կը շնորհաւորէ  
համայն հայութեան  
Նոր Տարին  
ու Սուրբ Ծնունդը  
ցանկալով բոլորին  
քաջառողջութիւն  
Եւ ամենայն բարիք

Չերմօրէն  
կը շնորհաւորէ  
իր բոլոր անդամներուն  
Եւ համայն հայութեան  
Նոր Տարին  
Եւ Ս. Ծնունդը,  
մաղթելով երջանիկ  
օրեր

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.  
ՎՐԷԺ ԵՒ ԱՐՄԻԿ ԹՈՄՊՈՒԼԵԱՆ  
ՍԻՆԹԻԱ ԵՒ ՍԻԼՎԻԱ**

**Կը Շնորհաւորեն Իրենց Յարգոյ  
Յաճախորդներուն,  
Ազգականներուն  
Եւ Բարեկամներուն  
ՆՈՐ ՏԱՐԻՆ  
ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԷ**




**VREJ PASTRY**

[www.kingofpastry.com](http://www.kingofpastry.com)



**1074 North Allen Ave.  
Pasadena, CA  
626-797-2331**

**11148 Balboa Blvd.  
Granada Hills, CA  
818-366-2526**



**ԿԼԵՆՏԷՅԼ**

**ՀՅԳ «Ահարոնեան» կոմիտե**

**Ս. Աստուածածին եկեղեցւոյ  
հովիւք ու հոգաբարձուիւն**

**ՀՄԸՄԻ «Արարատ» մասնաճիւղ**

**ՀՕՄԻ «Սիփան» մասնաճիւղ**

**Համազգայինի  
«Յովհաննէս Թումանեան» մասնաճիւղ**


**ՀԵԳ «Ռուբէն» Ուխտ**

**ՀՅԳ «Շանթ» եւ «Զաւարեան»  
պատանեկան միութիւններ**

**Կլենտէյլի Հայ Դատի Յանձնախումբ**

**Մաղթում ենք,  
որ 2019ը համայն Հայ ժողովրդի  
եւ մեր համայնքի համար լինի  
յաջողութիւններով, ձեռքբերումներով  
ու յաղթանակներով լի տարի:  
Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ**





**Հիւսիսային Սան Ֆերնանդո Հովիտ**

**ՀՅԳ**

**«Արշալիր Շիրակեան» Կոմիտէ  
ՀՕՄԻ**

**«Լոռի» Մասնաճիւղ  
Համազգայինի**

**«Լեւոն Շանթ» Մասնաճիւղ  
ՀԵԳ**

**«Արցախ» Ուխտ  
ՀՅԳ**

**«Հրայր Մարուխեան»  
Պատանեկան Ուխտ  
Հայ Դատի Յանձնախումբ  
Տարեցներու Խմբակցութիւն**

**Թող**

**Մեր Հայրենի Երկիրը  
Բարգաւաճի Ու Ծաղկի  
Գալիք Օրերուն**



ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

## ՍԱՆ ՖԵՐՆԱՆՏՕ ՀՈՎԻՏ

ՀՅԳ «Ռուստոմ» Կոմիտեություն

ՀԵԳ «Սարգարապատ» Ուխտ

ՀՅԳ «Սիմոն Վրացեան»

Պատանեկան Միություն

ՀՅԳ «Արաբո» Պատանեկան Միություն

ՀՕՄԻ «Անահիտ» Մասնաճիւղ

ՀՄԸՄԻ «Մասիս» Մասնաճիւղ

Համազգայինի «Պարոյր Սեւակ» Մասնաճիւղ

Էնսիկոլոյի Հայ-Ամերիկեան Տարեցներու Միություն

## Լաւագոյն

Մաղթանքներով

Կը Շնորհաւորեն

Շրջանի Հայութեան

Նոր Տարին

Եւ Ս. Ծնունդը



ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ ՀՆՈՐՉԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



# Տիպար ՀՄԸՄականներ

## ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՊՈՅԱՃԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ-1989»

Եղբ. Ժիրայր Պոյաճեան ծնած է Հալէպ: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն Հայկազեան ազգային վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ ծննդավայրի «Քարէն Եփփէ» ձեմարանին մէջ: 1966ին յաճախած է Պէյրութի Ամերիկեան Համալսարան (AUB), ուրկէ ստացած է Փիլիսոփայութեան մէջ Մագիստրոսի վկայական:



Այնուհետեւ, իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է Պէյրութի Միջազգային քոլեճի (International College) եւ Խանամիրեան Ազգային վարժարանին մէջ:

Երաժշտութեան հանդէպ յատուկ սէր ունենալով, անդամակցած է Լիբանանի Համազգայինի երաժշտական Միաւորին, աւելի ուշ ընտրուած է նաեւ Համազգայինի Ծրջանային Վարչութեան անդամ:

1976ին, վերջնականապէս փոխադրուած է Արեւմտեան Ամերիկա եւ դարձած է ՀՄԸՄի Հաւատաւոր անդամ:

1979ին, եղած է ՀՄԸՄի Սան Ֆերնանտո Հովիտի մասնաճիւղին հիմնադիր անդամներէն եւ մեծապէս օգտակար հանդիսացած է անոր վերելքին:


1980-1986 տարեշրջաններուն եղած է ՀՄԸՄի Արեւմտեան ԱՄՆի շրջանի Ծրջանային վարչութեան անդամ, վերջին շրջանին վարելով ատենապետի դժուարին պաշտօնը:

1987էն մինչեւ իր անժամանակ մահը եղած է ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան անդամ: 1989ին, ՀՄԸՄի Նաւասարդեան 14րդ Մարզախաղերուն, Ծրջանային վարչութիւնը շնորհած է անոր «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

1992ին, ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Ծրջանային վարչութիւնը եղբոր յիշատակը անմահացնելու համար ստեղծած է «Ժիրայր Պոյաճեան» մարզական ծամեայ շրջուն բաժակը:

## ԵՂԲ. ՊԱՐԳԵԻ ՇԻՐԻՆԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ - 1990»

Վաստակաշատ ՀՄԸՄական, հրապարակախօս, Հայ մամուլի բազմամեայ սպասուոր եղբ. Պարգեւ Շիրինեան (1962էն մինչեւ մահը ծանօթ էր Հրազդան գրչանունով) ծնած է Ատանա, 1 Յունուար 1920ին: Կիլիկիոյ Հայութեան տարագրութեամբ, ծնողքին հետ ան կը փոխադրուի Պէյրութ եւ նախնական ուսումը կը ստանայ Ազգային Ս. Նշան վարժարանէն, որմէ ետք կը յաճախէ Համազգայինի Նշան Փալանճեան ձեմարան, ուր ազգային կրթութիւնը կը ստանայ Հայ մշակոյթի մեծ երախտաւորներ Լեւոն Ծանթի եւ Աղբալեանի շունչին տակ:



Փոքր տարիքէն եղբ. Պարգեւ մաս կը կազմէ ՀՄԸՄի Պէյրութի սկստական թելին, իբրեւ գայլիկ: Միութեանական իր գործունէութիւնը, սակայն, առաւելաբար կը յատկանշուի ՀՄԸՄական կեանքին նուիրուած մամուլի իր երկարամեայ աշխատակցութեամբ: 1976ին ան կը հաստատուի Միացեալ Նահանգներ: 1978-1984 կը ստանձնէ ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու յաջորդական երեք Ծրջանային վարչութիւններուն գործավար-քարտուղարութիւնը: Ծրջան մը կ'ըլլայ Ծրջանային վարչութեան անդամ: Եղբայր Շիրինեան կը մասնակցի ՀՄԸՄի Պատգամաւորական Ե. Ժողովին (1991, Աթէնք) եւ տարիներ շարունակ կ'աշխատակցի միութեան պաշտօնաթերթ «Մարգիկ»ին:

Հաւատաւոր ՀՄԸՄական մը ըլլալու կողքին, եղբ. Շիրինեան եղած է ուխտեալ եւ համեստ դաշնակցական: Մամուլի իր բեղուն ծառայութիւնը կը սկսի երիտասարդութեան օրերէն, նախ իբրեւ յօդուածագիր ու սրբագրիչ, ապա՝ իբրեւ փոխ խմբագիր, խմբագիր եւ հեղինակ: Եղբ. Շիրինեան շրջան մը կը խմբագրէ ՀՅԴ Պէյրութի «Բաբգէն Սիւնի» Պատանեկան Միութեան «Ովասիս» պարբերաթերթը եւ կ'աշխատակցի Նշան Փալանճեան ձեմարանի Ծրջանաւարտից Միութեան «Ակօս» ամսագիրին: Հետագային, ան կը խմբագրէ ու կը հրատարակէ Մկրտիչ




Շամլեան Ազգային Վարժարանի մեծ  
ընտանիքը կը շնորհակտորէ ձեր բոլորին  
Նոր Տարին և Սուրբ Ծնունդը

**The Chamlian Family Wishes You A**  
**Very Merry Christmas**  
**&**  
**Happy New Year**

---

**With Love, From Chamlian Armenian School**

# Տիպար ՀՄԸՄականներ

Պէշիկթաշլեանի կեանքին ու գործին նուիրուած հատորը, կը խմբագրէ Միսաք Թորլաքեանի «Օրերուս հետ» յուշագրութիւնը եւ ՀՄԸՄի նորընծայի Բ. եւ Ա. Կարգերու գիտելիքներու գիրքը: ՀՄԸՄի 70ամեակին առիթով, ան կը խմբագրէ «ՀՄԸՄի 70-ամեակ-Յուշատետր 1918-1988» հատորը:

Բազմակողմանի եղած է եղբ. Պարգեւ Շիրինեանի ներդրումը մեր հանրային կեանքին, իբրեւ ՀՄԸՄական, համազգայնական, կուսակցական գործիչ, ազգային-եկեղեցական զանազան մարմիններու եւ ժողովներու անդամ ու պատգամաւոր: 1990ին, ՀՄԸՄի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան կողմէ ան կ'արժանանայ «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսին: Տարբեր առիթներով, իր ծառայութիւններուն համար կը ստանայ բազմաթիւ յուշատախտակներ եւ գնահատագիրներ:

1985ին, Լոս Անճելըսի մէջ կը նշուի հանրային իր գործունէութեան 50ամեակը եւ այս առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոս յատուկ կոնդակով մը զինք կը պարգևատրէ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Եղբ. Պարգեւ Շիրինեան կը մահանայ 30 Յունուար, 1997ին:

## ԵՂԲ. ՍԵՒԱԿ ՍԱԳԻՆԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 1991»

Պարսկահայ համայնքի 24 տարիներու ներկայացուցիչ՝ Պարսկաստանի Սորհրդարանի մէջ, պարգևատրուած 11 մետալներով, բարձրագոյն շքանշանով, միութենական, կուսակցական, ազգային գործիչ, լաւ հայր եւ լաւ մարդ... Այս է խտացումը եղբ. Սեւակ Սագինեանի գործունէութեան:

Ծնած է Թեհրան, Պարսկաստան 22 Սեպտեմբեր, 1922ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հայկազեան դպրոցին մէջ, իսկ միջնակարգը՝ Ամերիկեան քոլեճի առեւտրական ճիւղէն, զոր աւարտած է առաջին հանդիսանալով ամբողջ Պարսկաստանի մէջ: Ապա մտնելով զինուորական ծառայութեան, յաճախած է զինուորական համալսարան եւ ստացած է փոխ-հարիւրապետի աստիճան: Զինուորական ծառայութիւնը աւարտելէ ետք յաճախած է Թեհրանի համալսարանը, հետեւելով իրաւաբանական-տնտեսագիտութեան ճիւղին, արժանանալով պատկաւորի տիտղոսին:

Ուսանողական տարիներուն անդամակցած է ՀՅԴի Պատանեկան եւ Երիտասարդական միութիւններուն եւ ապա անցած է ՀՅԴի շարքերը: Ան մասնակցած է նաեւ ազգային եւ հասարակական աշխատանքներուն, մարզա-մշակութային միութիւններուն: Մեծ դերակատարու-

թիւն ունեցած է եւ գործօն մասնակցութիւն բերած Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան (ՀՄԱԿ) աշխատանքներուն մէջ: Քանի մը շրջաններ ընտրուած է Թեհրանի Թեմի պատգամաւորական ժողովի պատգամաւոր եւ մասնակցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ազգային ժողովին, ինչպէս նաեւ երջանկայիշատակ Սորէն Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսներու ընտրութիւններուն: Ան մասնակցած է նաեւ ՀՅԴի Ընդհանուր ժողովներու՝ Գահիրէի եւ Պէյրութի մէջ:



Ընտրուած է Ատրպատականի շրջանի Հայ եւ Ասորի համայնքներու պատգամաւոր, իսկ 1960-1976, յաջորդական անգամ Հարաւային իրանահայութեան պատգամաւոր: Իբրեւ Հայ պատգամաւոր մեծ դերակատարութիւն ունեցած է Հայոց դպրոցներուն եւ Հայ գիւղացիութեան շահերու եւ իրաւունքներու պաշտպանութեան գործին: Իր ջանքերով Պարսկաստանի կառավարութեան յատկացումներով նորոգութիւններ կատարուած են Ս. Թաղէի վանքին մէջ եւ սկսած է նոյն վանքի ուխտագնացութիւնը, որ կը շարունակուի մինչեւ օրս:

Սեւակ Սագինեանի եւ պրն. Ֆելիքս Աղայեանի միասնական ջանքերով ապահովուած է Թեհրանի «Արարատ» մարզաւանի հողամասը եւ որոշ նիւթական օժանդակութիւն՝ անոր շինարարութեան համար: 1979ին, ընտանիքին հետ փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ բնակութիւն հաստատած է Կլենտէյլ քաղաքին մէջ: Ամերիկայի մէջ եւս Սագինեան կատարած է իր պարտականութիւնները իր ժողովուրդին հանդէպ, միշտ մնալով ծանրակշիռ խորհրդատու, հասարակչոտուած ժողովական, բարեմիտ եւ հեռատես անհատ, յարգուած ու սիրուած ազգային:

1979-1993 տարիներուն ան ստանձնած է նորաստեղծ ՀՄԸՄի Կլենտէյլի մասնաճիւղի վարիչ-պատասխանատուի պաշտօնը եւ մեծ վստահութիւն ներշնչեց մասնաճիւղին եւ շրջանի Հայ համայնքին: ՀՄԸՄի նաւասարդեան 16րդ մարզախաղերուն (1991), Շրջանային վարչութեան կողմէ արժանացաւ «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսին:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Համազգային  
Հայ Կրթական  
եւ Մշակութային  
Միութիւնը**  
Իր բոլոր վարչութիւններով  
եւ անդամներով  
Կը շնորհաւորէ բոլորին  
Նոր Տարին  
եւ Սուրբ Ծնունդը  
Մաղթելով Ամենայն Բարիք

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**LARK MUSICAL SOCIETY**  
ԼԱՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ  
543 ARDEN AVENUE • GLENDALE • CA 91203

**LARK  
MUSICAL  
SOCIETY**

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Տիպար ՀՄԸՄակացններ

## ԶՕՀՐԱՊ ԱՆՏՈՆԵԱՆ՝

### «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 1992»

Զօհրապ Անտոնեան ծնած է 1 Մայիս, 1928ին, Հալէպ, ազգանուէր ընտանեկան յարկի մը տակ: Եօթը տարեկանին անդամակցած է ՀՄԸՄի Նոր Գիւղի մասնաճիւղին՝ իբրեւ գայլիկ, ուր իր հետեւողական լուրջ աշխատանքին եւ իր ծառայութեան հատուց ունեցող պատանի, կ'արձանագրէ իր կեանքի առաջին նուաճումը գայլիկ իր վոճմակին մէջ «Առիճները» վեցեակին վեցեակապետի աստիճանը ստանալով:



Ապա, փոխանցուելով սկաուտական շարքերը՝ առաւել աշխույժ եւ պատասխանատու աշխատանքներ տանելով, աստիճանաբար կը հասնի վարիչ առաջնորդի աստիճանին, հպարտութեամբ կրելով այս աստիճանը յատկանշող երեք ձեռնակ ժապաւէնները իր չապիկի ձախ գրպանին վրայ:

Եղբ. Անտոնեան յատուկ սէր ունենալով նաեւ մարզական կեանքին եւ յատկապէս ֆութպոլի մարզաճիւղին՝ 18-25 տարեկանին, սկաուտականին առընթեր անդամակցած է նաեւ իր մասնաճիւղի Ա. դասակարգի ֆութպոլի խումբին, սակայն սկաուտական կեանքը միշտ յատուկ տեղ գրաւած է իր կեանքին մէջ:

Եղբայրը մինչեւ 1974, զանազան պատասխանատու պաշտօններ ստանձնելով՝ մեծապէս նպաստած է իր մասնաճիւղի վերելքին եւ անոր ծրագրներու յաջողութեան:

1974ին, ընտանիքին հետ փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ հաստատուած է Հիւսիսային Քալիֆորնիոյ Սան Ֆրանսիսքօ քաղաքը, ուր կ'անդամակցի տեղւոյն ՀՄԸՄի մասնաճիւղին:

1975-1985 տարեշրջանին աշխույժ գործունէութիւն կը ցուցաբերէ իբրեւ վարչութեան ատենապետ եւ վարչութեան անդամ: 1978-1986, յաջորդական ութ տարիներ, եղբ. Անտոնեան լաւապէս կը ղեկավարէ նաեւ մասնաճիւղի ֆութպոլի խումբը: Եղբայրը նաեւ երկու շրջան ընտրուած է Շրջանային վարչութեան անդամ եւ պատուով կատարած է իրեն վստահուած պարտականութիւնները: Իր աշխատասիրութեան եւ օրինակելի միութենական ըլլալուն համար, եղբ. Զօհրապ Անտոնեան բազմաթիւ գնահատագիրներու արժանացած է մասնաճիւղային եւ Շրջանային մակարդակներու վրայ: Առաւել քան 35 տարիներ ան ներկայ գտնուած է ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերուն: ՀՄԸՄը միշտ յատուկ տեղ ունեցած է եղբոր սիրտին մէջ, որովհետեւ ան եղած է իր երկրորդ տունը:

ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը, բարձր գնահատելով եղբ. Անտոնեանի ՀՄԸՄական բեղուն գործունէութիւնը՝ անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական – 1992» տիտղոսը:

## ԵՂԲ. ՃԵՄԻԼ ՍԱՐԳԻՍԵԱՆ՝

### «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 1993»

Ճեմիլ Սարգիսեան ծնած է Հալէպ, Սուրիա, հայկական համեստ ընտանեկան յարկի մը տակ: Փոքր տարիքին անդամակցած էր ծննդավայրի ՀՄԸՄի մասնաճիւղը՝ իբրեւ գայլիկ, ապա՝ սկաուտ:



Իբրեւ գիտակից հայ, տիպար ՀՄԸՄականի դաստիարակութիւն ստացած միութենական, կրցած էր նոյն ոգին փոխանցել իր հոգածութեան յանձնուած երիտասարդ սերունդներուն:


1930ին, ան եղած էր Հալէպի փոքրաթիւ սկաուտական խումբի անդամներէն, որոնք կեանքի դժուարին պայմանները անտեսելով, տքնաջան աշխատանք տարած ու խտացուցած էին անոր շարքերը, հետագային քաջաբար կազմակերպելով բոլորիս ծանօթ Հալէպի ՀՄԸՄի միջմասնաճիւղային մարզախաղերը եւ աննախընթաց շքերթը առաջնորդող փողերախումբը՝ Փանֆառը:

Կարելոր համարելով իզական սեռի կարեւորութիւնը հայկական հասարակական կեանքին մէջ, եղբ. Սարգիսեան կազմակերպչական մեծ աշխատանք տարած էր՝ ստեղծելու Հալէպի առաջին արեւուշական խումբը: Իր շրջապատին վստահութիւնը շահելով, ան նոյնիսկ կազմակերպած էր ՀՄԸՄի Հալէպի արեւուշներու առաջին բանակումը:

Սկաուտականին առընթեր, եղբայրը նաեւ ֆութպոլի սիրահար էր եւ Հալէպի առաջին խումբի լաւագոյն մարզիկը: Հմուտ եւ պատասխանատու մարզիչ եւ արդարադատ իրաւարար: Ան երկար տարիներ եղած էր Սուրիոյ պետական ԼԻԿի ֆութպոլի իրաւարար:

1968ին, ընտանիքին հետ հաստատուելով Լոս Անճելըս, մեծ անձնագոհութեամբ ծառայած է նորաստեղծ ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղին: 1984ին, պարգեւատրուած է իբրեւ արժանաւոր վեթերան ՀՄԸՄական: Ան մեծ ներդրում ունեցած է ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպչական առաջին քայլերուն, եւ ՀՄԸՄի Սան Ֆերնանտօ հովիտի «Մասիս» մասնաճիւղի հիմնադրութեան մէջ:

ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը, գիտակցելով եղբոր ազգանուէր գործին, հայու տիպարին եւ անսակարկ աշխատանքին՝ անոր պարգեւեց «Տիպար ՀՄԸՄական – 1993» տիտղոսը: Եղբայրը կեանքին հրաժեշտ տուաւ 1993ին, միութենական մաքուր ոգի ժառանգ ձգելով իր շրջապատին:



FOREST LAWN-ի ընտանիքը  
շնորհաւորում է շրջանի  
հայութեան Նոր Տարին եւ  
Սուրբ Ծնունդը, մաղթելով  
յաջողութիւններով լի տարի:

818-988-2222 · FORESTLAWN.COM

**FOREST LAWN®**  
FUNERALS • CREMATIONS • CEMETERIES

HOLLYWOOD HILLS • 6300 FOREST LAWN DRIVE, LOS ANGELES, CA 90068  
FOREST LAWN MEMORIAL PARKS & MORTUARIES - FD 904

# Տիպար ՀՄԸՄակացներ

## ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀԱԼԷՊԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ - 1994»

Եղբ. Յարութին Հալէպեանի կեանքի մանրամասնություններուն մասին շատ բան չէ փոխանցուած մեզի: Եղբոր մականունը արդէն իսկ կը յայտնէ, թէ ան ծնած է Հալէպ, Սուրիա, ուր նաեւ ստացած է իր ուսումը:



Շատ փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄի Հալէպի մասնաճիւղին՝ իբրեւ գայլիկ: Անոր գիտելիքներուն, հարստութեան եւ ղեկավարի յատկանիչներուն շնորհիւ անոր վստահուած են սկաուտական կարեւոր աստիճաններ եւ պաշտօններ: Եղբոր վստահուած ամենափոքր պարտականութիւնն իսկ ամբողջութեամբ իրագործուած եւ յաջողութեամբ աւարտած է:

Երիտասարդ տարիքին փոխադրուած է Պէյրութ, Լիբանան եւ շարունակած է իր գործունէութիւնը ՀՄԸՄի մէջ, ստանձնելով զանազան պատասխանատու պաշտօններ: Միութենական իր գործունէութեան ընթացքին ծանօթացած է իր կողակիցին՝ Մարի Սարեանին, որ երկար տարիներ զանազան պատասխանատու պաշտօններ վարած է Լիբանանահայ Օգնութեան Խաչի արծուիկ-արեւունջներու շարքերուն մէջ եւ հասած է մինչեւ ընդհ. խմբապետուհիի պաշտօնին:

Հալէպեան գոյգը երկար տարիներ անսակարկ նուիրումով գործած են ՀՄԸՄի շարքերուն մէջ, մինչեւ 1980ականներուն Արեւմտեան Ամերիկայի շրջանը փոխադրուիլը: Բնակութիւն հաստատելով Հոլիվուտի մէջ, եղբ. Յարութին Հալէպեան անմիջապէս փոխանցուած է ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղ, իսկ իր կողակիցը՝ ՀՕՄի Հոլիվուտի «Մայր» մասնաճիւղը:

1979-1981, յաջորդական երկու տարիներ, եղբ. Յարութին Հալէպեան ընտրուած է ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութեան ան-

դամ, ստանձնելով պատասխանատու պաշտօններ մարզական եւ սկաուտական բաժանմունքներուն մէջ:

Իր հետեւողական գործունէութեան եւ աշխատասիրութեան շնորհիւ, եղբայրը արժանացած է մեծ յարգանքի եւ վայելած է սէրը իր շրջապատին: Նոյն պատճառով ալ արժանացած է զանազան պարգեւատրումներու:

ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը, գնահատելով եղբոր անսակարկ նուիրումը իր սիրելի կազմակերպութեան՝ 1994ին անոր շնորհեց «Տիպար ՀՄԸՄական - 1994» տիտղոսը:

## ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԱՐՍԵՂԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ 1995»

Եղբ. Յարութին Բարսեղեան ծնած է Հալէպ, Սուրիա: Ան եղած է իր ծննդավայրի ՀՄԸՄի մասնաճիւղի առաջին սկաուտներէն եւ իր հետեւողական աշխատանքով հասած է խմբապետի աստիճանին եւ հիմնած է իր մասնաճիւղի երէց փաղանգը:



1960ական թուականներուն Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանը փոխադրուելով, լուրջ աշխատանք տարած է Լոս Անճելըսի մէջ ՀՄԸՄի մասնաճիւղ մը հիմնելու, զոր իրականացուցած է խումբ մը հաւատաւոր ՀՄԸՄականներու գործօն մասնակցութեամբ:

Եղբայրը 1968ին եղած է ՀՄԸՄի Լոս Անճելըսի նորաստեղծ մասնաճիւղի հիմնադիր ատենապետը:

1972ին, գլխաւորած է նորաստեղծ մասնաճիւղի մարզական եւ սկաուտական պատուիրակութիւնը, մասնակցելով ՀՄԸՄի Լիբանանի 35րդ Միջմասնաճիւղային մրցումներուն:

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Dr. Armen  
& Mrs. Aznive  
Goenjian  
& Family**

**Merry Christmas  
& Happy New Year**

**Շնորհաւոր  
Նոր Տարի  
Եւ Ա. Ծնունդ**

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**ՍԱՆԹԱ ՄՈՆԻՔԱ**

**ՀՕՄ-Ի**

**«ԿԱՐՄ»**

**ՄԱՍՆԱՃԻՒՂԸ**

**Չերմօրէն  
Կը Շնորհաւորէ  
Իր Բոլոր  
Անդամ-Անդամուհիներուն  
Նոր Տարին եւ Ա. Ծնունդը,  
Մաղթելով Երջանիկ  
Տարիներ**

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տիպար ՀՄԸՄակացներ

ՀՄԸՄի Նաևասարգեան մարզախաղերու առաջին Յաղթանակի պարահանդեսի կազմակերպիչ մարմնի պատասխանատուն էր:

1987ին, մասնակցած է Աթէնքի մէջ (Յունաստան) գումարուած ՀՄԸՄի Պատգամաւորական Գ. Ընդհանուր ժողովին:

1990ին, ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղը, գնահատելով եղբոր երկար տարիներու ծառայութիւնը մասնաճիւղին մէջ՝ յատուկ յուշանուէրով մը պարգեւատրած է զայն:

1995ին, Շրջանային վարչութեան կողմէ արժանացած է «Տիպար ՀՄԸՄական - 1995» տիտղոսին:

Նոյն տարին, Կեդրոնական վարչութեան կողմէ պարգեւատրուած է «ՀՄԸՄի Արժանեաց» ոսկեայ շքանշանով:

15 անգամ մաս կազմած է ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութեան, գլխաւորաբար ստանձնելով ատենապետի դժուար պարտականութիւնը:

Վերջին անգամ, եղբ. Բարսեղեան պարգեւատրուած է 2008ին, ՀՄԸՄի Լոս Անճելըսի Հիմնադրութեան 40ամեակին առիթով:

ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղի Հիմնադրութենէն մինչեւ իր մահը՝ աշայրջութեամբ հետեւած է մասնաճիւղին եւ ընդհանրապէս ՀՄԸՄի աշխատանքներուն եւ նոյնիսկ յառաջացած տարիքին փորձած է գործօն մասնակցութիւն բերել անոնց յաջողութեանց:

## ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ԱՐԱՊԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ - 1996»

Եղբ. Վարդգէս Արապեան ծնած է 1933ին, Հալէպ, Սուրիա: Վեց տարեկանին անդամակցած է ՀՄԸՄի Նոր Գիւղի մասնաճիւղին՝ իբրեւ գայլիկ. իր առաջին նուաճումը եղած է վեցեակապետի պաշտօնը: Նախնական կրթութիւնը ստացած է Նոր Գիւղի Սահակեան վարժարանին մէջ: Սակայն այնուհետեւ կեանքի դժուարութիւններու բերումով, առիթ չէ ունեցած շարունակելու իր ուսումը: Իր իսկ հաստատումով՝ ՀՄԸՄը եղած է իր համալսարանը, ուր սորված է կեանքի դժուարութիւնները յաղթահարելու կամքը, որուն համար երախտապարտ է ՀՄԸՄին:

Աւելի ուշ, եղբայրը սկստակարգ շարքերը փոխանցուելով՝ մեծ հետաքրքրութիւն ցոյց տուած է նաեւ մարզական կեանքին՝ ֆութպոլին եւ պասքեթպոլին: Սկստակարգ աշխատանքները գերազանցելով հանդերձ, անդամակցած է իր թաղի ՀՅԴ Պատանեկան Միութեան:

1949ին, հազիւ 16 տարեկան, ընտանիքին հետ փոխադրուած է Հա-

տեթ (Լիբանան), ուր գործօն մասնակցութիւն բերած է նորաբաց ՀՄԸՄի մասնաճիւղի վերելքին, որուն սկզբնական կեդրոնատեղին իրենց տունը եղած է: Եղբայրը ստեղծած է մասնաճիւղի առաջին գայլիկ վոհմակը:

1951ին, վերադառնալով Հալէպ, շարունակած է միութեանական իր պարտականութիւնը, առաւել եւս գիտակցելով իր պարտաւորութիւններուն: 20 տարեկանին անցած է ՀՅԴ շարքերը: 1957ին, դարձեալ փոխադրուած է Լիբանան, այս անգամ հայաշատ Պուրճ Համուտ շրջանը եւ անմիջապէս փոխանցուած է տեղւոյն ՀՄԸՄի մասնաճիւղը:


Եղբայրը շուրջ 20 տարիներ մնայուն ներկայութիւն եղած է Պուրճ Համուտի մէջ, ստանձնելով զանազան պաշտօններ եւ պատասխանատուութիւններ: Յատկապէս, 1975ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմի տագնապալի օրերուն, թաղային պաշտպանութեան աշխատանքներուն մէջ մեծ ներդրում ունեցած է:

Սկզբնական տարիներուն, ընտանեկան իր պարտաւորութիւններն ու աշխատանքը դասաւորելէ ետք, վերամիացած է իր այնքան սիրած միութեան՝ ՀՄԸՄին, այս անգամ Մոնթեպելլոյի մէջ:

1987էն մինչեւ իր մահը եղբայրը մնայուն ներկայութիւն եղած է իր բնակավայրի ՀՄԸՄի մասնաճիւղին մէջ, ստանձնելով պատասխանատու պաշտօններ: Իբրեւ վարչական, ատենապետ, Շրջանային ժողովներու ներկայացուցիչ՝ միշտ փորձած է օգտակար դերակատարութիւն ունենալ հայ երիտասարդի դաստիարակութեան մէջ:

1994ին, առ ի գնահատանք իր անսակարկ աշխատանքին, մասնաճիւղին կողմէ պարգեւատրուած է իբրեւ լրջախոհ ՀՄԸՄական:

ՀՄԸՄի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնը, բարձր գնահատելով եղբ. Արապեանի տարիներու անխոնջ աշխատանքը ՀՄԸՄի շարքերուն մէջ՝ 1996ին, անոր շնորհեց «Տիպար ՀՄԸՄական - 1996» տիտղոսը:



ՇՆՈՐՅԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Լաւագոյն  
մաղթանքներով  
կը շնորհաւորենք  
Քոյրրին  
Նոր Տարին  
եւ Ս. Ծնունդը**

ՇՆՈՐՅԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՅԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ


**Հայ-Քոյրերու  
Վարժարանի  
Մեծ ընկրանիքը  
կը մաղթէ  
համայն  
Հայ ժողովուրդի  
գաւակներուն  
Օրհնաբեր Սուրբ Ծնունդ  
եւ Խաղաղաբեր  
Նոր Տարի Լուսաւորուած  
Բերդեհեմի Ապրիլով**

ՇՆՈՐՅԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տիպար ՀՄԸՄականներ

## ԵՂԲ. ՃԱՔ ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 1997»

Եղբ. Ճաք Տեր Պողոսեան ծնած է 1920ին, Տէօրթեօլ, Կիլիկիա, այն-թապցի ընտանեկան համեստ յարկի մը տակ: Գպրոցական իր կրթութիւնը ստացած ըլլալով Իսքենտարունի Կաթողիկէ եղբայրներու քոլեճին մէջ, 7 տարեկանին անդամակցած էր նոյն քոլեճի Ֆրանսական սկաուտական շարժումին, նախ իբրեւ գայլիկ, ապա՝ 1934ին փոխանցուած էր սկաուտական շարքերը:



Կիլիկիոյ պարպումէն ետք, 1939ին, եղբայրը ընտանիքին հետ փոխադրուած էր Պէյրութ, Լիբանան: Եղբայրը միշտ սիրած էր արուեստը եւ մասնագէտ նկարիչ էր: 1955ին կը մեկնի Ամերիկա, եւ կ'աշխատի Wepster Chicago ձայնագրութեան ընկերութեան մէջ:

1956ին, վերջնականապէս հաստատուած է Լոս Անճելըս: 1968ին կարգ մը հայորդիներու հետ հիմնած են ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղը:

Եղբայրը պահպան հրեշտակի նման հետեւած է սկաուտական աշխատանքներու զարգացման: Բազմիցս ընտրուած է նորաստեղծ մասնաճիւղի վարչութեան անդամ եւ պատասխանատու պաշտօններ վարած է:

Եղբայրը մեծ դեր ունեցած է ՀՄԸՄի Մոնթեպելլոյի, Սան Ֆրանսիսքոյի եւ Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղերու հիմնադրութեան մէջ:

Միութենական իր կեանքին առընթեր, դերասանական իր տաղանդը օգտագործած է հայկական ֆիլմերու մէջ, կարեւոր դերեր վերցնելով «Երջանկութեան Արցունքները», «Սասնոյ Զաւակներ» եւ «Պաղտասար Աղբարը» ֆիլմերուն մէջ: Արուեստագէտի իր այս արժանիքներուն շնորհիւ, ՀՄԸՄի արխիւները հարուստ են եղբոր լուսանկարներով եւ տեսերիզներով:

Եղբոր միութենական անսակարկ նուիրումը գնահատուած է բազմաթիւ անգամներ: ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղը պարգեւատրած է գայն՝ իբրեւ մասնաճիւղի «Օրինակելի Միութենական», իսկ ՀՄԸՄի Երջանային վարչութիւնը՝ «Տիպար ՀՄԸՄական – 1997» տիտղոսը շնորհած է անոր:

Եղբոր միութենական անսակարկ նուիրումը գնահատուած է բազմաթիւ անգամներ: ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղը պարգեւատրած է գայն՝ իբրեւ մասնաճիւղի «Օրինակելի Միութենական», իսկ ՀՄԸՄի Երջանային վարչութիւնը՝ «Տիպար ՀՄԸՄական – 1997» տիտղոսը շնորհած է անոր:

## ԿԱՐՊԻՍ ԷՕԼՄԷՍԷՔԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 1998»

Կարպիս Էօլմէսէքեան ծնած է Հաճըն, Լիբանան: Նախնական ուսումը ստացած է Էշրէֆիէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ կաթողիկէ ճեմարանին, իսկ երկրորդականը՝ Նշան Փալանճեան ճեմարանին մէջ:



Զուիցերիոյ մէջ ժամագործութեան մէջ մասնագիտանալով, Պէյրութի մէջ զբաղած է ժամագործութեամբ, ուր յաջողութիւն գտնելով, 1962ին բացած է իր անձնական խանութը:

Փոքր տարիքէն եղած է ֆուլթայրի սիրահար եւ մարզական իր նախաքայլերը առած է թաղային ֆուլթայրի խումբերու մէջ: 1946ին միացած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղին եւ նոյն տարին մասնակցած է Հալէպի Միջմասնաճիւղային մրցումներուն: Ան իր լաւ խաղարկութեամբ եղած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի ֆուլթայրի Ա. խումբի ամենափայլուն յետսապահ մարզիկը եւ իր գնահատելի բաժինը բերած է խումբի յաղթանակներուն, յատկապէս Լեոնայիբանանի ֆուլթայրի ախոյեանութիւնը նուաճելու գծով: Թէեւ վարչական պատասխանատուութիւններ ստանձնած է, սակայն միշտ շարունակած է իր մարզիկի եւ մարզիչի պատասխանատուութիւնները:

Մարզականին առընթեր, Էօլմէսէքեան մօտէն հետեւած է Համագլխի թատերական կեանքին: 1964ին, կրթական ձեռնարկի մը ընթացքին ծանօթացած է Լաթաքիայէն հիւրաբար շրջանը գտնուող ՀՄԸՄական Զարուհի Կարպուչեանի հետ, որուն հետ ամուսնանալով՝ կազմած է ընտանեկան երջանիկ բոյն մը, բախտաւորուելով 4 զաւակներով՝ Մարալ, Աւօ, Շահէն եւ Վահէ, որոնք հաւատաւոր ՀՄԸՄականներ են:

1959ին, գործի բերումով ձգած է ֆուլթայրը, սակայն շարունակած է իր միութենական աշխատանքը վարչական եւ կարեւոր պատասխանատուութիւններով:

1976ին հաստատուած է Հիւսիսային Քալիֆորնիոյ Սան Ֆրանսիսքո քաղաքը: 1977ին միացած է տեղւոյն ՀՄԸՄի մասնաճիւղին եւ ստանձնած է պատասխանատու պաշտօններ: Երկար տարիներ եղած է վարչութեան քարտուղար եւ ատենապետ:

1989ին, ընտանիքին հետ վերջնականապէս հաստատուած է Լոս Անճելըսի Քրեսէնթա Հովիտի շրջանը, ուր 1993ին, չորս այլ եղբայրներու հետ հիմնած է Քրեսէնթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղը եւ առաջին 3 տարիներուն ստանձնած է լաւապէս կատարած է անոր ատենապետի ծանր պարտականութիւնները:

Կարպիս Էօլմէսէքեանի վաստակը մեծ է ՀՄԸՄի մէջ: Ան իր անսակարկ նուիրումին ու անխոնջ աշխատանքին համար բազմիցս ՀՄԸՄի յուշանուէրներով պարգեւատրուած է: Ան ՀՄԸՄի Կեդրոնական վարչութեան յատուկ հրաւերով մասնակցած է նաեւ ՀՄԸՄի 7րդ Ընդհանուր ժողովին: ՀՄԸՄի Երջանային վարչութիւնը, բարձր գնահատելով եղբ. Կարպիս Էօլմէսէքեանի նուիրեալ գործունէութիւնը ՀՄԸՄի մէջ՝ անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական – 1998» տիտղոսը:

## ԵՂԲ. ՅԱԿՈՒ ՕՎԱՅԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 1999»

Եղբ. Յակոբ Օվայեան ծնած է 1939ին: Սանճափի պարպումէն ետք ընտանիքին հետ փոխադրուած էր Հալէպ, Սուրիա: Նոյն տարին անդամակցած էր ՀՄԸՄի Հալէպի մասնաճիւղին իբրեւ գայլիկ: Այնուհետեւ երկար տարիներ ծառայած էր ՀՄԸՄի շարքերուն մէջ՝ իբրեւ սկաուտ, խմբապետ, մարզիկ, Սկաուտական խորհուրդի եւ վարչական կազմերու անդամ: 1961ին ընտանեօք փոխադրուած էր Պէյրութ, Լիբանան եւ փոխանցուած ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղը, ստանձնելով պատասխանատու պաշտօններ:

1974ին, ընտանիքին հետ վերջնականապէս հաստատուած էր Լոս Անճելըս: Նոյն տարին ընտրուած էր առաջին Երջանային վարչութեան անդամ եւ ստանձնած ատենապետի պաշտօնը: Այնուհետեւ, մինչեւ 1984, Երջանային վարչութեան յաջորդական կազմերուն մէջ ստանձնելով զանազան պաշտօններ, հասնելով մինչեւ Երջանային վարչութեան ատենապետի պաշտօնին:

1976ին, կարգ մը ՀՄԸՄական եղբայրներու հետ նախաձեռնած էր ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերը, որոնք մեծ ժողովրդականութիւն կը վայելէին շրջանին հայկական իրականութեան մէջ:

Եղբայրը մասնակցած էր ՀՄԸՄի բազմաթիւ Երջանային ժողովներուն, իսկ 1983ին՝ ՀՄԸՄի Գ. Ընդհանուր ժողովին Աթէնք, Յունաստան:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**«Դաւթեան-Մարիամեան»**  
**Կրթական Հաստատութիւն**

**Davidian-Mariamian Educational Foundation**

**Սրբազին Մաղթանքներով Կը Շնորհաւորենք Ձեր Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը**

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



# Տիպար ՀՄԸՄակացներ

տան: 1985ին, ՀՄԸՄի նաևասարգեան 10րդ մարզախաղերուն առիթով, Շրջանային վարչութիւնը յուշանուէրով մը պատուած էր զայն: 1987ին, ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութիւնը եւ Լոս Անճելըսի քաղաքապետութիւնը, բարձր գնահատելով եղբոր միութենական բեղուն գործունէութիւնը՝ յատուկ գնահատագիրներով պարգևատրած էին զայն:



Եղբայրը մեծ դերակատարութիւն ունեցած էր Քալիֆորնիոյ Հայ աշակերտական մարզախաղերու կազմակերպման մէջ: ՀՄԸՄի 80ամեակին զուգահիշօրով ՀՄԸՄի նաևասարգեան 23րդ մարզախաղերուն առիթով, օրուան Շրջանային վարչութիւնը «Տիպար ՀՄԸՄական - 1999» տիտղոսը շնորհած էր եղբոր:

Հոկտեմբեր 2004ին, ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը, բարձր գնահատելով եղբ. Օվայեանի բեղուն գործունէութիւնը ՀՄԸՄի մէջ՝ պարգևատրած էր զայն շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն՝ «Մառայութեան» շքանշանով:

Եղբոր համար ՀՄԸՄը եղած էր երկրորդ տուն, ուր իրմէ անկախ, նաեւ հասակ նետած են իր զաւակները:

## ԵՂԲ. ԾԱՆԹ ՀԱՅԹԱՅԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ-2000»

Եղբ. Ծանթ Հայթայեան եօթ տարեկանին անդամակցած է ՀՄԸՄին եւ այնուհետեւ եղած է ու կը շարունակէ մնալ հաւատարմոր, նուիրեալ ու ազգանուէր ՀՄԸՄական մը: Ան մինչեւ օրս իր գործօն մասնակցութիւնը կը բերէ շրջանի ՀՄԸՄի եւ ազգային կեանքին մէջ:



Եղբայրը երբեք իր նիւթա-բարոյական աջակցութիւնը չէ զլացած իր սիրելի կազմակերպութեան ու Հայրենիքի նկատմամբ, որուն համար ալ միշտ բարձր գնահատանքի արժանացած է:

2000ին, ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը բարձր գնահատելով եղբոր նուիրեալ գործունէութիւնը ՀՄԸՄէն ներս, անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

Եղբ. Ծանթ Հայթայեանի կենսագրութիւնը կարողալ ՀՄԸՄի նաևասարգեան Մարզախաղերու Պատուոյ նախագահներու բաժնին մէջ:

## ՔՈՅՐ ԺԱՍՄԷՆ ԲՈՒՆԻԱԹԵԱՆ-ՋԱՌԱՀԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ - 2001»

Քոյր Ժասմէն Բունիաթեան-Ջառահեան ծնած է Պարսկաստանի Հիւսիսային շրջանի Ռաշտ քաղաքին մէջ, ուր մանկութիւնը անցրնելէ ետք, 1955ին ընտանիքին հետ փոխադրուած է Թեհրան եւ նոյն տարին անդամակցած է Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան (ՀՄԱԿ), իբրեւ արեւուջ եւ փինկ-փոնկի մարզիկ, եւ ՀՅԳ «Ալիք» Պատանեկան միութեան: Աւարտած է Թեհրանի Քուչէշ Դաւթեան-Մարիամեան երկրորդական վարժարանի ուսողութեան բաժինը: Նոյն ճիւղին մէջ բարձրագոյն ուսումը շարունակած է Պարսկաստանի համալսարանին մէջ եւ տիրացած է Մագիստրոսի տիտղոսին:



Այնուհետեւ կեանքի ասպարէզ նետուելով յաջորդական 23 տարիներ պատասխանատու պաշտօններ վարած է Նահայի եղբայրներու Yorkshire ապահովագրական ընկերութեան մէջ:

Երկար տարիներ եղած է Պարսկաստանի Հայոց Դպրոցի Մնողական յանձնախումբի ատենապետն ու ՀՄԱԿի երէցներու բաժանմունքի պատասխանատուն:

24 տարեկանին ամուսնացած է Աբիկ Ջառահեանի հետ եւ բախտաւորուած են աղջիկ զաւակով մը: Պարսկաստանի յեղափոխութեան դժուարին օրերը ապրելէ ետք, 1984ին, ընտանիքին հետ վերջնակա-

նապէս փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ հաստատուած է Կլենտէյլ: Նոյն տարին իսկ միացած է ՀՄԸՄի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղին: ԱՄՆի մէջ աշխատանքի սկսած է եղբորը, ծանօթ ՀՄԸՄական եւ ազգային Կարէն Բենիասեանսի Group Services ընկերութեան մէջ: Իսկ 1991էն ի վեր շրջանի ՀՄԸՄի Շրջանային վարչութեան հաշուապահն է եւ մօտէն կը հետեւի յատկապէս Հայրենիքի նուիրուած աշխատանքներուն:

Ան Դաւիթեան-Մարիամեան կրթական հաստատութեան հիմնադիր անդամներէն մէկն է: Հոկտեմբեր 2015ին, ծերակուտական ձէք Սքաթի, էսէմպլիի անդամներ Տարիօ Փրոմբրի եւ Քարոլ Լուիի կողմէ պարգևատրուած է իբրեւ «Տարուան ոչ-շահութաբեր կազմակերպութիւններու պաշտօնեայ»: 2005ին՝ Հայաստան Համահայկական հիմնադրամի կողմէ «Տարուան Կամաւոր»ը, իսկ 2006ին, իր ջանքերով կատարուած Մաղկաշատ գիւղի վերանորոգման համար՝ «Պատուոյ Արցախցի» կողմին: 2007ին Քոնկրեսական Ատրմ Շիֆի կողմէ պարգևատրուած է իբրեւ Տարուան Կինը, իսկ Հայ-Ամերիկեան Առեւտրական Գրասենեակի կողմէ՝ «Կիներու ծառայութեան» գնահատագրին: 2010ին, Հայկական Ոսկրածուծի Տոնորներու Ռէճիսթրի կողմէ պարգևատրուած է իբրեւ «Տարուան Կամաւոր»ը:

2012ին, Արցախի նախագահին կողմէ պարգևատրուած է «Երախտագիտական Մետալ»ով: 2012ին, առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի կողմէ ստացած է «Գիր Գնահատագրի»: 2013ին, Արեւմտեան Թեմի Ազգային առաջնորդարանի կողմէ արժանացած է «Ս. Աշխէն Թագուհի» մետալին: 2015ին, ազգանուէր իր գործունէութեան համար Արցախի Հանրապետութեան կառավարութեան կողմէ պարգևատրուած է գնահատանքի մետալով:

2001ին, ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

## ԿԱՐՕ ԳԱԶԱՆՃԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ - 2002»

Կարօ Գազանճեան ծնած է Հալէպ: Նախնական ուսումը ստացած է «Ճէզուիթ»ներու, ապա՝ Հայկազեան Ազգային վարժարանին մէջ: Փոքր տարիքին անդամակցած է ՀՄԸՄի Հայկապի մասնաճիւղին իբրեւ սկաուտ, սակայն յատուկ սէր ունենալով մարզանքի հանդէպ, միութենական իր կեանքը շարունակած է իբրեւ մարզիկ, նախընտրելով թեթեւ ատլետիկ (Վազք) ու ֆուլթպոլը:



1948ին, ընտանիքին հետ փոխադրուած է Պէյրութ, Լիբանան, ուր ուսումը շարունակած է Ս. Նշան Ազգային վարժարանին մէջ, իսկ մարզական կեանքը՝ ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղի «Մայր Հայաստան» ֆուլթպոլի երկրորդական խումբին, ապա՝ Ա. խումբին մէջ:

Կեդրոնանալով պապեթպոլի մէջ, մեծ յաջողութիւններ արձանագրած է, որուն հետեւանքով ալ հրաւիրուած է ՀՄԸՄի Պէյրութի պապեթպոլի Ա. խումբ, որուն խմբապետը եղած է երկար տարիներ: Քանի մը տարիներու լաւ խաղարկութենէ ետք, ան հրաւիրուած է տեղական, միջարաբական եւ այլ երկիրներու մրցումներուն եւ մեծ տպաւորութիւն ձգած է:

Պապեթպոլին առընթեր, Գազանճեան յառաջդիմութիւններ արձանագրած է նաեւ վազքի մէջ, որուն համար ալ 1957ին հրաւիրուած է Լիբանանի ազգային խումբ, ուր մարզուած է նշանաւոր մարզիչ Իվան Փիախաբսին շունչի տակ: Վերջինս նկատելով Գազանճեանի մարզական բարձր կարողութիւնները «Լիբանանի Չաթօփէք»ը անուանած է, որ այդ շրջանին վազքի աշխարհի ախտեանն էր:

1972ին, Լիբանանի կրթական եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ վկայուած է իբրեւ պապեթպոլի իրաւարար, իսկ 1982ին եղած է միակ Հայն ու ՀՄԸՄականը, որ արժանացած է միջազգային իրաւարարի տիտղոսին:

Հակառակ իրաւաբանութեան մէջ եւս մասնագիտացած ըլլալուն, Գազանճեան նախընտրած է մարզական աշխարհը ընտրել իրեն իբրեւ կեանքի ասպարէզ: 1961-1989 տարիներուն իբրեւ մարզանքի ուսուցիչ ծառայած է Նշան Փալանճեան ձեմարանի, Քաղաքի Հայ Աւետարանական երկրորդական վարժարանի, Չաթալպաչեան եւ Սոֆիա Յակոբեան ազգային վարժարաններու մէջ:

Երեք տարիներ եղած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան անդամ: 1983ին, ամուսնացած է Սոֆիա Յակոբեան վարժարանի իր պաշտօնակիցներէն Մարօ Թոքաթլեանի հետ, եւ ապագային բախտաւորուած են երկու զաւակներով:

1989ին, ընտանիքին հետ վերջնականօրէն հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ երկար տարիներ իբրեւ մարզանքի ուսուցիչ պաշտօնավարած է Սրբոց Նահատակաց Ֆերահեան Ազգային վարժարանէն ներս: Գազանճեանները ընտանեօք անդամ են ՀՄԸՄի «Մասիս» մասնաճիւղին: ՀՄԸՄական իր բեղուն գործունէութեան համար 2002ին, ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

# Տիպար ՀՄԸՄականներ

## ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ԱԼԱԶԱՅՏՈՅԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ- 2003»

ՀՄԸՄական եւ Դաշնակցական ընտանեկան յարկի տակ ծնունդ առած եւ հասակ նետած եղբ. Վարդգէս Ալաշայտոյեան եղակի անձնաւորութիւն մըն էր, որուն կեանքի յաջողութիւնները, բարձր պաշտօնները եւ հարստութիւնը երբեք չեն շլացուցած զինքը: Ան իր ամբողջ կեանքի ընթացքին եղած է հաւատաւոր ՀՄԸՄական:



Հակառակ բազմազբաղ ըլլալուն, եղբ. Ալաշայտոյեան մինչեւ իր մահը (Հոկտեմբեր 2016) ՀՄԸՄական իր գործունէութիւնը կատարած է շարունակաբար, ամենայն պատասխանատուութեամբ եւ գիտակցութեամբ: Ան երբեք իր նրթա-բարոյական աջակցութիւնը չէ զլացած իր սիրելի կազմակերպութեան՝ ՀՄԸՄի նկատմամբ:

2003ին, ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Ծրջանային վարչութիւնը բարձր գնահատելով եղբոր անձնագործ գործունէութիւնը ՀՄԸՄէն ներս, անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

Եղբ. Վարդգէս Ալաշայտոյեանի կենսագրութիւնը կարդալ ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերու Պատուոյ Նախագահներու բաժնին մէջ:



## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱՐԻԻԷԼ ԵՒ ԱՍՏՂԻԿ ՓԱՆՈՍԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2004»

Եղբ. Գարիէլ Փանոսեան ծնած է Լիբանանի միակ հայկական գիւղը՝ Այնճար: 1959ին միացած է ծննդավայրի ՀՄԸՄի մասնաճիւղին, ուր խորանալով սկաուտական կեանքին մէջ, արժանացած է սկաուտական բոլոր կարգերուն եւ հասած է մինչեւ մասնաճիւղի խմբապետութեան, զոր վարած է երկար տարիներ:

1963ին, Յունաստանի մէջ մասնակցած է միջազգային ճամպորիին, իսկ 1965ին՝ Լիպիոյ միջարաբական ճամպորիին: Նշանակուած է Լիբանանի Ծրջանային սկաուտական խորհուրի անդամ: 1974ին, եղբոր ջանքերով տեղւոյն ԼՕՍԻ արծուիկները միացած են ՀՄԸՄին: Եղբայրը երկար տարիներ ստանձնած է մասնաճիւղի պատասխանատուութիւնը:

Սկաուտական կեանքին առնթեր, եղբայրը փոքր տարիքին անդամակցած է նաեւ «Յառաջ» պատանեկան միութեան եւ այնուհետեւ փոխանցուած է ՀՅԴ «Կարմիր Լեռ» կոմիտէութեան շարքերը, ուր ստանձնած է պատասխանատու պաշտօններ:

Ան եղած է Համազգայինի Այնճարի մասնաճիւղի Հիմնադիրներէն եւ երկար տարիներ վարչական կազմերուն մէջ աշխատելէ ետք, ընտրուած է Լիբանանի Ծրջանային վարչութեան անդամ:

1986ին փոխադրուելով Ամերիկայի Միացեալ Նահանգներու Սան Ֆրանսիսքո քաղաքը, փոխանցուած է տեղւոյն ՀՄԸՄի եւ Համազգայինի, ինչպէս նաեւ ՀՅԴ «Քրիստափոր» կոմիտէութեան շարքերը: Եղբոր վստահուած են պատասխանատու զանազան պաշտօններ: Եղբայրը մաս կազմած է նաեւ տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմին:

Հայրենասիրութենէ մեկնած, եղբայրը երկար տարիներ է Վեր փոխադրուած է Հայրենիք, ուր կը զբաղի Լիբանանի «Ազգակ» օրաթերթի լուսանկարչութեամբ:

Քոյր Աստղիկ Պուրսալեան-Փանոսեան ծնած է Այնճար, Լիբանան:

1960ին անդամակցած է ծննդավայրի ԼՕՍԻ արծուիկութեան շարքերը, աւելի ուշ՝ 1967ին, ՀՄԸՄի մասնաճիւղին, իբրեւ պատրաստուողի մարզիկ, որուն սիւներէն եղած է մինչեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Սան Ֆրանսիսքո քաղաքը փոխադրուելը (1972), ուր նաեւ աշխուժութեամբ շարունակած է միութեանական եւ ազգային իր կեանքը:

1973-1980ականներուն եղած է տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Ծաբաթօրեայ վարժարանի ուսուցչուհի եւ փոխտնօրէնուհի: Սակայն սկաուտական քաջողական կեանքը մղած է զինք 1975ին Հիմնելու տեղւոյն ՀՄԸՄի մասնաճիւղի սկաուտական բաժանմունքը, Հինգ տարիներ վարելով Մասնաճիւղի խմբապետի պաշտօնը: 1978ին, գլխաւորելով ՀՄԸՄի Քալիֆորնիոյ սկաուտական պատուիրակութիւնը, մասնակցած է ՀՄԸՄի առաջին Համագաղութային բանակումին, Յունաստան:

Քոյր Աստղիկ ՀՄԸՄի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղէն ներս երկար տարիներ վարած է զանազան պատասխանատու պաշտօններ, հասնելով մինչեւ մասնաճիւղի վարչութեան ատենապետի պաշտօնին: Ան մասնակցած է ՀՄԸՄի Արեւմտեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու բազմաթիւ Ծրջանային ներկայացուցչական ժողովներուն, իսկ 2003ին՝ ՀՄԸՄի Տրջ Ընդհանուր ժողովին, Հայաստան:

ՀՄԸՄական գործունէութեան կողքին, ան անդամակցած է նաեւ տեղւոյն ՀՕՄի «Կարին» մասնաճիւղին եւ վարած է վարչական պատասխանատուութիւններ, ինչպէս նաեւ ընտրուած է ՀՕՄի Ծրջանային վարչութեան անդամ: Ան անդամ է նաեւ Համազգայինի «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղին:

1980ին, Այնճարի մէջ իրարու հանդիպելով, Աստղիկ եւ Գարիէլ ամուսնացած են եւ կազմած են իրենց երջանիկ բոյնը:

Տէր եւ տիկ. Գարիէլ եւ Աստղիկ Փանոսեաններ իրենց Հայրենասիրութեամբ օրինակ դառնալով շրջապատին, այսօր բնակութիւն հաստատած են Մայր Հայրենիք եւ կը զբաղին բարեսիրական գործերով, օգնելով սահմանամերձ գիւղերու բնակիչներուն:

## ՔՈՅՐ ԼԻԼԻԹ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2005»

Քոյր Լիլիթ Բաղդասարեան ծնած է Թեհրան: Փոքր տարիքին ծնողքին հետ Համատանի փոխադրուելով յաճախած է տեղւոյն Հայկական վարժարանը: Այնուհետեւ Թեհրան վերադառնալով նախակրթարանի ուսումը ստացած է «Կիւ» պարսկական նախակրթարանէն, միջնակարգը՝ պարսկական «Անուշիրվանէ Դաղկար» վարժարանէն, իսկ երկրորդականը՝ Նուր Պախա ընտրանիներու վարժարանէն, միակ իզական սեռի ներկայացուցիչը ըլլալով ուսողութեան մէջ: Բարձրագոյն ուսումը ստացած է պետական համալսարանէն, մասնագիտանալով ճարտարապետութեան մէջ: Աւելի ուշ, հեռակա կապով Business management-ին հետեւած է ամերիկեան համալսարանի մը հետ եւ իբրեւ կարող հաշուապահ նետուած է կեանքի ասպարէզ:



11 տարեկանին անդամակցած է Թեհրանի Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան (ՀՄԱԿ), որ այդ շրջանին սկաուտական բաժանմունք չունենալով աշխատած է երաժշտական բաժանմունքին մէջ: Քանի մը տարիներ ետք, ՀՄԱԿ ստեղծելով իր սկաուտական բաժանմունքը, Լիլիթ եղած է անոր առաջին արհնուշներէն, միաժամանակ հետեւելով մարզական բաժանմունքի յատկապէս պատրաստուողի եւ փինկ-փոնկի մարզաճիւղերուն: Ան նաեւ միակ աղջիկ անդամը եղած մասնաճիւղի «փրկարար»ներու խումբին: Նոյն տարիներուն ան նաեւ անդամակցած է ՀՅԴ պատանեկան միութեան եւ այնուհետեւ եղած է երգուեալ դաշնակցական:

1959ին ամուսնացած է ՀՄԱԿի պատրաստուողի մարզիչներէն երկրաչափ Վահիկ Բաղդասարեանի հետ, ապագային բախտաւորուելով երեք զաւակներով:

Քոյր Լիլիթ մեծ ներդրում ունեցած է «Արարատ» մարզական իրականացման մէջ: 1979ին, պարսկաստանի յեղափոխութեան առաջին տարիներուն ընտանիքին հետ փոխադրուած է Ամերիկա: Մէկ տարի ուսուցչութիւն կատարելէ ետք Ծամլեան Ազգային վարժարանին մէջ, սկսած է գործել ամերիկեան մեծ ընկերութեան մը մէջ՝ իբրեւ հաշուապահ: 15 տարիներ աշխատելէ ետք իրականացուցած է իր տարիներու երազը, բանալով իր անձնական մանկամսուրը:

1982ին միացած է ՀՄԸՄի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի շարքերուն եւ Հիմնած է մասնաճիւղի երէցական բաժանմունքը: 1983ին վարչական ընտրուած է եւ տարիներ շարունակ զանազան պատասխանատու պաշտօններ ստանձնած է. քարտուղար, բաժանմունքի ներկայացուցիչ, ատենապետ եւ այլն: Ան մեծ դեր ունեցած է մասնաճիւղի յատկապէս դրամահաւաքի եւ կեդրոնի գնման աշխատանքներուն մէջ: Նաեւ շրջան մը նշանակուած է Ծրջանային վարչութեան անդամ: Օգտակար հանդիսացած է Նաւասարդեան աշխատանքներուն եւ գաղութի ազգային կեանքէն ներս օգտակար ձեռք երկարած է զանազան նախաձեռնութիւններու. Համազգայինի, Լարքի, ՀՅԴ Օրուան տօնախմբութեան եւ այլ հանրային ձեռնարկներու կազմակերպման մէջ:

# Տիպար ՀՄԸՄականներ



## ԵՂԲ. ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2006»

Եղբ. Սամուել Մկրտչեան ծնած է պատմական Տիգրանակերտ քաղաքը՝ 1922ին: Փոքր տարիքին փոխադրուած է Հայկէս եւ աւարտած է Սիւլէյմանիէի Փէր Պալեան «Թէր-Սէնթ» նախակրթարանը: Այնուհետեւ, ան ինքնաշխատութեամբ տիրապետած է Հայերէն լեզուին ու Հայ գրականութեան եւ իր թղթակցութիւններով, մարզական վերլուծումներով, միութենական եւ անձնական իր փորձառութիւնները թուղթին յանձնելով շատ մը դէմքեր ու դէպքեր անմահացուցած է:

1933ին անդամակցած է ՀՄԸՄի Նոր Գիւղի (Հայկէս) մասնաճիւղը իբրեւ գայլիկ եւ ապա՝ սկաուտ: Սակայն միշտ սէր ունենալով ֆուտպոլի նկատմամբ, անդամակցած է Հայկէսի ֆուտպոլի երկրորդական խումբերուն: 1944ին փոխանցուած է Հայկէսի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին եւ 1945-46 տարիներուն մասնակցած է խումբի մրցումներուն: Ան միաժամանակ նաեւ եղած է տեղւոյն ֆուտպոլի յանձնախումբի անդամ:

1947ին ձգելով ֆուտպոլը, 14 տարիներ կատարած է իրաւարարի դժուարին պարտականութիւնը:

1965ին մասնակցած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղի ֆուտպոլի աշխատանքներուն եւ անդամ նշանակուած է Լիբանանի ֆուտպոլի յանձնախումբի նախաքայլը նկատուող Առաջին «Թէքնիք» յանձնախումբին: Միաժամանակ մաս կազմած է ՀՄԸՄի Մամլոյ յանձնախումբին: Եղբոր վստահուած են մասնաճիւղի ատենապետի, փոխատենապետ եւ զանազան այլ պատասխանատու պաշտօններ:

1946ին սկսած է մարզական թղթակցութիւններ կատարել սփիւռքահայ շարք մը թերթերու համար: Ան նաեւ հեղինակն է բազմաթիւ գիրքերու: 1988ին վերջնականապէս հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ մինչեւ օրս կ'աշխատակցի «Ասպարէզ» օրաթերթի եւ այլ Հայկական թերթերու:

Մկրտչեան անդամ է Հայաստանի գրողներու միութեան: Ան նաեւ եղած է ատենապետը Լոս Անճելըսի Հայ Գրողներու Միութեան: ՀՄԸՄի 80ամեակին առիթով, Կեղրոնական վարչութիւնը բարձր գնահատելով եղբոր նուիրումը, պարգեւատրած է զայն ՀՄԸՄի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

## ԵՂԲ. ՆԻԿՈԼ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2007»

Եղբ. Նիկոլ Արզումանեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Փոքր տարիքին, ընտանիքին հետ փոխադրուած է Պաղտատ, Իրաք, ուր անդամակցած է տեղւոյն ՀՄԸՄի մասնաճիւղին իբրեւ թեթեւ աթլետի մարզիկ, աւելի ուշագրութիւնը կեղրոնաՕցուցած է պասքեթպոլի մարզաճիւղին վրայ:



Բազմաթիւ պատասխանատու պաշտօններ ստանձնած է ՀՄԸՄի Պաղտատի մասնաճիւղէն ներս: Ընտրուած է վարչական, եղած է մարզական պատասխանատու եւ ինք հիմը դրած է մասնաճիւղի վոլիպոլի աղջկանց խումբին:

1971ին, ընտանիքին հետ փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ նոյն տարին, ընտանեօք անդամակցած են ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղին: Բեղուն գործունէութիւն ցուցաբերած է մասնաճիւղի ընկերային, սկաուտական եւ յատկապէս մարզական կեանքէն ներս, շրջանի երիտասարդութիւնը համախմբելով ՀՄԸՄի ֆուտ-

պոլի եւ պասքեթպոլի խումբերու շուրջ, ի հարկին ստեղծելով համապատասխան նոր խումբեր:

Բազմաթիւ անգամներ վարչական ընտրուելով ստանձնած է մարզական եւ յատկապէս պասքեթպոլի բաժանմունքի եւ գանձապահի պատասխանատուութիւնները: Նաեւ բազմիցս մասնակցած է շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն ժողովին: Նշանակուած է նաեւ Շրջանային մարզական խորհուրդի անդամ:

Եղբայրը սիրով կատարած է իրեն վստահուած բոլոր պարտականութիւնները եւ բազմաթիւ անգամներ պարգեւատրուած է.

1998ին՝ ՀՄԸՄի Լոս Անճելըսի մասնաճիւղի 30ամեակին առիթով, 2000ին՝ Շրջանային վարչութեան կողմէ արժանացած է շրջանի ՀՄԸՄի բարձրագոյն՝ «Մտայութեան» շքանշանին, 2004ին՝ «Մարզիկ» ի 25ամեակին առիթով, Կեղրոնական վարչութեան կողմէ, երկար տարիներ ՀՄԸՄի «Մարզիկ» պաշտօնաթերթի առաքումն ու անդամավճարներու գանձումները, կատարելուն համար:

ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը բարձր գնահատելով եղբոր ՀՄԸՄական գործունէութիւնը, 2007ին անոր շնորհեց «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

Անհանգստութեան պատճառով, եղբայրը իր կեանքի վերջին տարիներուն չէր կրցած մասնակցիլ ՀՄԸՄի աշխատանքներուն:

## ԵՂԲ. ԱԼՊԵՐ ՈՒՆՃԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2008»

Եղբ. Ունճեան ծնած է Պուրճ Համուտ, Լիբանան: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Հայֆա, Պաղեստին: 1935ին անդամակցած է ՀՄԸՄի Հայֆայի մասնաճիւղին՝ իբրեւ գայլիկ, ապա անցած է սկաուտական շարքերը, ուր հասած է մինչեւ վարիչ առաջնորդի աստիճանին: Յատուկ սէր ունենալով ֆուտպոլի նկատմամբ, սկաուտականին առնթեր նաեւ մաս կազմած է մասնաճիւղի ֆուտպոլի Բ. խումբին եւ մասնակցած է Արաբական Ֆետերասիոնի ֆուտպոլի մրցաշարքերուն: 1946 եւ 1947 թուականներուն, յաջորդական երկու տարիներ, եղբայրը մասնակցած է Պաղեստինի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն:



1948ին, արաբ-իսրայէլեան պատերազմի հետեւանքով, եղբայրը ընտանիքին հետ վերադարձած է ծննդավայր եւ նոյն տարին իսկ անդամակցած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղին եւ նոյն պատճառներով, Պաղեստինէն Լիբանան փոխադրուած կարգ մը երիտասարդներու հետ, կազմած է մասնաճիւղի ֆուտպոլի Բ. դասակարգի «Կամք» խումբը: Նոյն տարին իսկ մասնակցելով ՀՄԸՄի Լիբանանի երկրորդական խումբերու մրցաշարքին, «Կամք»ը արժանացած է Բ. մրցանակին:

1949ին ընտրուած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի վարչութեան անդամ եւ այնուհետեւ մինչեւ 1976, քանի մը կարճ դադարներով, ստանձնած է գանձապահի, մարզականի, փոխատենապետի եւ ատենապետի պաշտօնները:

1968ին, մաս կազմած է ՀՄԸՄի Լիբանանի ֆուտպոլի ներկայացուցչական պատուիրակութեան, որուն հետ մեկնած է Պուկարիա եւ Ռումանիա մարզական 15օրեայ շրջապտոյտի: Եղբայրը յաճախ պատասխանատուութիւն ստանձնած է մասնաճիւղի պասքեթպոլի երկսեռ խումբերու, յատկապէս Լիբանանի Ֆետերասիոնի կազմակերպած մրցումներուն: Եղբայրը մասնակցած է Մերձաւոր Արեւելքի եւ Լիբանանի ՀՄԸՄի բարձրագոյն ժողովներուն:

1976ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով, եղբ. Ունճեան փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ փոխանցուած է Սան Ֆերնանտո Հովիտի շրջանը: 1977-1978 տարիներուն նշանակուած է ՀՄԸՄի նորաստեղծ Նաւասարդեան մարզախաղերու ֆուտպոլի յանձնախումբի անդամ:

1978ին, քանի մը ՀՄԸՄականներու հետ Սան Ֆերնանտո Հովիտի մէջ ՀՄԸՄի մասնաճիւղի հիմնադիր վարչութեան մաս կազմած է:

Եղբայրը 1947էն ի վեր անդամ է ՀՅ Գաշնակցութեան եւ կուսակցական զանազան պաշտօններ վարած է Սիսի «Իշխան» եւ Սան Ֆերնանտո Հովիտի «Ռոստոմ» կոմիտէութեանց մէջ: 1956-1976 եղած է Սիսի «Աքսոր Գասարճեան» ազգ. վարժարանի հոգաբարձութեան անդամ, իսկ 1982-2004, որոշ ընդմիջումներով՝ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձու: Ընտրուած է նաեւ Ազգային երեսփոխան: Ան իր ազգանուէր գործունէութեան համար արժանացած է Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան, ՀՅԳ «Ռոստոմ» կոմիտէութեան, ՀՄԸՄի Շրջանային եւ «Մասիս» մասնաճիւղի վարչութեանց գնահատանքներուն:

2008ին, ՀՄԸՄի շրջանային վարչութիւնը գնահատելով եղբ. Ունճեանի ՀՄԸՄական գործունէութիւնը, անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

# Տիպար ՀՄԸՄակացներ

## ԵՂԲ. ԶԱՔԱՐ ԶՈՐՊԱՃԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2009»

Եղբ. Զաքար Զորպաճեան 1945ին անդամակցած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղին իբրև երէց սկաուտ եւ ապա վարիչ առաջնորդ: Սակայն յատուկ սէր ունենալով ֆութպոլի նկատմամբ, 1950ին կը ներգրաւուի մարզական կեանքին: Նոյն տարին մասնաճիւղի վարչութեան անդամ ընտրուելով, զբաղած է ֆութպոլով եւ իր ջանքերով մասնաճիւղի ֆութպոլի ներկայացուցչական խումբը երեք անգամ Լիբանանի Բ. դասակարգի խումբերու եւ ութ անգամ ալ Լեռնալիբանանի ֆութպոլի ախոյեան Հանդիսացած է:



Եղբայր Զաքար 17 տարիներ նշանակուած է Լեռնալիբանանի ֆետերասիոնի անդամ:

1955ին եւ այնուհետեւ 10 տարիներ կազմակերպած է Պուրճ Համուտի երկար վազքի մրցաշարքը: 1960-1970 նշանակուած է Լիբանանի երկրորդական վարժարաններու ֆութպոլի մրցաշարքերու պատասխանատու կազմակերպիչ: 1962-1973 Լեռնալիբանանի նահանգապետի որոշումով կազմակերպած է շրջանի Համալսարաններու տարեկան ախոյեանութեան մրցումները: 1967-1984 Լիբանանի ներքին գործոց նախարարի կողմէ նշանակուած է Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզադաշտի բարեգործման եւ պիւտճէի յանձնարումների անդամ: Եղբայրը ի պաշտօնէ ՀՄԸՄի Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերու պատուիրակութիւններու հետ այցելած է զանազան Արաբական եւ եւրոպական երկիրներ: Յորդանանի մէջ արժանացած է Յորդանանի թագաւորի շքանշանին: Զորպաճեան մեծ աշխատանք տարած է նաեւ թեթեւ ատլետի մարզաճիւղէն ներս:

1967-1977 տարիներուն, իբրև վարչական Պուրճ Համուտի պատրիարքի խումբը առաջնորդած է Եգիպտոս, ուր բազմաթիւ յաղթանակներ արձանագրած է:

Երկար տարիներ ընտրուած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի վարչութեան անդամ եւ ստանձնած է զանազան պատասխանատու պաշտօններ: Ան բազմաթիւ տարիներ իր մասնաճիւղը ներկայացուցած է Լեռնալիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի տարեկան Ընդհ. ժողովներուն: Եղբայրը նաեւ մեծ ներդրում ունեցած է Լոս Անճելըսի մէջ ՀՄԸՄի ֆութպոլի վեթերաններու խումբի կազմութեան մէջ: Ան իր կեանքի մեծ մասը դաշտերու վրայ անցուցած ըլլալով զինք կոչած են «դաշտերու խենթ»: Եղբոր միութենական օգտաշատ գործունէութիւնը մեծապէս զնահատուած է Համապատասխան մարմիններու կողմէ: ՀՄԸՄի Լիբանանի Շրջանային վարչութեան կողմէ արժանացած է «Մառայութեան», իսկ Կեղրոնական վարչութեան կողմէ՝ «Արատակարգ Մառայութեան» շքանշաններուն: Գնահատագիրեր ստացած է նաեւ ՀՅԴ «Ռոստոմ» եւ «Բարգէն Սիւնի» կոմիտէներու ու ՀՄԸՄի ֆութպոլի վեթերաններու խումբի կողմէ:

## ԵՂԲ. ՊԵՐՃ ԶԱՄՃԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2010»

Եղբ. Պերճ ճամճեան ծնած է Յունիս 1946ին, Գահիբէ, Եգիպտոս: Նախակրթարանի ուսումը ստացած է ծննդավայրի «Գալուստեան» ազգ. վարժարանէն, ուր նաեւ միացած է վարժարանէն ներս գործող սկաուտական շարժումին: Ապա, երկու տարիներ տեղւոյն Մխիթարեան Հայրերու վարժարանը յաճախելէ ետք, 1960ին փոխադրուած է Լիբանան եւ ուսումը շարունակած է Հազմիէի Մխիթարեան Հայրերու վարժարանին մէջ: 1963ին փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ՝ Լոս Անճելըս: Տեղւոյն եւ Կլենտէյլ քոլեճները քանի մը տարիներ յաճախելէ ետք, աւարտած է Քալիֆորնիոյ Նահանգի Համալսարանը (Cal. State University), ուր պսակաւոր գիտութեան (BA) վկայականը ստացած է ուսողութեան (Mathematic) մէջ: Համալսարանական իր ուսումը աւարտելէ ետք, իբրև փայլուն աշակերտ, Security Pacific դրամատան կողմէ ընտրուած է մասնագիտանալու IBM Համակարգչային գիտութեան մէջ: Ուսման աւորնթեր, եղբ. ճամճեան անդամակցած է կամաւոր աշ-

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

*Merry  
Christmas  
& Happy  
New Year*

**Superior Electric  
Motor Service, Inc.**

4622 Alcoa Ave.  
Vernon, CA 90058  
Tel. 323.583.1040  
Fax 323.583.9266

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Ron  
& Goharik  
Gabriel  
& Family**

We wish  
our friends & family  
A Merry Christmas  
& a Happy  
New Year

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տիպար ՀՄԸՄականներ

խատանք տարած է Ամերիկայի Սկաուտական կազմակերպությունն էն ներս, իբրեւ մարզիչ, առաջնորդ եւ խմբապետ:



1985ին անդամակցած է Լոս Անձելըսի մասնաճիւղին եւ սկաուտական բաժանմունքէն ներս վարած է խմբապետի օգնականի, խումբի խմբապետի եւ մասնաճիւղի աւագ խմբապետի պատասխանատու պաշտօնները, համապատասխան աստիճաններով:

Երկար տարիներ նշանակուած է մասնաճիւղի Սկաուտական խորհուրդի անդամ, ինչպէս նաեւ ընտրուած է վարչական:

Երեք շրջաններ նշանակուած է Ծրջանային սկաուտական խորհուրդի անդամ: Երկար տարիներ եղած է ՀՄԸՄի կրօնական բաժինի ներկայացուցիչ Ամերիկեան սկաուտութեան մօտ:

Ան մեծ ներդրում ունեցած է Ազգային առաջնորդարանի նախաձեռնած «Ս. Մերոպ Մաշտոց» կրօնական շքանշանի ստեղծման եւ անոր կազմակերպչական աշխատանքներուն մէջ: Ստացած է միջազգային սկաուտական «Wood Badge»ի կարգը:

Եղբ. Ճամճեան մինչեւ օրս աշխոյժ գործունէութիւն կը տանի ՀՄԸՄէն ներս:

## ՌՈՒԲԷՆ ԳԻՒՐՋԵԱՆ՝

### «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2011»

Ռուբէն Գիւրջեան ծնած է 1942ին, Պարսկաստանի Քերմանշահ քաղաքը: Վաղ տարիքին փոխադրուած է Թեհրան, ուր ուսանած է տեղւոյն «Քուշէշ-Դաւթեան» Ազգային վարժարանին մէջ:

Տասր տարեկանին անդամակցած է Թեհրանի «Արարատ» մշակութային կազմակերպութեան՝ իբրեւ սկաուտ, ուր իր նուիրուած աշխատանքին բերումով, հասած է մինչեւ կազմակերպութեան Կեդրոնական վարչութեան անդամի պաշտօնին:

Հոս ծանօթացած է իր ապագայ կեանքի ընկերոջը՝ Ծաղիկին, որուն

հետ ամուսնացած է եւ ապագային բախտաւորուած են երկու մանչ զաւակներով, որոնք ՀՄԸՄ Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի հիմնադրութեան օրէն՝ անդամակցած են այդ մասնաճիւղին:



Ռուբէն Գիւրջեան իր համալսարանական կրթութիւնը ստացած է նախ Սպահանի համալսարանէն, ուր յաջողութեամբ աւարտած է հայագիտական ճիւղը, ապա ուսումը շարունակած է Թեհրանի հաշուապահական բարձրագոյն ուսումնական հաստատութեան մէջ, զոր աւարտած է յաջողութեամբ, ապա կատարած է իր գինուորական ծառայութիւնը իրանեան բանակի ուղղաթիռներու բաժանմունքին մէջ:

1974ին, Գիւրջեան Թեհրանի «Արարատ» մշակութային կազմակերպութեան կողմէ մասնակցած է Պէյրութի մէջ գումարուած, ՀՄԸՄը համագաղութային կառոյց վերածելու հիմնադիր ժողովին:

1977ին, Գիւրջեան փոխադրուած է Արեւմտեան Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ հաստատուած է Կլենտէյլ, ուր 1978ի վերջին, ութ այլ սկաուտներու հետ, հիմնած է ՀՄԸՄի «Արարատ» մասնաճիւղը:

Ան վեց տարիներ եղած է մասնաճիւղի վարչութեան ատենապետ: Իր ատենապետութեան շրջանին կազմուած են մարզական ու սկաուտական բազմաթիւ խումբեր: Եղբոր գործունէութեան աւարտին, մասնաճիւղի անդամներուն թիւը հասած է 1000ի:

1997ին, մասնաճիւղի վարչութեան կողմէ արժանացած է «Պատուոյ անդամ» կոչումին: Ան նաեւ չորս տարի անդամակցած է ՀՄԸՄի Արեւմտեան Ամերիկայի Ծրջանային վարչութեան:

Եղբ. Գիւրջեան ընտրուած է նաեւ հոգաբարձու Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ չորս տարի իբրեւ Ազգային երեսփոխան:

ՀՄԸՄի Ծրջանային վարչութիւնը բարձր գնահատելով եղբոր արդիւնաբեր գործունէութիւնը ՀՄԸՄէն ներս, 2011ին անոր շնորհեց «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

Քրեսենթա Հովիտի  
Հայց. Առաք. եկեղեցւոյ  
հոգեւոր հովիւն ու  
հոգաբարձութիւնը,  
խոնարհելով մեր անմեղ  
նահատակներու խնկելի  
յիշատակին, կու գան  
շնորհաւորելու համայնքիս  
հաւատացեալները  
Նոր Տարուան  
եւ Ծննդեան Ս. Տօներուն  
առիթներով, ցանկալով բոլորին  
քաջառողջութիւն  
եւ ամենայն բարիք

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## Տոբք. Վարդգէս եւ Մէրի Նաճարեաններ

Թող 2019 տարին  
իր հետք բերէ  
իրազործումներու նոր  
հանգրուան մը՝ մեր  
ազգային  
նպատակներու  
իրազործման  
ի խնդիր

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# Տիպար ՀՄԸՄականներ

## ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2012»

Մնած է Լիբանանի հայական Այնճար գիւղը, ազգանուն էր ընտանեկան յարկի մը տակ: Ան երրորդն է Վահան եւ Սիրանոյշ Քէշիշեաններու եօթ զաւակներուն:



Նախակրթութիւնն ու միջնակարգ ուսումը ստացած է ծննդավայրի «Յառաջ» ազգ. վարժարանէն, Իսկ երկրորդականը՝ Պուրճ Համուտի «Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան» քոլեճէն: Համալսարանական ուսումը ստացած է Լիբանանի Սէն Ժոզէֆ Համալսարանէն, եւ աւարտած՝ Հայագիտական բաժինը: Երկար տարիներ պաշտօնավարած է Պուրճ Համուտի Սիւթաղամասի «Աքսոր Գասարճեան» նախակրթարանին մէջ իբրեւ հայերէն լեզուի եւ արուեստի նիւթերու ուսուցչուհի, իսկ աւելի ուշ իբրեւ մանկապարտիզպանուհի: Միաժամանակ հետեւած է Հայկազեան քոլեճի ուսուցիչներու յատուկ մանկավարժական ծրագիրին եւ Նշան Փաեանճեան ճեմարանի նախաձեռնած եւ Լուսին Մալիքեանի ղեկավարած մանկավարժական ծրագրին:

Փոքր տարիքէն անդամակցած է Լիբանանի Օգնութեան Խաչի (ԼՕՊ) Այնճարի մասնաճիւղի Արծուիկներու բաժանմունքին իբրեւ մրջնիկ, իսկ աւելի ուշ, փոխանցուած է ՀՄԸՄի Պուրճ Համուտի մասնաճիւղը, իբրեւ Արեւուշ վարիչ առաջնորդ, ուր հասած է մինչեւ մասնաճիւղի խմբապետուհի եւ այնուհետեւ՝ արժանացած է Լիբանանի Ծրջանային խմբապետուհի աստիճանին, վարելով Համապատասխան պաշտօնը:

նր: Զանազան պատասխանատու պաշտօններ ստանձնած է մասնաճիւղի եւ շրջանային մակարդակներու վրայ:

Ուսուցչուհի իր պաշտօնին առնթեր երկար տարիներ եղած է Պուրճ Համուտի Նոր Սիւ շրջանի ՀՅԴ «Քրիստափոր» պատանեկան միութեան վարիչ: Անդամակցած է ՀՅԴ «Զաւարեան» Ուսանողական միութեան, ուր նաեւ անցած է ՀՅԴ շարքերը:

1984ին փոխադրուած է Միացեալ Նահանգներ եւ աշխատած է շրջանի Արեւմտեան Ամերիկայի ՀՅԴ պաշտօնաթերթ «Ասպարէզ» օրաթերթի մէջ նախ իբրեւ գրաշար եւ թղթակից, ապա խմբագրական կազմի անդամ: Եղած է նաեւ «Հորիզոն» հեռատեսիլի կայանի թղթակից եւ արխիւներու պատասխանատու: Թէ՛ Լիբանանի եւ թէ՛ ԱՄՆի մէջ քանի մը շրջաններ վարած է Ծրջանային խմբապետուհի պաշտօնը: Բազմիցս ընտրուած է ՀՄԸՄի Ծրջանային վարչութեան անդամ:

Իբրեւ Սկսուտ ղեկավար եւ կազմակերպիչ մասնակցած է ՀՄԸՄի Համագաղութային եւ Հայաստանի մէջ կազմակերպուած Համա-ՀՄԸՄական ընդհանուր բանակումներուն:

1990ին գործուղուած է Հայաստան, ուր նախաձեռնած է ՀՄԸՄի վերակազմակերպչական առաջին աշխատանքները Հայրենիքի մէջ: Անդամ է Boy Scouts of America-ի Verdugo Council-ին: Արժանացած է Wood Bage-ի երրորդ տախտակին (Bead):

Գործօն մասնակցութիւն բերած է ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպչական աշխատանքներուն: Ան ՀՄԸՄի թղթակիցն է, ստորագրելով բազմահարիւր յօդուածներ:

2005էն մինչեւ 2018 եղած է վարիչ քարտուղարը Հայ Օգնութեան Միութեան Արեւմտեան ԱՄՆի Ծրջանային վարչութեան:

Իր նուիրեալ աշխատանքին համար արժանացած է բազմաթիւ պարգևատրումներու, որոնցմէ կ'արժէ նշել «Մարդիկ»-ի եւ «Ասպարէզ»-ի խմբագրութեանց պատուոյ գիրքերուն, ՀՄԸՄի-ՀԱՍԿԻ Կեդրոնական վարչութեան կողմէ «Վարդան Բախչեան»-ի յիշատակին ստեղծուած առաջին մետալին: ԱՄՆի ծերակուտական Ատրմ Շիֆի կողմէ հռչակուած է «Տարուան Կինը», ՀՄԸՄի Ծրջանային վարչութեան կողմէ արժանացած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսին (2012), Ծրջանի ՀՄԸՄի «Ծառայութեան» բարձրագոյն շքանշանին եւ շատ ուրիշ գնահատագրեր ստացած է պետական անձնատրութիւններէ եւ հայկական կազմակերպութիւններէ: Քոյր Մարօ իր կեանքի մեծագոյն երազանքը իրականացնելով 26 Դեկտեմբեր 2018ին փոխադրուած է Հայաստան, ազգային իր պարտականութիւնը շարունակելու հայրենիքի մէջ:

**KJT LAWGROUP LLP**  
Jivalagian | Thomassian

www.KJTLawGroup.com

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Տօնական Օրերու Լաւագոյն Մաղթանքներ:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**ԱՆԱՀԻՏ ՊԱՂՏԱՏԼԻԵԱՆ-ՕՀԱՆԷՍԵԱՆ ԵՒ ՍԻԼՎԻ ՊԱՂՏԱՏԼԻԵԱՆ**

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան փօներուն առիթով, «Ասպարէզ»-ին կը մաղթեն միշտ լաւագոյնը եւ համայն հայութեան կը մաղթեն խաղաղութիւն, համերաշխութիւն, սէր եւ միութիւն:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

# Տիպար ՀՄԸՄականներ

## ԵՂԲ. ԶԱՐԵՆ ԷՔՄԷՔՃԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2013»

Եղբ. էքմէքճեան ծնած է Դամասկոս, Սուրիա: 5 տարեկանին անդամակցած է ՀՄԸՄի Դամասկոսի մասնաճիւղին իբրեւ գայլիկ: Միաժամանակ սիրելով նաեւ մարզական կեանքը, ընդգրկուած է մասնաճիւղի ֆուլթայլի, պասքեթպոլի, լողի, ծանրութիւն բարձրացնելու, թեթեւ ակրոբատիկ մարզաճիւղերուն մէջ: Սակայն մարզական իր մեծագոյն սէրը եղած է հեծիկի հանդէպ, որուն մէջ անձնական ջանքերով մասնագիտացած եւ յաղթանակներու հասած է: 1956ին տիրացած է Դամասկոսի հեծիկի ախոյեանութեան, ապա՝ 1957ին եւ 1958ին Դամասկոսի եւ ամբողջ Սուրիոյ: Այնուհետեւ 1959ին, «Եգիպտոսի շրջագայութեան» մրցումին հանդիսացած է ախոյեանը ամբողջ արաբական երկիրներուն: Իսկ Լիբանանի «Միջերկրականեան շրջագայութեան» մրցումին, ներկայացուցած է Սուրիան: Մարզական իր կեանքին առնթեր, ան սիրով կեդրոնացած է նաեւ սկաուտական կեանքին, հասնելով արեւելյան պաշտօնին, միաժամանակ նշանակուած է մասնաճիւղի սկաուտական խորհուրդի անդամ եւ ՀՄԸՄի կապը՝ Սուրիոյ սկաուտութեան մօտ: 1956ին մասնակցած է Ա. Արաբական միջազգային ճամպորիին, 1960ին Յունաստանի, իսկ 1961ին՝ Աւստրալիոյ համաշխարհային սկաուտական ճամպորիներուն: Ան նաեւ անդամակցած եւ գործօն մասնակցութիւն բերած է իր ծննդավայրի «Համազգային»ի եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան աշխատանքներուն: 1962-63 զինուորական իր պարտականութիւնը աւարտելէ ետք, Մայիս 1964ին, մանկութեան ընկերոջ Ասատ Քասսիսի հետ աշխարհի շուրջ իր երազած հեծելարշաւը կատարած է, սկսելով Լիբանանէն, անց-



նելով քանի մը տասնեակ երկիրներով եւ ի վերջոյ 1966ին հասնելով Անգլիա: Պի.Պի.Սի.ն եւ այլ մամուլի ներկայացուցիչներ հետեւած են եզակի այս հեծելարշաւին: Այսքանով սակայն չէ աւարտած իրարկաճախնդրութիւնը: Ընկերոջ հետ ան նաեւ շարունակած է ճամբորդութիւնը դէպի Մոնթրէալ, Գանատա, ուր հասած է Մայիս 1966ին: Մոնթրէալի մէջ եղբ. Զարեն միացած է ՀՄԸՄին, ստանձնելով պատասխանատու պաշտօններ: 1970ին ամուսնացած եւ փոխադրուած է Սիէթլը: 1971ին, ընտանիքին հետ վերջնականապէս հաստատուած է Օքլընտ, ուր ոսկերչական եւ ժամացոյցի իր անձնական աշխատավայրը բացած է Պրըքլիի մէջ: Նոյն տարին փոխանցուած է ՀՄԸՄի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ եւ նշանակուած է անոր առաջին խմբապետը եւ այնուհետեւ՝ սկաուտական խորհուրդի անդամ: 1974ին ընտրուած է առաջին Շրջանային վարչութեան անդամ եւ իբրեւ շրջանի առաջին Ընդհանուր խմբապետ կազմակերպած է շրջանի առաջին ընդհանուր բանակումը: Եղբայրը իր ներդրումը բերած է նաեւ 1976ին կազմակերպուած առաջին Նաւասարդեան մարզախաղերու ծրագրման աշխատանքներուն: 1994ին, եղբայրը իր երկու դուստրերուն հետ մասնակցած է Հայրենիքի մէջ կազմակերպուած պատմական նշանակութիւն ունեցող առաջին համա-ՀՄԸՄական բանակումին: Եղբայրը մեծապէս օգտակար հանդիսացած է 2000ին, Ուոլնամթ Քրիքի մէջ ՀՄԸՄի «Կարս» մասնաճիւղի հիմնադրութեան, որուն առաջին ատենապետը ընտրուած է: 2013ին, ՀՄԸՄի Շրջանային վարչութիւնը, գնահատելով եղբ. Զարեն էքմէքճեանի բեղուն գործունէութիւնը ՀՄԸՄի մէջ, անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը: Եղբ. Համլէթ Չրախչեան ծանօթ անձնաւորութիւն մըն է մեր գաղութին մէջ: Ան երկար տարիներ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան (ՀՄԱԿ) մէջ իբրեւ զանազան մարզաճիւղերու մարզիկ եւ այնուհետեւ ղեկավար, իր գործօն մասնակցութիւնը բերելէ ետք, միութենական գործունէութիւնը շարունակած է Արեւմտեան Ամերիկայի մէջ: Ան եղած է ՀՄԸՄի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի սիւներէն, ինչ-

## ԵՂԲ. ՀԱՄԼԷԹ ԶՐԱԽՉԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2014»

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

Orange County

Կը Շնորհաւորենք  
Հայ Համայնքի  
Նոր Տարին  
Եւ Ս. Ծնունդը  
Եւ Հայ Ժողովուրդին  
Կը Մաղթենք Բարգաւաճ  
Եւ Խաղաղ Տարի

ARF Armen Karo  
ARS Sevan Chapter  
ARS Garni Chapter  
ARF Serop Aghpure  
Badanegan  
Homenemtmen  
Sardarabad Chapter  
Hamazkayin  
Siamanto Chapter  
AYF Ashod Yergat

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

Նոր Տարուան  
Եւ Ս. Ծննդեան  
Առիթով  
Լաւագոյնը  
Կը Մաղթենք  
Հայ Ժողովուրդին

Սարօ Եւ Այտա  
Գօթոյեաններ  
Քրիս  
Եւ Սարին

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տիպար ՀՄԸՄականներ

պէս նաև Շրջանային վարչութեան ատենապետ եւ Կեդրոնական վարչութեան անդամ: Եղբայրը մինչեւ օրս կը շարունակէ ծառայել ՀՄԸՄին եւ իր համայնքին, երբեք չզլանալով իր օգտակար ներդրումը բերելու անոնց վերելքին:



2014ին, ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը, բարձր գնահատելով եղբոր օգտակար ներդրումը՝ ՀՄԸՄի մէջ, անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական»ի տիտղոսը:

Եղբ. Համլէթ Չրախչեանի կենսագրութիւնը կարգաւ ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերու Պատուոյ նախագահներու բաժինին մէջ:

իր շրջապատին ու գաղութին:

2015ին, ՀՄԸՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը բարձր գնահատելով եղբոր անսակարկ ու նուիրեալ գործունէութիւնը ՀՄԸՄէն ներս, անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:



Եղբ. Ժիրայր Սարգիսեանի կենսագրութիւնը կարգաւ ՀՄԸՄի Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահներու բաժինին մէջ:

## ԵՂԲ. ԳՕԳՕ ՄԿՐԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2016»

## ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ– 2015»

Եղբ. Ժիրայր Սարգիսեանի անունը անբակտիօրէն կապուած է ՀՄԸՄին, որուն շարքերուն մէջ ծառայած է ամբողջ կեանք մը, իբրեւ գայլիկ, սկաուտ, մարզիկ, դեկավար եւ օրինակելի ՀՄԸՄական: Իր օրինակին հետեւած են նաև իր գաւակները:

Տիպար հայր, նուիրեալ միութենական, ազնիւ անձնաւորութիւն եւ ազգանուէր ՀՄԸՄական: Եղբայր Ժիրայր իր անձնական յաջողութիւններուն միշտ բաժնեկից դարձուցած է իր ժողովուրդը եւ իր սիրելի կազմակերպութիւնը՝ ՀՄԸՄը: Եղբոր անունով այսօր կը գործեն բազմաթիւ հայկական դարբնոցներ:

Եղբայրը մինչեւ օրս հաւատարիմ անդամ է ՀՄԸՄին եւ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ ՀՄԸՄի մեծ ընտանիքին եւ ազգային կեանքէն ներս:

Եղբ. Ժիրայր Սարգիսեանի նուիրումը միշտ բարի օրինակ դարձած է

Գօգօ Մկրեան ծնած է Պաղտատ, Իրաք: Նախակրթարանի ուսումը ստացած է ծննդավայրի Կիւլպէնկեան Ազգային վարժարանին մէջ, երկրորդականը շարունակած է նոյն քաղաքի հանրային արաբական վարժարանին մէջ, իսկ համալսարանական ուսումը՝ Պաղտատի Պետական համալսարանէն, մասնագիտանալով բնագիտութեան (Physics) ճիւղին մէջ:

Փոքր տարիքին անդամակցած է ՀՄԸՄի Պաղտատի մասնաճիւղին իբրեւ սկաուտ, ապա՝ երէց եւ այնուհետեւ՝ ՀՄԸՄի փոքր արիւններու խումբի պատասխանատու:

1978ին, փոխադրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ: 1979ին անդամակցած է ՀՄԸՄի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղին, ուր ստանձնած է գայլիկներու փոխ-խմբապետի պաշտօնը, ապա, փոխանցուելով Արիւններու բաժանմունք յաջորդաբար ստանձնած է խումբի խմբապետի, միաւորի խմբապետի եւ մասնաճիւղի փոխխմբապետի պաշտօնները: Աւելի ուշ ընտրուած է նաև մասնաճիւղի վարչութեան անդամ:

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Harry & Alvart Barseghian & Family**

*Best Wishes for Christmas and New Year*

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Վազգէն Նաճարեանի Փափաքը Վառ Պահելով**

**Մելինէ Նաճարեան իր Սրտագին Մաղթանքներով կը Շնորհաւորէ իր Հարազատներն ու Բարեկամները**

**Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ**

ՀՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



# Տիպար ՀՄԸՄականներ

1985ին ծանօթացած եւ ամուսնացած է ՀՄԸՄական Արմինէ Արապանյանի հետ եւ ապագային բխտաւորուած են երկու զաւակներով:

Եղբայրը արժանացած է Ամերիկեան սկաուտութեան Wood Bedge եւ ՀՄԸՄի բարձրագոյն Արարատեան կարգին: Ան «Արարատ» մասնաճիւղին կողմէ նաեւ արժանացած է «Պատուոյ անդամ» տիտղոսին:

Եղբ. Մկրեան, ՀՄԸՄի Ծրջանային եւ Կեդրոնական մակարդակի վրայ զանազան պատասխանատու պաշտօններ վարած է: Ան նշանակուած է ՀՄԸՄի Ծրջանային սկաուտական խորհուրդի ատենապետ, Ծրջանային սկաուտ խմբապետ, Ծրջանային ընդհանուր խմբապետ, ՀՄԸՄի Ծրագրաւորումի եւ կանոնադրային յանձնախումբերու անդամ: Ընտրուած է նաեւ Ծրջանային վարչութեան անդամ, ինչպէս նաեւ մասնակցած է շրջանի ՀՄԸՄի Ծրջանային ներկայացուցչական բազմաթիւ ժողովներու:

ՀՄԸՄի Կեդրոնական մակարդակի վրայ եղբայրը պատասխանատու պաշտօններ վարած է Համա-ՀՄԸՄական ընդհանուր եւ խմբապետական բանակումներու, ինչպէս նաեւ սեմինարներու: Երեք անգամ մասնակցած է ՀՄԸՄի Պատգամաւորական ընդհանուր ժողովներու:

ՀՄԸՄի Ծրջանային վարչութիւնը գնահատելով եղբ. Գօգօ Մկրեանի ՀՄԸՄական բեղուն գործունէութիւնը, 2016ին «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը շնորհեց անոր:



# ՏՈՒԹ. ԾԱՀԷ ԵՆԻԳՈՄՇԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2017»

Եղբ. Ծահէ Ենիգոմշեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Նախակրթութիւնը եւ երկրորդական վարժարանի ուսումը ստացած է Նշան Փալանճեան ճեմարանի մէջ, ապա համալսարանական ուսումը ստացած է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն: Պսակաւոր գիտութեան վկայականը ստանալէ ետք հետեւած է նոյն համալսարանի բժշկական ճիւղին, որմէ ետք Infectious Diseases ճիւղին մէջ մասնագիտալու համար յաճախած է Միչիկընի համալսարանը:

Վեց տարեկանին անդամակցած է ՀՄԸՄի Պէյրութի մասնաճիւղին իբրեւ գայիկ եւ պատրաստուի մարզիկ: Մխրճուելով մասնաճիւղի սկաուտական կեանքին մէջ, 1970ին նշանակուած է ՀՄԸՄ Պէյրութի մասնաճիւղի խմբապետ եւ օգտակար հանդիսացած է սկաուտական թեւի զարգացման: Ան մեծ ներդրում ունեցած է ՀՄԸՄի կանոնադրի պատրաստութեան մէջ:

Եղբայր Ծահէ մասնակցած է ՀՄԸՄի Ծրջանային ճամպորիներու, Միջին Արեւելքի եւ Յունաստանի մէջ գումարուած բազմաթիւ համա-ՀՄԸՄական խորհրդաժողովներու: Բազմաթիւ անգամներ գործուղուած է Լիբանանի դրացի երկիրներ, հիմնելու համար սկաուտական միաւորներ:

Ենիգոմշեանի մասնագիտական կեանքը սկիզբ առած է Միչիկընի մէջ, իբրեւ վարակիչ հիւանդութիւններու բժիշկ, միաժամանակ, ան շարունակած է իր ՀՄԸՄականի գործունէութիւնը նոյն շրջանէն ներս իբրեւ



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՕՐԵՆՃ ՔԱՌՆԹԻ

**Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ Հովիւր, Հոգաբարձութիւնը, Տիկնանց Միութիւնը եւ Յարակից Մարմինները**

**Կը Շնորհաւորեն Համայն Հայութեան Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը, Յոյս Յայտնելով, Որ Հայ Ժողովուրդի Յաղթարշաւը Ծարունակուի Նաեւ 2019ին**

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**Յարուք Եւ Պէթի Տօնոյեան**

**Տօնական Այս Օրերուն Մեր Լաւագոյն Մաղթանքները Հայ Ժողովուրդին**

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տիպար ՀՄԸՄականներ

րեև խորհրդատու:

1989ին կը հեռանայ Միջկերպն էլ կը հաստատուի Քրեթաքի, ուր երեք տարիներ կը կատարելագործէ մասնագիտական իր փորձառութիւնը: Ապա, ծանօթանալով ազգանուէր հայուհի Անի Սեղրակեանին, կ'ամուսնանայ անոր հետ եւ հայկական ընտանեկան բոյն մը կը կազմէ, ապագային բախտաւորուելով երեք զաւակներով:

1993ին, ընտանիքին հետ վերջնականապէս կը տեղափոխուի Հիւսիսային Քալիֆորնիա եւ բնակութիւն կը հաստատէ Սիլիքոն Հովիտի մէջ: Ծահէ եւ Անի, իրենց երեք զաւակներով աշխոյժ գործունէութիւն կը տանին իրենց բնակած շրջանի հայկական համայնքէն ներս: 2003-2005 տարեշրջաններուն ան եղած է ատենապետը ՀՄԸՄի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղին:

Ան իր աջակցութիւնը բերած է Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանային զանազան աշխատանքներուն: Բազմաթիւ առիթներով ան նշանակուած է Կեդրոնական վարչութեան յանձնախումբերու անդամ, որոնց վերջինը ծրագրաւորմանն էր: Ան ՀՄԸՄի եւ հայկական այլ նիւթերու մասին բազմաթիւ յօդուածներ գրած է հայկական թերթերու եւ «Մարզիկ»ի մէջ:

2017ին, Շրջանային վարչութիւնը բարձր գնահատելով եղբ. Ենիգոմէ-եանի ՀՄԸՄականի նուիրեալ գործունէութիւնը անոր շնորհած է «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը:

## ԵՂԲ. ԳՕԳՕ ՊԱԼԵԱՆ՝ «ՏԻՊԱՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆ – 2018»

2018ի Նաւասարդեան մարզախաղերու «Տիպար ՀՄԸՄական» տիտղոսը շնորհուած է եղբ. Գօգօ Պալեանին:

Եղբայր Գօգօ Պալեանի կեանքը սերտորէն կապուած է ՀՄԸՄին: Ան այս մեծ կազմակերպութեան կը ծառայէ մօտաւորապէս 60 տարիէ ի վեր:

Իր բացատրութեամբ, իր կեանքը ընթացած է երեք ուղղութիւններով՝ տուն, դպրոց ու ակումբ, այսինքն՝ ՀՄԸՄ:

Ինք կը վկայէ, թէ իրեն համար մեծ քաջողականութիւն մը ունի ՀՄԸՄը, որովհետեւ այս կազմակերպութիւնը իրեն տուած է հայու ինքնութիւն եւ ինքնավստահութիւն: Այս կազմակերպութիւնը իրեն սորվեցուցած է ծառայել ժողովուրդին ու հայրենիքին:

Դարձեալ իր վկայութեամբ, ինչ որ ինք սորված է ՀՄԸՄէն, վերադարձուցած է ժողովուրդին՝ ՀՄԸՄին ծառայելու ընդմէջէն:

Այս կազմակերպութենէն ներս իր ծառայութիւնը սկսած է սկաուտական շարքերէն, հասնելով մինչեւ մասնաճիւղի վարչական, Նաւասարդեանի յանձնախումբեր, Շրջանային վարչութեան անդամ, ատենապետ ու մինչեւ Կեդրոնական վարչութեան յանձնախումբեր եւ Կեդրոնական վարչութեան անդամ:

Պէյրութի էլըէֆիէ թաղամասէն՝ մինչեւ Պոսթըրն, ու ապա Լոս Անճելըս ու Հայաստան, եղբ. Գօգօ Պալեանին համար ՀՄԸՄին ծառայելը երբեք չէ ճանչցած աշխարհագրական սահմաններ:

Իր կարգին, ՀՄԸՄը բարձր գնահատած է եղբ. Գօգօ Պալեանին ծառայութիւններն ու նուիրումը:

1993ին ան արժանացած է ՀՄԸՄի «Ծառայութեան շքանշան»ին, 2002ին՝ Հայաստանի ազգային սկաուտական կազմակերպութեան ոսկեայ շքանշանին: Նոյն տարին, ան արժանացած է Հայաստանի հանրապետութեան մշակոյթի եւ երիտասարդութեան ու մարմնամարզի նախարարութեան ոսկեայ յուշամետալին, իսկ 2004ին՝ ՀՄԸՄի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Գօգօ Պալեանի նուիրումը վարակիչ օրինակ կը հանդիսանայ մեր պատանիներուն ու երիտասարդներուն համար:



## ՅԱՌԱՋ, ՆԱՀԱՏԱԿ

(Կամաւորական ֆայլերգ)

Երժշտ.՝ Գ. Կառվարեանց  
Խօսք՝ Բ. Կանաչեան

Յառանջ, նահատակ ցեղի անմահներ,  
Վեց դարու անմոռ վրէժի գրահներ,  
Կատարն հայրենի լեռանց հեռագոյն,  
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:

Հսկայ նուիրման  
Տորմիդ հրաթել, Կամաւոր բանակ,  
Յառանջ, յառաջ անասան,  
Յառանջ անդեղել  
Դէպի յաղթանակ, յաղթանակ:

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,  
Տարագիր հայն իր կեանքն նորոգեց,  
Երէկ՝ շղթայուած, այսօր՝ ինքնավար,  
Յարեալ վեհօրէն դամբանէն իսար:

Հսկայ նուիրման  
Տորմիդ հրաթել, Կամաւոր բանակ,  
Յառանջ, յառաջ անասան,  
Յառանջ անդեղել  
Դէպի յաղթանակ, յաղթանակ:

ՀԱՌԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ձեզի կը մաղթենք  
նպատակներու  
իրագործման  
բացառիկ առիթներով  
լեցուն տարի մը

Վահան  
եւ Արմինէ  
Կարպուշեան  
եւ Ընտանիք

ՀԱՌԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Տասնամեակներ ետք Այսօրը Պէտք է Դիտուի Իբրև Իսկական Բարեշրջման Մեկնակէտ

## «...Անկատար տեղեր ունենք դեռ շատ»

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ



Երբ այս սիւնակին վերջակէտը դրի, գիտէի, որ քանի մը ժամէն՝ կիրակի, 9 Դեկտեմբերին, Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան ազգային ժողովի արտակարգ ընտրութիւնները. մեր ժողովուրդը պիտի ընտրէ նոր խորհրդարան մը, որ կոչուած է որոշ եղրակացութեան մը հասցնելու ո՛չ միայն 2018ի Ապրիլ-Մայիս ամիսներուն ծայր տուած շարժումը, այլ նաև այն եղելովը, որ ճամբայ ելաւ խորհրդարանական նախորդ ընտրութիւններէն ետք եւ կտրեց երկիրը նախագահականէն խորհրդարանական կառավարման դրութեան որդեգրումի հանգրուանը:

Հաւանաբար ընթերցողս հարց պիտի տայ, թէ ինչո՞ւ անհամբեր եմ եւ այս սիւնակները կ'արձանագրեմ ընտրութեանց նախօրեակին. չէի՞ կրնար 2-3 օր ալ սպասել եւ ընտրութեանց արդիւնքը աչքի առջեւ ունենալով արտայայտուիլ, մանաւանդ, որ ամանորի բացառիկին համար խմբագիր ընկերներուս կողմէ ճշդուած վերջին ժամկէտին դեռ բաւական ժամանակ կայ: Եթէ այդպէս ընէի, անխուսափելիօրէն պիտի հարկադրուէի խորասուզուելու ընտրութեանց անմիջական

արդիւնքին մէջ՝ ո՞վ ի՞նչ քուէ-աթոռ շահեցաւ, ո՞վ «մտաւ», ո՞վ «դուրս մնաց» եւ այլն, մինչդեռ նպատակս տարբեր է. կը նախընտրեմ Հայաստանի զարգացումները դիտել ո՛չ միայն ընտրութեան օրուան ու անոր անմիջական արդիւնքին լոյսին տակ, այլ կարկինը աւելի լայն բանալով՝ մեր հայրենիքի վիճակն ու հաւանականութիւնները լուսարձակի տակ բերել պատմական շարք մը իրադարձութեանց լոյսին տակ, տեսնելու՝ թէ այս ընտրութիւններուն տեղը ո՞ւր է եւ ի՞նչ դեր կրնայ ունենալ երկրի քաղաքական աճումին մէջ: Վերջին ամիսներու զարգացումները

չատ կարելոր են եւ հայութիւնը կը տարուբերեն յոյսի ու հիասթափութեան մատնուելու ալիքներու միջեւ, բոլորը գրաւը կը պահեն բարեշրջման խոստումներուն իրականացման վրայ:

Փաստօրէն, եթէ փորձենք զարգացումները դիտել ընտրապայքարի ու քուէարկութեան արդիւնքներուն անմիջական ազդեցութեան տակ, անխուսափելի կ'ըլլայ տարուիլ այն մթնոլորտով, որ տիրապետեց ո՛չ միայն ազգային ժողովի ընտրութիւններուն ու յաջորդող օրերուն, այլ անոր նախաձաշակը ապրեցանք Երեւանի քաղաքապետական խորհուրդին ընտրութեան «մանրատիպ» նախընթացով: Տիրապետող եղանկիրքերը, մերթ լուտանքի տիղմին մէջ մխրճուող, երբեմն ալ բաժանումներ ստեղծելու ակամայ կամ դիտումնաւոր արտայայտութիւնները, լուռ ու բացայայտ սպառնալիքները եւ ընդհանրապէս... «պիտի»ներով յագեցած ծրագիրները:

Եթէ ազգային ժողովի ընտրութիւնները փորձենք դիտել առնուազն անկախութեան վերահաստատման հանգրուանէն ասդին զարգացող փուլին մէջ, մեր դիմաց պարզուող համայնապատկերը աւելի ընդարձակ եւ ուսուցողական կրնայ ըլլալ: Պէտք չէ արհամարհենք նաև այն փուլերը,

որոնք մեր պատմութիւնը կերտած են Հայաստանի անկախ հանրապետութեան ծնունդը կանխող ժամանակներէն սկսեալ ու վերանկախացած Հայաստանի համար որոշ հիմեր ժառանգ թողած նոյնինքն անդրանիկ հանրապետութեան կարճատեւ կեանքէն, ապա անոր հետեւած՝ խորհրդային տարիներէն: Այսօր, երբ Հայաստան կը յուսայ թեւակոխել «նոր դարաշրջան», պէտք չէ մոռնալ - եւ արհամարհել - այն իրականութիւնը, որ այսօրն ու վաղը ուղղակի շարունակութիւնն են մօտիկ եւ աւելի հեռաւոր անցեալներու իրագործումներուն, որքան ալ որ սիրելի ըլլան կամ չսիրուած՝ անցեալի որոշ իշխանութիւններ: Իւրաքանչիւր տասնամեակի եւ «դարաշրջանի» ընթացքին անվիճելիօրէն կատարուած են իրագործումներ, որոնց գումարին վրայ կը կերտուի նորը, կարելի չէ շարժիլ ոչնչապաշտութեան, ամէն բան ոչնչացնելու (նիհիլիզմ) տրամաբանութեամբ: Դրական զարգացումի բանալին այն է, որ նորը կարենայ ճիշդ կշռադատել անցեալի սխալներն ու դրական երեսները, չկրկնել սխալները, այլ դրականները հիմ ծառայեցնել աւելի՛ լաւ կերտելու (այս սողերը չընկալել լոկ «Լափալիսեան ճշմարտու-



ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

Նոր Տարուան բարիքներով եւ Ս. Ծնունդի խորհուրդով թող լեցուին մեր կեանքերը

Տոբթ. Բաֆֆի եւ Թամար Չալեան եւ զաւակները՝ Անի եւ Էմմա

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ԲԺԻՉԿՆԵՐ ԱՐԱՄԷՆ-ԱՐԱ ԵՒ ԺՈՒԼԻԱՆԱ ՉԱԼԵԱՆ ԵՒ ՓՈՐՔԻԿՆ ԱՐԱ

Կը շնորհաւորեն բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տասնամակներ ետք Այսօրը Պետք է Դիտուի Իբրև Իսկական Բարեշրջման Մեկնակետ

Թեան» դիտարկումով, այլ Հայաստանի ներկայ պատկերը տեսնելու տրամաբանությունը):

\*\*\*

Պատմական վերոյիշեալ լայն ժանամակահատուածին մէջ դիտելով նորագոյն զարգացումները, կրնանք անվարան ըսել, թէ Ազգային ժողովի արտակարգ ընտրություններու ազդանշանը գործնապէս տրուեցաւ այն օրերուն, երբ Հայաստանի մէջ տեղի ունեցաւ իշխանափոխություն եւ Հագաւ «Թաւշեայ յեղափոխություն» զգեստը: Այս Հաստատումը կարելի է, որովհետեւ քաղաքական բազմաթիւ ուժեր դժգոհություն յայտնեցին, որ ընտրապայքարի ժամանակը կարճ էր եւ բաւարար չէր լիարժէքօրէն պատրաստուելու 9 Դեկտեմբերի Հանգրուանին: Նման քննադատական մօտեցում՝ կը նշանակէ, թէ մանաւանդ քաղաքական կեանքին մէջ փորձ ունեցող կուսակցություններն ու խմբակցությունները ներկան լիարժէքօրէն չեն կրնար «կարգալ», իսկ նորակազմ կուսակցություններու ու դաշինքներու պարագան այլ Հարց է եւ առանձնապէս քննարկելի: Մայիսի սկիզբը իշխանությունեան Հասած ուժը այդ Հանգրուանէն առաջ ալ բացայայտ դարձուցած էր, թէ գործող խորհրդարանը օրինական չի նկատեր, իսկ յետոյ, երբ իշխանությունեան լծակները ունեցաւ իր ձեռքին, ոչ մէկ խոչընդոտի առջեւ կանգ պիտի առնէր, որպէսզի օրէնսդիր իշխանությունն ալ բերէ իր Հակակշիռին տակ. դատական իշխանություններուն դրուժիւնը նկատառելի այլ պարագայ է եւ վառելիքի չհասցուց ընտրապայքարի...: Սա բնական երեւոյթ է եւ առաւել կամ նուազ չափով նոյնը կը կատարուի աշխարհի որեւէ ժողովրդավարական երկրի մէջ, անկախ անկէ, որ իշխանաւոր խմբակը ինչպէ՞ս կ'իրականացնէ իսկական ժողովրդավարությունը: (Կարելի է բազմաթիւ օրինակներ թուել. բաւականանանք մէկով. Տանըլտ Թրամփ Սպիտակ Տուն մտնելէ ետք ո'չ միայն գերագոյն դատարանին մէջ իր կողքին մեծամասնություն ունենալու ճիգ չխնայեց, այլ մինչեւ իսկ իր սերտ գործակիցներէն շատերը քաղաքական գլխատու մի թափարկեց՝ ոմանք պաշտօնազրկելով, իսկ ուրիշներու «գլուխը պահանջելով»): Այս բոլորը կարելի է դիտել իբրև ժողովրդավարության ըստ կամ ու տխրո՞ւ կիրարկում, սակայն կը Հետեւի խաղին օրէնքներուն, որքան ալ անհաճոյ եւ սխալ թուին նման խաղեր):

Ի դէպ, կ'արժէ պահ մը կանգ առնել նաեւ այլ կէտի մը վրայ: Հայաստանը նախագահական խորհրդարանական դրուժիւն փոխադրելու քայլը նկատուեցաւ ու կը նկատուի այլ հաստատու կարելու իրագործում: Սա տեսականօրէն ճիշդ է եւ զայն պէտք է դիտել իսկական ժողովրդավարություն կիրարկելու ակնոցով: Սակայն պէտք չէ մոռնալ, որ բացի փոքրաթիւ ուժերէ, շատեր դրուժեան փոփոխությունը Հետապնդեցին ու դիմաւորեցին այլ Հաշիւներով. անցեալ տասնամակներուն, նախագահին տրուած լիազօրությունները՝ գործող նախագահին ընծայած էին գերհզօր

մենաշնորհեալի զօրութիւն, որ չէր Համապատասխաներ նախագահական իսկական դրուժեան: Ու երբ նախորդ նախագահը փորձեց նոր դրուժիւնը կիրարկել՝ նոյն լիազօրությունները վարչապետի թիկնոցով Հարունակելու քայլով, Հարձեցաւ դժգոհությունեան ալիքը: Հիմա, արդէն քաղաքական բառարանին մէջ կը գործածուի



«գերվարչապետ» - սուփրրվարչապետ - եզրը, որ այսպէս անընդունելի է ժողովրդավարությունեան ամէնէն տարրական տրամաբանությունեամբ: Երկուքին պարագային ալ, անձե'րն են առանցքային դեր խաղացողները, մինչդեռ խորհրդարանական դրուժիւն՝ բոլորովին այլ բան կը նշանակէ. ամէնէն պարզ բացատրությունեամբ՝ կը նշանակէ ժողովուրդի տարբեր Հոսանքներէն ու տարբեր գաղափարներու Հետեւողներէն կազմուած խորհրդարանին մէջ գործակցություն եւ գաղափարներու-ծրագիրներու միջեւ ազնիւ մրցակցություն, ի խնդիր երկրին ու ժողովուրդին ապահովությունեան, բարօրությունեան, զարգացումին, Հետո՛ւ արտաքին շահերու եւ Հոսանքներու ազդեցությունեան, ըստ էությունեան՝ ազգային վարչապետով: Հաւանաբար ընտրություններէն ետք պէտք պիտի ըլլայ որոշ ատեն սպասել, ստուգելու՝ թէ խորհրդարանական դրուժիւնը յայսպիսի կիրարկում պիտի գտնէ՞, թէ պիտի ըլլայ նախորդին մէկ նմանակատարբերակը:

Այլ խօսքով, եթէ երկրի մը Համար ժողովրդավարությունեան կիրարկման ամէնէն Հարազատ դրուժիւնը խորհրդարանական է, սա աներկայօրէն չի Հասցներ այն եզրակացությունեան, որ ամէն Հարց պիտի լուծուի. պէտք չէ արհամարհել այն պարզ ճշմարտությունը, որ դրուժիւնը կիրարկողը բանալի դեր ունի դրական զարգացումի եւ արդիւնքի Հասնելու մէջ. փաստօրէն, անցեալին թէ այսօր, մինչեւ իսկ թագաւորական-մենատիրական դրուժիւններ բարիք բերած են իրենց մականին ենթակայ ժողովուրդներուն. եւ թող այս տողերը չընկալուին իբրև մենատիրությունեան կամ այլ դրուժիւններու ջատագովում:

\*\*\*

Ինքզինք Հաստատուելու Համար, նոր իշխանությունը անցեալ 6-7 ամիսներուն դիմեց գործնական ու քարոզչական բազմամակարդակ միջոցներու, մինչդեռ այլ շրջանակներ առաւելաբար տարուեցան ընտրությունները յետաձգելու արդար կամ, տուեալ պայմաններուն մէջ, անիրապաշտ

գործունէությունեամբ: Իշխանությունը ճամբայ Հանեց մենաշնորհեալներ ու ՀարաՀակոյներ Հաշուետուությունեան ենթարկելու գործընթաց, նիւթական եւ այլ իրացումներ կատարողներ տուգանքի ենթարկուեցան եւ պետությունեան պիտոճէին վերադարձուեցան պատկառելի գումարներ. միաժամանակ, երկրի ընդհանուր

վարչակազմին մէջ տեղի ունեցաւ մեծ փոփոխություն, սկսելով նախարարություններէն (սկզբնապէս գոյառած Համախոհությունը փուլ եկաւ եւ ի յայտ եկաւ միայնակ կառավարելու տրամադրություն) մինչեւ մարզեր ու լրատու ազդերներ, որդեգրուեցան թոշակներու եւ Հատուցումներու յաւելումի քայլեր, որոնք խոչըրացողով Հրամցուեցան ժողովուրդին (յաւելումներու դրական գործօնը չենք անտեսեր, սակայն երբ նկատի ունենանք, որ մօտաւորապէս 130-140 տղար ամսական ստացողին կը տրուի սահմանափակ յաւելում եւ ընտանիքի մը եկամուտը կը Հասնի չուրջ 200 տղարի Համապատասխան գումարի, իսկ ատիկա Հետո կը մնայ ապրուստի տարրական պէտքերը գոհացնելու վիճակէն...), յայտարարուեցաւ, որ ընտրակառքը վերջ գտած է ու փորձուողները ծանր պատիժի պիտի ենթարկուին, իսկ անդին, լայն պաստառներու վրայ երեւցան արտաքին ներգրումներու խոստումներ: Դժբախտաբար սուր բանավէճի ու մինչեւ իսկ խօսքի աճուրդի նիւթի վերածուեցաւ Արցախի Հարցը, ուր կան անվիճելի եւ անըջանցելի կարմիր գիծեր... Ամէնէն մեծ Հարցականները կը մնան Հոն, ուր Հարուած են «պիտի»ները եւ անոնց ուղղուած կասկածները:

Նոր իշխանությունը այս իմաստով ցարդ Հաւատարմօրէն կը Հետեւի նախորդներուն ուղիին: Ինչպէս որ անցեալի դրական քայլերուն մասին դրական արտայայտություն ունեցանք, նոյնը կրնանք ընել նաեւ նորին մասին, սակայն չենք կրնար անտեսել, որ խոստումները ցարդ կը մնան գեթ-տեղի, եւ ըստ բաւականին Հիմնաւորուած-արդարացած չեն: Ընտրապայքարէն առաջ թէ ընտրապայքարի օրերուն, իշխանություն վրայ եղողներ թէ յաւակնորդներ խօսեցան արտաքին մեծ ներգրումներու ապահովման, ու անոր Համար առարկայական՝ խաղաղ ու երաշխաւորեալ պայմաններու ստեղծման մասին: Բնական է, որ զարգացման ճամբուն առաջին քայլերը առնող երկիր մը, ինչպէս է Հայաստանը,

անխուսափելիօրէն պիտի կարօտի արտաքին օժանդակություններու, նիւթական, արհեստագիտական թէ այլ գետիններու վրայ, որպէսզի տնտեսությունն ու այլ Հիմունքներ կազմաւորուին ու ամրանան: Սակայն ընդհանրապէս արտաքին ձեռքերու սեւեռումները կը ստեղծեն որոշ մտահոգություններ. նախ՝ Հանոյթի նկատառելի մէկ բաժինին արտահոսք, յետոյ, այսօրուան աշխարհին մէջ, արտաքին օժանդակություններ կը տրամադրուին բոլորովին տարբեր տրամաբանությունեամբ, քան ինչպէս որ կ'ըլլար, օրինակի Համար, յետ-աշխարհամարտեան եւրոպային կամ այլ երկրներու մէջ: Այդ օրերուն, օժանդակությունը կը կատարուէր տկարր ոտքի կանգնեցնելու եւ առողջ գործակիցներ բազմացնելու տրամաբանությունեամբ. այսօր, այս տրամաբանությունը փոխարինած է օժանդակություն ստացող ենթակայ դարձնելու եւ Հետեւողական կերպով Հանու աղբիւրի վերածելու մօտեցումը: Մինչեւ իսկ բնական Հակայական Հարստություններով օժտուած երկրներ կ'ընկղմին Հակայական պարտքերու տակ, խաղալիք կը դառնան մեծերու կամայականությունեանց: Հայաստանի՝ բոլորիս ծանօթ աշխարհաքաղաքական պայմաններուն մէջ, երբ կը գտնուինք մօտակայ ու Հետաւոր մեծ ու նուազ մեծ ուժերու մրցակցությունեան մէկ դաշտին մէջ, արտաքին օժանդակություններու թղթածրարը կ'ենթադրէ շրջահայեաց ու զգուշաւոր մօտեցում: Այլընտրանքը, որ բնականաբար աւելի դժուար ուղի է, կը թելադրէ յետու առաւելաբար Հայկական կարողություններու վրայ:

\*\*\*

Նոր ազգային ժողովի կազմությունեամբ բացուող էջին նախագահը Հիւսուեցաւ այնպիսի մթնոլորտի մէջ, որ անցեալէն եկող երկփեղկումներ զգեցան նոր գունաւորում ու կնիք, մինչդեռ Հայաստանի նման կացությունեան մէջ եղող երկրի մը մէջ կենսական է միասնությունն ու առաւելագոյն Համախոհությունը, որմէ պէտք է բխի իշխանությունեան, պետությունեան ուժը:

Եթէ ոեւէ դիտող Հանդարտ տրամադրություններով Հետեւէր ընտրապայքարի Հրապարակային արտայայտություններուն, որոնցմէ մաս մը պատկերասփռուեցաւ բազմակողմանի բանավէճերու ճամբով, պիտի նկատէր, որ կարգ մը «արտառոց» մտածումներու կողքին, իւրաքանչիւր կուսակցություն կամ ուժ ունի նաեւ խելամիտ գաղափարներ ու առաջարկ-առաջադրանքներ, Հետեւաբար, նոր իշխանությունեան պարտականությունն է նոյն յայտարարին վրայ Համախմբել չինիչ մտածումները, անկախ անկէ, թէ ո՞վ մուտք գործած է խորհրդարան կամ ո՞վ չէ յաջողած ապահովել անհրաժեշտ քուէները: Ազգային ժողովին ու կառավարությունեան պարտականությունն է նկատի ունենալ թէ՛ խորհրդարանական եւ թէ՛ արտախորհրդարանական առողջ մտածողությունեան արգասիքը:

Ժողովրդավարություն կիրարկման կապուած յոյսերուն դիտանկիւնէն, ականատես եղանք կարգ

# Տասնամեակներ ետք Այսօրը Պետք է Դիտուի Իբրև Իսկական Բարեշրջման Մեկնակետ

մը մտահոգիչ երևույթներու, որոնք առնուազն հարցականներ կը գծեն անմիջական ապագային վրայ: Նախ կար հակադիր ուժը կամ կուսակցութիւն(ներ)ը անպայման ոտնատակ ընելու տրամադրութիւն, ինչ որ ընտրապայքարին վրայ դրաւ մեղադրանքներու եւ ամբաստանութիւններու փոխանակման կնիք մը, մինչդեռ նախընտրելի պիտի ըլլար, որ իւրաքանչիւր կողմ հրապարակ գար յստակ, եւ ոչ միայն սկզբուքներ ցանկազորող ծրագիրներով, որոնք հիմնաւորուէին տուեալ կուսակցութեան գաղափարներով: Գա-

որ անհատի մը նշույններն հետ, իր կուսակցութիւնն ալ կը թողնի ու կը գունաթափուի, յաճախ իրեն հետ տանելով առաւելագոյն կամ նուազագոյն բարի իրագործումները: (Սա իւրայատուկ երևույթ չէ Հայաստանի համար, որովհետեւ դարգացման մէջ եղող կամ մեծ ուժերու ազդեցութեան ենթակայ երկիրներու մէջ նախընթացներ եղած են: Կարելի է օրինակներ բերել արաբական եւ այլ երկիրներէ): Հայաստանի մէջ ՀՅ Դաշնակցութեան նման գաղափարական յստակ հիմունքներով ու ծրագիրներով գործող կուսակցութիւններու թիւը փոքր է, ոմանք ալ հեռու կը մնան քաղաքական գործող բեմէն, որովհետեւ բացայայտ իրողութիւն է այն, որ գրեթէ բոլոր կուսակցութիւններն ու քաղաքական խմբաւորումները տարուած են յետ-խորհրդայինեան «տեսութիւններով» ու կեցուածքներով:



ղափարը, քաղաքական յստակ վարքագիծի իմաստով գաղափարը ցարդ կը մնայ մեծ բացական մեր վերանկախացած հայրենիքին մէջ: Կուսակցութիւններ ընդհանրապէս անձնակեդրոն են, այսինքն՝ կը թաւախին անձի մը կամ քանի մը անձերու շուրջ, որոնք այս կամ այն ձևով հմայք ստեղծած են: Հետեւանքը կ'ըլլայ այն,

Հարցականներ ստեղծող այլ վիճակ է այն, որ ընտրութեանց նախօրեակին, հրապարակ եկած մանկունակ «տրամաբանութիւն» մը, ըստ որուն, իշխանութեան հասնելիք կողմը պիտի ունենայ աթոռներուն 70 առ հարիւրը, իսկ ընդդիմադիրներուն բաժինը պիտի ըլլայ 30 առ հարիւրը: Ու հարց կը ծագի, թէ ի՞նչ կրնայ ըլլայ,



եթէ իշխանամէտ կողմ մը շահի, օրինակի համար, այնքան քուէ, որ իրեն ապահովէ աթոռներուն 75-80 առ հարիւրը, կամ՝ չկարենայ ապահովել 70 առ հարիւրին համապատասխան աթոռներ: Նման «տարազ» ինքնին չ'ենթադրեր ընտրութեանց արդիւնքին կանխորոշում, ընթացք՝ որուն տրամաբանութեան դէմ է սկսած շարժումը...: Կայ նաեւ այլ հարց. նոր խորհրդարանին մէջ ինչպիսի՞ պատկեր պիտի ստեղծուի ընտրութիւններուն արդիւնքին հիմամբ. այսինքն, ընդդիմադիր պիտի ըլլա՞ն այնպիսի ուժեր, որոնք երէկ իշխանութեան կողքին էին եւ ընտրութեանց մասնակցեցան այլ ցանկերով, կամ՝ կուսակցութիւններ, որոնք հազիւ 2-3 ամսուան կեանք ունին եւ կը նաւարկեն իշխանութեան ստեղ-

ծած հովերուն ուղղութեամբ, ներկայանալով իբրև այլախոհ (այս հարցումները կրնան ժամանակավրէպ ըլլալ 9 Դեկտեմբերէն ետք, երբ նոր խորհրդարանին աթոռներու բաժանումը-բաշխումը յստակացած ըլլայ, սակայն այս նշումը կը կատարենք նախօրեակին, այն տրամաբանութեամբ, որ սա ժամանակի հարց չէ, նախընթացներու ականատես եղած ենք այլ երկիրներու մէջ ալ, երբ իբրև մենատէր կամ միակուսակցական քննադատուող վարչախումբեր իրենց կողքին ստեղծած են խմբաւորումներ եւ կուսակցութիւններ, որոնք խորհրդարանին մէջ ստանձնած են ընդդիմադիրի դերակատարութիւն, ըստ էութեան մեծ տարբերութիւն չունենալով զիրենք մէջտեղ բե-

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

## ՄԱՇՏՈՑ ՔՈՒՆԵՐ

Լաւագոյն  
մաղթանքներով  
կը շնորհաւորենք  
մեր  
հայրենակիցներուն  
Նոր Տարին  
եւ Ս. Ծնունդը

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

## Ի Յիշատակ Միրէյ Մկրտիչեանի

Ամուսինը՝  
Ճոզէֆ  
Մկրտիչեան  
եւ  
Դուստրերը

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

# Տասնամեակներ ետք Այսօրը Պետք է Դիտուի Իբրև Իսկական Բարեշրջման Մեկնակետ

ըող վարչախումբէն):  
\*\*\*

Անկախութեան վերահաստատումէն ետք, անցած է աւելի քան 27 տարի: Այս ժամանակը պէտք է մեզ հասցուցած ըլլայ այն հասունութեան ու փորձառութեան, որ եՐԿԻՐ ԿԱՌԱՎԱՐԵԼԸ ԴԻԻՐԻՆ ԳՈՐԾ Ձէ, չի նմանիր դպրոց, թերթ, եկեղեցի, առեւտրական հաստատութիւն կամ գործարան կառավարելու, որովհետեւ երկիրը աւելի՛ն է, քան յիշեալ ու նման բաղկացուցիչ տարրերը: Երկիրը մանր, միջին ու մեծ ճարտարարուեստ է, ներքին ու արտաքին առեւտուր է (Հայաստանի մէջ ճնշող նորաձեւութիւն է խօսիլ «պիզնէս»ի տրամաբանութեամբ. «պիզնէս բանանք», «պիզնէս զարգացնենք», «դուրսէն պիզնէս բերենք» եւ այլն, մինչդեռ պիզնէսին չափ կարեւոր այլ գործօններ կան երկրի մը բարգաւաճումը ապահովող), երկրագործութիւն ու գիւղատնտեսութիւն է, շինարարութիւն է, ներառեալ ճամբաներու շինութիւն ու յարատեւ նորոգութիւն, գիտութիւն ու միտք է, կրթութիւն ու մշակոյթ է՝ բառին ամէնէն համապարփակ առումով, ներառելով քաղաքական ու դիւանագիտական մշակոյթը, ու տակաւին՝ շատ աւելին:



նութեան անդամ կուսակցութիւն մը հակադրել միւսներուն ու խումբի պետին: Տակաւին, հազուադէպ չեն պարագաներ, երբ մեծամասնութիւն ունեցող կուսակցութեան անդամներ անգամ հակադրուին վարչապետին ու մեծամասնութեան, կրնան հրաժարիլ կառավարութենէն եւ իրենց կուսակցութեան մէջ կազմել ներքին ընդդիմութիւն (նորագոյն օրինակները եղան Բրիտանիոյ վարչապետին հակադրուող նախարարներ, Եւրոպական Շուկայէն քաշուելու անոր քաղաքականութեան առիթով, իսկ Ֆրանսայի մէջ նախագահ Մաքրոն կորսնցուց քանի մը սկզբնապէս համախոհ նախարարներ: Կարելի է այլ օրինակներ ալ թուել, ցոյց տալու համար, թէ նման պարագաներու դաշնութիւններ անպայման չեն խզուիլ կամ անդամները չեն վերածուիլ ռիսերիմ թշնամիի...: Հայաստանի մէջ, ընտրապայքարի օրերուն որոշ կուսակցութիւններու դէմ մեղադրանքներ ու պարսաւներ արձակուեցան, որովհետեւ անոնք մասկազմած են դաշնութիւններու, կամ նոր դաշնութեան մէջ ըլլալով հանդերձ, իշխանաւորէն տարբեր կարծիք ունեցած են: Երբ մինչեւ իսկ կուսակցութեան մը մէջ կարելի է ունենալ տարակարծիք կողմեր, ի՞նչն է որ կ'արգիլէ կառավարութեան մը դաշնութեան մէջ եղողներու՝ ունենալ սեփական կարծիք: Ուրեմն, արդարացում չի կրնար ունենալ այն տրամաբանութիւնը, թէ՛ որովհետեւ հակառակորդիս հետ դաշինք կնքած ես, պէտք է վտարուիս քաղաքական բեմէն, գործ չունիս նոր խորհրդարանին ու կառավարութեան մէջ: Անդին, ճգնաժամ դիմագրաւող երկիրներու մէջ յաճախ դաշնութիւն գոյացած է ծայրագոյն հակադիրներու միջեւ, որոնց շահերը, յամենայնդէպս, կը կառավարուին երկրի ու ժողովուրդի շահերէն, եւ ոչ թէ ներշնչուած կ'ունենան արտաքին հոսանքներէ:

\*\*\*

Նորագոյն դարաշրջաններուն, Ֆրանսական Յեղափոխութիւն(ներ)ը եղած են բազմապիսի այլ յեղափոխութիւններու ներշնչումի աղբիւր՝ ժողովուրդներու իրաւունքներու պաշտպանութեան դրօշակիրի իմաստով: Յեղափոխութիւններ յաճախ ճամբայ ելած են ազնուագոյն նպատակներով, սակայն կարճատեւ ետք չարաշահումի դաշտ բացած են ու ինքնավիժումի հասած, իսկ ուրիշներ յառաջատուական զարգացումի առիթ ծառայած են: Ժո-

ղովրդավարութիւնն ալ, հին Յունաստանէն մինչեւ Հռոմ ու այլ դարաշրջաններ, ապրած է իր եղելոյթը, զարգացման հոլովոյթը, յաճախ նաեւ անոր անունով ոճիրներ գործուած են ու երկիրներ-ժողովուրդներ վնասի ենթարկուած:

Այսօր, «Թաւշեայ յեղափոխութենէն» ամիսներ ետք, Հայաստան դէմ յանդիման կը գտնուի մեծ հարցերու եւ հարցականներու: Եթէ միայն թուե՞նք խորագիրները, գոնէ պէտք է արձանագրենք Արցախը, Հայաստանի շրջափակումը, տնտեսութեան հզօրացումը, պաշտպանական մարզը, ժողովուրդի կենսամակարդակի բարելաւումն ու ընկերային տագնապներու դարմանումը, արտագաղթին իսկական կասեցումը եւ տունդարձի ալիքին բարձրացումը, մշակոյթի պահպանումն ու զարգացումը, հայերէնի մաքրութեան ու օտարաբանութեան ախտէն ձերբազատումի «մանր հարցեր»: Ասոնք հիմնական հարցերուն միայն գլխաւորներն են: Այս համայնապատկերը նկատի ունենալով է որ քիչ առաջ արձանագրեցինք, թէ երկիր կառավարելը դիւրին գործ չէ, իսկ աւելի կանուխ ընդգծեցինք, որ երկիր կառավարելը կը կարօտի իշխանութեան, գործակիցներուն եւ անոնց հակադրուածներուն միջեւ գործակցութեան տարազնեղութիւն: Սորհրդարան մուտք գործող թէ՛ դուրս մնացած կուսակցութիւններ ու քաղաքական խմբաւորումներ հաւասարապէս պատրաւոր են ներդրում ունենալու երկրի բարելաւման գործին մէջ, որպէսզի Ապրիլին սկիզբ առած յեղափոխութիւնը մնայ իր հունին մէջ, վերածուի բոլոր կարողութիւններն ու կարողականութիւնները մէկտեղող գործօնի: Երկիրը պէտք է վերածել տարբեր երաժշտական գործիքներով մարմնաւորուող համանուագի մը, ուր ամէնէն փոքր սրինգն անգամ ունի իր անփոխարինելի տեղը: Հայաստանի ու ժողովուրդին բոլոր իրաւունքներուն արդար իրականացման ի խնդիր պայքարը, աշխատանքը կը կարօտի ոչ միայն քաղաքական խմբաւորումներու, այլ նաեւ իւրաքանչիւր Հայու ներդրումին, որովհետեւ վերանկախացումէն ասդին ու ցնոր տնօրինութիւն, Հայութեան բոլոր կարողութիւններուն մէկտեղումն իսկ կրնայ բաւարար չըլլալ ներքին ու արտաքին մարտահրաւէրներու դիմակալման, մինչդեռ կը յայտարարենք, որ վճռած ենք նոր նահանջներ ու կորուստներ չունեն-

նալ հայրենի հողին վրայ թէ սփիւռքի տարածքին...

Նոր ազգային ժողովը պէտք է գործէ այն ոգիով, որուն երբեմն ականատես կ'ըլլանք ոտնազնակի մրցումի մը պահուն, երբ մրցակիցը հարուածելէ ետք՝ մարդիկ մը կը մօտենայ անոր եւ վեհանաճաբար ձեռք կ'երկարէ՝ գայն ոտքի կանգնեցնելու համար: Նոր խորհրդարանի կազմութիւնը պէտք է մեկնակէտը ըլլայ այնպիսի դրական զարգացումներու, բաժանուածութիւններու դարմանումի ու մասնակի շահերու դրժումի, որ ասկէ 5, 10, 50 կամ աւելի տարիներ ետք հասակ առնող սերունդները այս օրերը դիտեն իբրև իսկական բարեշրջումի, ազնիւ յեղափոխութեան մը շրջանը, ինչպէս որ մենք հիմա անդրանիկ հանրապետութեան որոշ իրագործումներով կը հպարտանանք ու զանոնք կը նկատենք անփոխարինելի հիմնաքարեր-մեկնակէտներ: Այլապէս, տասնամեակներ ետք, այս օրերը կրնան ինքնախարազանումի եւ քննադատութեան նիւթ ըլլալ, այնպէս՝ ինչպէս եղան վերանկախացումին յաջորդած կարգ մը փուլերը:

\*\*\*

...Երեւանի 2750ամեակին առիթով իր ներբողականին մէջ, Աւակ արդարօրէն արձանագրած էր. «Անկատար տենչեր ունենք դեռ շատ...»: Այսօր ալ բազմաթիւ անկատար տենչեր ունինք ազգովին, հայ կեանքի բոլոր բեմերուն վրայ: Այսօրն ու ապագան ճիշդ հունաւորելու համար, հայօրէն ապրող ու գործող քաղաքական ուժերուն ու խմբաւորումներուն կողքին, կենսական կարեւորութիւն ունի մանաւանդ իրաւ մտաւորականութեան դերակատարութեան վերականգնումը. մեր բազմահարցաւոր զարթոնքները կերտած մտաւորականները հրաւէրի կամ հովանաւորչութեան չեն սպասած՝ ուղեցոյց փարոսներ կանգնելու համար քաղաքական ղեկավարութեան ու յատկապէս երիտասարդներու թրծումին նպատակով: Նոր Ազգային ժողովի հունաւորման մէջ, նման փարոսներու կարիքը ունինք նաեւ այսօր, որպէսզի լուսաւորուին մեր ներքին ու արտաքին աշխատանքի անդաստանները, խօսքի ու խոստումներու փուլէն՝ անցնինք հայրենաշէն ու ժողովրդակերտ ԳՈՐԾի փուլ, ու Հայութեան նաւը կերտէ սեփական ուղին՝ մասնաւորաբար արտաքին հովերէ չխրախուսուելու կամքով, չվերածուի հնատիպ ժամացոյցի ճօճանակի, որ կը տատանի գինք աջէն ձախ կամ հակառակ ուղղութեամբ շարժող ալիքներու վրայ, այլ գտնէ հաւասարակշիռ ընթացք ու ներքին ու արտաքին գործօնները ի շահ հայաստանին ու մեր ժողովուրդին լծելու ունակութիւն:

Նման հաւասարակշռութեան գոյացման համար, պէտք չէ սպասենք երկար ժամանակ, մանաւանդ պէտք չէ մատնուինք հիասթափութեան ու ենթակայ ըլլանք ընտրութիւններու օրերու նախօրեակին ուրուագծուած՝ բաժանուածութեան խորացման:

ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ

ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ

ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ



**Massis Kabob family  
wishes Asbarez  
and the Armenian Community a  
Merry Christmas  
& Happy New Year**

**Massis Kabob-ի Ընտանիքը  
կը Շնորհակարտ «Ասպարէզ»ին  
եւ Հայ Համայնքին  
Նոր Տարին եւ Ս. Ծնունդը**

**Massis Kabob  
&  
Baghdassarian Family**

ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԲԸ ԾՆՈՒՆԴ





# ՄՈՆԹԵՊԵԼԼՕ

**ՀՅԳ «Դրօ» Կոմիտեություն,  
 Ս. Խաչ Մայր Տաճարի  
 Հոգևոր Հովիւ ու Հոգաբարձություն,  
 Մեսրոպեան Ազգ. Վարժարան,  
 ՀՕՄԻ «Նայիրի» Մասնաճիւղ,  
 ՀՕՄԻ «Անի» Մասնաճիւղ,  
 ՀՄԸՄԻ Մոնթեպելլոյի Մասնաճիւղ,  
 ՀԵԳ «Վահան Գարտաշեան» Ուխտ,  
 ՀՅԳ «Վահան Գարտաշեան»  
 Պատանեկան Միություն**

*Նոր Տարին Թեւակոխե՛նք՝  
 Իրականացած Տեսելով  
 Պահանջարէր Հայութեան  
 Անկապար Տենչերը*